ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3 (19)

ԵՐԵՎԱՆ 2018
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Միքայելյան Մ. Վ.- տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Միքայելյան Վ. Հ. – հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք: Գիտական հոդվածների ժողովածու / Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան – Եր.: ԵՊՀ հրատ., 2018 թ.-258 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ.
© Հեղ. խումբ, 2018 թ.

YEREVAN STATE UNIVERSITY
IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 3 (19)

YEREVAN 2018

YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - *doctor of historical sciences, professor*

EDITORIAL COUNCIL

Asatryan A. G. - doctor of art, professor
Derdzyan H. M. - doctor of law, professor
Gasparyan S. K. - doctor of philological sciences, professor
Gharibyan G. A.- doctor of economic sciences, professor, associate member of NAS,RA
Manucharyan H. G. - doctor of political science, professor
Minasyan E. G. - doctor of historical sciences, professor
Mikaelyan M. V. - doctor of economic sciences, professor
Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor
Muradyan S. P. - doctor of philological sciences, professor
Nahapetyan R. A. - doctor of historical sciences, professor
Zakaryan S. A. - doctor of philosophy, professor

Akunq. Collection of Scientific Articles/ Editor – in – chief - A. A. Nersisyan. - Yerevan; YSU Publishing House, 2018 – 258 pages.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1920Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 24 - Ի ՌՈՒՍ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

1920թ. օգոստոսի 24-ի համաձայնագրի նախագիծը կնքվել է Մոսկվայում գտնված թուրքական պատվիրակության հետ, որին անդրադարձել են բազմիցս, բայց կարծում ենք, որ դրա պատճառների և հետևանքների քննությունները թերի են: Պատմաբան Է. Զորաբյանը ճիշտ է նկատել, որ «օգոստոսի 24-ի պայմանագրի նախագծով Խորհրդային կառավարությունը ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը», հետևապես և Թուրքիայի իրավունքը Բաթումի և Կարսի մարզերի նկատմամբ: Ճիշտ է, իրավունքի ճանաչումը դեռևս չէր նշանակում այդ տարածքների ճակատագրի վերջնական լուծում, բայցևայնպես, լուրջ փաստարկ էր հօգուտ Թուրքիայի: Ուրեմն պետք է խոսել ոչ թե ինչ որ գաղտնի պայմանագրի, այլ օգոստոսի 24-ի հայտնի պայմանագրի նախագծի մասին, որի պատճեն պահվում է մեր պետական արխիվում»[1]:

Սակայն, այս նախագիծը համարժեք էր պայմանագրի, որովհետև իսկապես Թուրքիայի համար ամրագրում էր քայլեր ի վնաս Հայաստանի Հանրապետության: Այս համաձայնագրի նախագծի մասին գրում է Ալի Ֆուատ փաշան[2]: Գ. Լազյանն այն համարում է Հայաստանի վրայ յարձակումը պատրաստող ռուսեւթուրք դաշնագիր, որի կետերն էին.

«Յօդ. 1. – Ստորագրող կողմերը սկզբունքով կ'ընդունեին չճանչնալ խաղաղութեան որևէ դաշնագիր կամ պետական որևէ յանձնագիր՝ որ բռնօրէն պարտադրուած է միւս կողմէն, Ռուսիոյ Հանրապետութիւնը կ'ընդունի բացարձակապէս չճանչնալ պետական որեւէ համաձայնագիր որ կը վերաբերի Թուրքիոյ եւ որ վաւերացուցած չէ թուրք ազգային կառավարութեան ներկայացուցիչ Ազգ. Մեծ Ժողովին կողմէ:

Յօդ. 2 – Ստորագրող կողմերը կը հաստատեն, թէ երկու երկրներու միջեւ ցարդ ստորագրուած բոլոր դաշնագիրները չեն համապատասխաներ իրենց ազգային իսկական շահերուն եւ, հետեւաբար, կ'որոշեն զանոնք միանուագ եւ բոլորովին չեղեալ նկատել:

---

[1] **Է. Ա. Զոհրաբյան,** 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 145:

[2] Տես Ali Fuat Gebesoy, Moskova Hatiralari, Istanbul, 1955, էջ 80:

Յօդ. 3 - Ապահովելու համար երկու երկրներու յարաբերութեանց անարգել եւ անընդմէջ շարունակութիւնը բոլոր պարագաներու մէջ, ստորագրող կողմերը կ'երաշխաւորեն անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռք առնել, կարելի եղածին չափ շուտ եւ ամէն կարգի արգելքէ զերծ անձերու կամ ապրանքի տեղափոխութիւնը ապահովելու համար:

Յօդ. – 4 – Ստորագրող կողմերէն մէկուն հպատակները՝ ստորագրող միւս կողմի հողերուն մէջ, տեղական օրէնքներով ընդունուած բոլոր իրաւունքներէն պիտի օգտուի եւ նոյն օրէնքներով նախատեսուած բոլոր պարտականութիւնները կատարելու յանձնառու պիտի ըլլան: Բացառութիւն կը կազմեն միայն ազգային պաշտպանութեան վերաբերեալ տրամադրութիւնները:

Երկու կողմերու հպատակներուն ընտանեկան եւ ժառանգական խնդիրները եւս այս յօդուածի տրամադրութենէն զերծ են: Այս խնդիրներուն լուծման մասին առանձին համաձայնութիւն մը պիտի մշակուի հետագային:

Յօդ. – 5 – Ստորագրող կողմերը համաձայն են, որ փոխադարձաբար իրենց հողերուն վրա բնակող հպատակներուն հանդեպ առաւելագոյն թոյլատրութիւններ եւ դիւրութիւններ ցոյց տան:

Յօդ. – 6 – Ստորագրող կողմերը համաձայնաբար կ'ընդունին, բոլոր ազգերու առեւտրական նաւերուն ազատ անցքի իրաւունք տալու նպատակով ճշդել նեղուցներու եւ Սեւ ծովու յատուկ միջազգային օրէնքները, պայմանաւ, որ այդ օրենքներու տրամադրութիւնները որևէ կերպով չվնասեն Թուրքիոյ ամբողջական վեհապետութեան եւ մայրաքաղաք Կ. Պոլսոյ ապահովութեան: Այս օրէնքներու մշակումը պիտի վստահուի շահագրգռուած պետութեանց ներկայացուցիչներու մասնակցութեամբ յառաջիկային գումարուելիք խորհրդաժողովի մը:

Յօդ. – 7 - Այս համաձայնագրի վաւերացումին ետք, պիտի ձեռնարկուի հիւպատոսական եւ դեսպանական յարաբերութեանց հաստատումին, առ այդ կնքելով նաեւ նոր համաձայնագիր մը»[3]:

Այս համաձայնագրում, ինչպես նկատում ենք, Հայաստանի անունն ընդհանրապես շոշափված չի: Բայց նրա մեկ - երկու կետեր անուղղակիորեն ուղղված էին նրա դեմ: Դրանցից պետք է, նախ, առանձնացնել առաջին կետը, որով Խորհրդային Ռուսաստանն ու քեմալական Թուրքիան, որն ուներ իր բարձրագույն իշխանական մարմինը՝ հանձին ԹԱՄԺ - ի (Թուրքիայի Ազգային Մեծ Ժողով) պարտավորվում էին չճանաչել որևէ խաղաղության դաշնագիր, որը պարտադրված կլիներ կողմերից մեկին: Հատկապես կարևոր է այն, որ Ռուսաստանը չէր ճանաչելու Թուրքիային վերաբերվող որևէ համաձայնագիր, որը չէր վավերացվի ԹԱՄԺ – ի կողմից: Այս կետով, այսպիսով, Ռուսաստանը ճանաչում էր քեմալական Թուրքիային, որը նշանակում էր հակադրվել Դաշնակիցներին:

[3] **Գաբրիել Լազեան,** Հայաստան եւ Հայ դատը, հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ., Երևան, 1991, էջ 255-256, տես նաև՝ Ali Fuat Gebesoy, Moskova Hatiralari, էջ 80, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 10:

Ստացվում է, որ Ռուսաստանը չէր ճանաչում Սևրի պայմանագիրը, որը լուրջ հարված էր Հայաստանի Հանրապետությանը: Երկրորդ կետով նրանք չեղյալ էին համարում երկու երկրների միջև ցարդ ստորագված բոլոր դաշնագրերը, քանի որ դրանք չէին համապատասխանում նրանց ազգային շահերին: Այս կետի տակ կարելի է հասկանալ, որ չեղյալ պետք է համարվեր նաև Բրեստ – Լիտովսկի պայմանագիրը, որով Թուրքիային էին թողնվել Կարսն ու Արդահանը: Այս կետի տրամաբանությունը թելադրում է, որ պետք է վերոհիշյալ տարածքներն անցնեին Ռուսաստանին, որոնք ՀՀ տարածքային մասն էին կազմում: Բայց սույն կետը կարծես թե չեզոքացվում էր 4 –րդ կետով, որով փաստորեն Ռուսաստանն ընդունում էր ԹԱՄԺ–ի հռչակած Թուրքիայի տարածքները, մինչև այդ մասին առանձին համաձայնության կնքումը: Այսպիսով, Ռուսատանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքները Կարսի ու Արդահանի նկատմամբ: Սա նույնպես լուրջ հարված էր Հայաստանին: Վերջինիս առավել դաժան հարված էր համաձայնագրի 3 –րդ կետը, որով նախատեսվում էր ամենակարճ ժամկետներում երկու երկրների միջև մարդկանց և ապրանքների տեղափոխությունն ապահովել: Սա արդեն նշանակում էր Թուրքիային Հայաստանի վրա հարձակվելու համար հնարավորության ընձեռում:

Անաչառ լինելու համար, պետք է նշել, որ այս համաձայնագրի նախագիծը տարաբնույթ ընկալումների տեղիք է տվել և միանշանակորեն չի ընդունվել բոլշևիկների կողմից: Այդ մասին վկայում են թե արխիվային վավերագրերը և թե Ալի Ֆուատ փաշայի հուշերը: Համաձայնագրի 3 –րդ կետը ինքնին հակասական վիճակ էր ստեղծում օգոստոսի 10–ի Թիֆլիսի համաձայնագրի 5-րդ կետի հետ, որով Հայաստանին էր մնում երկաթգծի Շահթախտ - Ջուլֆա հատվածը: Այդ կետով թուրքերը հնարավորություն էին ձեռք բերում գրավելու Սարիղամիշն ու Շահթախտը: Սրանում սկզբում վերապահ կեցվածք է ընդունում Չիչերինը: Ինչո±վ էր դա պայմանավորված: Անշուշտ, այն վախով, որ Թուրքիան կխախտի համաձայնությունը և առաջ կանցնի նաեւ հիշյալ տարածքներից, իսկ Ռուսաստանին ամենևին ձեռնտու չէր ողջ Հայաստանը Թուրքիային զոհաբերելը՝ նրա տարածքների հաշվին ուժեղացնելով վերջինիս և Ադրբեջանին, որն ինքնին նշանակում է՝ սխալ կլինի խոսել այդ օրերին Հայաստանի բաժանման վերջնական ծրագրի մասին և երկրորդ՝ Հայաստանի ամբողջական հոշոտման դեպքում արևելյան երկրների պրոլետարիատի աչքում խիստ կվարկաբեկվեր Խորհրդային իշխանությունը: Այսպես, օգոստոսի 28-ին Բեքիր Սամի բեյի պատվիրակությունն ընդունվում է Չիչերինի կողմից: Վերջինս մասնավորապես հետևյալն է ասել. «Ճանապարհի բացումն ուղղված պիտի լինի միայն փոխադրություններն ապահովելու նպատակին, չպիտի ըմբռնել այլ, տարբեր իմաստով»[4]:

[4] Ali Fuat Gebesoy, նշվ. աշխ., էջ 83:

Այս իսկ պատճառով թեև Չիչերինը չի առարկում, որ Սարիղամիշն ու Շահթախտը թուրքերի կողմից գրավվեն, բայց պայմանով, որ թույլ չտան հայերի ջարդեր: Ավելին, հանդիպման ժամանակ Չիչերինը նորից դնում է Վանի և Բիթլիսի Հայաստանին տալու հարցը: Նա հետևյալն է ասում. «Վանի և Բիթլիսի մի մասն Հայաստանին կցելը պարտադիր է. այս հիմքով է թուրքերին օժանդակություն արվելու»: Երբ Բեքիր Սամին առարկել է և հայտնել, թե իրենք կարող են հավանություն տալ միայն գաղթական հայերի վերադարձին այդ վայրերը, որոնց կվերաբերվեն այնպես, ինչպես ամենաազատ երկրի փոքրամասնություններին, Չիչերինը վերադարձին կողմ է արտահայտվում, բայց երկրորդ առաջարկին՝ ոչ և կրկին պնդել է հետևյալը՝ «Վանում և Բիթլիսում հայերին թողնել իրենց բնակչության թվին համապատասխան վայրեր, դրանց իսլամ բնակչությանը փոխադրել այլ վայրեր, իսկ այդ շրջանների (Վանի և Բիթլիսի –Ա. Ն.) բնակչությունը բաղկացած լինի սոսկ հայերից և նրանք հասնեն կատարյալ անկախության»[5]:

Բնականաբար թուրքերը չեն ընդունում այս առաջարկները: Համաձայնագրի նախագիծը չի վավերացվում: Բայց չնայած դրան՝ Թուրքիային տրվեց ֆինանսական օգնություն՝ 5 մլն. ռուսական ոսկի, ինչպես նաև անհրաժեշտ քանակությամբ զենք և զինամթերք, որը համաձայնագրի ստորագրումից անկախ՝ քիչ նշանակություն չունեցավ՝ Թուրքիայի Հայաստանի վրա հարձակվելու առումով[6] :

Շատ կարևոր է նաև այն հարցի պատասխանի որոնումը, թե արդյո՞ք իսկապես անկեղծ էր Չիչերինն՝ իր հայանպաստ արտահայտությունների մեջ: Միանգամից պատասխանենք, որ՝ ոչ: Ճշմարիտը թերևս այն է, որ նա վախեցնում էր թուրքերին և փորձում էր զսպել նրանց ախորժակը նախկին ցարական Ռուսատանի հարավային սահմանների նկատմամբ: Դժվար է պատկերացնել, որ մյուս կողմից էլ Ռուսատանը կհանդուրժեր այդ նույն սահմաններում անկախ Հայաստանի գոյությունը, մանավանդ Վանի, Բիթլիսի, նաև՝ Կարսի և Արդահանի ներառումով: Պարզապես ընդդեմ Դաշնակիցների Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցումն ընթանում էր դիվանագիտական պայքարի զուգորդությամբ, որում թերևս Հայաստանի հարցում հաղթող դուրս եկավ Թուրքիան: Այդ դիվանագիտական պայքարի մասին են վկայում, ավելի ուշ, 1920թ. նոյեմբերի 28-ին, մի առիթով Քյազիմ Կարաբեքիրի արտահայտած հետևյալ խոսքերը. «Խորհրդային Ռուսաստանին, ավելի քան որևէ մեկին, հայտնի է, **որ ռուսական հեղափոխությանը առաջինը արձագանքեցին թուրքերը, որոնք հետագայում նպաստեցին հեղաշրջմանն Ադրբեջանում այն հույսով, որ Ռուսաստանը Ադրբեջանի վրայով կապ կհաստատի հեղափոխական Թուրքիայի հետ, բայց Ռուսաստանը ոչինչ չձեռնարկեց կապի հաստատման ուղղությամբ:** Այնուհետև Ռուսաստանը

[5] Նույն տեղում, էջ 83-84:
[6] Տես Է. **Ա. Զոհրաբյան,** նշվ. աշխ., էջ 142:

Թուրքիային առաջարկեց հրաժարվել Հայաստանի վրա հարձակվելու ամեն մի մտքից, որը **Անտանտի ամենաանկեղծ դաշնակիցն է**: Չնայած, որ Անտանտի դեմ պայքարում Հայաստանը միշտ մեր թիկունքին դանակ է խրել, մենք այնուամենայնիվ որոշեցինք ձեռնպահ մնալ, որպեսզի գոհացնենք Ռուսաստանին: Այս ամենից հետո Խորհրդային Ռուսատանը պահանջեց Անատոլիայի որոշ մարզերը հանձնել Հայաստանին: Թուրքիան՝ ի շահ հեղափոխության, քայքայեց ավելի կենսունակ մուսուլմանական պետությունը Ադրբեջանում, քան Հայաստանն է (այս մասին վկայող փաստաթուղթը մենք արդեն մեջբերել ենք – Ա. Ն.), **իսկ Ռուսաստանը բացահայտորեն վնասելով գործին, ցանկանում էր Թուրքիայի և Ադրբեջանի հաշվին ստեղծել առանց հայերի ագրեսիվ մեծ Հայաստան, այն ժամանակ, երբ այդ նույն Հայաստանը ձգտում էր կոալիցիա ստեղծել Վրաստանի և Պարսկաստանի հետ՝ Ռուսաստանի և Ադրբեջանի դեմ համատեղ հարձակման համար:** Եվ վերջապես, Ռուսաստանը Նախիջևանի երկրամասը հանձնեց Հայաստանին (նկատի ունի օգոտոսի 10-ի համաձայնագրի 5-րդ կետը – Ա. Ն.): Դա միակ միջանցքն էր, որով թուրքերը կապ էին պահպանում Ռուսաստանի հետ: … **Վերջապես Ռուսաստանը թույլատրեց մեզ գրավելու Սարիղամիշը և Նախիջևանի շրջանը՝ չցանկանալով այդ գործում մեզ որևէ ռազմական օգնություն ցույց տալ»**[7] (Ընդգծումները մերն են- Ա. Ն.):

Այս խոսքերը մղում են հետևյալ եզրակացություններին.

Առաջին. Իսկապես թուրքերը արձագանքել են ռուսական հեղափոխությանը, բայց ոչ թե ելնելով բոլշևիկյան հեղափոխության գաղափարական դրույթներից, այլ Թուրքիան միավորելու շահերից, որը չէր կարող չհասկանալ Ռուսաստանը:

Երկրորդ. Նրանք բոլշևիկյան քող են հագցրել Ադրբեջանին՝ հույս ունենալով դրանով կապ հաստատել Ռուսաստանի հետ, բնականաբար Հայաստանի վրայով, որի վնասկար հետևանքներն իր շահերի տեսանկյունից չէր կարող դարձյալ չհասկանալ Ռուսաստանը: Դրանով պետք է պայմանավորել օգոստոսի 10-ի համաձայնագիրը:

Երրորդ. Միանգամայն անհիմն է այն պնդումը, որ Ռուսաստանը ձգտել է ստեղծել մեծ Հայաստան, այն դեպքում, երբ վերջինս փորձել է կոալիցիա ստեղծել ընդդեմ Ռուսաստանի և Ադրբեջանի: Սրանով Կարաբեքիրը փորձել է արդարացնել Հայաստանի վրա իր հարձակումը: Մի բան ակնհայտ է, որ կոալիցիայի գաղափար չի եղել: Թուրքիան արդեն հարձակվել էր Հայաստանի վրա, երբ Ռուբեն Տեր-Մինասյանը հոկտեմբերի 18-ին մեկնեց Վրաստան՝ հայ - վրացական դաշինքի խնդրով: Այդ մասին գրում է Ալ. Խատիսյանը: Ռուբենն առաջարկում է միացյալ ուժերով կռվել Հայաստանին և Վրաստանին սպառնա-

[7] ՀԱԱ, ֆ. 1021, գ. 1148, փ. 10, թ. 1:

ցող՝ կրկնակի վտանգներուն դեմ՝, հայերը՝ թուրքերի, իսկ վրացիները՝ ռուսների: Սակայն վրացիները մերժում են, քանի որ չեն սպասում թուրքական հարձակում Վրաստանի վրա և վստահելի էին համարում բոլշևիկների հետ հունիսի 7-ին կնքած իրենց պայմանագիրը[8]:

Չորրորդ. Հիշյալ փաստաթղթով ապացուցվում է, որ Ռուսաստանն ամենևին Հայաստանի նկատմամբ չի առաջնորդվել Թուրքիայի ծրագրերին համահունչ քայլերով, գոնե մինչև նոյեմբերի վերջերը, որն իր հերթին նշանակում է, որ վերջինիս հարձակումը Հայաստանի վրա չի եղել երկկողմանի պայմանավորվածության հետևանք: Բայց թույլատրելով Թուրքիային՝ գրավելու Սարիղամիշն ու Շահթախտը՝ Ռուսաստանն ակամայից նպաստեց Հայաստանի վրա հարձակմանը: Իսկ ինչո՞ւ նա գնաց այդ թույլտվությանը: Կարծում ենք, որ Խորհրդային Ռուսաստանը դա արեց այն համոզմունքից ելնելով, որ իր թիվ մեկ խնդիրը պետք է լինի ոչ թե հայկական հողատարածքների վրա Թուրքիայի և Ադրբեջանի ոչ իր ցանկությունների համաձայն ծավալումը, այլ՝ Դաշնակիցների դեմ պայքարն ու նրանց դուրս մղելը նեղուցներից: Այս խնդրի իրականացման համար նա բացի քեմալականներից երկրորդ դաշնակիցը չէր կարող գտնել: Բոլշևիկների ղեկավար շրջանակներում արմատացած էր այն համոզմունքը, որ քեմալական շարժումը հեղափոխական շարժում է, որը բխում է իրենց «համաշխարհային հեղափոխության» իրականացման շահերից: Չիչերինը, ինչպես և շատերը կարծում էին, թե թուրքերի կողմից Սարիղամիշի և Շահթախտի գրավումով չի կանխորոշվում դրանց հետագա ճակատագիրը, քանի որ թուրք խորամանկ գործիչները բազմաթիվ անգամ հայտարարել էին, որ իրենք պատրաստ են իրենց զորքերը դնել խորհրդային կոմիսարների տրամադրության տակ[9]: Երկրորդ պատճառն այն էր, որ Չիչերինը և խորհրդային շատ գործիչներ հավատացին, որ թուրքերը Սարիղամիշ – Շահթախտ գծից այն կողմ չեն անցնի: Այս համոզմունքով թերևս պետք է բացատրել այն, որ օգոստոսի 23-ին Չիչերինին գրած նամակում Կիրովը նույնպես գտնում է, որ հիշյալ տարածքը թուրքերի կողմից գրավելը նպատակահարմար է[10]: Որ իսկապես այս համոզմունքը կար, պարզ երևում է նաև Չիչերինի՝ Լեգրանի ու Ս. Տեր-Գաբրիելյանի, որը Հայաստան ուղևորված պատվիրակության անդամ էր, միջև եղած մի հեռախոսային խոսակցությունից, որի ընթացքում Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը շեշտում է, թե՝ «Մենք երբեք ոչ մի խոսք չենք ասել այն մասին, որ մենք հիմա մեր ուժերով գրավենք Շահթախթին: Մեր առաջ հարց է դրվել այն մասին, թե ինչպես մենք կվերաբերվենք, եթե թուրքերը անկախ մեզանից, իրենց սեփական

---

[8] Տես **Ալ. Խատիսեան,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 266:
[9] Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 3:
[10] **А. Н. Хейфец,** Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны(1918-1920), Москва, 1964, ст., 131.

ուժերով, առանց մեզ հետ որևիցե կապի, գրավեն Շահթախթին և Սարիղամիշը»[11]:

Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ ռուսները հօգուտ հայերի ոչ մի քայլի չգնացին և ելնելով Դաշնակիցների դեմ պայքարում Թուրքիային չկորցնելու վախից, նրան զիջեցին Արևմտյան Հայաստանը, որի գրավումը ցարերի դարավոր երազանքն էր:

Շահթախթի և Սարիղամիշի գրավման թույլտվությունն ստանալուն զուգընթաց թուրքերն ու ազերիները և, ցավոք, շատ հայ բոլշևիկներ Հայաստանի վրա գրոհը փորձեցին հիմնավորել նաև տեսականորեն՝ Բաքվում 1920թ. սեպտեմբերի 1-8-ը գումարված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Համագումարը, որին ներկա էին 26 երկրների 1891 պատգամավորներ, որոնք 47 ազգերի ներկայացուցիչներ էին[12], նշանակալի է նրանով, որ թուրքերը, ազերիները, թրքամետ բոլշևիկները և ցավոք, հայ ապազգային բոլշևիկներն ընդունում են մի փաստաթուղթ, որն ուղղված էր Անտանտի դաշնակից «իմպերիալիստական Հայաստանի» դեմ: Այնտեղ մասնավորապես ասված էր. «Ռուսաստանի ռևոլյուցիան նետեց Արևելքի բոլոր ճնշված ժողովուրդներին համաշխարհային իմպերիալիզմի լծից ազատագրվելու լոզունգը: Արևելքն արդեն ոտքի է կանգնել, նրա համակրանքը Սովետական Ռուսաստանի կողմն է, ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի: Բայց կասկած չկա, որ այդ շարժումն իր զարգացման առաջին շրջանում կրելու է ազգային ազատագրական բնույթ: Այդ հարցն առանձնապես սուր է Հայաստանում, որի տիրապետող դասակարգերը վերջնականապես անդարձ կերպով երկրի բախտը կապել են միջազգային իմպերիալիզմի հաղթանակի հետ: Հայաստանում չկա ազգային հարց, Հայաստանում կա միայն սոցիալիստական հարց»[13]:

Այսպիսով, Հայաստանը դիտվում էր որպես Արևելքի երկրների ուղուց շեղված երկիր, ուր սոցիալիստական կարգեր մտցնելը դառնում էր հրատապ: Իսկ սոցիալիստական կարգեր մտցնելու քողի տակ նախատեսվում էր նրա գրավումը, բաժանումն ու ծվատումը սոցիալիզմի կեղծ դիմակ հագած Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Դրանում համոզվելու համար բավական է կարդալ փաստաթղթի հետևյալ տողերը. «Հայաստանը պետք է ազատագրվի միջազգային գիշատիչների դարավոր ճնշումից, նա պետք է ազատագրվի նրանց վարձկանների՝ մաուզերիստների իշխանությունից: Նա պետք է դառնա այնտեղ բնակվող ժողովրդական մասսաների սիրելի սոցիալիստական հայրենիքը՝ անկախ նրանց ազգությունից: Հայաստանի ժողովուրդները խորապես գիտակցում են, որ այս բոլորը կարող է իրագործվել այն դեպքում, եթե անտանտի և

---

[11] **Է. Ա. Զորաբյան,** նշվ. աշխ., էջ 148:
[12] **Ս. Բ. Հարությունյան(Հարենց),** Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Երևան, 1960, էջ 9:
[13] Նույն տեղում, էջ 79, նաև տես՝ **Սերովբէ Մխիթարեան**, Հայկական Հարցը, Փարիզ, 1968, էջ 92:

հայ բուրժուազիայի գործակալների՝ դաշնակների իշխանությունը տապալվի և փոխարինվի աշխատավորների իշխանությամբ, բանվորների ու գյուղացիների դիկտատուրայով, եթե Հայաստանում ստեղծվի սովետական իշխանություն: Մենք ձգտում ենք, և պետք է ձգտենք հասնել դրան»[14]:

Կարծում ենք, որ ամեն ինչ պարզից պարզ է և նոր մեկնաբանությունները կդիտարկվեն կրկնություն: Սակայն ցավալին այն է, որ այս կոչերի հիմնական հեղինակ թուրքերին և ազերիներին ձայնակցում էին հայ բոլշևիկները (Միկոյան, Նազարեթյան, Միրզոյան և այլն), հայտարարելով, որ Հայաստանի ներսում «մուսուլմաններին կոտորելու քաղաքականությունը բացի տնտեսական նպատակներից (կառավարության և պառլամենտի անդամների հարստացումը), հետապնդում էր գլխավորապես քաղաքական նպատակ՝ մուսուլմաններից մաքրված շրջաններում կառավարությունը բնակեցնում է թուրքահայ գաղթականներին, որպեսզի նրանցից ստեղծի «հայ կազակային դաս», որի վրա հենվելով կարողանար պայքարել տեղացի, աղքատացած և հետևաբար, հեղափոխական գյուղացիության դեմ»[15]:

Ոչ պակաս հետաքրքիր և Հայաստանի վրա հարձակումը տեսականորեն նախապատրաստող փաստաթուղթ է այս համագումարից շատ չանցած, սեպտեմբերի 17 – ին Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության խորհրդի ընդունած որոշումը կամ եզրակացությունը: Նրա ընդունման հիմնական դերկատարներ կարելի է համարել Օրձոնիկիձեին, Նարիմանովին, Սկաչկոյին, Ստասովային և այլոց: Այս փաստաթուղթը բավական ընդարձակ է, ուստի հարմար ենք գտնում նրանից կատարել այն մեջբերումները, որոնք «հիմնավորում» են Հայաստանի վրա հարձակումը և տուրք են այն համոզման, որ եթե շուտափույթ օգնություն չցուցաբերվի Թուրքիային, ապա՝ կկործանվի Խորհրդային Ռուսաստանի միակ դաշնակիցն ընդդեմ Անտանտայի: «Ազգայնականների կառավարությունը, - կարդում ենք այնտեղ, - առանց փամփուշտի, առանց դրամի, առանց արտաքին աշխարհի հետ կապի, առաջվա պես փորձում է զորքի և բնակչության ընկնող ոգին պահպանել Ռուսաստանի հետ շուտով կապ հաստատելու և ռուս բոլշևիկներից շտապ օգնություն ստանալու մասին խոստումներով, բայց քանի որ բոլոր այդ խոստումները չեն իրականացվում, ապա բնակչությունը դադարում է նրանց հավատալ և սկսում է հույսը կորցնել: Մուստաֆա Քեմալը Խալիլ փաշայի միջոցով որոշակի հայտարարում է, որ այսպիսի պայմաններում ազգայնականները ի վիճակի են շարունակել պայքարը ոչ ավելի, քան մեկ ամիս ևս, և եթե այդ ամսվա ընթացքում Խորհրդային Ռուսաստանի հետ կապ չհաստատվի և վերջինիս կողմից նյութական օգնություն ու բարոյական աջակցություն ցույց չտրվի, ապա ազգային

[14] **Ս. Բ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 84:
[15] Նույն տեղում, էջ 75-76:

շարժումը կճնշվի, Թ. Ա. Մ. Ժ. կառավարությունը կտապալվի, իսկ նրա ղեկավարներին կմնա փրկվել փախուստով Խորհրդային Ռուսաստան»[16]:

Այսպիսով, միանգամայնորեն պարզ է, որ այս փաստաթղթում տուրք տալով քեմալականների բարոյական ճնշումներին, Անտանտի դեմ պայքարում դաշնակցին չկորցնելու վախով, հիմնավորվում էր Հայաստանի վրա նրա հարձակվելու անհրաժեշտությունը, քանի որ Ռուսաստանի հետ կապի ապահովումը հենց դա էր նշանակում: Ահա, թե ինչով պետք է պայմանավորել Սարիղամիշ–Շահթախտ գծի թուրքերի կողմից գրավելուն Չիչերինի համաձայնությունը: Թուրքիայի բարոյական ճնշումը Ռուսաստանի վրա, այն վախի ներշնչումով, որ ազգայնական շարժումը Անատոլիայում կտապալվի նրան Հայաստանի վրայով չմիավորվելու դեպքում, հաստատում է նաև Խեյֆեցը, գրելով, որ սեպտեմբերի 18–ին Թուրքիայում Ռուսատանի ներկայացուցիչ Շալուա Էլիավան Բաքվից հեռագրում է Մոսկվա՝ Չիչերինին այն մասին, որ Քեմալը, Կարաբեքիրը և Խալիլը գտնում են, որ եթե շարունակվի Թուրքիայի շրջափակումը մեկ - երկու ամիս, ապա անատոլիական շարժումը կվերանա նույն աշնանը[17]: Այս ամենից եզրակացությունը մեկն է՝ Ռուսատանը չէր կարող զսպել թուրքերի Շահթախտ - Նախիջևան գծից առաջացումը, ինչքան էլ դա նրա համար լիներ անցանկալի: Այլ խոսքով՝ չէր կարող կանխել թուրք – հայկական պատերազմը, որն սկսվեց սեպտեմբերի 28-ին:

Վերջնական եզրակացությունները հետևյալներն են.

Առաջին. Ռուս-թուրքական 1920թ. համաձայնագի նախագիծն ամենևին այն ենթադրությանը չպետք է տեղիք տա, որ Հայաստանի բաժանումն արդեն ծրագրված էր և որոշակիացված բուն հայկական տարածքներից Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի բաժնեմասերի չափերը:

Երկրորդ. Ռուսաստանի կողմից Սարիղամիշ – Շահթախտ գծի քեմալականների կողմից գրավելուն տրված համաձայնությունն ամենևին չպետք է նշանակի, որ Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումը եղել է բոլշևիկ-քեմալական համատեղ պլանավորման արդյունք:

Երրորդ. Այդ համաձայնությունը բացեց թուրքերի ձեռքերը և նրանք զնացին հայ – թուրքական պատերազմին, համոզված, որ ռուսները արգելք չեն հանդիսանա դրան, քանզի ունեին առավել կարևոր խնդիր, այն է՝ Թուրքիային օժանդակելով դուրս մղել Դաշնակիցներին նեղուցներից: Մյուս կողմից էլ դրան արգելք էր ծառանում քեմալականների կողմից արևելքի հեղափոխականացման անհրաժեշտության ձևական քարոզչությունը, որն ընթանում էր Հայաստանին իմպերիալիզմի դաշնակից համարելու քարոզչության զուգորդությամբ:

---

[16] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 2:
[17] А. Н. Хейфец, նշվ. աշխ., էջ 131:

Ստեղծված պայմաններում բոլշևիկներին մնում էր գնալ Հայաստանի խորհրդայնացմանը, որը թուրքական առաջխաղացման դեպքում արդեն պետք է նշանակեր Հայաստանի բաժանում, իսկ Հայաստանի Հանրապետությանն՝ ապավինել իր ուժերին, որն արդեն տարբեր պատճառներով խոստումնալից ուղի չէր:

Բանալի բառեր - Համաձայնագրի նախագիծ, ռուս – թուրքական համաձայնություն, Խորհրդային Ռուսաստան, Քեմալական Թուրքիա, Դաշնակիցներ, նեղուցներ, խորհրդայնացում, Հայաստան, Ադրբեջան, համաշխարհային հեղափոխություն, Հայաստանի բաժանում, Արևելք, ժողովուրդներ, համագումար, Սարիղամիշ, Շահթախտ, բոլշևիկներ, քեմալականներ:

Աշոտ Ներսիսյան, 1920թ. օգոստոսի 24-ի ռուս - թուրքական համաձայնագրի նախագծի քննական վերլուծություն-Հոդվածում քննական վերլուծության է ենթարկվում 1920թ. օգոստոսի 24–ի ռուս–թուրքական համաձայնագրի նախագիծը: Այնտեղ ապացուցվում է, որ համաձայնագրի նախագիծն ամենևին այն ենթադրությանը չպետք է տեղիք տա, որ դրանով Հայաստանի բաժանումն արդեն ծրագրված էր և ճշտված էին բուն հայկական տարածքներից Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի բաժնեմասերի չափերը: Ռուսաստանի կողմից Սարիղամիշ – Շահթախտ գծի քեմալականների կողմից գրավելուն տրված համաձայնությունն ամենևին չի նշանակում, որ Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումը եղել է բոլշևիկ–քեմալական համատեղ պլանավորման արդյունք: Այդ համաձայնության նախագիծը պարզապես բացեց թուրքերի ձեռքերը և նրանք գնացին հայ–թուրքական պատերազմին, համոզված, որ ռուսները արգելք չեն հանդիսանա դրան, քանի որ ունեին առավել կարևոր խնդիր, որն էր՝ Թուրքիային օժանդակելով դուրս մղել Դաշնակիցներին նեղուցներից: Ստեղծված պայմաններում բոլշևիկներին մնում էր գնալ Հայաստանի խորհրդայնացմանը, որը թուրքական առաջխաղացման դեպքում արդեն պետք է նշանակեր Հայաստանի բաժանում, իսկ Հայաստանի Հանրապետությանն՝ ապավինել իր ուժերին, որն արդեն տարբեր պատճառներով խոստումնալից ուղի չէր:

Ашот Нерсисян, Анализ обсуждения проекта русско-турецкого соглашения 24 августа 1920 года. - В статье подвергается рассуждению анализ обсуждения проекта русско – турецкого соглашения 24 – ого августа 1920 – ого года. Здесь доказано, что проект соглашения никак не должен дать место предположению тому, что этим раздел Армении уже был спланирован и были уточнены размеры доль России, Турции и Азербайджана от армянских територий. Данное соглошение со стороны России на взятие линии Саригамиш – Шагтахт армией Кемаля совершенно не значит, что нападение Турции на Армению было результатом совместного плана кемаля – большевиков. План

этого соглашения просто дал свбоду рукам турков и они пошли на армяно – турецкую войну, убежденные, что русские не станут препятствовать этому, так как имели более важную задачу, способствуя Турции вывести союзников из проливов.

В создавшихся условиях большевикам оставалось пойти на то чтоб Армения стала Советской, что в случаи продвижения турков уже должно было означать раздел Армении а Республика Армении полагалась на свои силы, что уже по разным причинам, было не многообещающей прямой.

Ashot Nersisyan, The analysis of discussion of the draft of Russian - Turkish agreement on August 24, 1920. - The paper deals with the discussion of the draft of the Russian - Turkish agreement on August 24, 1920. One proves that the draft of the agreement should provide no place for the assumption that the partition of Armenia was already planned and the proportions of the shares of Russia, Turkey and Azerbaijan from the Armenian territories were specified. This commitment by Russia to take the Sarigamish-Shahtakht line by the Kemal army does not mean that the Turkish attack on Armenia was the result of a joint Kemal – Bolsheviks' plan at all. The plan of this agreement just gave to the Turks free hands and they went to the Armenian - Turkish war, having been convinced that the Russians would not stop them, since they had a more important task – to help Turkey in withdrawing the allies from the straits. Under these conditions, the Bolsheviks had no way except sovietization of Armenia, which, in the case of the advancement of the Turks, should have meant the partition of Armenia, and the Republic of Armenia relied on its own forces, which was not promising for various reasons.

ԱԲԲԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ, ԲԱՂԴԱԴԻ ԳՐԱՒՈՒՄԸ ՄՈՆՂՈԼՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ 1258Թ. ԵՒ ՀԱՅՈՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՊԵՏՐՈՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ

Այս յօդուածով պիտի փորձենք լուսաբանել՝ Հայոց մասնակցութեան հարցը Աբբասեան Խալիֆայութեան անկման՝ Բաղդադի գրաւումով մոնղոլներու կողմէ 1258թ., որովհետեւ այս առնչութեամբ շատ անճիշդ կարծիքներ յայտնուած են, եւ չափազանցուած ոճով յիշատակութիւնները կը խեղաթիւրեն պատմութիւնը:

ԺԳ. Դարը եղաւ համաշխարհային նոր գերուժի մը յայտնութեան շրջանը, հիմնադրութիւնը հեռաւոր արեւելքի մէջ մոնղոլական միացեալ պետութեան: Մոնղոլները կը բնակէին Սիբիրի եւ Չինաստանի միջեւ գտնուող տարածքներուն մէջ: 1206 թ. անոնք համախմբուեցան իրենց ցեղապետներէն Տեմուչինի ղեկավարութեան ներքեւ, որուն կոչեցին Չինգիզխան. այսինքն Մեծ Խան:

Միացեալ մոնղոլական պետութիւնը սկսաւ իր նուաճողական արշաւանքները դէպի արեւմուտք, ու յաջողեցաւ նուաճել 1219-1220 թուականներուն ամբողջ Միջին Ասիան եւ Պարսկաստանի հիւսիսային մասը: Չինգիզխան 1220թ. գրաւեց Խուարզմիներու մայրաքաղաքը եւ վերջ տուաւ անոնց պետութեանը: Խուարիզմի թագաժառանգ Ջալալեդինը հեռացաւ երկրէն դէպի Հնդկաստան. ան 1225թ. վերադարձաւ Պարսկաստան եւ նոր բանակ կազմեց պատերազմելու մոնղոլներու դէմ, որոնք որոշեցին վերջնականապէս ջախջախել Ջալալեդինին:

Շուտով մոնղոլական ուժերը յարձակեցան Հայաստանի վրայ, *«Մոնղոլական զօրքերը, որոնք յետապնդում էին Ջալալեդինին, 1231-1232թ. ասպատակեցին Հայաստանի շատ շրջաններ: Նրանք կողոպուտի եւ աւերածութեան ենթարկեցին Վասպուրականի, Ամիդի, Արզնի եւ Մայաֆարկինի շրջանները, կողոպտեցին Վարագա վանքը, գրաւեցին Բերկրի ու Արձեշ քաղաքները, սրի քաշեցին նրանց բնակչութեանը եւ շարժուեցին դէպի Հայաստանի հիւսիս-արեւելեան շրջանները»*.[1]

Կիլիկիոյ Հայկական հարստութեան թագաւորներէն Հեթում Ա. (1226-1269), ժամանակակից եղաւ Բաղդադի Աբբասեան Խալիֆայութեան ալ-Մուսթաըս՛մ (1242-1258) վերջին խալիֆային: Պատմականօրէն հնարաւոր չեղաւ որեւէ տեղեկութիւններ գտնել այս երկու գահակալներու յարաբերութիւններու մասին[2]: Ինչ որ հաստատ է, որ Հեթում Ա. նկատի ունենալով Կիլիկիոյ Հայկական թագաւորութեան շահերը, բարեկամական կապեր հաստատեց մոնղոլներու հետ,

---

[1] **Հ. Գ. Ժամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Մ. Պ. Պօղոսեան,** Հայ Ժողովրդի Պատմութիւն, ԵՊՀ, Երեվան, 1975, էջ 582:

[2] **Պետրոս Մ. Թովմասեան,** Աբբասեան Խալիֆայութեան Վերջին Պատմաշրջանը եւ Հայութիւնը, ՀՀ ԳԱԱ, Երեւան 2016, էջ 153, 154:

երբ անոնք մտան Փոքր Ասիա եւ սպառնալից դարձան Կիլիկեան Հայաստանին: Հարկաւոր է այստեղ պարզել, թէ Կիլիկիոյ Հայկական թագաւորութիւնը իր գոյութիւնը պահպանելու համար, մշտական պայքարի մէջ էր հարեւան մահմեդական պետութիւններուն հետ. եւ մոնղոլներու ոչ-մահմեդական ըլլալը այդ պատմահանգրուանին, դուռը լայն բացաւ երկու կողմերու միջեւ բարեկամութիւն հաստատելու:

Բնականաբար Հեթում Ա-ի գերագոյն նպատակն էր իր թագաւորութիւնը զերծ պահել մոնղոլներու աւերիչ արշաւանքներէն, եւ հետեւաբար այդ կը պահանջէր մոնղոլներու հետ ամրապնդել կապերը քաղաքական պայմանագիրով մը. այդ նպատակով 1248թ. Սմբատ Սպարապետ, եւ 1254թ. Հեթում Ա. ստիպուեցան մեկնիլ շատ հեռաւոր Կարակորում քաղաքը, ուր մոնղոլներու մեծ խանին հետ կնքեցին բարեկամութեան պայմանագիր մը: Վստահաբար կարելի չէր մերժել Մանգու խանին մօտ երթալը. այդ պիտի ունենար շատ բացասական հետեւանքներ, ան դաւաճան պիտի նկատուէր մոնղոլներու կողմէ. մէջբերենք այս պայմանագիրի մասին հետեւեալը, *«Մոնղոլները երաշխաւորում էին Հայոց թագաւորութեան սահմանների անխախտութիւնը, պարտաւորւում ռազմական օգնութիւն ցուցաբերել շրջակայ մահմեդական պետութիւնների յարձակումների ժամանակ, հայ առեւտրականներին շնորհւում էր արտօնեալ կարգավիճակ մոնղոլական տիրակալութեան շրջաններում, որոշ չափով թեթեւանում էին մայր Հայաստանից գանձւող հարկերը: Հայոց թագաւորութիւնը պարտաւորւում էր օգնել մոնղոլներին՝ Միջագետքը, Ասորիքը եւ Պաղեստինը գրաւելու ժամանակ: Հայ-մոնղոլական պայմանագիրը մինչեւ XIII դարի վերջը նշանակալից դեր խաղաց դրացի մահմեդական պետութիւններու դէմ հայերի պայքարում»*[3]: Այսպէս, մոնղոլներու Մանգու խանը հաստատեց Հեթում Ա-ի եւ մոնղոլներու Բաչու Նուինի միջեւ 1243թ. կնքուած բարեկամութեան պայմանագիրը:

Համաձայն Հեթում վանական պատմիչին[4]՝ Մանգու խանը մեծ համակրանք ունէր քրիստոնեաներու նկատմամբ. իսկ Բաղդադի խալիֆայի հարցով, որպէս թէ Հեթում Ա. խնդրած է Մանգու խանէն արշաւել Բաղդադի վրայ. *«Եթէ հաւատալու լինենք հայ ժամանակագիրներին, ապա մեծ խանը Հայոց Թագաւորին նոյնիսկ խոստացել էր մի արշաւանք ձեռնարկել Բաղդադի խալիֆի եւ Սիրիայի մահմեդականների դէմ: Այս պնդումը կասկածի տակ է առնւում որպէս չափազանցութիւն: Այնուամենայնիւ, թւում է, որ այն իսկապէս համապատասխանում էր մոնղոլական քաղաքականութեան կողմից մշակուած մի*

---

[3] **Հր. Ռ. Սիմոնեան,** Հայոց Պատմութիւն-Հիմնահարցեր Հնագոյն Ժամանակներէն Մինչեւ Մեր Օրերը, Երեւան, Զանգակ, 2000, էջ 665:

[4] **Հեթում Պատմիչ,** Կիլիկեան Հայաստանի 13-14-րդ պատմագիր եւ պետական գործիչ. իր ծննդեան եւ մահուան թուականները անյայտ են: Գրած է թաթար-մոնղոլներու պատմությունը, ուր արժեքաւոր տեղեկութիւններ կան նաեւ Միջին Արեւելքի եւ Հայաստանի մասին:

ծրագրի, ծրագիր, որը կոնկրետ այս հարցում չպէտք է հապաղեր գտնելու իր կիրառումը»[5]:

Մեր կարծիքով Մոնղոլները, մէկէ աւելի պատճառներով, որոշած էին գործադրել Բաղդադի գրաւումը եւ Աբբասեան Խալիֆայութեան կործանումը: Բաղդադի նուաճումը քաղաքական եւ ռազմավարական մեծ նշանակութիւն կ'ունենար եւ մեծապէս պիտի դիւրացնէր մոնղոլներու տիրապետութեան ընդարձակումը տարածաշրջանին մէջ, ինչ որ հսկայ ներուժ պիտի տար իրենց աշխարհակալութիւններուն: Միւս կողմէն, մոնղոլները տնտեսապէս մեծ օգուտներ պիտի քաղէին Բաղդադի գրաւումով, որ անցեալ հինգ դարերուն համաշխարհային առեւտուրի խոշորագոյն կեդրոնն էր Մերձաւոր Արեւելքի մէջ, եւ առեւտրական բոլոր ճանապարհները անպայման պիտի անցնէին Բաղդադով: Ինչպէս եւ Բաղդադի գրաւումով հսկայական կուտակուած հարստութիւն պիտի անցնէր Մոնղոլներու ձեռքը. Կիրակոս Գանձակեցի յիշած է, թէ որքան մեծ հարստութիւն վերցուցին Մոնղոլները Հուլաղուի հրամանով երբ գրաւեցին Բաղդադը, *«Հրաման տուեց ամբողջ զօրքին վերցնել քաղաքի ինչքն ու ստացուածքը: Ամէնքը ոսկով, արծաթով, թանկագին քարերով, մարգարիտներով, մեծագին հանդերձանքով լիացան, որովհետեւ քաղաքը այնքան շատ հարուստ էր, որ աշխարհում նրա նման քաղաք չկար: Ինքը Հուլավուն իր համար բաժին վերցրեց խալիֆայի գանձերը. դրանից երեք հազար վեց հարիւր ուղտի բեռ բարձեց, իսկ ձիերը, ջորիները, էշերը թիւ չունին: Եւ միւս տները գանձերով լիքը իր մատանիով կնքեց ու պահապաններ դրեց, որովհետեւ այնքան շատ էին, որ բոլորը չկարողացաւ բարձել»*:[6] Այս եւ այլ պատճառներ, մեզի կը թելադրեն, թէ մոնղոլները կարիքը չունէին այլ թագաւորէ մը Բաղդադը գրաւելու առաջարկ լսելու, ըլլար ան Հեթում Ա.ը, կամ մէկ ուրիշը:

Մոնղոլները հիմնայատակ կործանեցին արաբական եւ իսլամական փառքի, մշակոյթի եւ գիտութեան կարեւորագոյն կեդրոնը: Հազար ու մէկ գիշերներու ոստանը՝ Բաղդադը կործանեցաւ եւ 800 հազար բնակիչներ զանգուածաբար բնաջնջուեցան: Բաղդադի կործանումը Իսլամ աշխարհը ձգեց խորապէս խոցուած վիճակի մէջ: Ոմանք Բաղդադի կործանումը եւ Աբբասեան Խալիֆայութեան վերջը չեն գտներ մոնղոլներու արշաւանքի մէջ, որ մեծապէս ունի իր էական իմաստը. այսպէս մէջբերենք հետեւեալը, *«Բայց իրական նշանակալիցը այս կործանիչ իրողութեան շատ չափազանցուած է: Դասական Իսլամ քաղաքակրթութեան Ոսկէ Դարը շատ վաղուց վերջացած էր, եւ Մոնղոլները նուաճեցին ընկերութիւն մը, որուն մէջ քայքայումը շատ զարգացած էր: Խալիֆայութիւնը կորսնցուցած էր իր զօրութեան մեծ մասը, եւ Բաղդադի Խա-*

---

[5] **Լեւոն Տէր Պետրոսեան,** Խաչակիրները եւ Հայերը, հատոր Ա., Երեւան 2005, էջ 342:

[6] **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց Պատմութիւն, «Սովետական Գրող» (Հայ Մատենագիրներ), Երեւան 1982, էջ 273, 274:

լիֆայութիւնը կործանելու համար Մոնղոլները ըրին շատ քիչ բան, քան թէ քանդել բանի մը ուրուականը, որ արդէն մեռած էր»[7]:

Անհրաժեշտ է զգուշութեամբ մօտենալ Հեթում պատմիչի պատմական տեղեկութիւններուն՝ Հեթում Ա-ի եւ Մանգու խանի փոխյարաբերութիւններու հարցով: Հեթում վանական պատմիչը, խօսնակն էր հայ քրիստոնեայ ղեկավար խաւի ցանկութիւններուն. եւ ան իր «Արեւելեան ժողովուրդներու պատմութիւն» աշխատութեան մէջ յիշած է այդ պայմանագրութեան մէջ Հեթում Ա-ի եօթ ցանկութիւններն ու առաջարկութիւնները. ու յիշած է նաեւ Մանգու խանի պատասխանները: Մեզի կը հետաքրքրէ հինգերորդ կէտը, *«Մեծ խան Մանգուն, քննութեան առնելով հայոց թագաւորի այդ առաջարկութիւններն ու ցանկութիւնները, ընդունեց նրան (թագաւորին) եւ իր աստիճանաւորների ներկայութեամբ նրան կէտ առ կէտ մօտաւորապէս հետեւեալ պատասխանը տուեց.*

5) ինքը եւս ցանկանում է Բաղդադի խալիֆի՝ իր չարանենգ թշնամու ոչնչացումը»[8]:

Նախ որեւէ պատմիչի մը հաղորդած տեղեկութիւններու ճշգրիտութիւնը քննելու համար, հարկաւոր է հասկնալ յիշեալ պատմիչի ապրած ժամանակաշրջանը եւ իր անձնական հակումները: Հեթում պատմիչը ապրեցաւ եւ գրեց իր Պատմութիւնը Կիլիկեան Հայաստանի Հեթում Բ. թագաւորի ժամանակ, երբ 14-դարի սկզբը Կաթոլիկ Աշխարհը Պապութեան ղեկավարութեամբ կը փորձէր կազմակերպել Խաչակրաց նոր արշաւանք մը, Երուսաղէմը Եգիպտոսի իշխանութենէն ազատելու համար: Այդ ժամանակ կը ծրագրուէր Կիլիկիան Հայաստանը դաշնակից ունենալու. եւ Հեթում պատմիչը կողմնակից էր Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան միացումին Պապականութեան հետ. ան եղած է ջատագովը այդ քաղաքականութեան: Այս հարցով Հեթում պատմիչի քաղաքական գործունէութեան մասին Գրիգոր Միքայէլեան կը գրէ, *«Հաւանաբար, ցանկացել է պապական իշխանութեանը ցոյց տալ, որ դեռ Հեթումեանների դինաստիայի հիմնադիր Հեթում I-ն է փորձել նպաստելու քրիստոնեութեան յաղթանակին Արեւելքում, այդ նպատակով է նա հեռաւոր ճանապարհորդութիւն կատարել դէպի Ղարաղորում եւ մեծ խանին հորդորել՝ քրիստոնէութիւն ընդունելու, որ իսլամի դէմ պայքարելու համար նրա հետ ռազմական դաշինք է կնքել եւ Մանգու խանին դրդել պատերազմելու ընդդեմ Բաղդադի ու Եգիպտոսի մուսուլմանների, այսինքն՝ քրիստոնեաների գլխաւոր թշնամիների»*[9]:

---

[7] **Bernard Lewis,** Islam in History, p. 192, Open Court Publishing, Chicago USA 1993.

[8] **Ա. Գ. Սուքիասեան,** Կիլիկիայի Հայկական Պետութեան եւ Իրաւունքի Պատմութիւն (XI-XIV Դարեր), ԵՊՀ, Երեւան 1978, էջ 73, 74:

[9] **Գրիգոր Միքայէլեան,** Կիլիկիայի Հայկական Պետութեան Պատմութիւն, ԵՊՀ, Երեւան 2007, էջ 319:

Մոնղոլները պայմանագիրներ կը կնքէին տարածքաշրջանի այն ուժերուն հետ, որոնք կը ճանչնային իրենց գերիշխանութիւնը. համաձայն այդ պայմանագիրներուն, անոնք պարտաւորուած էին մասնակցելու մոնղոլներու կազմակերպած արշաւանքներուն: Այդպէս, կարելի է ըսել, որ Կիլիկիոյ Հայկական թագաւորութեան գահակալը՝ Հեթում Ա. դարձած էր մոնղոլներու մեծ խանի կառավարիչներէն մէկը, ու հետեւաբար պարտաւոր էր տուրք վճարել եւ մասնակցիլ անոր կազմակերպած արշաւանքներուն: Այդ հիման վրայ, կարելի է ըսել, որ հայկական ուժերու մասնակցութիւնը Բաղդադի վրայ կայացած մոնղոլական մեծ արշաւանքին շատ հաւանական էր: Այս բոլորէն, յստակ, կարելի է տեսնել մոնղոլներու կողմէ հայոց վրայ պարտադրուած համագործակցութիւն մը:

Բազմաթիւ հայ հեղինակներու կողմէ գրուած է, թէ մոնղոլներուն օգնութեան հասան հայերը. այնպիսի տպաւորութիւն ձգելով, որ եթէ հայոց մասնակցութիւնը չըլլար, մոնղոլները պիտի չկարենային այդ արշաւանքը յաջողութեամբ պսակել. այսպէս օրինակ մը, *«Հուլաղու խանի պահանջով նրան զօրքով օգնութեան հասան Կիլիկիայի հայոց թագաւոր Հեթում 1-ը եւ սրա փեսան Անտիոքի արքայազն Բոհեմունդ 6-րդը»*[10]:

Անդրանիկ Չալաբեան քաղելով Սիմոնեանէն, յիշած է, թէ Հեթումը օգնեց Հուլաղուին իր արշաւանքի ընթացքին Միջագետքի վրայ 12,000 ձիաւորով եւ 40,000 հետիոտն զօրքով[11]: Նոյն գործին մէջ՝ մէկ այլ տեղ, կը յիշէ, որ Հեթում Ա-ի ժամանակ Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը ունէր մօտաւորապէս մէկ միլիոն բնակչութիւն[12]: Պարզ է, որ այդ բնակչութեամբ պետութիւն մը, ի վիճակի չէր 52,000ի հասնող բանակ մը ղրկել երկրէն դուրս արշաւանքի մասնակցելու: Նոյնիսկ եթէ ընդունինք 60,000 զօրքի յիշատակութիւնը, *«12-14-րդ դարերում Կիլիկեան հայկական թագաւորութեան բանակի թիւը պատերազմի ժամանակ անցնում էր 60,000 զինուորից»*[13]: Արշաւանքին 52,000 զօրքով մասնակցիլը կը նշանակէր վտանգել Կիլիկիոյ ապահովութիւնը, մանաւանդ, որ Կիլիկեան գրեթէ շրջափակուած էր մահմեդական պետութիւններով եւ իշխանութիւններով, որոնք խաղաղ աչքերով չէին նայէր Կիլիկիոյ հայկական քրիստոնեայ պետութեան գոյութեանը իրենց հարեւանութեամբ. հետեւաբար Կիլիկեան Հայաստանի պաշտպանութիւնը յաւելեալ զօրքի կը կարօտէր...:

Հրանդ Պաստրմաճեան Կիլիկիոյ հայկական պետութեան ռազմական ուժը շատ աւելի քիչ կը նկատէ. Կիլիկիոյ եւ անոր հարեւան մահմեդական բանակ-

---

[10] **Սեդա Մուրադեան,** Իրաքի Հայ Համայնքը, Պայքար, Երեւան, 1997, էջ 18:

[11] **Antranig Chalabian,** Armenia After the coming of Islam, 2nd printing, Southfield, Michigan, 2002, p. 219.

[12] **Antranig Chalabian,** same 222, from M. G. Nersisian, ed., Hai Zhoghovrdi Patmutiun [History of the Armenian People]. Erevan, 1972, p. 248.

[13] **Արմէն Այվազեան,** Հայկական Ինքնութեան Հիմնաքարերը, Արարատ Ռազմավարական Կենտրոն, Երեւան 2007, էջ 25. քաղուած Սմբատա սպարապետի տարեգիրք, Վենետիկ-Ս. Ղազար, 1956 էջ 231:

ներու թիւի մասին յիշած է, *«Նոր Հայաստանի տրամադրութեան տակ գտնուող բանակները, որոնք կը հասնէին մօտ 5000ի եւ կարգ մը պարագաներուն, ինչպէս Թորոս Ա.ի եւ Լեւոն Բ.ի օրով, բարձրացած մինչեւ 10000ի, կարեւոր ուժ մը կը ներկայացնէին: Մահմեդական պետութեանց ուժերը, ինչպէս օրինակ Հալէպի եւ Դամասկոսի սուլթանութիւններունը, նմանապէս սահմանափակ էին: Անոնցմէ իւրաքանչիւրը հազուադէպօրէն կրցած են զէնքի տակ առնել 10000 հոգի»*[14]:

Համաձայն Գրիգոր Միքայէլեանի, Հեթում Ա. չէ մասնակցած մեծ արշաւանքին, *«Հեթում I թագաւորը Բաղդադի վրայ մոնղոլների արշաւանքի ժամանակ զբաղուած էր Իկոնիայի սուլթանութեան հետ պատերազմելով: Այս կամ այն պատճառով նա Բաղդադի պաշարմանը չի մասնակցել»*[15]: Հեթում պատմիչն ալ, որուն մասին անդրադարձանք, չէ նշած հայոց մասնակցութիւնը, *«Նոյնիսկ Հեթում պատմիչը, որը բերում է Մանգու խանի հետ Հեթում թագաւորի կնքած ռազմական դաշինքի պատմութիւնը, նկարագրելով մոնղոլների ներխուժումը Իկոնիա եւ նրանց կողմից Բաղդադի գրաւումը, ոչինչ չի ասում այդ ռազմական գործողութիւններին հայոց թագաւորի մասնակցութեան մասին-»*[16]: Պէտք է նշել, թէ Հեթում Ա-ի գործօն մասնակցութիւնը Հուլաղու խանի արշաւանքներուն սկսած է 1259թ. ետք, երբ մոնղոլները Բաղդադի գրաւումէն տարի մը ետք ներխուժեցին Սուրիա:

Մոնղոլական մեծ պետութիւնը բաժնուած էր չորս մասերու, կամ ինչպէս կոչուեցաւ Ուլուսներու: Մանգու խանի ժամանակ (1251-1259) Հայաստանը մաս կը կազմէր այն Ուլուսին, որուն կառավարիչ նշանակուեցաւ Մանգու խանի եղբայրը՝ Հուլաղուն: 1255թ. ան եկաւ Թաւրիզ, սկսելու համար իր պատմական հռչակաւոր արշաւանքը Միջագետքի եւ Ասորիքի վրայ 1258թ., երբ գրաւեց Բաղդադը, ու վերջ տուաւ Աբբասեան խալիֆայութեան:

Կիրակոս Գանձակեցի[17] բաւական մանրամասն տեղեկութիւններ գրած է Բաղդադի անկման մասին. եւ յիշած է թէ այդ բոլորը իրեն պատմած է հայազգի Հասան իշխանը, որուն Պռօշ կ'անուանէին, որ մեծ պատիւով յարգուած էր Հուլաղու խանի մօտ[18]:

Հայ եւ Վրացի իշխանները մասնակցած են մոնղոլական մեծ արշաւանքին Բաղդադի վրայ. անոնք ստիպուած էին իրենց մասնակցութիւնը բերելու.[19] *«Հուլ-*

---

[14] **Հրանդ Պաստրմաճեան,** Հայոց Պատմութիւն Ա. Հատոր, թարգմանեց Մ. Իշխան, Բէյրութ, Համազգային 1954, էջ 277:

[15] **Գրիգոր Միքայէլեան** Կիլիկիայի Հայկական Պետութեան Պատմութիւն, ԵՊՀ, Երեւան 2007, էջ 324:

[16] **Գրիգոր Միքայէլեան,** Նոյնը, էջ 322:

[17] Կիրակոս Գանձակեցիի (1203-1271) հռչակաւոր գործն է Հայոց Պատմութիւն, որուն կարեւորագոյն մասը կը սկսի գրել իրեն ժամանակակից անցքերու մասին 1195-1265 թուականներու միջեւ. իր աղբիւրներն են ժամանակակից Կիլիկիոյ Հեթում Ա. թագաւոր, Պռօշ իշխանը, եւ ուրիշներ:

[18] **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց Պատմութիւն, էջ 274, 275:

[19] **Գրիգոր Միքայէլեան,** Նոյնը, էջ 322:

ավուն հրաման տուեց բոլոր իրեն հնազանդուածներին ընդհանրապէս՝ գնալու արաբական մայրաքաղաք Բաղդադի վրայ, որ արաբների արքայանիստն էր»:[20]

Ըստ Կիրակոս Գանձակեցիի, Շահնշահի որդի Զաքարէ իշխանը եւ Հասան-Պռոշ իշխանը մասնակցեցան այդ մեծ արշաւանքին: Զաքարէ իշխանը մասնակցեցաւ հայ-վրացական զօրքերով. եւ իր քաջութեան շնորհիւ վաստակեց Հուլաղու խանի համակրանքը[21]: Իսկ Հասան-Պռոշը Հուլաղուի կողմէ Աբբասեան վերջին խալիֆային ալ-Մուսթաըս՛մ (1242-1258) ղրկուած պատուիրակութեան անդամներէն էր: Հայ ժամանակագիրները կը յիշեն մէկէ աւելի հայ իշխաններու անուններ, *«Հոլավուի արշաւանքին կը մասնակցէին նաեւ Հայ իշխաններ իրենց զօրագունդերով, ինչպէս՝ Շահնշահի որդի Զաքարէն, Խաղբակեան Վասակի որդի Հասան Պռոշ, Գրիգոր Խաչէնցիի որդի Սեւադա, Բագրատունեաց շառաւիղ Կիւրիկէի որդի Թաղիադին, եւ ուրիշներ»*[22]:

Երբ Հուլաղուն արշաւեց Բաղդադի վրայ, ան հրամայեց նաեւ Մոս՛ուլի Իշ-ախանապետութեան հայազգի իշխանապետ Բադր ալ-Դին Լուլուին, որ զօրք ղրկէ մասնակցելու Բաղդադի վրայ արշաւող զօրքերուն հետ: Բադր ալ-Դին Լուլուն, որ իսլամացած հայ մըն էր, դիտումնաւոր ուշացաւ զօրք ուղարկելու, չուզելով իր մասնակցութիւնը բերել Խալիֆայութեան անկման գործին: Սակայն երբ Հուլաղուն գրաւեց Բաղդադը, Բադր ալ-Դին Լուլուն ստիպուած անոր մօտ ղրկեց իր որդին ալ-Մալըք ալ-Ս՛ալահ Իսմաիլ փոքրիկ զօրագունդով մը: Մէջբերենք Իբն ալ-Իբրիէն *«Հուլաղուն գայրացաւ եւ ըսաւ դուք սպասեցիք մինչեւ որ տեսնէք ով է յաղթական, եթէ Խալիֆան յաղթէր պիտի գայիք իրեն մօտ եւ ոչ թէ մեր մօտ: Հուլաղուն ըսաւ, ըսէ հօրդ (Բադր ալ-Դին Լուլու)ին որ ես զարմացած եմ իր դիրքորոշումէն: Երբ այս լուրը հասաւ Բադր ալ-Դին Լուլուին, ան զգաց, որ Հուլաղուն զինք պիտի պատժէ, ուստի հաւաքեց դրամներ, մարգարիտներ եւ արժէքաւոր նուէրներ ու անձամբ գնաց Հուլաղուի մօտ, որ այդ ժամանակ Համատանի լեռներու մէջ էր»*[23]: Հուլաղոն լաւ վարուեցաւ Բադր ալ-Դին Լուլուի հետ, իր ծեր տարիքը եւ բերած նուէրները նկատի ունենալով, ներեց զինք. սակայն Բադր ալ-Դին Լուլու յաջորդ տարի բնական մահով մահացաւ, իշխելով մօտաւորապէս կէս դար 1211-1259թ.:

Անհրաժեշտ է այստեղ լուսաբանել շատ կարեւոր հարց մը. Աբբասեան Խալիֆայութեան անկումը ճիշդ չէ ամբողջութեամբ նկատել, որպէս արշաւանք մը մահմեդականութեան դէմ, այսինքն կրօնական ազդակը հիմնական դրդապատճառը չէր ինչպէս անդրադարձանք: Ճիշդ է մոնղոլները այդ

---

[20] **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց Պատմութիւն, «Սովետական Գրող» (Հայ Մատենագիրներ), Երեւան 1982, էջ 270, 271:

[21] **Սերգէյ Վարդանեան,** Հայաստանի Մայրաքաղաքները, Երեւան, Ապոլոն 1995, էջ 179:

[22] Հայոց Պատմութիւն, հատոր II գիրք Երկրորդ, ՀՀԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, 2014, էջ 214, 299:

[23] **Իբն ալ-Իբրի,** Թարիխ Մուխթասըր ալ-Դուալ (Համառօտ Պատմութիւն Պետութեանց-Արաբերէն أبن العبري, تاريخ مختصر الدول, دار المشرق, الطبعة الثالثة, بيروت 1992), Դար ալ- Մաշրըկ, Գ. տպագրութիւն, Բէյրութ 1992, էջ 276, 277:

ժամանակ մահմեդական չէին[24], բայց անոնք քրիստոնեայ ալ չէին. աւելին Բաղդադի վրայ արշաւող զօրագունդերուն մէջ կային նաեւ մահմեդական զօրագունդեր:

Մոնղոլական արշաւող զօրքերուն մաս կը կազմէին մեծ թիւով թուրքեր: Թուրքերը մեծ դեր ունեցան մոնղոլական արշաւանքներուն եւ անոնց հիմնած պետութիւններուն մէջ. այս առնչութեամբ կ'արժէ մէջբերել հետեւեալը, *«Թուրքերը եւ Մոնղոլները ցեղային, մշակութային եւ լեզուական տարբերութիւններ ունէին, այսուհանդերձ շատ բան ունէին միատեղ: Երկուքն ալ եկան Միջին Արեւելք կեդրոնական եւ հիւսիսային Ասիոյ տափաստաններէն, ուր անոնք ունէին նոյն ապրելակերպը եւ ենթարկուեցան նոյնանման ազդեցութիւններու: Այս կցորդութիւնները Մոնղոլներուն մօտեցուցին Թուրքերուն եւ ոչ թէ՝ միւս ժողովուրդներուն, որոնց նուաճեցին: Չինգիզխան անձնապէս ունէր Օղուր Թուրք խորհրդատուներ եւ հրամայեց որդեգրել Օղուր գիրերը Մոնղոլական լեզուի համար: Մոնղոլները, քանակով քիչ, գլխաւորապէս վստահեցան թրքական օժանդակութեան պատերազմի եւ կառավարման մէջ»*[25]: Այսպէս միակ ժողովուրդը, որ մեծապէս օգտուեցաւ մոնղոլական արշաւանքներէն դէպի մեզի հետաքրքրող պատմատարածքը, թուրքերն էին. մէջբերենք եւս, հետեւեալը, *«Մոնղոլներու բանակի մեծամասնութիւնը կը բաղկանար Թուրքերէ, եւ Մոնղոլներու արշաւանքին որպէս տեւական արդիւնք, եղաւ մեծ թիւով Թուրքերու հաստատուիլը Իրանի եւ Անաթոլիայի մէջ: Աւելի ուշ, Օսմանական, Սեֆեան եւ Մողոլ հարստութիւնները՝ բոլորը իրենց ուժը ստացան Թրքական զօրքերէն»*[26]:

Խալիֆայի սպանութեան մասին Իբն ալ Ուարդին յիշած է, որ Աբբասեան վերջին խալիֆան փաթթելով գորգի մը մէջ կոխկոտելով մահացաւ. նաեւ կ'ըսուի թէ Տիգրիսի մէջ խեղդամահ եղաւ:[27] Վարդան Արեւելցի յիշած է, *«Հուլավուն իր ձեռքով սպաննեց նաեւ խալիֆին, որի անունը Մուսթասր էր»*:[28]

Ալ-Մուսթաս՛մի սպանութեան կերպը, որ յատուկ ընտրուեցաւ Հուլաղուի կողմէ՝ ունէր իր դրդապատճառները: Հուլաղուին միացած Բաղդադի վրայ արշաւող իսլամները անոր զգուշացուցած էին, որ եթէ խալիֆայի արիւնը գետնի վրայ թափի, ապա Երկիր մոլորակը պիտի պատուի խաւարով եւ մոնղոլներու բանակը պիտի կուլ երթայ ահաւոր երկրաշարժի[29]: Իբն ալ-Իբրին յիշած է այս առնչութեամբ, *«Արաբներէն ոմանք Հուլաղուին վախցուցած էին, եթէ այդ*

---

[24] Մոնղոլները ընդունեցին Իսլամը Աբբասեան Խալիֆայութեան կործանումէն (1258) կէս դարէ աւելի ետք՝ Ղազան խանի (1295-1304) գահակալման ժամանակ:

[25] **Bernard Lewis,** Islam in History, Open Court Publishing, Chicago USA 1993, p. 197.

[26] **Albert Hourani,** A History of The Arab Peoples, The Belknap Press of Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1991, p. 88.

[27] **Իբն ալ-Ուարդի,** Թարիխ Իբն ալ-Ուարդի, (Իբն ալ-Ուարդիի Պատմութիւնը-Արաբերէն أبن الوردي، تاريخ أبن الوردي، الجزء الثاني), Բ. հատոր, էջ 197:

[28] **Վարդան Արեւելցի**, Տիեզերական Պատմութիւն, ԵՊՀ, Երեւան 2001, էջ 199:

[29] **Fred James Hill & Nicholas Awde,** A History of the Islamic World, p.99, 100, Hippoocrene Books Inc., New York 2003.

մարդու (խալիֆային) արիւնը հեղուի գետնի վրայ, անձրեւ պիտի չտեղայ գետնի վրայ, եւ կրակ ու ածուխ պիտի պայթին»:[30]

Պատմականօրէն որեւէ յիշատակութիւն չկայ հայկական զօրագունդերու լուրջ մասնակցութիւնը, նոյնը չէր պարագան վրացական զորագունդերու պարագային: Բաղդադի քրիստոնեաներու փրկութեան մասին անդրադարձած է Իբն ալ-Իբրին, ուր ան անդրադարձած է վրացիներու մասնակցութեան մասին, *«Եւ Մոնղոլները քաշեցին իրենց սուրը ու մորթեցին Բաղդադի բոլոր ժողովուրդը- տասնեակ հազարաւոր տղամարդիկ-Վրացիները գործադրեցին խոշոր սպանդ մը: Եւ կաթողիկոսը՝ քրիստոնեաներուն հաւաքեց Երրորդ Բազար եկեղեցւոյ մէջ, եւ հոն անոնց պաշտպանեց, եւ ոչ մէկը քրիստոնեաներէն վիրաւորուեցաւ»*:[31] Բաղդադի անկումէն եւ կոտորածներէն փրկուեցան Բաղդադի քրիստոնեաները եւ հրեաները, շնորհիւ Հուլաղուի կնոջ՝ Տողուս Խաթունի բարեխօսութեան, որ քրիստոնեայ էր:[32] Բաղդադի քրիստոնեաներուն հետ փրկուեցան նաեւ անոնց տունները ապաստանած իրենց հարեւան մահմեդականները. փրկուեցան նաեւ մաս մը վաճառականներ, որոնք ապահովութեան երաշխիքներ ստացած էին մոնղոլ իշխաններէն, փրկուեցան նաեւ անոնց հարեւանները:[33] Բաղդադի գրաւման ժամանակ մոնղոլները պահակներ նշանակեցին պաշտպանելու Բաղդադի քրիստոնեաներու տունները, եւ ապա սկսան կոտորածը Բաղդադի իսլամ բնակչութեան: Այս որոշ չափով օգնեց փրկելու քաղաքի իսլամներէն շատերուն, անոնք ապաստանեցան Բաղդադի քրիստոնեաներու տունները (որոնցմէ մաս մը Բաղդադի հայոց տուներն էին) եւ փրկուեցան մոնղոլներու ջարդէն[34]:

Որպէս եզրակացութիւն նշենք, թէ Աբբասեան Խալիֆայութեան կոծանման հարուածը եկաւ մոնղոլներէն եւ անոնց դաշնակից թուրք եւ մահմեդական զօրագունդերէն, իսկ հայկական մասնակցութիւնը (նոյնիսկ Մոսուլի հայազգի իշխանապետ Բադր ալ-Դին Լուլուին) շատ աւելի խորհրդանշական էր, եւ պարտադրուած քաղաքական (ինքնապաշտպանական) դրդապատճառներով ինչպէս լուսաբանեցինք, եւ ոչ թէ աւարի եւ կողոպուտի նպատակներով, ինչպէս էր պարագան մոնղոլներուն եւ թուրքերուն համար:

---

[30] **Bar Hebraeus,** The Chronography of Gregory Abu'l-Faraj (1225-1286), Volume I, APA-PHILO Press, Amsterdam, 1976, P.431.

[31] **Bar Hebraeus,** Chronography, P.431.

[32] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 273:

[33] **Աբդ ալ-Ամիր ալ-Ռաֆիի,** Ալ-Իրաք բէյն Սկուտ ալ-Դաուլա ալ-Աբբասիա ուա Սկուտ ալ-Դաուլա ալ-Ութ՛մանիա (Իրաքը Աբբասեան պետութեան եւ Օսմանեան պետութեան անկումներուն միջեւ-Արաբերէն عبد الامير الرافعي, العراق بين سقوط الدولة العباسية وسقوط الدولة العثمانية, الجزء الاول, بيروت,الفرات للنشر), Ա. Մաս, Ալ-Ֆուրաթ Լիլնաշրը, Բէյրութ 2002, էջ 131:

[34] **Ռաֆայէլ Բաբու Իսհակ**, Թարիխ Նս՛արա ալ-Իրակ (Պատմութիւն Իրաքի Քրիստոնեաներու – Արաբերէն رافائيل بابو أسحاق, تاريخ نصارى العراق, بيروت), էջ 115, Բէյրութ 2008:

Բանալի բառեր – Աբբասյան խալիֆայություն, Բաղդադ, գրավում, մոնղոլներ, նվաճում, Մերձավոր Արևելք, մահմեդականություն, հայկական, թուրքեր, հայ, վրացի, իշխաններ, քրիստոնյաներ, մասնակցություն, արշավանք, կործանում, բնակչություն, Կիլիկիա, թագավորություն, հեղինակներ:

Պետրոս Մ. Թովմասեան, Աբբասեան խալիֆայութեան անկումը, Բաղդադի գրաւումը մոնղոլներու կողմէ 1258թ. եւ հայոց մասնակցութեան հարցը: Այս յօդուածով պիտի փորձենք լուսաբանել՝ Հայոց մասնակցութեան հարցը Աբբասեան Խալիֆայութեան անկման՝ Բաղդադի գրաւումով մոնղոլներու կողմէ 1258թ., որովհետեւ այս առնչութեամբ շատ անճիշդ կարծիքներ յայտնուած են, եւ չափազանցուած ոճով յիշատակութիւնները կը խեղաթիւրեն պատմութիւնը:

Մեր կարծիքով Մոնղոլները, մէկէ աւելի պատճառներով, որոշած էին գործադրել Բաղդադի գրաւումը եւ Աբբասեան Խալիֆայութեան կործանումը: Բաղդադի նուաճումը քաղաքական եւ ռազմավարական մեծ նշանակութիւն կ'ունենար եւ մեծապէս պիտի դիւրացնէր մոնղոլներու տիրապետութեան ընդարձակումը տարածաշրջանին մէջ, ինչ որ հսկայ ներուժ պիտի տար իրենց աշխարհակալութիւններուն: Միւս կողմէն, մոնղոլները տնտեսապէս մեծ օգուտներ պիտի քաղէին Բաղդադի գրաւումով, որ անցեալ հինգ դարերուն համաշխարհային առեւտուրի խոշորագոյն կեդրոնն էր Մերձաւոր Արեւելքի մէջ, եւ առեւտրական բոլոր ճանապարհները անպայման պիտի անցնէին Բաղդադով: Ինչպէս եւ Բաղդադի գրաւումով հսկայական կուտակուած հարստութիւն պիտի անցնէր Մոնղոլներու ձեռքը: Այս եւ այլ պատճառներ, մեզի կը թելադրեն, թէ մոնղոլները կարիքը չունէին այլ թագաւորէ մը Բաղդադը գրաւելու առաջարկ լսելու, ըլլար ան Հեթում Ա.ը, կամ մէկ ուրիշը:

Կիրակոս Գանձակեցի յիշած է, թէ Հայ եւ Վրացի իշխանները մասնակցած են մոնղոլական մեծ արշաւանքին Բաղդադի վրայ. անոնք ստիպուած էին իրենց մասնակցութիւնը բերելու: Ըստ Կիրակոս Գանձակեցիի, Շահնշահի որդի Զաքարէ իշխանը եւ Հասան-Պռօշ իշխանը մասնակցեցան այդ մեծ արշաւանքին: Զաքարէ իշխանը մասնակցեցաւ հայ-վրացական զօրքերով: Իսկ Հասան-Պռոշը Հուլաղուի կողմէ Աբբասեան վերջին խալիֆային ալ-Մուսթաըս՛մ (1242-1258) ղրկուած պատուիրակութեան անդամներէն էր: Պատմականօրէն որեւէ յիշատակութիւն չկայ հայկական զօրագունդերու լուրջ մասնակցութեան մասին, նոյնը չէր պարագան վրացական զորագունդերու պարագային:

Անհրաժեշտ է այստեղ լուսաբանել շատ կարեւոր հարց մը. Աբբասեան Խալիֆայութեան անկումը ճիշդ չէ ամբողջութեամբ նկատել, որպէս արշաւանք մը մահմեդականութեան դէմ, այսինքն կրօնական ազդակը հիմնական դրդապատճառը չէր ինչպէս անդրադարձանք: Մոնղոլական արշաւող զօրքերուն մաս կը կազմէին մեծ թիւով թուրքեր: Ճիշդ է մոնղոլները այդ ժամանակ

մահմեդական չէին, բայց անոնք քրիստոնեայ ալ չէին. աւելին Բաղդադի վրայ արշաւող զօրագունդերուն մէջ կային նաեւ մահմեդական զօրագունդեր:

Որպէս եզրակացութիւն նշենք, թէ Աբբասեան Խալիֆայութեան կոծանման հարուածը եկաւ մոնղոլներէն եւ անոնց դաշնակից թուրք եւ մահմեդական զօրագունդերէն, իսկ հայկական մասնակցութիւնը շատ աւելի խորհրդանշական էր, եւ պարտադրուած քաղաքական (ինքնապաշտպանական) դրդապատճառներով ինչպէս լուսաբանեցինք, եւ ոչ թէ աւարի եւ կողոպուտի նպատակներով, ինչպէս էր պարագան մոնղոլներուն եւ թուրքերուն համար:

Педрос М. Товмасян, Падение Аббазского калифата, взятие Багдада монголами в 1258 году, и вопрос об участии Армении - В этой статье мы попытаемся осветить вопрос об участии Армении в падении Багдада в 1258 году, поскольку в этом отношении высказываются много неверных мнений, и упоминаются преувеличенные объяснения, которые искажают историю.

На наш взгляд, монголы по нескольким причинам решили выполнить захват Багдада и уничтожить Халифат Аббасидов. Захват Багдада будет иметь большое политическое и стратегическое значение и значительно усилит монгольское господство во всем регионе. С другой стороны, монголы извлекли бы большую выгоду из захвата Багдада, крупнейшего торгового центра на Ближнем Востоке в последние пять столетий, и все торговые пути должны были пройти через Багдад. А так же, захватив Багдад огромные накопления богатств должны были пройти через рукаи монголов. Эти и другие причины, диктуют нам, что монголам не нужно было слушать от других царей предложений взять Багдад (как упоминалось некоторыми армянскими историками, учеными и исследователями), был ли это армянский король Киликии Хетум А. (1226-1269), или кто-то другой.

Как упоминал Гирагос Гандзакеци, некоторые армянские и грузинские князья принимали участие в большом монгольском походе на Багдад. Они были вынуждены принять в нем участие. По его словам, в этой великой кампании участвовал сын Шакэшэ князь Закарех и князь Хасан-Брош . Закарех участвовал в армяно-грузинских войсках. А Хасан-Брош был одним из членов делегации, посланного в Хулагу от последнего халифа аль-Мустасима (1242-1258). В историческом плане не упоминается о серьезном участии армянских войск, но в случае с грузинскими войсками известный историк Бар Гебрейс упомянул, что они участвовали в проведении крупной бойни. Надо здесь упомянуть очень важный факт, что основной причиной похода была не религиозной, не против ислама. В монгольских войсках состояло большое количество турков. Правда, монголы в то время не были мусульманами, но они даже не были христианами, в

армиях, которые вторглись в Багдад, были также мусульманские боевики, о которых говорили некоторые арабские историки.

В конце мы можем сделать вывод, что причиной падения Аббаского халифата стали армии монголов, турков и их мусыльмансаких союзников. Участие армян в походах было более символичным и вызвано политическими (самооборонными) мотивами, как мы это рассмотрели, а не для добычи и грабежа, как для монголов и турков.

Bedros M. Tovmassian, The collapse of the Abbaside caliphate, Baghdad's captury by the Mongols in 1258, and the Armenian participation query - In this article we will try to cover the query of the Armenian participation in the fall of Baghdad in 1258, since in this regard many incomparable opinions are made, and exaggerated explanations are mentioned that distort the history.

In our view, the Mongols, for more than one reason, decided to execute the capture of Baghdad and the destruction of the Abbasid Caliphate. The capture of Baghdad would have great political and strategic significance and would greatly enhance the Mongolian domination in the whole region. On the other hand, the Mongols would have greatly benefited from the capture of Baghdad, the largest trading center in the Middle East in the last five centuries, and all trade routes would have to go through Baghdad. Just as Baghdad's capture was a huge accumulation of wealth in the hands of the Mongols. Giragos Gandzaketsi recalled how great wealth the Mongols had taken upon the order of Hulagu by taking Baghdad. These and other reasons, dictate to us, that the Mongols did not need to hear from other kings the suggestion or the offer of taking Baghdad (as mentioned by some Armenian historians, scholars and researchers) was he the Armenian king of Cilicia Hetum A. (1226-1269), or someone else.

As mentioned by Giragos Gandzaketsi some Armenian and Georgian princes took part in the big Mongol attack on Baghdad. They were forced to take part in it. According to him, Shahenshe's son Zakareh Prince and Hasan-Brosh Prince participated in that great campaign. Zakareh participated in the Armenian-Georgian troops. and because of his courage earned the gift of Hulagu Khan. And Hassan-Brosh was one of the members of the delegate sent by Hulagu to the last Caliph al-Mustasim (1242-1258). Historically, there is no mention of the serious participation of the Armenian troops, but in the case of Georgian troops the famed historian Bar Hebraeus has mentioned that they participated in performing large slaughter.

It is important to cover a very significant topic, it is not right to notice that the fall of the Abbasid Caliphate as a campaign against Islam, the religious motivation was not the main reason. It is true, the Mongols were not Muslim at that time, but they were not even Christians, there were also Muslim militants in the armies that invaded Baghdad as mentioned by some Arab historians.

At the end we can make a conclusion that the Abbasian Caliphate's scandal broke out of the Mongols and their allies Turkish and Muslim armies. The Armenian participation was more symbolic, and forced by political (self-defense) motives, as we have covered, and not for spoils and robbery, as it was for the Mongols and Turks.

ՍՈՒՄԳԱԻԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 1988 Թ. ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՆ

(քննական վերլուծություն)

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՈԲՅԱՆ

1988թ. հուլիսը ողջ հայ ժողովրդի համար տագնապի, հույսերի, հույզերի ու ակնկալությունների ժամանակաշրջան էր: Նա բռունցք դարձած և իր պայքարում երբեք չընկրկելով սպասում էր Արցախյան հիմնախնդրում ԽՍՀՄ ԳԽ Նախագահության որոշմանը: Միաժամանակ պահանջվում էր դատապարտել սումգայիթյան ցեղասպանությունը և պատժել բոլոր հանցագործներին:

1988թ. հուլիսի 2-ի հանրահավաքում, որպես <<Անդրկովկասում հայկական բնակչության անվտանգության երաշխիք և ազգամիջյան պատերազմի ռեալ վտանգի կանխարգելման միջոց, հնչեցին ԽՍՀՄ ԳԽ-ին ուղղված հետևյալ պահանջները.

1. «հայտարարել սումգայիթյան դատավարության կասեցման մասին, …արտակարգ լիազորություններ ունեցող նոր գերագույն դատարանի կողմից կազմակերպել ու իրականացնել գործի նոր քննություն,
2. դատապարտել սումգայիթյան ցեղասպանությունը և պաշտոնական ցավակցություն հայտնել զոհվածների ընտանիքներին,
3. ելնելով այն բանից, որ Ադրբեջանական ԽՍՀ–ում չկան ազգային փոքրամասնությունների կյանքի երաշխիքներ,… մարզն անհապաղ դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ-ին ենթարկումից,
4. պահանջել Հայաստանի կառավարությունից ստեղծել կառավարական հանձնաժողով՝ նոր Սումգայիթի/Մասիսում խաղաղ բնակչության թունավորումը–Ս.Ս./ քննությունն անցկացնելու և դրա արդյունքները մամուլում լուսաբանելու նպատակով»:[1]

Արձանագրելով, որ Հայաստանում գործադուլավորների հիմնական պահանջներից մեկը սումգայիթյան դատավարությունը Մոսկվա տեղափոխելն է, հանրահավաքում Հ.Գալստյանը սումգայիթյան իրողությունները որակեց որպես ազգային հողի վրա կազմակերպված հանցագործություններ: Իսկ Վ.Ենգիբարյանը, անդրադառնալով ԼՂ-ում ստեղծված դժվար կացությանը, նշեց, որ մասնակցել էր Ստեփանակերտում ձեռնարկությունների տնօրենների խորհրդի խորհրդակցությանը, ուր գեներալ – լեյտենանտ Սաֆոնովը հայտարարել էր, որ ԼՂԻՄ-ում ադրբեջանցիները կրկնակի անգամ ավելի են հասարակական կարգը խախտում, քան հայերը, իսկ հետո /կրկին իրադարձու-

[1] Տե՛ս ,,Меморандум по основным выступлениям на митинге, состоявшемся 02.07.1988г. на площади оперного театра, 03.07.1988'', стр.1- 7:

թյունները խեղաթյուրելու և նրանց միջև հավասարության նշան դնելու նպատակով – Ս.Ս/ ավելացրել, որ պատրաստվում է Սումգայիթի կրկնություն, սակայն այս անգամ՝ հայերի կողմից: Հանրահավաքում Ի. Մուրադյանը համաժողովրդական պայքարում առաջ քաշեց իր բնութագրմամբ երկու խնդիր. առաջինը գլոբալ՝ իր ելույթում ընդգծելով, որ Սումգայիթը կարող է շարունակություն ունենալ, եթե ԽՄԿԿ ԿԿ-ին, ԽՍՀՄ ԳԽ-ին և ԽՍՀՄ դատախազությանը չներկայացվի համապատասխան փաստաթուղթ՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում հայկական բնակչության և հայկական մշակույթի ցեղասպանության մասին և երկրորդ՝ լոկալ-տեղային խնդիրը՝ Արցախի տնտեսական շրջափակումը վերացնելու համար մղվող պայքարը: Հանրահավաքի Հուշագրում արձանագրվում էր նաև, որ Խ.Ստամբոլցյանը հիմնվելով այն փաստի վրա, որ Սումգայիթում բնակվում էր մինչև 17 հազար հայ, տարակուսանք էր հայտնել Սումգայիթից փախստականների՝ հայտարարված թվի հետ կապված / երեք հազար –Ս.Ս/ և շնորհակալություն հայտնել հայ ժողովրդին, որ «այդ սգո օրերին հայ ժողովուրդը ձեռք չբարձրացրեց ադրբեջանցիների վրա»: Հանրահավաքում հայտարարվեց նաև, որ սումգայիթյան զոհերի հստակ թիվը հայտնի չէ, քանի որ ցուցակները ստույգ չեն, և զոհերի հարազատները Բաքվում և այլուր գտնվելու հետևանքով մեկուսացված են:[2]

1988թ. հուլիսի սկզբին միութենական և տեղական մամուլի էջերում Համամիութենական 19-րդ կուսկոնֆերանսի ընդունած յոթ բանաձևերի տպագրությունը հիմք ծառայեց խորհրդային հասարակությունում առկա հիմնախնդիրների լուծման ուղիների շուրջ բանավեճերի, քննարկումների: Մամուլում հատկապես սուր էր արձագանքը երկու՝ «Ազգամիջյան հարաբերությունների մասին» և «Հրապարակայնության մասին» բանաձևերի վերաբերյալ, որոնցում կոմունիստական կուսակցության կողմից առաջ էին քաշվում ազգային քաղաքականության լենինյան սկզբունքներն ու նորմերը ստեղծագործաբար զարգացնելու, վերջիններիս ապաձևումը թույլ չտալու, նաև հրապարակայնությունը վերակառուցման սկզբունքների և գաղափարների շուրջ հասարակական ուժերի համախմբմանը ծառայեցնելու խնդիրները:[3] Պատրանք էր ստեղծվում, թե կոմկուսը գիտակցորեն ընթանում է դեպի ժողովրդավարություն և առաջադիմություն, քանի որ հրապարակայնությունը հռչակվում էր կենսակերպ: 1988թ. հուլիսին այս բանաձևերի ոգով խորհրդային թե՛ կենտրոնական, թե՛ տեղական մամուլի բազմաթիվ հրապարակումներում կարմիր թելի նման ընդգծվում էր այն միտքը, որ խորհրդային հանրույթին անհրաժեշտ է համապարփակ և առարկայական տեղեկատվություն, որ հրապարակայնության հետագա զարգացման համար անհրաժեշտ են իրավական երաշխիքներ, ինչպես

[2] Տե'ս նույն տեղում:
[3] Տե՛ս „Социалистическая индустрия”, но.155, 05.07.1988:

նաև ընթերցողի հետ երկխոսության ու բանավեճի մշակույթի կատարելագործում: Կարողացա՞վ արդյոք մամուլը երկխոսության մեջ մտնել ընթերցողի հետ և համակողմանիորեն լուսաբանել խորհրդային երկրում առկա իրողությունները, հանրույթին հուզող հիմնախնդիրները, կարողացա՞վ արդյոք զանգվածային լրատվության որևէ օրգան ստանձնել Արցախյան հիմնախնդրի ու նրա շուրջ ծավալվող իրադարձությունների օբյեկտիվ մեկնաբանի դերակատարումը: Քննության առնելով 1988թ. հուլիս ամսին հանրապետական և միութենական մամուլում առկա հրապարակումները մենք արձանագրում ենք, որ Արցախյան շարժման նոր փուլի ծավալումից մի քանի ամիս անց անգամ խորհրդային զանգվածային լրատվության և ոչ մի միջոց չէր կարելի հիմնախնդրի «լուսարձակ» համարել: Թերևս բացառություն էր «Խորհրդային Ղարաբաղ» թերթը /վերապահությամբ նրա առանձին համարների, որոնք լույս էին տեսել Բաքվում/, ուր առավել համակողմանի էին լուսաբանվում ԼՂ և նրա շուրջ իրադարձությունները, հիմնավոր վերլուծության էին ենթարկվում շարժման արմատները, նոր փուլի առանձնահատկությունները և բազմիցս ընդգծվում էր, որ արցախահայության արդար պահանջի իրականացման համար անհրաժեշտ է համբերություն ու համառություն: Խորհրդային ԶԼՄ–ները Արցախյան հիմնախնդիրը պարտավոր էին լուսաբանել ժողովրդավարության և մարդու իրավունքների տեսանկյունից, ինչը առավել փաստարկված կդարձներ արցախահայության ինքնորոշման պահանջը, պարտավոր էին դատապարտել խորհրդային Ադրբեջանում հայ բնակչության նկատմամբ տասնամյակներ շարունակվող ապօրինությունները, ազգային արժանապատվության նսեմացումը և մարդու կյանքի իրավունքի ոտնահարումը: Հիմնախնդրի հանդեպ նման մոտեցման դեպքում հանրույթի շրջանում կարող էր ձևավորվել տեսակետերի բախում, և ի վերջո հանրային կարծիքը կարող էր ստիպել իշխանություններին՝ ռեալ քաղաքական գնահատական տալու ԼՂ շուրջ ծավալվող իրադարձություններին: Սակայն խորհրդային մամուլը, պաշտպանության տակ առնելով խորհրդային կայսրապետության տարածքային ամբողջականությունը ցանկացած վերաձևումից զերծ պահելու պահանջը, իրապես անհաղորդ գտնվեց Արցախյան շարժման նոր փուլում ծավալվող դրամատիկ իրադարձություններին, և այդ ամենը ոչ թե լրագրողական անտեղյակութուն էր, իրազեկության պակաս, այլ հիմնախնդրի հանդեպ պարզունակ, ոչ ճկուն մոտեցում:Առհասարակ խորհրդային մամուլին բնորոշ էր ոչ թե ԽՍՀՄ-ում կուտակված բազմաթիվ հիմնախնդիրների լուծումների փնտրտուքը, այլ խորհրդային օրենքների, սոցիալիստական համակեցության կանոնների փառաբանումը: Պատմությունը եթեներ չի ընդունում, այնուամենայնիվ մեր ենթակայական կարծիքով, եթե կուսակցության համամիութենական 19-րդ կոնֆերանսը հստակ դիրքորոշում արտահայտեր Արցախյան հիմնախնդրի նկատմամբ և մամուլում ուղերձ հղվեր

երկու հարևան հանրապետությունների ժողովուրդներին, միգուցե այդպիսով հնարավոր կդառնար խուսափել իրավիճակի հետագա սրումից և Երևանում «Զվարթնոց» օդանավակայանում ծավալված նոր ողբերգությունից: Մենք հարկ ենք համարում անդրադառնալ օդանավակայանում ծավալված ողբերգության վերաբերյալ առկա հրապարակումներին, քանի որ «սոցիալիստական հրապարակայնության ոգով» համակված խորհրդային կենտրոնական մամուլը ցավալիորեն ու անամոթաբար փորձեց հավասարության նշան դնել սումգայիթյան սպանդի և օդանավակայանի դեպքերի միջև՝ ճշմարտությունը կրկին պարտակելու, սումգայիթյան սպանդը իբրև երկու ժողովուրդների միջև ծագած «թյուրիմացություն» ներկայացնելու և, առհասարակ, Արցախյան շարժումը հեղինակազրկելու նպատակով: Քննարկելով այդ հրապարակումները, ամենից առաջ հարկ ենք համարում ընդգծել, որ դրանք իրենց ձեռագրով ու բովանդակությամբ նման էին սումգայիթյան ողբերգության «լուսաբանմանը» նվիրված հրապարակումներին՝ վերջիններումս առկա կիսաճշմարտություն - կիսաստով, ամբոխավարական քարոզներով, իսկական մեղավորներին քողարկելու մտայնությամբ:

1988թ. հուլիսի 6-ին մամուլում հրապարակվեց Արմենպրեսի հաղորդումը, ուր ասվում էր, որ Երևանում տեղի ունեցող հանրահավաքներին մասնակցող մարդկանց մեծ խմբեր, տեղի տալով անպատասխանատու անձանց կոչերին, շրջափակել էին «Զվարթնոց» օդանավակայանը և այնտեղ տանող ճանապարհները՝ պահանջելով օդանավակայանի կոլեկտիվից դադարեցնել աշխատանքը: Մերժում ստանալով նրանք թափանցել էին օդանավակայանի ծառայողական բաժանմունքները, կազմալուծել աշխատանքը և սպառնալիք ստեղծել թռիչքների անվտանգության համար: Իրենց հակաօրինական գործողությունները դադարեցնելու համար կարգազանցներին համոզելու փորձերի անհաջողությունից հետո ստեղծված իրավիճակը հարկադրել էր դիմել «**հասարակական կարգի պահպանության ուժերի միջամտությանը** /ընդգծումը մերն է - Ս.Ս./: Կան տուժածներ»:[4] Հուլիսի 8-ին հանրապետական թերթերը տպագրեցին ՀԽՍՀ ՆԳՄ հաղորդումն այն մասին, որ հուլիսի 5-ին Էջմիածնի խճուղում ծանր վիրավորում ստացած Երևանի բնակիչ Խաչիկ Զաքարյանը մահացել է հիվանդանոցում:[5]

Այս երկու հաղորդումներում, ինչպես նկատում ենք, արձանագրվում էր տխուր միջադեպ երկու իրողությամբ՝ առաջին, երևանյան հանրահավաքները ստեղծել էին անցանկալի լարված մթնոլորտ և իրավակարգի կոպիտ խախտումներ, երկրորդ, իրավակարգի պահպանմանն ուղղված զգուշացումներից հետո հանրային ու պետական պաշտպանական նշանակություն ունեցող օբյեկտի աշ-

[4] Տե՛ս «Սովետական Հայաստան», 06.07.1988:
[5] Տե՛ս «Սովետական Հայաաստան», 08.07.1988:

խատանքն ու անվտանգությունը ապահովելու նպատակով ձեռնարկվել էին հասարակական կարգը պահպանելու գործողություններ, որի հետևանքով տուժել էին մարդիկ: Բնականաբար մամուլի նմանատիպ «վկայության գինը» պետք է դառնային գործադուլների, «անպատասխանատու» անձանց անօրեն գործողությունների դատապարտումը, հանրապետության աշխատավորներին՝ սթափության ու ողջամտության հերթական կոչերը, խորհրդային երկրում ինտերնացիոնալիզմի մասին հերթական ճամարտակումները, որոնք իրենց սպասեցնել չտվեցին: Դրանք հատկապես բազմաթիվ դարձան այն բանից հետո, երբ «Զվարթնոց» օդանավակայանում խմբակային գործողությունների քրեական գործի քննությունը վարող ԽՍՀՄ դատախազության քննչական խմբի անունից հաղորդում տրվեց, որ 1988թ. հուլիսի 4-5-ին և հետագա օրերին գործողության մասնակիցներից վերցվել են մեծ քանակությամբ դանակներ, կացիններ, ծակող – կտրող առարկաներ, հրազեն:[6] Այս հաղորդումներից հետո խորհրդային մամուլը տառացիորեն հեղեղվեց միջադեպը «լուսաբանող» հոդվածներով, որոնցում սակայն չկար ճշմարտությունն այն մասին, որ աշխատասեր հայ ժողովուրդը դիմել էր պայքարի թեկուզ և ծայրահեղ ձևին՝ գործադուլներին, որովհետև տասնամյակներ ու ամիսներ շարունակ խորհրդային իշխանության կողմից անտեսվել էր նրա ինքնորոշման իրավունքը, չլուծված ու անպատասխան մնացել արցախահայության՝ մայր հայրենիքին վերամիավորվելու խնդիրը, չկար ճշմարտությունն այն մասին, որ օդանավակայանի շրջափակումը թեկուզև ծայրահեղ, բայց իշխանությունների ուշադրությունը արհամարհված ժողովրդի արդար պահանջի վրա բևեռելու հուսահատական քայլ էր, չկար այն ճշմարտությունը, որ օդանավակայանում «հասարակական կարգի պահպանությունը» ստանձնած խորհրդային զորքերի կողմից անմեղ քաղաքացիները վիրավորվեցին, իսկ երիտասարդ Խ. Զաքարյանը սպանվեց այն բանի համար, որ իր լուսանկարչական ապարատով փորձել էր վավերացնել բանակայինների կողմից կազմակերպված ահաբեկչությունը: Դառը ճշմարտության փոխարեն մամուլում ցավ ու տագնապ էր արտահայտվում, որ «…կենտրոնական հեռուստատեսությունը ցուցադրեց երիտասարդ մարդկանց, դեռ բոլորովին պատանիների, որոնք ծեծվել էին միայն այն բանի համար, որ կատարում էին իրենց զինվորական պարտքը և փորձում հանրապետությունում պահպանել կարգն ու հանգստությունը»:[7] Լրագրող Վ. Կիսիլյովը մեջբերում էր խորհրդային բանակի սպա, Կարմիր դրոշի շքանշանակիր Օ. Պալկինի հետ իր հարցազրույցից այն տողերը, որ «…ինտերնացիոնալիզմը… կյանքում ամենասուրբ հասկացություններից է: … չի կարելի թույլ տալ, որ այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի անպատասխանատու մարդկանց խումբը, մանիպուլացնելով հազարավորների

[6] Տե՛ս «Երեկոյան Երևան», 18.07.1988:

[7] Տե՛ս „Советская культура”, „Телеобозрение” , 19.07.1988.

գիտակցությունը և քողարկվելով սպեկուլյատիվ լոզունգներով, ոտնահարի այն»:[8] «Իզվեստիայում» ներկայացվում էին միջադեպի այլ «մանրամասները». նախ բանակի գործողությունները, նրա միջամտությունը ներքաղաքական խնդրին հիմնավորվում էին այն փաստարկով, որ օդանավակայանը հանդիսանում էր միաժամանակ երկու՝ Քաղաքացիական ավիացիայի և Պաշտպանության նախարարությունների ենթակայության տակ գտնվող օբյեկտ, երկրորդ, բանակի գործողությունները ներկայացվում էին որպես հրատապ անհրաժեշտություն՝ կարգ ու կանոնի վերականգնման նպատակով, քանի որ իբր բռնի գործողություններ էին իրականացվել օդանավակայանի աշխատակիցների և քաղաքացիների նկատմամբ, երրորդ, ընդգծվում էր, որ գործողություններն իրականացվել էին ռազմական ուսումնարանների /Օրջոնիկիձե և Ռոստով քաղաքների – Ս.Ս./ այն նույն կուրսանտների ջանքերով, որոնք մասնակցություն էին ունեցել Սումգայիթում իրավիճակի նորմալացման և քաղաքից հայ բնակչության տարհանման գործողություններին: [9] Խորհրդային պաշտոնական մամուլում օդանավակայանի միջադեպը դաս էր համարվում բոլորին միայն մեկ իմաստով, որ «եթե կուսակցական ակտիվից գտնվեին սթափ բանականությամբ մարդիկ, ովքեր կկանգնեին սադրիչ նպատակով օդանավակայանի աշխատանքը կազմալուծողների ճանապարհին, ողբերգությունը տեղի չէր ունենա»:[10] Պաշտոնական մամուլը միաբերան քարկոծում էր Երևանում հանրահավաքների կազմակերպիչներին և հայտնում, որ չնայած քրեական գործը դեռ գտնվում է ԽՍՀՄ դատախազության քննչական խմբի վարույթում, այնուամենայնիվ մի բան պարզ է, որ միջադեպի պատասխանատվությունը այն մարդկանց խղճին է, ովքեր սրեցին իրավիճակը և հարյուրավոր երիտասարդներին ուղղորդեցին շրջափակելու օդանավակայանը:[11] Բազմաթիվ կոչեր էին արվում հայ ժողովրդին՝ սթափվելու և գիտակցելու, որ աշխատանքային ռիթմի ու աշխատավորի սրբազան պարտքի ու պարտականության խախտումը պատիվ չի բերում նրա անվանը:[12]

Հարկ ենք համարում նշել, որ կենտրոնական մամուլը, այնուամենայնիվ, չկարողացավ զանց անել այն փաստը, որ հայ ժողովուրդը միշտ էլ խոր ակնածանքով է վերաբերվել զինվորին, որ բարի ու գեղեցիկ ավանդույթ էր հանրապետությունում տեղակայված զինվորականներին հայկական օջախներում հյուրընկալելը. «Զինվորը, զինծառայողը ամենացանկալի հյուրն է ցանկացած հայկական ընտանիքում: Եվ այսպես կլինի հավերժ»:[13] Նույն միտքը

---

[8] Տե՛ս „Социалистическая индустрия", „Братство не расколоть", но.169, 19.07.1988.
[9] Տե՛ս„ Известия", „ Ереван, конец недели", но.199,17.07.1988.
[10] Տե՛ս նույն տեղում:
[11] Տե՛ս „ Известия", „ Нужен решительный перелом", но.200, 18.07.1988.
[12] Տե՛ս «Սովետական Հայաստան», 18.07.1988:
[13] Տե՛ս, „Известия", „ Нужен решительный перелом", но.200, 18.07.1988.

արձանագրված էր նաև թերթի նախորդ համարում, ուր նշվում էր, որ ցավալի է խաղաղ ժամանակ քաղաքի զինվորական հոսպիտալում տեսնել ծառայողական պարտականությունները կատարելիս տուժածների, «…մի քաղաքում, ուր օդանավակայանի իրադարձություններից երկու օր առաջ զինվորականներին, ինչպես հենց իրենք էին պատմում, երևանցիները բերում էին կարկանդակ, պանիր, լոլիկ, հաց…» : [14]

«Զվարթնոց» օդանավակայանի միջադեպը մամուլում «լուսաբանվում» և որակվում էր իբրև անպատասխանատու անձանց հակահասարակական արարք՝ հակահիրավական միտումներով պայմանավորված: Եվ հենց այս հիմքով էլ մամուլում փորձեր էին արվում միևնույն հարթության վրա դնելու սումգայիթյան ահավոր եղեռնագործությունն ու օդանավակայանի միջադեպը: Եվ հենց այս իմաստով էլ այս երկու իրադարձությունների վերաբերյալ հրապարակումներում դրսևորվում էին միևնույն մոտեցումները և տրվում էին միևնույն գնահատականները: Այսպես. **ամենից առաջ** փորձ էր արվում «փաստելու», որ Հայաստանում իշխանությունները տեղյակ էին օդանավակայանում նախապատրաստվող գործողությանը, սակայն ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարի՝ հանրապետությունից բացակայության ընթացքում չի գտնվել մեկ այլ ղեկավար, որը, «տիրապետելով անհրաժեշտ տեղեկատվությանը, իր վրա վերցներ պատասխանատվությունը և թույլ չտար օդանավակայանի **զավթումը** /ընդգծումը մերն է-Ս.Ս/: …Երևանի կոմունիստներն ու կոմերիտականները… կարող էին պատ կազմել և թույլ չտալ դեպի օդանավակայան շարժվել հրահրված մարդկանց…»:[15] Կամ՝ «Տագնապ է հարուցում, որ կուսակցական կոմիտեները չեն տիրապետում իրավիճակին,… չեն կարողանում հարված հասցնել… կազմակերպիչներին»:[16] Հոդվածների բովանդակության տրամաբանությամբ ստացվում էր, որ այս միջադեպը ոչ միայն չէր կանխվել, այլ հրահրվել էր, /ինչպես դա իրականում եղել էր սումգայիթյան եղեռնագործության ժամանակ/ տեղական իշխանությունների գիտությամբ ու թողտվությամբ:

Երկրորդ, հրապարակումներում կատարվում էր հռետորական հարցադրում՝ ու՞մ էր դա ձեռնտու: Եվ կրկին, ինչպես սումգայիթյան ողբերգության մեկնաբանության դեպքում, նշվում էր, որ «անկարգությունները» ձեռնտու են խորհրդային հանրույթի սոցիալիստական նորացման նոր ուղու՝ վերակառուցման ու ժողովրդավարության հակառակորդներին, կոռումպացված չինովնիկներին, ստվերային տնտեսության տարրերին. «…Միայն անկարգությունների դեպքում կարելի է «նավարկության մեջ» մնալ՝ պահպանելով

[14] Տե՛ս, ,Известия'', ,,Ереван, конец недели'', но.199,17.07.1988.
[15] Տե՛ս նույն տեղում:
[16] Տե՛ս ,,Социалистическая индустрия'', ,,Ереван, 12 июля'', но.162, 13..07.1988.

…էգոիստական արտոնությունները»:[17] Հրապարակումների տրամաբանությամբ ստացվում էր, որ վերակառուցման «սոցիալիստական ոգին» շրջանցել էր Արցախյան հիմնախնդրի լուծման համար պայքարող մարտիկներին:

Երրորդ, ինչպես սումգայիթյան եղեռնագործությանը, այնպես էլ օդանավակայանում ողբերգությանը վերաբերող հրապարակումներին բնորոշ էր նրանցում առկա տեղեկատվության հակասականությունը: ԽՍՀՄ Գլխավոր դատախազի ավագ օգնական Ա. Նիկոլաևը, որը գլխավորում էր օդանավակայանի դեպքով քննչական խումբը/ մինչ այդ վարում էր սումգայիթյան դեպքերի քննությունը/, նշում էր, որ խնդիր է դրված համակողմանիորեն քննել գործի հանգամանքները, որ պահանջվում է օբյեկտիվություն:[18] Մինչդեռ մամուլում մի կողմից ներկայացվում էր, օրինակ, լենինգրադցի ինժեներ Ս. Ֆրոլովի այն վկայությունը, որ «…ուղևորները, որոնց խանգարեցին թռչել, ստանում էին անվճար սնունդ»[19], մյուս կողմից էլ ՏԱՍՍ-ի մեկ այլ թղթակցությունում հերքվում էր այդ լուրը:[20] Կամ էլ նշվում էր, որ Երևանի զինվորական հոսպիտալում բուժում են ստանում միջադեպի ժամանակ վիրավորում ստացած զինվորականները,[21] բայց հաջորդ օրը լույս տեսած թղթակցությունում հերքվում էր նաև այդ լուրը:[22] Հրապարակումներում առկա տեղեկատվության նման հակասականությունը առաջ էր բերում լուրերի ու հույզերի շրջապտույտ և իրավիճակը դարձնում էր առավել թեժ ու դրամատիկ:

Չորրորդ, ինչպես սումգայիթյան, այնպես էլ «Զվարթնոց» օդանավակայանում տեղի ունեցած ողբերգություններին վերաբերող հրապարակումներում մշտապես ճշմարտության կողքին էր սուտը, և այդպիսով օդանավակայանի միջադեպի մասին տեղեկատվությունը դառնում էր կիսաճշմարտություն կիսասուտ: Ներկայացվում էր, օրինակ, որ միջադեպի ժամանակ Խ. Զաքարյանը ծանր վիրավորում էր ստացել, մինչդեռ վերջինս սպանվել էր տեղում:[23] Կամ վկայվում էր, որ մինչ զինվորների կողմից օդանավակայանում համապատասխան գործողություններ սկսելը պաշտոնական հայտարարություններ են արվել, մինչդեռ իրականում դեպքերի մասնակցի պնդմամբ՝ «… ես շատերի հետ առաջին հարկում էի նստած և ռադիոյով հայտարարություն չեմ լսել»:[24] Իսկ «Երևան, հուլիսի 7» վերտառությամբ թղթակցության միևնույն պարբերությունում մի կողմից արձանագրվում էր, որ օդանավակայանի ինժեներատեխնի-

---

[17] Տե՛ս ,,Известия”, ,, Нужен решительный перелом”, но.200, 18.07.1988.
[18] Տե՛ս ,,Комсомольская правда”, ,,Требуется обьективность”, 13.07.1988.
[19] Տե՛ս ,, Московские новости”, ,, Июль в Ереване”, но.29, 1988.
[20] Տե՛ս «Սովետական Հայաստան», «Վկայության գինը» 18.07.1988:
[21] Տե՛ս ,, Известия”, ,, Ереван, конец недели”, но.199,17.07.1988.
[22] Տե՛ս ,,Известия”, ,, Ереван, 18 июля”, но.201, 19.07.1988.
[23] Տե՛ս ,,Комсомольская правда”, ,,Не рассеиваются тревоги”, 08.07, 1988:
[24] Տե՛ս նույն տեղում:

կական կազմը միացել էր գործադուլավորներին, մյուս կողմից էլ լրագրողներ Ս.Կորեպանովը, Յու. Բելանովը և Ն. Օրդինյանը շտապում էին հավելել, թե իբր «գործադուլավորները կանգնեցրել են օդանավակայանի աշխատակիցներին, պոկել նրանց ուսադիրները, վիրավորել»:[25] Այսպիսով, ընթերցողին երբեք էլ ստույգ, հստակ ու ամբողջական տեղեկատվություն չէր տրվում եղելության վերաբերյալ: Որպես կանոն այդ տեղեկատվությունը միակողմանի էր և հեռու ճշմարտությունից: Ավելին, հրապարակումներում առկա կեղծիքը ոչ միայն չէր հերքվում, այլև « հաստատվում էր» նորանոր մտացածին լուրերով, որոնք ավել-ի էին խճճում ընթերցողին՝ եղելության հանդեպ իր վերաբերմունքի ու գնահատականների մեջ: Խորհրդային մամուլը հերթական անգամ «անհարմարության զգացումով» հարկ էր համարում քողարկել մերկ ճշմարտությունը, ընթերցողին հրամցնել թյուրիմացությունն ու կեղծիքը՝ պիտակավորելով ու խեղաթյուրելով Արցախյան համաժողովրդական շարժումը: Հիմնախնդրի հանդեպ նման մոտեցումը առաջ էր բերում հայ մտավորականության և հանրապետության կուսակցական ղեկավարների վրդովմունքը. կոմկուսի Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Մ. Մինասբեկյանը իրավամբ իր դժգոհությունն էր հայտնում «Իզվեստիայի» թղթակիցներին՝ Երևանում հանրահավաքների ու օդանավակայանի դեպքերի ենթակայական մեկնության կապակցությամբ, երբ արձանագրում էր, որ «…լուրերը…, ինչպես համոզվում ենք, իրենք իրենց չեն ծնվում: Պատահական չէ, որ այս ողջ ժամանակահատվածում ես… չեմ լսել որևէ լուր ինչ-որ լավ բանի մասին: Իսկ թյուրիմացություններ՝ խնդրեմ»:[26] Իրենց բողոքի ձայնը բարձրացրին նաև հայ մտավորականության ականավոր ներկայացուցիչներ Է. Ջրբաշյանը, Ս. Իսրայելյանը, Հ. Ղափլանյանը, Է. Միրզոյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Շիրազը, ովքեր արձանագրում էին, որ Թատերական հրապարակի հանրահավաքներում բազմիցս հնչել են իմաստուն և խելամիտ կոչեր, որ հայ ժողովուրդը հարատևել է, քանի որ կարողացել է մեծարել իմաստությունն ու համաչափ դարձնել բանականությունն ու զգացմունքը, կարողացել է համադրել ոգու վսեմությունն ու ազգային զսպվածությունը: Եվ այս իմաստով ցույցերում և հանրահավաքներում չկա ոչինչ դատապարտելի:[27] «Երկար ժամանակ զանգվածային լրատվության միջոցները ձեռնպահ էին մնում Լեռնային Ղարաբաղի ցավոտ հիմնախնդրի լուսաբանումից: Տեսնելը տեսնում էին, սակայն չէին նկատում: Շփոթվե՞լ էին: Իներցիայով գործում էր հրապարակայնության արգելակման մեխանիզմը: Կարող է չէի՞ն ցանկանում խստորեն, բայց ճշմարիտ արտացոլել իրադարձությունները: Ափսոս, շատ ափսոս»:[28]

---

[25] Տե՛ս ,,Социалистическая индустрия'', но.158, 08.07.1988.
[26] Տե՛ս ,,Известия'', ,, Ереван, 18 июля'', но.››201, 19.07.1988.
[27] Տե՛ս ,, Советская культура'', ,,Согласие разума и сердца'', 09.07.1988.
[28] Տե՛ս նույն տեղում:

Խորհրդային պաշտոնական մամուլը, արհամարհելով ճշմարտությունը, երբեք էլ բաց բանավեճ չծավալեց ընթերցողի հետ, ընդհակառակը, ամենասև գույներով դատապարտեց երևանյան հանրահավաքները՝ դրանց անմիջական հետևանքը համարելով ողբերգությունը օդանավակայանում: Մինչդեռ կարելի ու անհրաժեշտ էր դեռևս Արցախյան շարժման նոր փուլի առաջին իսկ օրերից այդ հանրահավաքները դիտարկել որպես հանրային կարծիքի արտահայտման յուրօրինակ ձև և ընդգծել այն դրականն ու կարևորը, որը դրսևորվում էր այդ հանրահավաքների ընթացքում:[29] Չէ՞ որ հանրահավաքները հանրույթի սոցիալական ակտիվության դրսևորում էին, և եթե վերջինիս հանդեպ կառուցողական մոտեցում ցուցաբերվեր, միգուցե և բացառվեին սումգայիթյան և օդանավակայանի ողբերգությունները:

Հինգերորդ, ե՛վ սումգայիթյան ցեղասպանությանը, և՛ «Զվարթնոց» օդանավակայանում ողբերգությանը վերաբերող բոլոր հրապարակումներում խորհրդային բանակին տրվում էր ազատարարի կարգավիճակ ու դերակատարում, իսկ «Ղարաբաղ» կոմիտեի գլխավորությամբ ծավալված համաժողովրդական շարժումը վարկաբեկվում էր ու հեղինակազրկվում: Օդանավակայանում գործադուլավորների այսպես կոչված անմիտ ու անգիտակից, «հանրային կարգը խաթարող անպատասխանատու սադրիչ գործողություններին» հակադրվում էր խորհրդային զինվորների «հաստատակամ ու վեհ սխրանքը»՝ վերականգնելու հասարակական կարգը: Այսպես. միջադեպի մասնակից կուրսանտներ Ա. Ալեքսանդրովիչը և Օ.Լիսենկոն պատմում էին, որ նրանց առջև խնդիր էր դրված «օդանավակայանից **դուրս մղել** / ընդգծումը մերն է-Ս.Ս/ խուլիգանական դեմքերին, որոնք, չնայած բազմաթիվ նախազգուշացումներին, չէին լքում տարածքը: Մենք գնացինք օդանավակայան, դուրս բերեցինք կանանց, և հենց այդ պահին մեր ուղղությամբ նետվեցին մածնի շշերը: Դրա հետևանքով մենք ստիպված եղանք խոչընդոտել անկարգություններին »:[30]

Կենտրոնական մամուլի անխտիր բոլոր հրապարակումներում, գործադուլավորների ու ցուցարարների գործողությունները որակելով որպես խուլիգանական դրսևորումներ և անթույլատրելի անարխիա, պաշտպանվում ու արդարացվում էր խորհրդային բանակի ահաբեկչությունը խաղաղ բնակչության նկատմամբ, ավելին՝ զինվորները ներկայացվում էին որպես օդանավակայանի ազատարարներ, «Ղարաբաղ» կոմիտեի սադրիչ գործողություններից անմեղ տուժածներ: [31] Եվ եթե անգամ հրապարակումներում միջադեպի այս կամ այն դրվագի նկարագրության հետ կապված նկատվում էր որոշակի տարակարծություն, ապա գնահատականները միանշանակ նույնն էին՝ հայերի

[29] Տե՛ս ,,Известия”, ,,Ереван, 18 июля”, но.201, 19.07.1988.
[30] Տե՛ս ,,Комсомольская правда”, ,, Ереван: слухи и реальность", 16.07, 1988.
[31] Տե՛ս ,,Известия”, ,,Ереван, конец недели”, но.199,17.07.1988.

կողմից մոռացվել է աշխատավորական պարտքը, հանրահավաքներով ու գործադուլներով ապակայունացվել է իրավիճակը և հսկայական վնաս հասցվել ողջ երկրին, հիմնախնդրի հանդեպ հայերի կողմից դրսևորվել է ողջ երկրի շահերին խորապես վնասող ծայրահեղ մոտեցում:[32] Իսկ խորհրդային բանակը կոչված է եղել վճռականորեն թույլ չտալու հակահասարակական այդ դրսևորումները և կայունացնելու իրավիճակը: «…Այդ բանդայի /«Ղարաբաղ» կոմիտեի – Ս.Ս/ ամենածանր հանցագործությունը այն է, որ նրանք ժողովրդին մղեցին մեր երկրին հսկայական վնասաբեր գործադուլների: Իսկ ո՞վ է նրանց իրավունք տվել վարկաբեկելու մեր փառահեղ զինված ուժերին՝ Խորհրդային բանակին, ռուս ժողովրդին: Ինչ է, նրանք մոռացե՞լ են 1915 թվականը, երբ ռուսական բանակի շնորհիվ հնարավոր դարձավ պահպանել մեր ազգը…», - ոմն Ա.Սարգսյանի բերանով հռչակում էր «Պրավդայի » թղթակից Գ. Օվչարենկոն:[33]

Նպատակ չունենալով կատարել Առաջին աշխարհամարտի կովկասյան ճակատում ռուսական բանակի ծավալած գործողությունների պատմական էքսկուրսը, նկատենք սակայն, որ հոդվածում ոչ միայն արհեստականորեն խիստ գունազարդվում և ուռճացվում էր մեր ժողովրդի պատմական ճակատագրում ռուսական բանակի դերակատարումը, այլև նույնացվում էին «խորհրդային բանակ» և «ռուս ժողովուրդ» հասկացությունները, անհասկանալի տրամաբանությամբ հայ ժողովրդի ազատագրական պայքարը ընկալվում էր որպես վարկաբեկող և վիրավորանք ռուս ժողովրդին: Արձանագրենք, որ Արցախյան հիմնախնդրին նվիրված թղթակցություններին առհասարակ բնորոշ էր ընդգծված քամահրական վերաբերմունքը ինչպես «Ղարաբաղ», այնպես էլ «Կոռունկ» կոմիտեների գործունեությանը, ինչի հերթական վառ վկայությունը լրագրող Ա. Կազիխանովի «Գործուղում Ստեփանակերտ» հոդվածն էր, ուր հեղինակը «Կոռունկ» կոմիտեի անդամներին արհամարհանքով բնութագրում էր որպես միտումնավոր վնասարար գործունեություն ծավալած մի խումբ «թրաշավորների»: [34]

Անդրադառնալով վերոհիշյալ հրապարակումներին, հարկ ենք համարում ընդգծել, որ դրանցում միտումնավոր բացակայում էր այն հարցի պատասխանը, թե ինչու էր ապակայունացել իրավիճակը: Չէ՞ որ Արցախյան հիմնախնդիրը և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները երկրում քաղաքական նոր մտածողության ձևավորման, հասարակական հոգեբանության վերակառուցման կուսակցության հռչակած կուրսի անմիջական արդյունք էին:[35] Այդ դեպքում ինչու՞ էին դրանք անտեսվել և ստիպել մարդկանց՝ դիմելու նմանատիպ

[32] Տե՛ս ,,Социалистическая индустрия”, ,, Не забывать о рабочем долге”, но.159, 09.07.1988.
[33] Տե՛ս ,,Правда”, ,,Сверяясь с разумом”, 22.07.1988.
[34] Տե՛ս ,,Известия”, , но.194, 12.07.1988.
[35] Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», «Պատասխանատվություն վաղվա համար», 15.07.1988:

քայլերի: Մամուլի բազմաթիվ հրապարակումներում միայն քննադատվում էին այդ քայլերը՝ որակվելով որպես անպատասխանատու գործողություններ,[36] մինչդեռ չէին քննարկվում ու իմաստավորվում հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղում լարված ու աննախադեպ իրավիճակի ստեղծման նախադրյալները, իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: Երկրորդ, նպատակ ունենալով հավասարության նշան դնել սումգայիթյան և օդանավակայանում ծավալված իրողությունների միջև, հրապարակումներում նույն հարթակի վրա էին դրվում սումգայիթյան ջարդարար – եղեռնագործն ու իր արդար պահանջի համար պայքարող հայ գործադուլավորը. «Սարսափելի է պատկերացնել, որ ծայրահեղականները վերցնում են երկաթե ձողերը և հարվածում զինվորներին՝ երիտասարդ տղաների, որոնց բավարարում է ինքնատիրապետումը և արիությունը՝ նույն կերպ չպատասխանելու»:[37] Երկու ողբերգությունների միջև հավասարության նշան դնելու և զուգահեռներ անցկացնելու նպատակով թղթակիցների կողմից կիրառվում էր լրագրողական հնար՝ ընդգծվում էր այն փաստը, որ օդանավակայանի «ազատագրման» գործողություններին մասնակցած զինվորները նաև սումգայիթյան սպանդից հայերի ազատարարներն են.«…Ի դեպ, հենց նրանք են մասնակցել /Սումգայիթ - Ս.Ս/ քաղաքում իրավիճակի նորմալացման գործողություններին: Ուսումնարանի պետ, գեներալ Գ.Տեոդորովը պատմում էր, թե ինչպես էր ինքը այն ողբերգական / սումգայիթյան սպանդի –Ս.Ս./օրերին ղեկավարում քաղաքի տուժած շրջաններից հայերի դուրսբերումը»:[38]

Վեցերորդ, ինչպես սումգայիթյան եղեռնագործությանը, այնպես էլ օդանավակայանի ողբերգությանը վերաբերող հրապարակումներին բնութագրական էր ամբոխավարական քարոզչությունը խորհրդային սահմանադրության և օրենսդրության պահանջների պահպանման, ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների ոգով բնակչության դաստիարակության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու խորհրդային ժողովուրդների անխախտ բարեկամության մասին:[39] Հրապարակումներում կրկին հաստատվում էր այն միտքը, որ երկրի առջև ծառացած հիմնախնդիրները իրենց լուծումը պետք է ստանան դրանց համակողմանի քննարկման, սոցիալիստական ժողովրդավարության և օրինականության հետագա կատարելագործման ճանապարհով, որ վերակառուցմանը անհարիր են անպատասխանատվությունն ու կամայականությունները: Սակայն նման բովանդակությամբ հոդվածներում ամբոխավարական քարոզչությամբ պարբերություններին անվերապահորեն հետևում էին տողեր,

[36] Տե՛ս ,,Правда'', ,,Ереван: обстановка нормализуется'', 11.07.1988.
[37] Տե՛ս ,,Советская культура'', ,,Есть мнение'', 16.07.1988.
[38] Տե՛ս ,,Известия'', ,,Ереван, конец недели'', но.199,17.07.1988.
[39] Տե՛ս ,,Советская культура'', ,,Ради святой цели'', 23.07.1988.

որոնցում կրկին նույն նժարի վրա էին դրվում Սումգայիթն ու «Զվարթնոցի» միջադեպը. «Չկա արդարացում Սումգայիթի ահավոր իրադարձությունների մեջ հանցավոր մեղսակից տարրերին: Չեն կարող տագնապահարույց չլինել և իրադարձությունները «Զվարթնոց» օդանավակայանում:... Ժամանակը չէ՞ արդյոք բարեկամության ձեռք - ձեռքի մեկնել և իմաստուն երկխոսության սեղանին նստել »:[40]

Սակայն երկխոսություն այդպես էլ չկայացավ, որովհետև այն հնարավոր կդառնար միայն մարդու իրավունքների ճանաչման, իրապես հարգման ու արժևորման հիմամբ, ինչը, ցավոք, չընկալվեց և մինչ օրս չի ընկալվել ադրբեջանական հանրույթի կողմից: Երկխոսություն և փոխըմբռնում չկայացավ, որովհետև մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների արձագանքը թե՛ սումգայիթյան և թե՛ «Զվարթնոց» օդանավակայանի իրադարձություններին ոչհամարժեք էր ու ոչառարկայական, և այդ մասին խոստովանություն եղավ անգամ կենտրոնական մամուլում. «Սկզբնապես շփոթված մամուլը տալիս էր միակողմանի, ներեցեք, կիսաճշմարտություն: Իսկ իրերի ճշմարիտ դրությունն իմացող մարդիկ վրդովվում էին, երբեմն հասնում ջղագրգիռ վիճակի»:[41] Եվ եթե հայկական հեռուստատեսությունը հուլիսի 8-ի երեկոյան ողջ ծրագիրը նվիրեց օդանավակայանի դեպքերին, և հայ ժողովրդին իր ուղերձով դիմեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը ու իր խոր ցավակցությունը հայտնեց միջադեպից տուժածների հարազատներին ու բարեկամներին,[42] եթե ՀԿԿ ԿԿ բյուրոյի կողմից 1988թ. հուլիսի 10-ին քննարկվեց ու խստորեն դատապարտվեց հանրապետական թերթերի ու ամսագրերի աշխատանքը՝ ընդունած որոշման մեջ կոչ հնչեցնելով դրանց խմբագիրներին՝ գործնական միջոցներ ձեռնարկելու տպագրվող նյութի գաղափարական ուղղվածությունն ու քաղաքական բովանդակությունը բարձրացնելու, կիսաճշմարտություն հանդիսացող հոդվածների տպագրումը բացառելու ուղղությամբ,[43] ապա պաշտոնական կենտրոնական մամուլի հրապարակումները օդանավակայանի տխուր միջադեպից հետո էլ կրակի մեջ ավելացրած յուղի ներգործություն ունեցան: Անգամ ամիսներ անց, երբ ավարտվեցին Հայկական ԽՍՀ Գերագույն դատարանի դատական նիստերը «Զվարթնոց» օդանավակայանում «անկարգությունների կազմակերպիչներ» Ա.Գևոյանի և Ա. Պողոսյանի գործերով, և հնչեց դատարանի որոշումը, խորհրդային կենտրոնական մամուլը անհասկանալի ու անըմբռնելի համարեց դատարանի որոշումից հայ հասարակության խոր դժգոհությունը: Ճշմարտությանը շիտակ նայելու փոխարեն մամուլն

[40] Տե՛ս նույն տեղում:
[41] Տե՛ս ,,Комсомольская правда'', ,,Время зрелых поступков'',23.07, 1988.
[42] Տե՛ս ,,Известия'', ,,Ереван, 8 июля'', но.191,09.07.1988.
[43] Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, Ֆ.1, Ց.82, Գ.25, թ.64:

արձանագրեց, որ սոցիալիստական օրինականության «պաշտպան », գրող Ա. Սահինյանը և 30 000 քաղաքացիները, ովքեր ստորագրել են դատարանին ուղղված հանրագրերի տակ՝ պահանջելով արդարացնել մեղադրյալներին, իրականում դասեր չեն առել միջադեպից և իրապես չեն արժևորել ցուցարարների՝ հանրորեն խիստ վտանգավոր գործողությունները:[44]

Արցախյան հիմնախնդրի շուրջ իրավիճակը էլ ավելի թեժացավ, երբ 1988-թ. հուլիսի 18-ին Կրեմլում տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նիստը, որի օրակարգում Լեռնային Ղարաբաղի մասին Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին հարցն էր:[45] Նիստի ժամանակ ծավալված բուռն քննարկումների գործընթացը և ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստի ընդունած որոշումը իր ժամանակին լուսաբանվեցին ԶԼՄ-ներով: Մենք հարկ ենք համարում անդրադառնալ նիստում հնչած և մամուլում տպագրված այն ելույթներին, որոնցում անդրադարձ կար նաև սումգայիթյան ողբերգությանը՝ հատկապես կարևորելով նրանցում վերջինիս տրված գնահատականները:

Հայկական ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը, իր հաղորդման մեջ ընդգծելով Արցախյան հիմնախնդրում ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքի իրականացումը, արձանագրեց նաև, որ եթե Հայաստանի աշխատավորությունը մեծ հույսով ըմբռնեց ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի՝ համբերություն և քաղաքացիական հասունություն ցուցաբերելու կոչը, ապա Ադրբեջանական ԽՍՀ տարածքում իրադարձությունները բոլորովին այլ ընթացք ունեցան, և Սումգայիթում իշխանությունների բացահայտ թողտվությամբ սկսվեցին հայ բնակչության ջարդեր:[46] Հ. Ոսկանյանը պաշտոնական ամբիոնից հայտարարեց, որ ոչ Ադրբեջանի տեղեկատվության միջոցների, ոչ էլ կոմկուսի կենտկոմի կողմից չտրվեց այդ չարագործության քաղաքական գնահատականը: Նա նաև ցավ ու ափսոսանք հայտնեց նիստի որոշման ներկայացված նախագծի առթիվ, քանի որ այն բնավ չէր արտահայտում հայ ժողովրդի ակնկալիքները և կարող էր հիասթափություն առաջ բերել: Սակայն նկատենք, որ Հ. Ոսկանյանը ևս ձեռնպահ մնաց Սումգայիթը եղեռնագործություն կոչելուց՝ որակելով այն որպես վանդալիզմ: Հատկանշական է, որ նրա ելույթում ևս դրսևորվեց իրադարձությունների միջև «բալանսը» պահելու կուսակցական մոտեցումը, երբ «Զվարթնոց» օդանավակայանի հայտնի դեպքերի հետ կապված հնչեց քննադատություն և ինքնաքննադատություն՝ հանրապետության կուսակցական և խորհրդային մարմինների գաղափարախոսական աշխատանքում թույլ տրված սխալների համար:

---

[44] Տե՛ս ,,Правда”, ,, «Звартноц»: эпилог’, 24.03.1989.

[45] Տե՛ս ,,Коммунист”, ,,Заседание Президиума Верховного Совета СССР”, 19.07.1988.

[46] Տե՛ս «Սովետական Հայաստան» , 20.07.1988:

Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ Ս. Թաթլիևը նիստի ժամանակ իր հաղորդման մեջ խոստովանեց, որ իրավիճակը տագնապալի է ու պայթյունավտանգ՝ գործադուլների, երթերի ու հանրահավաքների, ինչպես նաև Հայաստանից ադրբեջանցի շուրջ քսան հազար բնակչության՝ Ադրբեջանի տարածք տեղափոխվելու հետ կապված: Նրա կողմից հերթական անգամ աղճատվեց Արցախյան շարժման բովանդակությունը՝ այն որակվելով որպես հակապետական, ծայրահեղական, հակավերակառուցողական տարրերի գործողություն, որպես զուտ սոցիալ – տնտեսական խնդիր: Ս. Թաթլիևը, հավատարիմ ադրբեջանական իշխանությունների որդեգրած ուղեգծին, իր գնահատականների մեջ հեռու չգնաց Արցախյան հիմնախնդիրը որպես խորհրդային ժողովուրդների ճակատագրի հանդեպ պատասխանատվության զգացումի և քաղաքական մշակույթի բացակայություն որակելուց և ոչ միայն չդատապարտից սումգայիթյան սպանդը, այլ ուղղակիորեն այն ներկայացրեց որպես որպես ԼՂԻՄ-ում իրադարձությունների անմիջական արձագանք, որպես միմյանց հանդեպ ուշադրության պակաս, ազգամիջյան անվստահություն:[47] Մասնագիտությամբ տնտեսագետ և արևելագետ, ԽՍՀՄ ԳԱ Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնօրեն Ե. Պրիմակովը Արցախյան շարժումը որակելով որպես վերակառուցման տակ դրված վտանգավոր ական, զավեշտալի կոչ արեց ընդհանրապես չվկայակոչել պատմությունը և դրանով իսկ «հերքեց» պատմական արդարությունը վերահաստատելու հայ ժողովրդի ձգտումը ու հաստատեց իր ադրբեջանամետ դիրքորոշումը՝ չանդրադառնալով սումգայիթյան իրողություններին[48]: Իսկ ամենամեծ ցինիզմը դրսևորվեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի կողմից, որը իր կողմից ծրագրված կեղծ ժողովրդավարական կաղապարներով ընթացող նիստի ժամանակ ոչ միայն դեմ դուրս եկավ Արցախը մայր Հայաստանին վերամիավորելուն, այլև հայտարարեց, որ Սումգայիթը չի կարելի կոչել ցեղասպանություն, որովհետև վերջինս կազմակերպված հանցագործություն է, մինչդեռ Սումգայիթի ողբերգության հեղինակները խուլիգաններ էին, հասարակության թափթփուկներ, և եթե խորհրդային զորքը չուշանար երեք ժամով, չէր լինի ողբերգությունը, որին զոհ գնաց ընդամենը 32 մարդ:[49] Փաստորեն, խորհրդային երկրի մասնագիտությամբ իրավագետ ղեկավարը հրապարակավ ոչ միայն զանց արեց երկրում հռչակված ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքը, այլև փորձեց սահմանափակվել Սումգայիթի «քանակական բնութագրով» և դրանով իսկ զերծ մնալ վերջինիս իրավաքաղաքական գնահատականը հնչեցնելուց, այն որպես մարդու կյանքի իրավունքի

[47] Տե՛ս «Սովետական Հայաստան» , 20.07.1988:
[48] Տե՛ս նույն տեղում:
[49] Տե՛ս «Գիտություն», «Հայաստան, Ղարաբաղ , 18 հուլիս, 1988թ.», ՀՀ ԳԱ թերթ,թիվ 19-21, 1-15 դեկտեմբեր, 1998:

դեմ ուղղված ամենամեծ, վաղեմության ժամկետ չունեցող հանցագործություն որակելուց[50] և չպատասխանեց այն հարցերին, թե ինչու խորհրդային զորքը ուշացավ երեք օր և ոչ թե երեք ժամ, ինչո՞ւ էր զորքը Սումգայիթում սկզբնապես անգործության մատնվել, երբ կոչված էր պաշտպանելու հայերին գազազած ամբոխի վայրագություններից: Նման հարցադրումներ և նրանց պատասխաններ չինչեցին, որովհետև խորհրդային երկրում մարդկային անհատի ճակատագիրը երբեք էլ արժեք չէր ներկայացրել: Հետագայում ակադեմիկոս Ս. Համբարձումյանը իր հուշերում վկայում էր, որ հայերի պատմական արդարությունը վերահաստատելու անկեղծ մղումները հայտնվել էին կրեմլյան խաղերի կենտրոնում, ինչի հետևանքով էլ բորբոքվեց առճակատումը ԼՂ խնդրի շուրջ:[51]

Նիստում Մ. Գորբաչովի, Ե. Պրիմակովի, Ա Թաթլիևի և այլոց փարիսեցիական դիտարկումներին արժանի պատասխաններ տրվեցին կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանի, Հայաստանի գրողների միության նախագահ Վ. Պետրոսյանի, ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանի և Ս. Համբարձումյանի կողմից, ովքեր իրենց ելույթներում համակողմանիորեն հիմնավորեցին Ադրբեջանի կազմից Լեռնային Ղարաբաղը դուրս բերելու և Հայաստանին վերամիավորելու հայ ժողովրդի պահանջն ու դրա համար անհրաժեշտ առկա հնարավորությունները: Հ. Պողոսյանը իրավամբ հակադրվեց Ս.Թաթլիևի այն փաստարկին, թե ադրբեջանական իշխանություններին և Մ. Գորբաչովին ուղղված հարյուրավոր նամակների տակ ադրբեջանաբնակ հայերը իրենց ստորագրություններն են դրել՝ մտահոգված իրադարձությունների վտանգավոր զարգացմամբ և դժգոհություն հայտնելով արցախահայերի պահանջից. «Նախ և առաջ, Լեռնային Ղարաբաղի բախտը կարող են վճռել միայն ղարաբաղցիները, երկրորդ, Սումգայիթի ուրվականի և բազմաթիվ սպառնալիքների հետևանքով անելանելի վիճակի մեջ ընկած Բաքվի և Ադրբեջանական ՍՍՀ-ի մյուս վայրերի հայերը ստիպված են ստորագրել ամեն մի փաստաթղթի տակ, միայն թե անվտանգ դարձնեն իրենց և իրենց երեխաների ապագան»:[52] Հետևելով համամիութենական 19-րդ կուսակցական կոնֆերանսում Մ. Գորբաչովի հռչակած այն սկզբունքին, որ ավելի լավ է ճշմարտությունը ինչպես որ կա, քան կիսաճշմարտությունը, ինչպես ուզում են լսել, Հ. Պողոսյանը իր ելույթում արձանագրեց, որ հայերի և ադրբեջանցիների հարաբերություններում լուրջ ճեղքվածքը , «…վերքը բուժելու համար ժամանակ է հարկավոր, մեր բոլոր ջանքերով հանդերձ տարիներ են հարկավոր, որպեսզի

[50] Տե՛ս **Ի. Արաբյան,** Յեղասպանությունը և պատժելիությունը, Ե., 1995:
[51] Տե՛ս «Գիտություն», «Հայաստան, Ղարաբաղ , 18 հուլիս, 1988թ.», ՀՀ ԳԱ թերթ,թիվ 19-21, 1-15 դեկտեմբեր, 1998:
[52] Տե՛ս «Սովետական Հայաստան» , 20.07.1988:

մոռացվեն, հարթվեն, սպիանան ալեկոծված դառնություններն ու վիրավորանքները, որպեսզի մոռացվի Սումգայիթը»:[53]

Գրող Վ. Պետրոսյանը իր ելույթում կրկին բողոք հայտնեց կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի կամայական, ազգերի ինքնորոշման իրավունքը ոտնահարող որոշման դեմ՝ վերջինս որակելով որպես հակաժողովրդավարական ու հակասահմանադրական և անտրամաբանական, նաև տմարդի և հակաբնական անվանեց բռնի կերպով Լեռնային Ղարաբաղը իր կազմում պահելու Ադրբեջանի ձգտումները.«Ինչու՞ է Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում համարվում ինտերնացիոնալիզմ, իսկ Հայաստանի կազմում՝ նացիոնալիզմ»:[54] Վ. Պետրոսյանը բարձրաձայնեց Ադրբեջանում տասնամյակներ շարունակ ազգային արժանապատվության ոտնահարման, ինչպես նաև իրականացվող մշակութային ցեղասպանության մասին. «…«պատմության քարե վկաները», … նրանցից Ղարաբաղի հողում մնացել են հազար վեց հարյուրը:… համաշխարհային քաղաքակրթության արժեքներ: Եվ նրանք նույնպես օգնություն են աղերսում»:[55] Հակադրվելով Ս. Թաթլիևին, գրողն իրավամբ արձանագրում էր, որ եթե Սումգայիթում չլիներ հայերի սպանդը, իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում կարող էին ավելի հանգիստ, առանց դրամատիզմի ընթանալ. «Բայց տեղի ունեցավ անըմբռնելին:… Սումգայիթում սկսվեցին մեր երկրի պատմության մեջ աննախադեպ արյունոտ իրադարձություններ»:[56] Վ. Պետրոսյանը հեղինակավոր ամբիոնից ի լուր ամենքի հայտարարեց, որ Սումգայիթում «իրականացվել է ցեղասպանության փորձ», որ անկախ վանդալիզմի ձևից, սպանվածների, բռնաբարվածների, հաշմվածների թվից դա ցեղասպանություն էր, քանի որ մարդկանց սպանել էին իրենց ցեղային պատկանելության համար, քանի որ նրանք հայեր էին: Սպանդը համարելով վերակառուցման հակառակորդների արյունոտ ձեռքի գործ, գրողը սուր քննադատության ենթարկեց ադրբեջանական օրենսդիր բարձրագույն իշխանությանը՝ Սումգայիթը լռության մատնելու կամ որպես խակ անչափահասների խուլիգանական արարք ներկայացնելու և ցավակցական ոչ մի խոսք չասելու համար. «Մենք շարունակում ենք հավատալ, որ սումգայիթյան ողբերգությունը այնուամենայնիվ կստանա իր իրական գնահատականը…, որ պատմության գերագույն դատարանի առջև կկանգնեն առաջին հերթին այդ արյունոտ սպանդի կազմակերպիչներն ու գաղափարախոսական ղեկավարնե-

[53] Տե՛ս նույն տեղում:
[54] Տե՛ս նույն տեղում:
[55] Նույնը:
[56] Նույնը:

ը, այլ ոչ միայն իրագործողները: Որ վերջապես կհրապարակվի զոհվածների թիվը» :[57]

Բանալի բառեր – Արցախ, համաժողովրդական, Սումգայիթ, ցեղասպանություն, հանրահավաք, Զվարթնոց, նիստ, մամուլ, խեղաթյուրում,կեղծիք, պայքար:

Սուսաննա Սերոբյան, Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988թ. հուլիս ամսին /քննական վերլուծություն/ - 1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանդը, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը:

Հեղինակը քննության է առնում 1988թ. հուլիս ամսին խորհրդային մամուլի՝ սումգայիթյան իրողություններին վերաբերող հրապարակումները: Խորհրդային կենտրոնական մամուլը ապակողմնորոշեց ընթերցողին՝ խեղաթյուրելով փաստերը և չտալով սումգայիթյան ողբերգության իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը, չորակելով այն որպես ցեղասպանություն: 1988 թ. հուլիս ամսին խորհրդային մամուլը չապահովեց ընթերցողի և տեղեկատվության իրական կապը, նրանց միջև չկայացավ երկխոսություն և փոխըմբռնում, որովհետև մամուլի արձագանքը թե՛ սումգայիթյան և թե՛ «Զվարթնոց» օդանավակայանի իրադարձություններին ոչհամարժեք էր ու ոչառարկայական:

Сусанна Серобян, Сумгаитская трагедия в советской периодической печати за месяц июль 1988г. - С 27-29 февраля 1988 года в многонациональном Сумгаите, находящемся в двадцатипяти километрах от Баку , произошла резня армянского населения, которая потрясла цивилизованное общество.

Автор рассматривает те публикации советской периодической печати, которые касались сумгаитских событий.

Советская центральная пресса дезориентировала читателя , искажая факты и не давая юридическую, политическую и моральную оценку сумгаитскому геноциду.

За месяц июль 1988 года советская официальная пресса не смогла обеспечить диалог и прямую связь между читателем и действительной информацией, так как отзывы сумгаитских событий и событий аэропорта ,,Звартноц'' были необьективны и неадекватны .

Susanna Serobyan, Sumgait tragedy in the Soviet periodical press in July 1988 - From February 27-29, 1988 in multinational Sumgait, located in 25 kilometers from Baku, took place a massacre of the Armenian population, which shoked the civilized society. The author considers those publications of the soviet press release that referred

[57] Նույնը:

to the Sumgait events in July 1988. Central Press disoriented reader, distorting the facts and not giving legal, political and moral assessment of Sumgait genocide. The soviet press wasn't ensure diversity of opinions and a direct connection between the reader and information, because the press reaction for both Sumgait events and "Zvartnots" airport was nor adequate, neither objective.

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԸ

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հ.Յ. Դաշնակցության Երկրորդ Ընդհանուր ժողովը գումարվում է 1898թ.-ի ապրիլ, մայիս, հունիս ամիսներին, մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել, սակայն կա <<նիստերի ամփոփ և կրճատ ատենագրությունը>>, որ Սիմոն Վրացյանը հրապարակել է ԴԻՎԱՆ-ի Բ հատորում:[1]

1898թ. Դաշնակցությունը ուներ կազմակերպական ընդարձակ ցանց, որի մաս էին կազմում ոչ միայն 1897-1898թթ Արևելյան Շրջանային ժողովին մասնակցած 8-10 շրջանները, այլև Պարսկաստանի և Երկրի(Վասպուրական, Ախլաթ, Սասուն, Տարոն, Բասեն-Ալաշկերտ, Կարին, Երզնկա, Տրապիզոն և այլն) կազմակերպությունները, Պոլսի, Իզմիրի, Կիպրոսի, Եգիպտոսի, Բալկանների, Եվրոպայի և Ամերիկայի մարմիններն ու խմբերը: Վրացյանը գրում է. <<նա հետզհետե գրավում է քայքայվող Հնչակյան կուսակցության տեղը, նրան հաշվի են առնում արտաքին ուժերը… նրա հետ բանակցում էր Սուլթանը Հարություն փաշա Տատեանի միջոցով:[12]

Սիմոն Զավարեանը նախ և առաջ հարկ է համարում կուսակցությանո օժտել որոշակի ու հստակ կազմակերպական կանոններով՝ տարբեր կողմերից հնչող կարծիքների ու մտքերի շփոթքին մեկընդմիշտ վերջ տալու համար:

Դաշնակցության Առաջին Ընդհանուր Ժողովից մոտ 6 տարի էր անցել և բազմաթիվ հարցեր առկախ էին մնացել և սպասում էին իրենց վերջնական և վճռական լուծմանը, ուստի Ընդհանուր համագումարի կայացումը դարձել էր հրամայական անհրաժեշտություն: Ընդհանուր Ժողովի գումարման անհետաձգելի անհրաժեշտությունը շեշտվում է նաև <<Դրոշակ>>ի խմբագրության և արտասահմանյան մարմինների ու գործիչների կողմից դեռ 1896-97 Շրջանային Ժողովների օրերին և դրանից անմիջապես հետո: Երկրորդ Ընդհանուր Ժողովը պիտի բացվեր ապրիլի 5-ին և տևեր մինչև հուլիսի կեսերը, ըստ երևույթին, ապահովության նկատառումներով, որոշ ընդհատումներ արձանագրելով: Կարևորագույն հարցերից մեկը ապակենտրոնացման և կենտրոնացման խնդիրն էր, անկասկած, որն ըստ Ս. Վրացյանի <<բավականին զբաղեցրել էր ժողովը>>: Սիմոն Զավարեանը հանդես էր գալիս որպես ապակենտրոնացման ամենաեռանդուն ջատագով, նշելով, որ կազմակերպությունը թույլ չի տա այս կամ այն քողի տակ ստեղծել կենտրոն, որ կապահովի բոլոր մարմինների հավասարակշռությունը:

---

[1] Դիվան Հ.Յ. Դաշնակցութեան, Բ հատոր (էջ 45-70 և հավելված 71-86):

[2] Նյութեր Հ՝Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատոր էջ 46:

Հստակ կերպով արտացոլվում է ընդհանուր մարինների իրավասությունների և պարտականությունների հավասարակշիռ բաշխումը դեպի բարոյական փոխադարձ կախումը կազմակերպական ապակենտրոնացման մեջ:

Այլ հիմնական հարց էր մարտավարության խնդիրը(տակտիկան): Այս ուղղությամբ շահեկան է ծանոթանալ <<Վասպուրականի Կենտրոնական կոմիտեի կարծիքներին ապագա գործունեության մասին>>:[3] /19 նոյեմբեր/ 1 դեկտեմբեր 1897/՝ գրված Վազգենի կողմից, ուր << աչքի առաջ ունենալով և Ծովափի, Ծիրնկատարի (ՈՒրվականի (Հրայր Դժոխք)) շրջանակը (Տարոն) Ծովասար (Սասուն և այլն),և Ցամաքաձորի Աղբյուրի (Աղբյուր Սերոբ) շրջանակը (Ախլաթ-Բաղեշ) կարծիքները, Վրեժստանի պատրաստի ուժերը, Մեծ Քաղաքի և ուրիշ շատ կոմիտեների ցույց տված պատրաստակամությունը խոստումները և այլն>>, համադրելով Երկրի գործուն ուժերի տեսակետները, առաջարկվում է ուժերը կենտրոնացնել 4 տարբեր շրջաններում՝ Ծովասար (կամ <<Աբրոյի գերեզման>>, այսինքն Սասուն), Շամիրը (Վասպուրական), Քարժայռը (Դերսիմ) և Ասորեստանը(հավանաբար ակնարկում է Վասպուրականի հարավը և Պարսկաստանի սահմանամերձ շրջաններում բնակվող ասորիներին), առաջին երեք տեղերում պետք է կենտրոնացվեր մեծ քանակությամբ զենք՝ յուրաքանչյուրում 500-700 ական հրացաններով կազմակերպված ուժեր, իսկ 4 տեղերում՝ մեծ քանակությամբ պայթուցիկ նյութ: Ասորեստանի համար 2-3 գաղափարական գործիչներ և 1-2 թեթև հայդուկային խմբեր բավական էին ոտքի հանելու ասորաց մելիքներին: Երկրորդ Ընդհանուր Ժողովին մասնակցում էին Թուրքիայից Վիշապի (Պոլիս), Ոսկեհանքի (Իզմիր), Ծովափի (Տրապիզոն), Արծիվի (Երզնկա, Բարձր Հայք) և Կղզիի (Կիպրոս) պատգամավորները, Սարուսաստանից՝ Մեծ Քաղաքի (Թիֆլիս), Ոսկեջուրի (Բաքու), Ամուրի, Քարի (Ալեքսանդրապոլ), Զրաբերդի (Կարս), Նավահանգստի(Բաթում), Ավազանի (Օդեսա-Ղրիմ), Նալբանդի (Նոր-Նախիջևանի) և Եկեղեցու (Մոսկվա) և Երկրից դուրս Վրեժստանի (Ատրպատականլի), Բալկանյան Թերակղզու և Եգիպտոսի պատգամավորները, նաև անշուշտ, <<Դրոշակի>> խմբագրության և Թիֆլիսի Բյուրոյի ներկայացուցիչները: Ժողովին մասնակցելու հրավիրված էին նաև<<Երկրի մեջ պատասխանատու գործեր վարող ընկերներ>> թվով 13 հոգի:

Տրված էր, որ յուրաքանչյուր շրջանից պետք է մասնակցեր մեկական պատգամավոր: Երկրորդ Ընդհանուր Ժողովը ինքն էր, որ վերջնականապես պիտի հստակեցներ կազմակերպական զանազան միավորների <<նվիրապետական>> կարգը, պիտի **բյուրեղացներ Դաշնակցության կազմակերպական կառույցը՝ մարմինների փոխադարձ կախումը** պարտականություններն ու իրավասությունները կանոնակարգային հստակ տրամադրություններով:

[3] Նույն էջ 48:

Ընդհանուր Ժողովը լսում է շրջանների զեկույցներն ու գրավոր տեղեկագրերը՝ հատկացնելով 14 նիստ, որոնց ընթացքում պարզաբանվում է 1892-1897 թթ. ընթացքում Դաշնակցության ամբողջ գործունեությունը, իր բոլոր կողմերով: Ապահովության նկատառումներով այս բոլոր զեկույցները չեն կցվել ատենագրությանը և ցրվել:

Այս բոլորից հետո ժողովն անցնում է **տակտիկայի քննությանը**: Ի սկզբանե հայտնի էր, որ Ընդհանուր ժողովի որոշումը պիտի համապատասխաներ 1897-98 թթ. Շրջանային ժողովների մեծամասնության տրամադրությանը՝ այն է միաժամանակ առաջ տանել ցույցային գործողություններ և կատարել ուժերի կենտրոնացում, քանի որ իբրև մեկնակետ ժողովը միաձայնությամբ հայտարարում է, որ <<առանց եվրոպական միջամտության անկարելի է ժողովրդի ազատագրության գործը գլուխ բերել, հետևաբար պետք է ի նկատի ունենալ այդ միջամտությունը առաջ բերելու բոլոր հնարավորությունները>>: Տակտիկայի վիճաբանությունները տևում են 15 նիստ:

Ոմանք կողմնակից էին բացառապես ցույցային գործողությունների, ուրիշներն էլ պաշտպանում էին ցույցային գործողություններին զուգահեռ Երկրի զանազան կենտրոններում մարտական ուժերի և զինամթերքի կենտրոնացման գաղափարը: Իբրև որոշում Ընդհանուր Ժողովը հանգում է հետևյալ եզրակացություններին՝ ուժերի կենտրոնացում Երկրի մեջ, ցույցեր Պոլսում և ծովեզրյա քաղաքներում մարտական-զինամամարզական ուժերի կազմակերպում, բայց ոչ զուտ ֆիդայական-ասպատակային գործունեություն: Որպես կենտրոնացման վայր ժողովը նկատի է ունենում նաև Լեռնավայրը (Կիլիկիա), որպես կենտրոնացման երկրորդական վայրեր նկատի են առնվում Շատախ-Վասպուրականն ու Քարաժայռը (Դերսիմ): Որոշվում է <<Վրեժստանի մոտ 300 հրացաններ հավասար կերպով բաշխել Շամիրի, Շատախի և Մոկսի լեռնային մասերում կազմվելիք զինամարզական-մարտական խմբերին>>:

Ընդհանուր Ժողովը որոշում է նաև <<կենտրոնացման>> գործի հետ մեկտեղ անհապաղ ձեռնարկել ցույցերի նախապատրաստական գործը <<Կռվածաղկում>>, լինում են նաև առաջարկներ՝ ցույցեր կազմակերպել Թուրքիայի ծովեզրյա մյուս քաղաքներում՝ Իզմիր, Սասուն, Տրապիզոն, սակայն Ընդհանուր Ժողովն ի վերջո մերժեց այդ առաջարկները, պարզաբանելով, որ դրանք չեն ունենա քաղաքական այն մեծ նշանակությունը, ինչ-որ Կռվածաղկում կատարվածը:[4]

Ընդհանուր Ժողովը որոշում է առժամանակ հրաժարվել տեռորի գաղափարից,որը <<միայն վնասել է հեղափոխական հմայքին>>: Ուստի տեռորի

[4] Նյութեր Բ հատոր էջ 60:

մասին տրվում է նոր որոշումներ:[5] Ինչ վերաբերվում է օտար տարրերի և կազմակերպությունների հետ գործակցությանը, ժողովը որոշում է՝ Ա) ասորիների մոտ պատգամավոր ուղարկել ուսումնասիրության և գործակցության հնարավորության շուրջ տեղեկություններ բերելու համար: Բ) կապեր հաստատել կամ դրանք շարունակել մակեդոնացիների, հույների և ուրիշների հետ: Գ) Շարունակել սկսած բանակցությունները Երիտասարդ Թուրքերի հետ և նպաստել նրանցում իսկական հեղափոխական ուժ ստեղծելուն>>:

Կառույցի կազմակերպական կանոնները-Հիմնական սկզբունքը՝ կազմակերպական ապակենտրոնացումը, մնում է անփոփոխ: Ժողովը որոշում է, սակայն, <<ընդունել և վավերացնել այն ձևերն ու հարաբերությունները, որոնք ընդհանրացրել էին կյանքի և գործի պայմանները և կամ պահանջ էին դարձել կազմակերպության մեջ>>: Տարբեր ձևով են նախատեսված ու սահմանագծված գործերը վարելու եղանակները, մարմինների փոխադարձ կախումը, նրանց նյութական պարտավորությունները հեղափոխական(ներսի) և օժանդակ(դրսի) շրջանների համար: Երկրորդ Ընդհանուր Ժողովը վերջնական որոշման բնույթ տվեց 1896-97-ի Կովկասյան Շրջանային Ժողովի կողմից կանխորոշված 2 բյուրոների դրությանը՝ Արևելյան(Թիֆլիս) և Արևմտյան(<<Դրոշակի>> խմբագրություն, Ժնև) Բյուրոներին: Նրանք բնականաբար ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից և գործում է մինչև հաջորդ Ընդհանուր ժողովը, որին հաշվետու են: Նրանց վերապահված է նաև Կենտրոնական Կոմիտեների համար կնիք պատրաստելու իրավունքը:

Կազմակերպական կառույցի ներսում Երկրորդ Ընդհանուր Ժողովի կողմից բերված կարևոր նորույթ էր Պատասխանատու Կենտրոնական Կոմիտեների (կամ Պատասխանատու Մարմինների) դրությունը: Այսպես էին կոչվում Ընդհանուր Ժողովի կողմից ընտրված այն մարմինները, որոնց պիտի հանձնվեր <<վճռած խոշոր ձեռնարկի իրագործման պատասխանատվությունը՝ Երկրի որոշ շրջաններում>>:

Այսպես՝ Պատասխանատու Կենտրոնական Կոմիտեներով օժտվում են Բարձրավանդակն ու Լեռնավայրը՝ իբրև կենտրոնացման և (ապագա ապստամբության) գոտիներ և Կովածաղիկը որպես ցույցային գործողությունների կենտրոն:

Վասպուրականի համար Պատասխանատու Մարմնի ստեղծումը վստահվում է Արևելյան Բյուրոյին: Այս Ընդհանուր Ժողովի հիմնական նորությունից մեկը այն էր, որ հաստատվում է կուսակցության մի լիազոր միավոր՝ Դաշնակցության կամքը ներկայացնող Մարմին, որը կոչված էր ներկայացնելու ամբողջ Դաշնակցությունը Ընդհանուր Ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում

[5] Նույնը էջ 60-61:

(Դ.Կ.Ն.Մ.), որը կազմված էր 2 բյուրոներից և 4 Պատասխանատու Կենտրոնական Կոմիտեներից: Դ.Կ.Ն.Մ.-ն լիազորված էր վարելու կուսակցության արտաքին բոլոր հարաբերությունները՝ Ընդհանուր Ժողովի որոշած ձեռնարկների հաջողությունը ապահովելու համար, պահանջել ուժերի տեղաշարժ և նոր բաշխում, թարմ տարրերով ուժեղացնել Բյուրոնրն ու Պատասխանատու Մարմինները, ինչպես նաև չնախատեսված, բացառիկ դեպքերում փոխել կամ հետաձգել Ընդհանուր Ժողովի վճիռները, կամ նոր ձեռնարկ սկսել իր պատասխանատվության տակ: Երրորդ Ընդհանուր Ժողովի համար թվական է ճշտվում <<1900թ. վերջերը>>: Երկու բյուրոները պիտի որոշեն վայրն ու ճշգրիտ թվականը:

Այս ձևով է ավարտվում <<Ամփոփ և Կրճատ>> ատենագրության Կազմակերպության բաժինը իր 6 ենթագլուխներով՝ Ա)Կազմակերպություն Թուրքիայի մեջ, Բ)Կազմակերպություն Թուրքիայից դուրս, Գ)Պատասխանատու Կենտրոնական Կոմիտե, Դ)Բյորո, Ե)Դաշնակցության Կամքը Ներկայացնող Մարմին, Զ)Ընդհանուր Ժողով: Այնուհետև հետևում է **Կարգապահություն և դրամական խնդիրներ** բաժինները, որոնցում արձանագրված որոշումները նույնպես ներկայացվում են կանոնավոր բնույթով:

Ընդհանուր Ժողովի օրակարգում կար նաև հետևյալ հարցերը.

Ա) Միության կամ համերաշխության գործունեություն նոր Հնչակյան կուսակցության հետ,

Բ) Համերաշխություն մյուս հեղափոխական կուսակցությունների հետ,

Գ) Բանակցություն Սուլթանի ներկայացուցչի հետ:

Երկրոդ Ընդհանուր Ժողովի հիմնական նորույթն այն էր, որ փոխվում էր Դաշնակցության՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման մարտավարությունն ու ռազմավարությունը:

Մինչև այդ թվականը ունեցած գործունեությունը բերում էր այն համոզմունքին, որ իրեն չի արդարացնում հայդուկային գործելակերպը, քանզի այն բավարար չէր թե Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, թե Եվրոպական Տերությունների միջամտությանը հասնելու, և թե արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպման տեսանկյունից:

Ուստի և Ընդհանուր Ժողովը որդեգրում է նոր գործելակերպ՝ այն է վերջ տալ տարանջատ հայդուկային ձեռնարկներին և բոլոր ուժերը կենտրոնացնել Արևմտյան Հայաստանում Ընդհանուր ապստամբության կազմակերպման ուղղությամբ:

Բանալի բառեր - Երկրորդ ընդհանուր Ժողով, ապակենտրոնացման գաղափար, մարտավարության, ռազմավարության խնդիր, Ծովասար (Սասուն), Շամիր (Վասսպուրական), Քարաժայռ (Դերսիմ), Ասորեստան (Վասպուրականի հարավը և Պարսկաստանի սահմանամերձ շրջաններում բնակվող ասորիներ),

Վիշապի (Պոլիս), Ոսկեհանքի (Իզմիր), Ծովափ (Տրապիզոն), Արծիվ (Երզնկա, Բարձր Հայք) և Կոզի (Կիպրոս) Սարուսաստան՝ Մեծ Քաղաք (Թիֆլիս), Ոսկեջուրի (Բաքու), Ամուր, Քար (Ալեքսանդրապոլ), Զրաբերդ (Կարս), Նավահանգստ (Բաթում), Ավազան (Օդեսա-Ղրիմ), Նալբանդ (ՆորՆախիջևանի), Եկեղեցիւ (Մոսկվա) Վրեժստան (Ատրպատականլի, կառույցի կազմակերպական կանոններ, կարգապահություն և դրամական խնդիրներ

Կարինե Հովսեփյան, Հ.Յ. Դաշնակցության Երկրորդ Ընդհանուր Ժողովի նախապատրաստություններն ու կազմը - հոդվածում ուսումնասիրված է Դաշնակցության Երկրորդ Ընդհանուր ժողովի նախապատրաստությունները, կազմը, նիստերի ատենագրություններն ու Արևմտյան Հայաստանի ազատագրման՝ Դաշնակցության ռազմավարության ու մարտավարության փոփոխությունը:

Карине Овсепян, Приготовления и состав Второго Всеобщего Собрания партии Дашнакцутюн - В данной статье изучена приготовления Второго Всеобщего Собрания партии Дашнакцутюн, его состав, записи засидании и изменения стратегии и тактики партии по освобождению Западной Армении.

Karine Hovsepyan, Preparation and composition of the Second General Assambly of the Party Dashnakcutyun - This article examined the preparations of the Second General Assambly,its composition, of the strategy and tactics of the Dashnakcutyun and change records of the party for the liberation of Western Armenia.

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ. Գ.ԱԴԵԼԽԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԵՍԱՅԱՆ

19-րդ դարի 70-ական թթ-ից Այսրկովկասում ներքին շուկայի աճը և ընդլայնումը, երկրամասի, այդ թվում Թիֆլիսի նահանգի, առավել ինտենսիվորեն ընդգրկվելը համառուսաստանյան շուկայում, մեծ ազդեցություն ունեցան ամբողջ Այսրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Չնայած ռուսական ինքնակալությունը շահագրգռված չէր երկրամասի տնտեսական զարգացման հարցում, կապիտալիզմը 19-րդ դարի 70-ական թթ-ից, հատկապես երկաթուղիների լայնամասշտաբ շինարարությունից հետո, զարգացավ արդյունաբերության մեջ: Դրա հետևանքն էր մեքենայական արտադրության մեծ թափով ներդրումը արդյունաբերության տարբեր ճյուղերում, ինչը մանուֆակտուրային և մանր կապիտալիստական արտադրությունն աստիճանաբար մղեց երկրորդ պլան: Այստեղ առաջամարտիկները հայ արդյունաբերողներն էին:

Թիֆլիսի նահանգում, ընդհանրապես ամբողջ Այսրկովկասում կաշվի և կաշվե ապրանքների արդյունաբերությունն առաջիններից էր, որ անցավ մեքենայացված, ֆաբրիկա-գործարանային արտադրությանը: Կաշվի և կոշիկի արտադրության անվիճելի առաջատարը ամբողջ Կովկասում խոշոր արդյունաբերող Գրիգոր Ադելխանյանն էր: Ֆաբրիկա-գործարանային արտադրությունն առաջացավ մի կողմից՝ գոյություն ունեցող մանր արտադրական, մանուֆակտուրային ձեռնարկությունների ամրապնդման, մեքենայական տեխնիկայի լայնորեն կիրառման, մյուս կողմից՝ արտադրության տարբեր ոլորտներում միանգամից նոր ֆաբրիկաների և գործարանների ստեղծման ճանապարհով: Գ.Ադելխանյանը երկրորդ տիպի ձեռնարկատերերից էր, որը չանցավ մանր կապիտալիստական արտադրության փուլը, այլ հենց սկզբից հանդես եկավ որպես գործարանատեր, անընդհատ տեխնիկական նոր միջոցներ ներդնելով իր ձեռնարկություններում և կատարելագործելով արտադրանքը:

Գրիգոր Գրիգորի Ադելխանյանը ծնվել է 1848թ. Մոսկվայում, ստացել է փայլուն կրթություն: Ավարտել է Ս.Պետերբուրգի առևտրի գիմնազիան, ուսումը շարունակել Գերմանիայում՝ Լայպցիգի Բարձրագույն առևտրական ուսումնարանում:

Վերադառնալով արտասահմանից, Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Միխայիլ Նիկոլանիչ Ռոմանովի հանձնարարությամբ մեկնում է Կովկաս՝ գանձապետարանի ստեղծման աշխատանքներին մասնակցելու համար: 1869թ. Գ.Ադելխանյանը նշանակվում է կայսերական Պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի վերահսկիչի կրտսեր

օգնական,[1] իսկ 1871թ.՝ ավագ օգնական:[2] Կարելի է ասել, որ Գ.Ադելխանյանն իր գործունեությունը սկսել է որպես բանկիր: 1872թ., 24 տարեկանում, դարձել է 1871թ. վերջին ստեղծված Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության կառավարիչ,[3] այդ պաշտոնին մնացել մինչև 1895թ., ապա մինչև մահը՝ 1917թ., եղել է Ընկերության խորհրդի նախագահը: Հայկական այս բանկը լավագույն և ամենակայուն ֆինանսական հաստատություններից մեկն էր ոչ միայն Այսրկովկասում, այլև ողջ ռուսական կայսրությունում, որի տարեկան ընդհանուր շրջանառությունը 19-րդ դարի վերջին մոտ 200 մլն ռուբլի էր:[4] Գ.Ադելխանյանը 1916թ. մասնակցել է հայկական ֆինանսա-բանկային կապիտալի խոշորագույն ներկայացուցիչների նախաձեռնած միացյալ Հայկական բանկի ստեղծման աշխատանքներին,[5] որը հավակնություն ուներ դառնալու ռուսական հզոր բանկերի մրցակիցը: Բայց այս գաղափարը չի իրականացել պատմական հանգամանքների բերումով:

Սակայն Գ.Ադելխանյանը հայտնի է ոչ որպես բանկիր, այլ՝ խոշոր արդյունաբերող և կաշվի, թաղիքի, կոշիկի արդյունաբերությունում մեքենայացված արտադրության ու էլեկտրաէներգիայի օգտագործման հիմնադիր:

Մինչև Ադելխանյանը Թիֆլիսում և նահանգում գոյություն ունեին Հ.Գևորգյանի, Ի.Թեյմուրազովի, Չարուխչյան եղբայրների, «Այդինյան և Ուզունյան» ընկերության կաշվի փոքր արտադրամասեր, որոնք ավելի շուտ տնայնագործական, քան արդյունաբերական ձեռնարկություններ էին: Կային նաև ռուս մոլոկաններին պատկանող երեք արտադրամասեր, որոնք աշխատում էին նույն տնայնագործական մեթոդներով, ընդհատումներով, ունեին մի քանի աշխատող և 1-2 աշակերտ: Նրանց արտադրած կաշին անորակ էր, ուստի տեղի արհեստավորները նախընտրում էին հումքը բերել Ռուսաստանից, որն ավելի որակյալ էր:

Իրավիճակն արմատապես փոխվեց 1875թ., երբ Թիֆլիսում Գ.Ադելխանյանը հիմնեց կաշվի գործարան, որն առաջինն էր նրա ձեռնարկություններից: Այս գործարանի հիմնումը նշանավորեց կաշվի արդյունաբերության մեջ գործարանային արտադրության սկիզբը: Ի դեմս այս գործարանի, խոշոր ֆաբրիկա-գործարանային արտադրությունը կաշվի արդյունաբերությունում դարձավ գերիշխող մանր և մանուֆակտուրային արտադրության նկատմամբ:

Քուռ գետի ափին, Թիֆլիսի Վորոնցովկա փողոցում գտնվող սեփական շենքում հիմնված գործարանում սկզբում աշխատում էր 30 բանվոր, վերամշա-

---

[1] Кавказский календарь на 1870 год, Тифлис, 1869, с. 21.

[2] Նույն տեղում, 1872 год, Тифлис, 1871, с. 21.

[3] «Մշակ», 1872, N: 3; տես նաև՝ Кавказский календарь на 1873 год, Тифлис, 1872, с. 170.

[4] «Մուրճ», 1894, N: 3:

[5] **Оганджанян А.А.,** Банки Закавказья до установления советской власти и идея создания «Армянского банка», ՊԲՀ, 1970, N; 1, էջ 232:

կում էին ոչխարի և այծի կաշի, իսկ տարեկան արտադրանքը կազմում էր 60հզ. ռուբլի: Սակայն հենց սկզբից արտադրանքն այնքան բարձրորակ էր, այնպիսի լայն պահանջարկ ունեցավ, որ Ադելխանյանը մի խանութ բացեց Թիֆլիսում, մեկն էլ՝ Ս.Պետերբուրգում: Երկու տարի անց՝ 1877թ., գործարանը սկսեց վերամշակել խոշոր եղջերավոր անասունների կաշի և դարձավ Այսրկովկասում արտադրության այդ ճյուղի անվիճարկելի առաջատարը:[6] 1880թ. Ադելխանյանի կաշվի գործարանում աշխատում էր արդեն 150 բանվոր, տալիս էր տարեկան 432հզ. ռուբլու արտադրանք,[7] իսկ 1880-ական թթ. կեսին տարեկան արտադրանքը հասնում էր 652հզ. ռուբլու:[8] 1880-ական թթ. վերջին Թիֆլիսի ութ կաշվի ձեռնարկությունները թողարկում էին տարեկան 930հզ. ռուբլու արտադրանք, որից Ադելխանյանի գործարանը՝ 700հզ. ռուբլու, իսկ աշխատողները 300 հոգի էին,[9] որը կաշվի արտադրությունում աշխատողների (646) գրեթե կեսն էր: 1886-1891թթ. ընթացքում բոլոր կաշվի ձեռնարկությունների արտադրությունն անկում ապրեց, բացառությամբ Ադելխանյանի գործարանի, որը, ընդհակառակը, ավելի ընդլայնվեց: 1891թ. Ադելխանյանի գործարանը տալիս էր 742հզ. ռուբլու արտադրանք՝ կաշվի ձեռնարկությունների արտադրանքի ընդհանուր գումարի 85,1%-ը:[10] Մեկ այլ աղբյուրի համաձայն, 1890-ական թթ. կեսին Ադելխանյանի գործարանը տալիս էր տարեկան մոտ 800հզ. ռուբլու արտադրանք, իսկ աշխատողների թիվն անցնում էր 300-ից:[11]

Գ.Ադելխանյանի գործարանը տեխնիկապես լավ հագեցած էր: Դեռևս 1886թ., և նույնիսկ դրանից էլ վաղ, այն ուներ 3 շոգեմեքենա 3 շոգեկաթսայով՝ 55 ձիաուժ հզորությամբ, որոնք աշխատում էին հեղուկ վառելիքով, ֆիլտրով ջրի խողովակ, բրդի չորացման հիդրոմեխանիկական սարք և այլ սարքավորումներ: 1890-ական թթ. նրա կաշվի գործարանում, առաջին անգամ ռուսական կայսրությունում, կաշվի դաբաղման պրոցեսում օգտագործվեց էլեկտրականությունը:[12] Ամբողջ գործարանում անց էին կացվել ռելսեր, որոնք հումքը տեղափոխում էին մի արտադրամասից մյուսը: Այստեղ օգտագործում էին նաև հումքի և արտադրության ընթացքում առաջացած մնացուկները (կաշվի կտորտանքը, բուրդը, պոչերը և այլն), որոնք մի քանի անգամ վերամշակվում էին և վաճառվում մեկ փութը 2-3 ռուբլով: Գ.Ադելխանյանը միջոցներ չէր խնայում գործարանն

---

[6] **Դաղայան Խ.,** Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար-1918), «21-րդ դար», թիվ 1 (19), Ե., 2008, էջ134:

[7] **Бакрадзе Г.К.,** Возникновение и развитие капиталистической промышленности в Грузии в XIX веке, Тбилиси, 1958, с. 242.

[8] **Хоштариа Э.В.,** Очерки социально-экономической истории Грузии, Тбилиси, 1974, с. 119.

[9] **Անանուն Դ.,** Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 2 (1870-1900), Էջմիածին, 1922, էջ 53-54:

[10] **Бакрадзе Г.К.,** նշվ. աշխ., էջ 243:

[11] **Сазонов А.Н.,** Армяне на Кавказе. Статистические наброски. Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1898, с.260:

[12] **Бакрадзе Г.К.,** նշվ. աշխ., էջ 243:

անընդհատ տեխնիկապես վերազինելու համար: Գործարանում տիրում էր մաքրություն և խիստ կարգ ու կանոն: Ադելխանյանի գործարանն արտադրում էր բարձր որակի կաշի, և այն հաջողությամբ մրցակցում էր ռուսական կայսրության այլ քաղաքների, այդ թվում վարշավյան, ինչպես նաև արտասահմանյան արտադրանքի հետ:

Գ.Ադելխանյանը, որ բավական մեծ համարում էր ձեռք բերել, որոշ ժամանակ անց ձեռնարկեց կոշիկի սեփական արտադրություն, մանավանդ, որ կաշի գնելու կարիք չկար. այն արտադրվում էր իր գործարանում բավարար քանակությամբ և բարձր որակով: 1886թ. հիմնվեց նրա երկրորդ ձեռնարկությունը՝ կոշիկի ֆաբրիկան, որտեղ արտադրվում էին զինվորական երկարաճիտ ոտնամաններ բանակի համար, ինչպես նաև՝ լայն սպառման եվրոպական ու ասիական (հողաթափեր) կոշիկներ: Գործարանում կար առանձին արտադրամաս, որտեղ արտադրվում էին թամբեր, ճամփորդական պայուսակներ, զանազան կաշվե իրեր: Եվրոպական Ռուսաստանում ու Սիբիրում հատկապես մեծ պահանջարկ ունեին այծենակաճները և թաղիքե ոտնամանները, որոնց գործարանային արտադրության հիմնադիրը կայսրությունում Գ.Ադելխանյանն էր:[13] Նա կոշիկի պահեստներ ուներ Թիֆլիսում, Բաքվում, Վլադիկավկազում: Թիֆլիսի պահեստները գտնվում էին Երևանյան հրապարակում և Հայկական շուկայում, ինչպես նաև Հակոբ Զուբալովի իջևանատանը: 1887թ. նա Թիֆլիսում բացեց իր առաջին խանութը, որտեղ վաճառվում էին «Գ.Ադելխանով և ընկ.» մակնիշով կոշիկների և կաշվե իրերի լայն տեսականի: 1912թ. նա ուներ կոշիկի և կաշվե իրերի երկու խանութ Թիֆլիսում, ինչպես նաև՝ Ս.Պեետերբուրգում՝ Նևսկի պողոտայում:

Գ.Ադելխանյանի արտադրած կոշիկի պահանջարկն անընդհատ ավելանում էր: Արտահանման շուկաներն էին Այսրկովկասի քաղաքները, Հյուսիսային Կովկասը, Կասպյան շրջանը, Լեհաստանը, Ֆինլանդիան, Ռուսաստանի ներքին նահանգներից մինչև Տաշքենդ և Բուխարա: 1900-ական թթ. սկզբին Ադելխանյանի կոշիկի ֆաբրիկայում աշխատում էր 507 մարդ, արտադրում էր 537.544 զույգ բոլոր տեսակի և չափսերի կոշիկ և տալիս էր տարեկան 936.973 ռուբլու արտադրանք:[14] Համեմատության համար նշենք, որ Վարշավայի կոշիկի չորս խոշոր ֆաբրիկաներն այդ շրջանում թողարկում էին ընդամենը 494հզ ռուբլու արտադրանք:[15] Գ.Ադելխանյանի կոշիկի ֆաբրիկայում օգտագործվում էր էլեկտրաէներգիա:

1889թ. Գ.Ադելխանյանը հիմնեց իր երրորդ ձեռնարկությունը՝ թաղիքի շոգեֆաբրիկան, որը, ինչպես նրա բոլոր գործարանները, մեքենայացված էր: Եթե

---

[13] **Դադայան Խ.,** նշվ. աշխ., էջ 135:

[14] Список фабрик и заводов Европейской России, под ред. В.Е. Варзара, С.-Петербург, 1903, с. 455.

[15] Статистические сведения о фабриках и заводах по производсвам необложенным акцизом за 1900 год, под ред. В.Е. Варзара, СПб, 1903, с. 40.

հիմնադրման պահին ֆաբրիկան ուներ մեկ շոգեմեքենա և երկու շոգեկաթսա, ապա 1901թ. այն ուներ չորս շոգեմեքենա 215 ձիաուժ հզորությանբ, ինչպես նաև՝ էլեկտրական: Շոգեֆաբրիկան տալիս էր 371.900 ռուբլու արտադրանք, իսկ աշխատողների թիվը հասնում էր 170-ի:[16] Այս ֆաբրիկան թաղիքե տաք համազգեստ էր արտադրում զինվորականների և ծովայինների համար, ինչպես նաև՝ բարակ թաղիքից պատրաստված քաղաքացիական վերնահագուստ, որը մեծ սպառում ուներ Ռուսաստանի ներքին նահանգներում, Սիբիրում և Հեռավոր Արևելքում:

Գ.Ադելխանյանը նաև պետությունից կապալով վերցրել էր կարի ֆաբրիկա, որտեղ աշխատում էր 140 բանվոր և տալիս էր 63հզ. ռուբլու արտադրանք: Ֆաբրիկան զինվորական համազգեստ էր կարում բանակի համար: Գ.Ադելխանյանը Կովկասյան ռազմական օկրուգի կաշվի և թաղիքի խոշորագույն մատակարարն էր, և դա շնորհիվ արտադրանքի բարձր որակի: Դեռևս 187-9թ. մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը պայմանագրի էր կնքել Ադելխանյանի հետ, համաձայն որի նրա գործարանը պետք է բանակին 5 տարի զինվորական երկարաճիտ ոտնամաններ (սապոգ) մատակարարեր տարեկան 360 հզ. ռուբլու չափով: Այդ պայմանագիրը շարունակաբար երկարաձգվում էր և Ադելխանյանը մշտապես մնաց բանակի մատակարար՝ ընդհուպ մինչև 1917-1918թթ.:[17]

Թիֆլիսի նահանգի կաշվի, թաղիքի և կոշիկի արտադրությունը գրեթե ամբողջությամբ պատկանում էր հայ արդյունաբերողներին: Բացի Գ.Ադելխանյանի գործարաններից, գործում էին Խաչատուր, Նազարեթ, Հովհաննես, Հակոբ Բասենցյան եղբայրների, Ավետիս և Հարություն Զարգարյանց եղբայրների և Փիլիպոս Վարդազարյանցի ընկերության, Ա.Ն.Փարսադանյանի գործարանները: Դրանցից ամենախոշորը Զարգարյանց եղբայրների և Վարդազարյանցի ընկերությունն էր, որը տալիս էր 130հզ. ռուբլու տարեկան արտադրանք:[18] 19-րդ դարի վերջին-20րդ դարի սկզբին նրանք միասին տալիս էին 2,3 մլն. ռուբլու արտադրանք, ինչը կազմում էր Թիֆլիսի նահանգի ամբողջ արդյունաբերական արտադրանքի 121%-ը: [19] Դրանից Ադելխանյանի բաժինը կազմում էր մոտ 2,1 մլն. ռուբլի:

1895թ. Գ.Ադելխանյանը ստեղծեց «Կովկասում Գ.Գ.Ադելխանովի կաշվի և թաղիքի արտադրության բաժնետիրական ընկերությունը», որի կանոնադրությունը հաստատվեց 1896թ. ապրիլի 12-ին: Դա արտադրության և կապիտալի կենտրոնացման արդյունք էր, որը հանգեցրեց բաժնետիրական ընկերությունների ու խոշոր ֆիրմաների ստեղծմանը: Այստեղ ևս առաջատարները և գե-

---

[16] Список фабрик и заводов…, с. 76.

[17] **Դադայան Խ.,** նշվ. աշխ., էջ 134:

[18] **Хоштариа Э.В.,** նշվ. աշխ., էջ 119:

[19] nplg.nukri.org/Развитие промышленности в Грузии в 70-х-90-х гг. XIXв./ очерки истории Грузии/

րիշխողները հայ արդյունաբերողներն էին: Այս երևույթն ի հայտ եկավ 19-րդ դարի 80-ական թթ., բայց լայնորեն տարածվեց հիմնականում 90-ական թթ. կեսին: Ընկերության հիմնադիր կապիտալը 1,5 մլն. ռուբլի էր, բաժանված 1500 բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 100ռ. անվանական արժեքով: Այն Այսրկով-կասում ամենախոշոր ընկերություններից էր և բաղկացած էր Գ.Ադելխանյանի երեք ձեռնարկություններից՝ կաշվի գործարանից, թաղիքի շոգեֆաբրիկայից և կոշիկի ֆաբրիկայից, որոնք, ինչպես նշվել է, միասին տալիս էին տարեկան ավելի քան 2 մլն. ռուբլու պատրաստի արտադրանք: Բաժնետոմսերի մեծ մասը պատկանում էր Գ.Ադելխանյանին, խոշոր բաժնետերերից էին տեղի կապիտ-ալիստները՝ Ա.Ա. Անանյանը, վաճառական Մ.Դ.Ղանդարյանը, օճառի և ձեթի գործարանատերեր Հովհ. Թահիրյանը, Հովհ. և Կ. Ալիխանյանները, խոշոր մեխա-նիկական գործարանատեր Գ.Զ.Յարալյանը, 1-ին գիլդիայի վաճառական Ա.Յ. Ծատուրյանը, տոհմիկ պատվավոր քաղաքացի, բանկիր Ն.Հ. Ծովիանյանը և ուրիշներ:[20]

Գ. Ադելխանյանի բարձրորակ արտադրանքն արժանացել է բազմաթիվ մրցանակների կովկասյան և համառուսաստանյան մի շարք ցուցահան-դեսներում: Այսպես, 1882թ. Մոսկվայում կայացած Համառուսաստանյան արդյունաբերագեղարվեստական ցուցահանդեսում նրա արտադրանքն ար-ժանացավ բրոնզե մեդալի, 1889թ. Թիֆլիսի գյուղատնտեսական և արդյունա-բերական իրերի կովկասյան առաջին ցուցահանդեսում՝ ոսկե մեդալի, 1890թ.՝ Ֆինանսների նախարարության և ռուսական կայսերական տեխնիկական ընկե-րության ոսկե մեդալի, 1896թ.՝ ոսկե և արծաթե մեդալների Նիժնի Նովգորոդի ցուցահանդեսում:[21]

Գ.Ադելխանյանը 1-ին գիլդիայի վաճառական էր, առևտրի խորհրդական, Թիֆլիսի քաղաքային դումայի և Թիֆլիսի վաճառականների վարչության անդա-մ, Առևտրի և մանուֆակտուրայի կոմիտեի անփոփոխ նախագահը: Նա Մանթաշյանց առևտրային դպրոցի հոգաբարձուների խորհրդի առաջին[22] և եր-կար տարիների նախագահն էր, Թիֆլիսի առաջին առևտրային ուսումնարանի հոգաբարձուների խորհրդի անփոփոխ նախագահը: Ադելխանյանն իր գործարանների համար անհրաժեշտ կադրերին ընտրում էր հիմնականում այս ուսումնարանից: Գ.Ադելխանյանը նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերության անդամ էր, մշտապես նվիրատվություններ էր կատարում բարեգործական ծրագրերին, Էջմիածնի Մայր աթոռին, ուսումնական հաստատություններին: Նա Արդարադատության նախարարության Թիֆլիսի

[20] **Хоштария Э.В.,** նշվ. աշխ., էջ 152-153:
[21] **Դադայան Խ.,** նշվ. աշխ., էջ 134-135:
[22] «Մուրճ», 1899, N: 6:

նահանգի բանտերի կոմիտեի հոգաբարձուների խորհրդի անդամ էր:[23] Այդ կոմիտեի խնդիրն էր հսկողություն սահմանել բանտարկյալների պահման կանոնների վրա:

Գ.Ադելխանյանը մահացել է 1917թ. Թիֆլիսի մերձակա Օրթաճալայի իր առանձնատանը: 1886-1890թթ. Թիֆլիս այցելելիս այս տանը բազմիցս էր հյուրընկալվել կոմպոզիտոր Պ.Ի.Չայկովսկին, 1892-1917թթ.՝ երգիչ Ֆ.Ի.Շալյապինը:[24] Քուռ գետի ափին գտնվող գեղեցիկ և ընդարձակ Օրթաճալայի այգին Թիֆլիսի հայ վերնախավի զբոսանքի և ժամանցի սիրելի վայրն էր: Այն լավագույն մասնավոր պուրակն էր, որը պատկանում էր թիֆլիսահայ արդյունաբերողներին՝ Գ.Ադելխանյանին, Միրզոյաններին և այլոց:[25]

Գ.Ադելխանյանն ամուսնացել էր Հեղինե Միքայելի Ալիխանյանի հետ, ով նրա բաժնետիրական ընկերության խոշոր բաժնետերեր Հովհ. և Կոնստանտին Ալիխանյանների քույրն էր:[26] Նրանք ունեին մեկ որդի՝ նույնպես Գրիգոր անունով, ծնված 1887թ.: Ընտանիքի անդամները և ընկերները նրան մտերմաբար անվանում էին Գրի Գրի: Նա 1908թ. ավարտել էր Լայպցիգի Բարձրագույն առևտրական ուսումնարանը, որտեղ սովորել էր հայրը: Գրի Գրին լրջորեն տարված էր լուսանկարչությամբ: Պահպանվել է Լայպցիգի, Փարիզի, Ս.Պետերբուրգի, Թիֆլիսի տեսարաններով, Կովկասի բնապատկերներով և այլ թեմաներով 1904-1914թթ. արված բարձր որակի նրա լուսանկարչական աշխատանքների ալբոմը: Գ.Ադելխանյան կրտսերն ամուսնացել էր Նինա Ալֆոնսովնա Ադելխանյանի հետ, ով գերմանուհի էր (ծնունդով՝ Մյուլման): Բայց նրանք չհասցրին ժառանգներ ունենալ, իսկ Գրի Գրին՝ գլխավորել հոր բիզնեսը: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, Գ.Ադելխանյան կրտսերը որպես ճարտարագետ աշխատում էր հոր նախկին գործարաններում: Այնուհետև նրան գործուղեցին Գերմանիա՝ նոր սարքավորումներ ձեռք բերելու նպատակով: Վերադառնալուց անմիջապես հետո ձերբակալեցին՝ վնասարարության և դավաճանության տարածված մեղադրանքով: Նրան աքսորեցին Կարագանդայի մարզ՝ Դոլինյան ճամբար, որտեղ էլ մահացավ չբացահայտված հանգամանքներում: Անհայտ է նաև նրա մահվան թվականը: Հետմահու արդարացվել է:[27]

Գրիգոր Ադելխանյանն իր հետ բերեց արտադրության նոր մշակույթ, նորարարական միտք, մասնագիտական բացառիկ մոտեցում գործին, կրթված խոշոր արդյունաբերողի նոր կերպար: Նա երբեք չէր բավարարվում ձեռք

---

[23] Кавказский календарь на 1913 год, Тифлис, 1912, с. 453; 1917г., Тифлис, 1916г., с. 700 և այլն:

[24] **Алиханов И. И.,** Дней минувших анекдоты, М., 2004, с. 3 (էջերն ըստ գրքի էլեկտրոնային տարբերակի՝ https://coollib.com/b/):

[25] **Мамулов С.С.,** Армяне в Грузии. М., 1995, с. 53.

[26] **Алиханов И. И.,** նշվ. աշխ., էջ 14-15:

[27] Նույն տեղում, էջ 15-16:

բերածով, և անընդհատ կատարելագործում ու ընդլայնում էր իր արտադրությունը, դառնալով Թիֆլիսի նահանգի ամենախոշոր արդյունաբերողը, իսկ Այսրկովկասում զիջելով միայն Բաքվի նավթարդյունաբերողներին և նավթարդյունաբերության հետ կապված մի քանի խոշոր ձեռնարկատերերին: Գ.Ադելխանյանը Թիֆլիսի նահանգի հայ առևտրա-արդյունաբերական դասի և բիզնեսի երկու մեծ գագաթներից մեկն էր, Գ.Ադելխանյանը՝ արդյունաբերության մեջ, Թիֆլիսի առևտրային բանկը Ալ.Մանթաշյանցի գլխավորությամբ՝ բանկային ոլորտում:

Բանալի բառեր - ֆաբրիկա-գործարանային արտադրություն, բաժնետիրական ընկերություն, խոշոր արդյունաբերություն, կապիտալի և արդյունաբերության կենտրոնացում, բանակի մատակարար, բանկային գործունեություն, արդյունաբերական ցուցահանդեսներ:

Վարդան Եսայան, Թիֆլիսի նահանգի հայ արդյունաբերողները. Գ.Գ.Ադելխանյան - 1870-ական թթ. Թիֆլիսի նահանգում մեքենայական արտադրությունը մեծ թափով ներդրվեց արդյունաբերության տարբեր ճյուղերում: Առաջացավ ֆաբրիկա-գործարանային արտադրությունը, որի առաջամարտիկները հայ արդյունաբերողներն էին: Նրանցից էր Գրիգոր Ադելխանյանը, որը կաշվի և կոշիկի մեքենայացված արդյունաբերության հիմնադիրն էր Այսրկովկասում:

1896թ. նա ստեղծեց խոշոր բաժնետիրական ընկերություն, որը բաղկացած էր նրա երեք ձեռնարկություններից և տալիս էր տարեկան ավելի քան 2 մլն ռուբլու պատրաստի արտադրանք: Գ.Ադելխանյանը Թիֆլիսի նահանգի ամենախոշոր արդյունաբերողն էր, որն իր հետ բերեց արտադրության նոր մշակույթ, նորարարական միտք, մասնագիտական բացառիկ մոտեցում գործին, կրթված խոշոր արդյունաբերողի նոր կերպար:

Вардан Есаян, Армянские промышленники Тифлисской губернии: Г. Г. Аделханян - В 1870-х машинное производство с большой скоростью стало внедряться в различные области промышленности Тифлисской губернии. Возникло фабрично-заводское производство, лидерами которого были армянские промышленники.

Среди них - основоположник машинной обувной и кожевенной промышленности на Кавказе, Григор Аделханян.

В 1896 г. он создал крупное акционерное общество, в которое вошли три его предприятия, и которое давало более 2 млн. готовой продукции в год.

Г. Аделханян был крупнейшим предпринимателем Тифлиса, принесшим с собой новую культуру производства, инновационное мышление, исключительный профессионализм в подходе к работе, новый образ образованного крупного предпринимателя.

Vardan Yesayan, Armenian industrialists in the state of Tiflis: G.G. Adelkhanyan - Mechanical industry was quickly incorporated into different branches of industry in the state of Tbilisi during 1870's. Factory-plant industry was created with Armenian industrialists as its forerunners. Griqor Adelkhanyan was one of them, being the founder of mechanical industry of leather and shoes in Transcaucasia.

In 1896 he founded a large joint-stock company, consisting of three of his companies and producing over 2 million roubles worth of goods. G. Adelkhanyan was the largest industrialist in the state of Tiflis, bringing with him a new culture of industry, innovation, professional work ethic, a new character of educated large industrialist.

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ԵՐԿԼԵԶՈՒ ԾԱԾԿԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՄԵ՞Կ, ԹԵ՞ ԵՐԿՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՔ ՂԱԶԱՐՅԱՆ

Ավանի տաճարը և Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսությունը. պատմական համառոտ ակնարկ: Պատմագրական վկայությունների և պատմագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ Ավանի տաճարը կառուցվել է պատմությանը հայտնի քաղկեդոնադավան միակ հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցու օրոք (591-610 թթ.): Հակաթոռի հիմնումը՝ կաթողիկոսի նշանակմամբ և տաճարի կառուցմամբ, իրականացվում է Մորիկ կայսեր (582-602 թթ.) նախաձեռնությամբ և միջոցներով, ով հետամուտ էր այդպիսով ամրապնդելու Բյուզանդիայի քաղաքական ազդեցությունը Մարզպանական Հայաստանում: Սակայն կայսեր սպանությունը 602 թ. ու հաջորդած քաղաքական անբարենպաստ կացությունը՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև պատերազմի վերսկսմամբ պայմանավորված, դառնում են հակաթոռ կաթողիկոսության անկման ու, ի վերջո, վերացման հիմնապատճառը:

Ավանի հակաթոռ կաթողիկոսության հաստատումը հաջորդում է պարսկա-բյուզանդական երկու տասնամյակ տևած ռազմական հակամարտությանը, որն ավարտվում է 591 թ. Հայաստանի նոր մասնատմամբ՝ հօգուտ Բյուզանդիայի: Հայաստանում երկու գերտերությունների միջև սահմանագիծը հարավից հյուսիս դառնում է Վանա լիճը, Մակուն, Կոգովիտ գավառը և Ազատ գետը[1]: Ռազմական հաջողություններին հաջորդում են Մորիկ կայսեր՝ Հայ Եկեղեցուն քաղկեդոնականություն պարտադրելու կամ կաթողիկոսարանը Դվինից բյուզանդական հատված փոխադրելու բռնությամբ ուղեկցվող եկեղեցաղիվանագիտական ջանքերը[2]: Այս գործողությունների ձախողումը պատճառ է դառնում մի նոր, աննախադեպ ձեռնարկման: Կայսեր հրամանով նույն 591 թ. Դվինի կաթողիակոսարանից ոչ հեռու՝ սահմանամերձ Ավան[3] գյուղաքաղաքում՝ Ազատ գետի ափին, հաստատվում է քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսություն[4]:

Մորիկ կայսեր կարգադրությամբ բյուզանդական հատվածում կաթողիկոս է նշանակվում Հովհան կամ Հովհաննես Բագարանցին, ով Կոգովիտ գավառի

---

[1] Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե.,1984, հ. 2, էջ 263-265:

[2] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, քննական բնագիրը՝ Գ.Վ.Աբգարյանի, Ե., Զանգակ-97, 2005, էջ 100: Հմմտ. Բարթիկյան Հ., «"Narratio de rebus Armeniae" հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր», Բանբեր Մատենադարանի, թ. 6, Ե., 1962 թ., էջ 466-467:

[3] Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոտայք գավառում, այժմ՝ Երևանի Ավան վարչական շրջան:

[4] Տե՛ս **Մարության Տ.,** Ավանի տաճարը և հարանման հուշարձաններ, Երևան, 1976, էջ 5: Հմմտ. Օրմանյան Մ., Ազգապատում, Բեյրութ, 1959, հ. Ա, § 389, էջ 296-297:

Բագարան գյուղից էր[5]: Բյուզանդիայի կողմից նորանվաճ տարածքում, ուր Մորիկը բռնությամբ իրականացնում էր քաղկեդոնականացում, դրսևորվում է ժողովրդի ու հոգևոր դասի հակաքաղկեդոնական սկզբունքային կեցվածք, և միայն թեմակալ առաջնորդներից են տեղի տալիս կայսերական հարկադրանքին[6]: Այդ առաջնորդների շարքին պետք է դասել Հովհանին, ում մականունը որքան ունի ծննդավայրի նշանակություն, նույնքան և Բյուզանդիայի նորանվաճ տարածքում գտնվող այն թեմի, որտեղ նա, ամենայն հավանականությամբ, եղել է թեմակալ[7]:

Բյուզանդիայի կողմից նորանվաճ հատվածում մեկ այլ թեմի, սակայն գործող եկեղեցի չունեցող տարածքում գտնվող Ավանի ընտրությունը Հովհան Բագարանցու և Մորիկ կայսեր կողմից պայմանավորվում էր Դվինի Աթոռին մոտ լինելու, բայց հատկապես՝ հնարավոր հուզմունքների ու դիմադրության բացառման հանգամանքով, ինչի երաշխիքը կարող էր լինել բնակավայրի աննշան բնակչություն ունենալու իրողությունը:

Ավանի տաճարի շինարարության սկիզբն ընդունելով 591 թ.՝ Մորիկ կայսեր կողմից Հովհան եպիսկոպոսի որպես կաթողիկոս նշանակմամբ, իսկ ավարտը, նկատի ունենալով գործադրվող կայսերական միջոցներն ու ազդեցությունը, բայց նաև կաթողիկոսանիստի տաճարի, կաթողիկոսարանի, միաբանական և այլ շինությունների ծավալուն աշխատանքները, հնարավոր է համարել մինչև 600 թ.: Սակայն այս թվագրումը չի կարող գերազանցել 602 թ., ինչը պայմանավորված է Մորիկի սպանությամբ, նրան փոխարինած Փոկասի կողմից հակաթոռ կաթողիկոսության նկատմամբ հետաքրքրության լիարժեք բացակայությամբ և պարսկա-բյուզանդական վերսկսած պատերազմական դրությամբ:

Ավանի տաճարը կառուցվում է հնգագմբեթ, ինչպիսին Ս. Էջմիածնի տաճարն էր՝ սկսած 483/484 թ., երբ հիմնովին վերակառուցվել էր[8]:

Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսությունը՝ հիմնված 591 թ., ինչպես փաստում են պատմական տվյալները, ունենում է կարճատև կյանք:

---

[5] Նույն տեղում, էջ 296:

[6] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, էջ 100: Պատմիչի մոտ ժողովուրդը ձևակերպվում է «մանկունք ուխտի եկեղեցեացն Հայոց»:

[7] Այս ենթադրությունը կատարում է նաև Կ.Ղաֆադարյանը. «Միայն գիտենք, որ նա Կոգովիտ գավառի Բագավան գյուղից էր և հավանաբար այնտեղ էլ հոգևորական էր դարձել» (Տե՛ս Ղաֆադարյան Կ. Գ., *Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ (Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ).* Պատմա-բանասիրական հանդես, թ. 3., 1968, էջ 89): Պետք է նկատի ունենալ, որ այս ժամանակահատվածում թեմակալ առաջնորդի կողմից հոգևորականը ձեռնադրվում էր տվյալ թեմի հոգևոր կարիքների սպասավորման համար, և նրա տեղափոխությունը կատարվում էր միայն այդ թեմի սահմաններում: Կ.Ղաֆադարյանի ենթադրությունը, թե Հովնանը, լինելով կուսակրոն քահանա մի թեմում, վանք է հիմնել և առավել ևս վանական միաբաններ նշանակել մեկ այլ թեմի սահմաններում, անհիմն է՝ ելնելով իր նվիրապետական աստիճանից և թեմական դրությունից:

[8] Տե՛ս **Թորամանյան Թ.,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու, հ. 1, Արմֆանի հրատարակչություն, Երևան, 1942, էջ 288:

Նրա ավարտը թվագրելու հարցում անհրաժեշտ է առանձնացնել երկու կարևոր հանգամանք՝ Ավանում Հայ քաղկեդոնական կաթողիկոսության ավարտը և Հայ քաղկեդոնական կաթողիկոսության վախճանը: Այս հասկացությունների նույնականացումը տեղիք է տվել պատմագիտական թյուրիմացությունների: Հարցի լուծումը հնարավոր է դառնում շնորհիվ այն սակավ պատմագրական վկայությունների, որոնք վերաբերում են հակաթոռ Հովնան կաթողիկոսի գերևարմանը և մահվանը:

Հովհան Բագարանցին հիշատակվում է Կարին քաղաքում, որի բնակչության հետ Պարսից արքայի հրամանով բռնի տեղահանվում և վերաբնակեցվում է Համադանում[9]: Հայ քաղկեդոնական կաթողիկոսության կարճատև պատմության հստակեցման տեսակետից կարևորվում է Հովհանի՝ Կարինում գտնվելու պատճառների և վիճակի ճշտումը: Այն փաստը, որ նա «ի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն»[10] , վկայում է Ավանից հակաթոռ կաթողիկոսության հիմնովին տեղափոխության մասին, այն է՝ հակաթոռ քաղկեդոնական կաթողիկոսությունը դադարել էր գործել Ավանում[11] ու, թեև վտարանդի, շարունակել էր իր գոյությունը Կարինում: Ավանից Կարին տեղափոխությունը պետք է պայմանավորել երկու իրար փոխշաղկապված գործոններով: Առաջինը 602 թ. Մորիկ կայսեր սպանությունից հետո վերսկսած պարսկա-բյուզանդական պատերազմն էր: Պատերազմի ալիքը հասնում է Հայաստան միայն 605 թ, երբ մարտերը տեղի էին ունենում Ավանի հակաթոռ կաթողիկոսարանից ոչ հեռու՝ Եղվարդի մոտակայքում: 606 թ. Շիրակի դաշտավայրում պարտությունից և հաջորդող մարտերից հետո Բյուզանդիան կորցնում է Հայաստանն ամբողջությամբ[12]: Երկրորդ գործոնը, որը վստահաբար պայմանավորված էր Պարսկաստանի ռազմական հաջողություններով, բռնի միջոցներով քաղկեդոնականություն ընդունած և Ավանի հակաթոռ կաթողիկոսությանը ենթարկված Բյուզանդական կողմի հայ եպիսկոպոսների՝ հայադավանության վերականգնումն էր և Դվինի Հայոց կաթողիկոսությանը իրենց ենթակայության ճանաչումը՝ մինչև Աբրահամ Ա Աղբաթանեցի հայոց կաթողիկոսի ընտրությունը (607 թ.):

---

[9] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, էջ 146: Քաղաք Իրանի արևմուտքում, պատմիչի մոտ հիշատակվում է միջին պարսկերեն «Ահմատեան շահաստան» անվամբ:

[10] Նույն տեղում: Ուշագրավ է, որ Հովհան Բագարանցին կալանավորվում և ապա աքսորվում է «ամենայն սպասիւք եկեղեցւոյն»՝ չենթարկվելով թալանի: Պարսից կողմի զգուշավոր վերաբերմունքը հարկ է մեկնաբանել գերյալ հակաթոռ հունադավան կաթողիկոսի՝ բյուզանդական կողմի հետ հետագայում քաղաքական հնարավոր շահարկման հեռանկարով:

[11] Սեբեոսի վկայությունը խոսում է այն մասին, որ Ավանի կաթողիկոսարանը լքած Հովհան Բագարանցին Կարինում արդեն միայնակ էր, առանց միաբանության, որի անդամներն ամենայն հավանականությամբ, մնալով Ավանում, դարձի էին եկել հայադավանության:

[12] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 285-286:

Պարսից զորքերի կողմից գրավված տարածքներում հայադավանության վերականգնումը հետայսու անհնարին է դարձնում Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսության վերադարձը Ավան: Այստեղ կաթողիկոսության ավարտը պետք է թվագրել Հովհան Բագարանցու՝ աթոռանիստը լքելու եղելությամբ, ինչը պետք է տեղի ունենար 605-606 թթ.[13]՝ անվտանգությամբ պայմանավորված:

Հայ քաղկեդոնական կաթողիկոսությունը շուրջ 5 տարիների տարագրության ընթացքում[14], ինչպես երևում է պատմագրական տվյալներից, որևէ տեղ չի կարողանում հիմնահաստատվել: Կարինում Հովհան Բագարանցու ձերբակալման պահին (610 թ.), բացակայում է որևէ եկեղեցու հիշատակություն, ուր կարող էր հանգրվանել նա: Չկա նաև հիշատակություն հակաթոռ կաթողիկոսի հետ որևէ այլ հոգևոր սպասավորի ձերբակալման մասին: Այս իրողություններն ակներև են դարձնում Հովհան Բագարանցու լքված լինելու ու կաթողիկոսության անգործության մասին:

Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության գոյությունն ավարտվում է միակ կաթողիկոս Հովհան Բագարանցու մահվամբ՝ 611թ.: Բռնի միջոցներով քաղկեդոնականություն ընդունած և Ավանի հակաթոռ կաթողիկոսությանը ենթարկված բյուզանդական կողմի հայ եպիսկոպոսների՝ հայադավանության և Դվինի հայոց կաթողիկոսության իրենց ենթակայության վերականգնումը, ինչպես նաև քաղաքական նոր պայմաններն անհնարին են դարձնում Հովհան Բագարանցու մահից հետո Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսության շարունակականությունը և պատճառ են դառնում դրա վերացման: Հակաթոռ կաթողիկոսի աճյունը Համադանից, ուր վերջինս աքսորվել էր, բերվում է Ավան և հուղարկավորվում իր իսկ կառուցած եկեղեցու բակում՝ ամենայն հավանականությամբ արևելյան[15] պատի մոտ[16]: Այս առիթով ուշագրավ է այն փաստը, որ Հայ քաղկեդոնական կաթողիկոսության Ավանի նախկին աթոռանիստը,

---

[13] Կ. Ղաֆադարյանը Հովհան Բագարանցու՝Ավանը լքելու թվագրման կապակցությամբ հայտնում է, որ «...փախուստն Ավանից դնելու ենք 608/609 թթ. առաջ», հաջորդ պարբերությամբ՝ «...607թ. Հովհանը եղել է դեռևս Ավանում», իսկ հաջորդ էջում՝ «Կարծում ենք՝ հենց այդ տարին էլ (607 թ.) Հովհանը փախել էր Կարին» (Տե՛ս Ղաֆադարյան Կ. Գ., *Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ (Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ).* Պատմա-բանասիրական հանդես, թ. 3, 1968, էջ 84, 85): Բագարանցու՝ Ավանը լքելու 607 թվականով Կ. Ղաֆադարյանի թվագրումը դառնում է անհնարին այդ տարածաշրջանի՝ Պարսկաստանի կողմից նվաճված լինելու հանգամանքով:

[14] Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ այս ժամանակահատվածի վերջին «երկեամ մի»՝շուրջ երկու տարիները Հովհան Բագարանցին մնում է գրավված Կարինում անազատ վիճակում (Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 73-74):

[15] Թեև ենթադրվել է, որ Բագարանցին պետք է հուղարկավորվեր հարավային պատի հարևանությամբ, այնուամենայնիվ, տաճարի արևելյան պատի երկլեզու արձանագրությունը թույլ է տալիս առավել հավանական համարել արևելյան պատը:

[16] Այս իրողությունը բավարար չէ բացատրել միայն պարսից կողմի քաղաքական նկատառումներով: Ամենայն հավանականությամբ, որոշումը ընդունվել է Դվինի Հայոց կաթողիկոսարանում՝ հուղարկավորելով Ավանում, որն արդեն Հայոց Հայրապետության ազդեցության տակ էր, խուսափելու համար հունական կողմի հնարավոր դավանական և քաղաքական շահարկումներից:

սկսած 605/606 թթ., ճանաչել էր իր ենթակայությունը Դվինի Հայոց կաթողիկոսությանը և հայադավան միաբանությամբ գործում էր վանքի կարգավիճակում:

Ավանի տաճարի երկլեզու ծածկագիր արձանագրությունը: Կիսակործան վիճակում մինչև մեր օրերը Երևանի Ավան վարչական շրջանում պահպանված տաճարը դեռևս խորհրդային տարիներին դասվում է մշակութային հուշարձանների շարքին: 1940 թ. Հայաստանի Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի ձեռնարկած մասնակի վերականգնման և ամրացման աշխատանքների արդյունքում ի հայտ են գալիս հետաքրքիր մի քանի արձանագրություններ: Եկեղեցու արևելյան պատի արտաքին կողմում հայտնաբերված գրաբար հայերեն - հին հունարեն երկլեզու արձանագրությունը, որպես բացառիկ նմուշ, որոշվում է պատի մեջ տեղադրելու փոխարեն փոփոխադրել Հայաստանի պատմության թանգարան, ուր պահվում է առ այսօր: Արձանագրությունն առաջին անգամ ուսումնասիրում և այդ մասին 1944 թ. ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական սեսիայում «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը» վերնագրով զեկույց է ներկայացնում Կ. Ղաֆադարյանը: Զեկույցը հրատարակվում է մեկ տարի անց:

Արձանագրությունը փորագրված է տուֆի երեք սրբատաշ քարերի վրա, որոնք եղել են եկեղեցու արևելյան պատի արտաքին երեսին: Երեք քարերի համագումար երկարությունը 218 սմ է, բարձրությունը՝ 50 սմ, լայնությունը՝ 38 սմ[17]: Ձախակողմյան քարի երկարությունը 66,7 սմ է, կենտրոնականինը՝ 59 սմ, ձախակողմյանինը՝ 92,3 սմ[18]: Գրությունը սկսվում է ձախակողմյան քարի աջ կողմի կեսից և վերջանում երրորդ քարի աջ եզրով, փորագրված է երկու ամբողջական տող և վերջանում է երրորդով՝աջակողմյան քարի ծայրին՝երեք տառերից բաղկացած գրությամբ.

Ավանի երկլեզու ծածկագիր արձանագրությունը, Հայաստանի պատմության թանգարան[19]

ՏՐԵԶՐՉՌԼԿԶԿԱԹՂԻԿՈՍԱՃՇՄԱ
ՐԻՏ ΔωλοçΤωΘεω ՍԱՄԷՂՇՌԱ

[17] Վիմագիր արձանագրության չափագրական տվյալները ներկայացնում ենք ըստ մեր (Ա.Ղ.) կատարած չափումների:

[18] Արձանագրության երեք մասերն ունեն եզրային վնասվածքներ: Երկարության չափման համար հիմք ենք ընդունել քարերից յուրաքանչյուրի դիմային հատվածի առավելագույն երկարությունն ունեցող հատվածները:

[19] Համացանցային հղումը՝ http://treasury.am/hy/հայաստանի-պատմության-թանգարան:

Փորագրված երկու ամբողջական տողերից յուրաքանչյուրի հեռավորությունը ձախակողմյան քարի եզրից անհավասար է: Առաջին տողի հեռավորությունը 50 սմ է, իսկ երկրորդինը՝ 48,8 սմ: Առաջին տողի վերին եզրի հեռավորությունը քարաշարի վերին եզրագծից 7 սմ է, իսկ ներքևի եռատառ տողի ներքևի եզրինը քարաշարի ներքևի եզրագծից՝ 22 սմ: Երկրորդ տողի հայերեն և հունարեն գրությունների միջև առկա է միակ միջակայքը՝ 5,4 սմ լայնությամբ:

Հայերեն բովանդակության մեջ առկա են համառոտագրության և ծածկագրության երկուական բառային միավորներ, և մեկ ծածկագիր՝ հունարեն հատվածում, ինչը փաստագրվեց մեր ուսումնասիրության արդյունքում: Հայերեն հատվածի ծածկագրության վերծանման համար Կ. Ղաֆադարյանի կիրառած բանալու համաձայն՝ նշանագրերն ըստ իրենց թվային արժեքի փոխարինվում են՝ միավորները հազարավորներով, տասնավորները հարյուրավորներով և հակառակը: Համառոտագրի բացմամբ և ծածկագրերի վերծանմամբ՝ վիմագրագետը ներկայացնում է արձանագրության վերականգնված տեքստը. «Տէր Եզր հայոց կաթողիկոս ճշմարիտ ծառայ[20] Աստուծոյ: Սամէղ ծառայ Քրիստոսի»[21]:

Նա, հիմք ընդունելով Հերակլ կայսեր և Եզր հայոց կաթողիկոսի միջդավանական համաձայնությունը, վիմագիր երկլեզու ծածկագիր արձանագրությունը թվագրում է 633 թվականով, որով այն դառնում է հնագույնը առ այսօր հայտնի ծածկագիր պարունակող հայալեզու վիմագրերի շարքում[22]: Իմաստային տեսակետից, սակայն, նա արձանագրությունը դիտարկում է մեկ միասնական միավոր՝կազմված մեկ հեղինակի կողմից: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ Ավանի քաղկեդոնիկ միաբանությունը՝ ի դեմս հոգևորական Սամեղի, ով արձանագրության կազմողն ու փորագրել տվողն է, որպես հունադավանության մեծ ձեռքբերում և կարևորագույն իրադարձություն, արձանագրում է Եզր հայոց կաթողիկոսի կողմից քաղկեդոնականության ընդունումը[23]:

Երկլեզու ծածկագիր արձանագրությունը իմաստային այսպիսի մեկնաբանությամբ Կ.Ղաֆադարյանը շաղկապում է Ավանի տաճարի արևմտյան պատի վրա պահպանված 13-րդ դարի երեք այլ արձանագրությունների հետ և եզրակացնում, որ Ավանի եկեղեցին իր հիմնադրման պահից անընդմեջ՝ մինչև 13-րդ դ., և դեռ հետագայում շարունակել է լինել քաղկեդոնական[24]:

---

[20] **Կ. Ղաֆադարյանը,** թարգմանելով հունարեն հատվածը, նշում է նրանում առկա տառասխալը, այնուամենայնիվ, չի անդրադառնում նրա հնարավոր նպատակային կիրառությանը (մանրամասն տե՛ս Ղաֆադարյան Կ., Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1945, էջ 9-10: Տե՛ս նույնի, Երևան. Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, ՀՍՍՀ ԳԱ հարատարակչ., Ե., 1975, էջ 7-8):

[21] **Ղաֆադարյան Կ.,** Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, էջ 9-10: Տե՛ս նույն հեղինակի Երևան. Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 191:

[22] **Ղաֆադարյան Կ.,** Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, էջ 13-14:

[23] Տե՛ս նշվ. աշխատ., էջ 12, 14, 25:

[24] Տե՛ս նշվ. աշխատ., էջ 16:

Ավանի երկլեզու ծածկագիր արձանագրության և Զաքարյան իշխանների օրոք կատարված արձանագրությունների մանրակրկիտ ուսումնասիրումը, սակայն, ցույց է տալիս հակառակը՝ Ավանի եկեղեցու քաղկեդոնական պատկանելության վերականգնումը՝ շուրջ վեցդարյա ընդմիջումից հետո միայն:

Երկլեզու արձանագրության մի շարք առանձնահատկություններ, որոնք կամ անտեսվում են, կամ չկարևորվելով Կ. Ղաֆադարյանի կողմից չեն ենթարկվում վերլուծության, թույլ են տալիս հաստատելու, որ այն բաղկացած է երկու տարբեր ժամանակներում ստեղծված վիմագրերից:

Վիմագիր արձանագրության բաղադրիչ հայերեն և հունարեն հատվածներից յուրաքանչյուրը բնութագրվում են մեկը մյուսից անկախ, ինքնուրույն և կարևոր մի շարք հատկանիշներով, ինչպիսիք են.

1. Հունալեզու հատվածը հանդես է գալիս ինքնուրույն իմաստային նշանակությամբ, իսկ հայերենի իմաստն ամբողջանում է միայն հունարեն հատվածի հետ շաղկապված: Այդ է վկայում տողադարձված «ՃՇՄԱ ՐԻՏ» բառի հայալեզու լինելը, այն դեպքում, երբ այն իմաստային տեսակետից լրացում է հունարեն հատվածի:
2. Հայերեն գրությունն առանց բացառության բաղկացած է գլխագրերից, այն դեպքում, երբ հունալեզու հատվածում մեծատառ են միայն բառերի սկզբնատառերը:
3. Հունարեն հատվածից առաջ միջակայքը պայմանավորված չէ հոջորդող հատվածի տարածության մեծացմամբ, որի անբավարար լինելուց արդեն իսկ հարկադրաբար առաջացել է երրորդ տողը: Այն հստակ ծառայում է մի նպատակի՝ թույլ չտալ, որ հունարեն հատվածը դառնա երկրորդ տողի սկզբնագիր: Այլապես ոչինչ չպիտի խանգարեր անմիջակայք շարադրանքին, որը կամ ամբողջապես, կամ մասնակի կլուծեր հարկադիր առաջացած երրորդ տողի խնդիրը՝ տեղավորելու այն երկրորդ տողի վրա, օրինակ, տառաչափի փոքրացման կիրառմամբ, ինչպիսին առկա է առաջին տողի վերջում:
4. Միայն հայերեն շարադրանքի մէջ է առկա համառոտագրություն՝ առաջին տողի սկզբում՝ ՏՐ /ՏԷՐ/ և երրորդ տողի վերջում՝ Ք /Քրիստոսի/:
5. Միայն հայերեն շարադրանքի մէջ է առկա ընդհանուր տառաչափից շեղում՝ առաջին տողի վերջում Ա տառը:
6. Հայերեն և հունարեն հատվածներում կիրառված ծածկագրերի բանալիների սկզբունքային տարբերություն: Ծածկագրումը հայերենում կիրառվում է տառերի փոխարինմամբ՝ ըստ իրենց թվային արժեքի, այն դեպքում, երբ հունարեն հատվածը պարունակում է աստվածաբանական ծածկագիր:

Վիմագրության «Δωλος Τω Θεω» հունալեզու հատվածը թարգմանվում է «Ծառայ Աստուծոյ»: Սակայն «Δωλος» (Ծառայ) պարունակում է տառասխալ. ուղղագրորեն ճիշտ՝ այն պիտի գրվեր «Δουλος», «ου»-ի գրությունը «ω»-ի փոխարեն չի կարող դիտարկվել տառասխալ այն պատճառով, որ հունարենը այդ ժամանակաշրջանում լայնորեն տարածված և կիրառելի լեզու էր հայոց մեջ, ինչը հաստատվում է պատմագրությամբ: Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Եզր կաթողիկոսի ժամանակաշրջանի մասին, գրում է. «...էր յանմ ժամանակի Հայաստանի դպրութիւնքս նորոգ և շէն. և յոյն լեզուին և դպրութեանն յոյժ հմուտք և տեղեակք»[25]: Բացառելով տառասխալի հնարավորությունը՝ այն ձեռք է բերում նպատակային նշանակություն: Այն ի հայտ է գալիս որպես ծածկագիր՝ աստվածաբանական նշանակությամբ: Ω/ω (օմեգա)-ն հունարեն այբուբենի վերջին տառն է, որն օգտագործվում է Նոր Կտակարանի Հայտնության գրքում՝ ստանալով աստվածաբանական նշանակություն: Հունարեն բնագրում Քրիստոսի խոսքերն են. «ἐγώ εἰμι τὸ ἄλφα καὶ τὸ ὦ, ἡ ἀρχὴ καὶ τὸ τέλος»[26], որը գրաբարում թարգմանվել է. «Եղէ՛ ես Ալփա՛ եւ Ո՛վ, սկի՛զբն եւ կատարած». «τέλος»-ի գրաբարյան համարժեք «կատարած»-ը արդի հայերենում արտահայտում է *վերջ, վերջինը, ավարտ* իմաստները: Ըստ այդմ՝ «ω»-ն հանդես է գալիս որպես ծածկագիր, որի ընթերցմամբ վիմագրի հունարեն հատվածը ոչ թե թարգմանվում է միայն «Ծառայ Աստուծոյ», այլ «Վերջին Ծառայ Աստուծոյ»:

Հունագիր հատվածն այսպիսով Ավանի տաճարի երկլեզու արձանագրության մեջ առանձնանում և ձեռք է բերում իմաստային ինքնուրույն նշանակություն: Իմաստային այսպիսի նշանակությամբ այն ուղղակիորեն մատնանշում է Հովհան Բագարանցուն, ով միակ և վերջին հակաթոռ կաթողիկոսն էր Ավանի Հայ քաղկեդոնական կաթողիկոսության: Ըստ այդմ՝ հունարեն հատվածն ուղղակիորեն առնչվում է Հովհան Բագարանցու թաղմանը, երբ նրա աճյունը Համադանից բերվեց և հուղարկավորվեց Ավանի տաճարի մոտ: Դա տեղի ունեցավ 611 թ., որը և պետք է համարել հունալեզու հատվածի գրառման տարեթիվ: Բագարանցու հուղարկավորումը Ավանում բացատրելի է դառնում պարսկական կողմի քաղաքական ուշադիր, բայց և հաշվենկատ վերաբերմունքով, որն արդեն դրսևորվել էր Կարինում՝ նրա կալանավորման ժամանակ:

Հետագա ոտնձգությունները հակաքաղկեդոնական միջավայրում կանխելու նպատակով արձանագրությունը կազմվում է առանց հակաթոռ կաթողիկոսի անվան հիշատակության, բայց իմաստային հստակ հասցեագրմամբ:

---

[25] «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Սեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», տպ. Ն.Աղանեանի, Թիֆլիս, 1910, էջ 101:

[26] ’Αποκάλθψις ’Ιωάννου, 21.6: http://www.magister.msk.ru/library/bible/greek/grknt27.htm

22 տարի անց հունարեն հատվածին կցագրվող հայերեն հատվածի հեղինակ Սամեղը ջանք է գործադրում հայերենը շարահյուսել հունարենի հետ՝ ձգտելով արձանագրությանը տալ պաշտոնագրի նշանակություն՝ հարմարեցնելով եկեղեցու արևելյան պատի կենտրոնական հատվածի համաչափությանը, ինչի մասին վկայում է վիմագրության աջ եզրագծային սահմանի պահպանությունը (առաջին տողի վերջնատառի չափի փոքրացում, նույն տողի վերջնաբառի տողադարձում, երրորդ եռատառ տողի առկայություն, նույն տողի «Քրիստոսի» բառի ոչ լիարժեք պատվագրում՝ «Ք»-ն՝ «Քի»-ի փոխարեն[27]):

Վիմագիր ամբողջական արձանագրության իմաստային նշանակությունը որոշելու և հաղորդելու համար վիմագրագիր Սամեղն օգտագործում է հայերեն և հունարեն հատվածների շաղկապումը և իր հեղինակած հայերեն հատվածի երկու ծածկագրերը:

«Հայոց» բառի ծածկագրումը, որն այստեղ ունի միայն դավանական նշանակություն, մեկնաբանվում է երկու իրար լրացնող իմաստներով՝ 1. Եզր կաթողիկոսը՝ հայադավանությունից հեռացած և հայոց կողմից չճանաչվող, 2. Ավանի վանքը, ուր Հովհան Բագարանցու փախուստից հետո լիարժեք հաստատվել էր հայադավանությունը, հարկադրված է[28] եթե ոչ դավանափոխության, ապա Եզր կաթողիկոսի և Հերակլ կայսեր միջդավանական համաձայնության պաշտոնապես և հրապարակային ճանաչման: Այն ցույց է տալիս, որ հարկադիր պայմաններում Ավանի վանքն ընդունում է կաթողիկոսական իշխանությունը, բայց ոչ երբեք հունադավանությունը՝ ճանաչելով Եզրին ո'չ որպես հայադավան, իսկ արձանագրության հունարեն հատվածի հետ շարահյուսման փորձով որպես հունադավան կաթողիկոս: Այս դեպքում արձանագրության «ճշմարիտ» որակումը վերաբերում է հունադավանությանը, որով Ավանի վանականները ճշտում են իրենց վերաբերմունքը Եզր կաթողիկոսի նկատմամբ՝ ներկայացնելով նրան *ճշմարիտ հունադավան* ՝ոչ դրական գնահատմամբ:

Ավանի վանքի՝ հայադավանությանը պատկանելու մասին խոսուն վկայությունն է այստեղ Հովնան Ավանի վանահոր առկայությունը: Նա հիշատակվում է Աբրահամ Ա Աղբաթանեցի կոթողիկոսին և հայադավանությանը հավատարիմ հոգևորականների շարքում, կաթողիկոսական ընտրությանը անմիջապես հաջորդող ժամանակամիջոցում (607-608թթ.) կազմակերպված ձեռնարկի ընթացքում, երբ տեղի ունեցավ նախկինում հունադավանությանը

[27] **Ղաֆադարյան Կ.,** Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, էջ 9:

[28] Հարկադրանքը պետք է պայմանավորված լիներ հայոց վանքի վերածված Ավանի տաճարի՝ ի սկզբանե քաղկեդոնական լինելու հանգամանքով, որը պիտի տեղիք տար Եզր կաթողիկոսի, բայց առվելաբար հունական կողմի պարտադրանքին՝ ճանաչելու միջավանական համաձայնության արդյունքները:

հարած եպիսկոպոսների և վանահայրերի հայադավանության մեջ վերահաստատումը[29]:

Պետք է ենթադրել, որ Ավանի վանքի դավանական պատկանելիությունը ենթարկվել է որոշ ցնցումների հաջորդող մի քանի տասնամյակների ընթացքում, երբ դեռ առկա էին բյուզանդական կողմի ճնշումները՝ իրենց ենթարկելու Հայոց եկեղեցին: Սակայն այդ անկայուն վիճակը վերջնականապես ավարտվում է Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) գահակալման տարիներին: Ավանի տաճարը հայադավան վանքի կարգավիճակում, պետք է ենթադրել, մնում է անփոփոխ մինչև 13-րդ դ., ինչի մասին վկայում են տաճարի արևմտյան պատի արտաքուստ պահպանված 13-րդ դարի թվով չորս վիմագիր արձանագրությունները:

Բանալի բառեր - Ավանի տաճար, Հովհան Բագարանցի, Մորիկ կայսր, քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսություն, Աբրահամ Ա Աղբաթանեցի, Եզր կաթողիկոս, երկլեզու ծածկագիր արձանագրություն, Զաքարյան իշխաններ:

Ավետիք Ղազարյան, Ավանի տաճարի երկլեզու ծածկագիր արձանագրությունը. մե՞կ, թե՞ երկու արձանագրություն - Ավանի տաճարը, որը կիսակործան պահպանվել է մինչև մեր օրերը ժամանակակից Երևանի Ավան վարչական շրջանում, թվագրվում է վեցերորդ դարի վերջին տասնամյակով: Այն կառուցվել է Բյուզանդիայի Մորիկ կայսեր տիրապետության օրոք որպես քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսություն՝ ի հակակշիռ Հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսության: Ավանի միակ հակաթոռ կաթողիկոսը դարձավ Հովհան Բագարանցին, ում վախճանով դադարեց գոյություն ունենալ նաև քաղկեդոնադավան կաթողիկոսությունը: Պատմական այս իրադարձությունների լույսի ներքո նորովի է մեկնաբանվում Ավանի տաճարի արևմտյան պատի երկլեզու, հատվածաբար ծածկագրված վիմագիր արձանագրությունը: Մինչ օրս վիմագիր արձանագրությունն ամբողջաբար թվագրվել է 633 թվականով, մինչդեռ սույն հոդվածի մեջ մեր ուսումնասիրության արդյունքում հնարավոր է դառնում նրա հունագիր հատվածը թվագրել 611 թվականով՝ պայմանավորված հակաթոռ կաթողիկոսի հուղարկավորմամբ տաճարի արևմտյան պատի մոտ:

Аветик Казарян, Двуязычный зашифрованный литограф Аванского собора: один или два литографа? - Аванский собор датируется концом шестого века, руины которого сохранились до наших дней в административном районе Аван современного Еревана. Собор был построен во времена правления императора Византии Маврикий в Армении как антипрестол халхидонистов в противовес к Католикосату Армянской Апостольской Церкви. Единственным католикосом

[29] Տե՛ս Ազգապատում, հ.Ա, § 414, էջ 317-318:

Аванского антипрестола стал Овхан (Ованнес) Багарански, чей кончиной завершился существование антипрестола. В силу этих исторических событий по новому толкуется двуязычный литограф из стены собора. Литограф в целом до ныне датировался 633 годом, тогда как по результатам нашего исследования в рамках этой статьи часть литографа на средневековом греческом возможно стало датировать 611 годом в связи погребения антипрестольного католикоса у стены собора.

Avetik Ghazaryan, Bilingual coded lithographer of the Avan Cathedral: one or two lithographs? - The Avan Cathedral dates back to the end of the sixth century and its ruins have survived to the present days in the administrative district of Avan in modern Yerevan. The cathedral was built during the reign of the Emperor of Byzantium Mauritius in Armenia as the Khalkidonic anti-throne as opposed to the Catholicosate of the Armenian Apostolic Church. The sole Catholicos of the Avan anti-throne was Hovhan of Bagaran, whose demise was the end of the existence of the anti-throne. Due to these historical events the bilingual lithograph from the cathedral wall is being interpreted in a new way. The lithograph as a whole until now was dated 633 AD, whereas according to the results of our research within this article a part of the lithograph on Medieval Greek can be dated 611 AD in connection with the burial of the anti-throne Catholicos near the cathedral wall.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ (XIX Դ. ՎԵՐՋ – XX Դ. ՍԿԻԶԲ)

ՀԱՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

19-րդ դարի վերջին երկու տասնամյակները հայ իրականության մեջ նշանավորվում են հայ ազգային կուսակցությունների ձևավորմամբ, որոնք՝ լինելով շատ ավելի ամրակուռ և գաղափարապես ավելի հասուն, գալիս էին փոխարինելու 1860-1880 ական թթ. Հայաստանում գործող խմբակներին:

Գաղտնիք չէ, որ քննարկվող ժամանակաշրջանում մեր ազգային գերխնդիրը հայության արևմտյան հատվածի ազատագրումն էր օսմանյան տիրապետությունից, հանգամաք, որն իր տեսական արտացոլումը պիտի գտներ նորաստեղծ կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում և դառնար նրանց գաղափարախոսության անկյունաքարային դրույթը:

Դրա հետ միասին հայ ազգային կուսակցությունների՝ Արմենականների, Հնչակյանների և Դաշնակցության առաջին գործնական քայլերն ակնառու կերպով ցույց տվեցին, որ միմյանցից անջատ, անկախ գործելակերպով նրանք չեն կարող որևէ լուրջ արդյունք ակնկալել: Այդ իսկ պատճառով, քաղաքական պայքարի ասպարեզ մտնելուց շատ չանցած, նկատվում են ինչպես կուսակցական, այնպես էլ՝ առանձին անհատ գործիչների կողմից կուսակցությունների միավորման նպատակով ձեռնարկված քայլեր:

Թեպետ հայ իրականության մեջ առաջին կուսակցությունը Արմենականներն էին (1885թ.), սակայն միավորման առաջին փորձը կայացավ Հնչակյանների և նոր կազմավորվող ՀՅԴ-ի միջև: Դրա հիմնական պատճառն այն էր, որ արմենականները գլխավորապես ծավալել էին ընդհատակյա գործունեություն: Միշտ հավատարիմ մնալով խոհեմության ու գաղտնապահության սկզբունքներին և գործելով խիստ զգուշավոր, արմենականներն իրենց գլխավոր ուշադրությունը կենտրոնացրին առավելապես կրթական շարժման, զինակուտակման և ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու վրա[1]:

Ահա այդ պատճառով հայության լայն մասսաների մեջ այս կուսակցությունն ավելի քիչ էր ճանաչված, քան նրանից ավելի ուշ՝ 1887թ. վերջին Ժնևում ձևավորված Հնչակյանների կուսակցությունը, որն իր ձևավորումից շատ չանցած Կ.Պոլսում և տարբեր վայրերում կազմակերպեց ցույցեր ու զինված ելույթներ, որոնք նրան լայն ճանաչում բերեցին: Հետագայում՝ 1896թ. Վանի հերոսական ինքնապաշտպանությունից հետո, որն ի դեպ, հայոց պատմության

[1] Հայոց պատմություն, հատոր III գիրք առաջին, Երևան, 2010, էջ 488:

մեջ հայտնի է որպես հայ ազգային կուսակցությունների համագործակցության փայլուն օրինակ, Արմենական կուսակցության հիմնական մասն իր ղեկավար Մկրտիչ Ավետիսյանի հետ Վանից հեռանալուց հետո, ընկավ շրջապատման մեջ, ջաղջախվեց և փաստացի դադարեց գոյություն ունենալ:

Ինչպես արդեն նշել ենք, միության առաջին փորձը կատարվել է Հնչակյան և նոր կազմավորվող Դաշնակցություն կուսակցությունների միջև: Քր. Միքա-յելյանի, Ս. Զավարյանի և ՀՅԴ այլ գործիչների կողմից հնչակյաններին արված առաջարկը միավորվելու նպատակով պատահական չէր: Թեպետ Հնչակյան կուսակցությունը ստեղծվել էր արմենականներից հետո և Հայաստանից դուրս, սակայն մի քանի տարվա ընթացքում կարողացել էր ավելի լայն ծավալում և ճանաչում ստանալ ինչպես Հայաստանի արևմտյան և արևելյան հատ-վածներում, այնպես էլ՝ Պարսկաստանում, Եգիպտոսում, Ռուսաստանում, Եվրոպայում, ԱՄՆ-ում: Բացի դրանից, քանի որ 1890թ. ամռանը սկսված Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովները ծայր առան Կ.Պո-լսում հնչակյանների կազմակերպած Գում-Գափուի ցույցի առաջ բերած ոգևորության մթնոլորտում, բնականաբար, ձևավորվող Հ. Յ. Դաշնակցությունը մեծ կարևորություն տվեց ցույցի կազմակերպիչների հետ միություն ստեղծելու խնդրին:[2] Որպես վերոհիշյալի ապացույց կարող ենք վկայակոչել ՀՅԴ հիմնադիր գործիչներից մեկի՝ Հովհաննես Լոռու - Մելիքյանի Ռուսչուկից (Ռումինիա) Քր. Միքայելյանին գրված նամակը, որում հեղինակը հայտնում է, որ հայ ազգային կուսակցությունների տեղի կառույցների մեջ ամենաաչքի ընկ-նողը հնչակյաններն են: «Ժամանելով Ռուսչուկ ,- գրում է Լոռու-Մելիքյանը,- մենք սկսեցինք հավաքել տեղեկություններ այստեղի հայերի մասին: Պարզվում է, որ նրանք բաժանվում են երեք խմբի, այսինքն՝ Մարսելցիների (իմա՝ Մարսե-լում հրատարակվող «Արմենիա» թերթի գաղափարակիրներ– Արմենականներն են), Զեյթունցիների (զեյթունցի Հարություն Չաքրյանի կողմնակիցները) և Զուռնաչիստների (իմա՝ Հնչակյանների): Առաջին երկու կուսակցությունները[3] նախկինում բավականին զգալի ուժ էին ներկայացնում և մեծ գումարներ կլա-նում, բայց ներկայումս Զուռնաչիստների գործողությունների ուժեղացման հետևանքով նրանք կորցրել են իրենց նշանակությունը»[4]: Ավելին, Լոռու-Մելի-քյանը հայտնում է նաև, որ իրենք նպատակ ունեին ամրապնդել կապերը հնչա-կյանների հետ:

Միության խնդիրն առաջ է քաշվել ՀՅԴ ստեղծման արշալույսին՝ 1890թ.: Արդեն գոյություն ունեցող Հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Ռ.

---

[2] **Գևորգ Խուդինյան**, Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Երևան, 2000, էջ 147

[3] «Զեյթունցիների կուսակցություն» բառակապակցությունը պետք է հասկանալ որպես կազմակերպությունն ոչ թե դասական իմաստով կուսակցություն (Հ.Հ.):

[4] ՎԷՄ, Երևան, 2009, թիվ 3, հավելված, էջ VIII:

Խանազատի և Հմ. Խուշպուլյանի, մյուս կողմից ՀՅԴ հիմնադիրներ Քր. Միքայելյանի, Ս. Զավարյանի և այլոց միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում որոշվել է միավորել Թիֆլիսում գործող գաղտնի խմբակները Հնչակյան կուսակցության հետ: Այդ խմբակները զգալիորեն գտնվում էին ռուս նարոդնիկների գաղափարական ազդեցության ներքո, սակայն նրանց հուզող և միավորող գլխավոր հարցը դա Հայկական հարցն էր, արևմտահայերի ազատագրության գործը:[5]

Գաղտնիք չէ, որ հենց այդ միավորումից հետո հայտարարվում է Հայ Յեղափոխականների Դաշնակցություն կուսակցության ստեղծման մասին: Ցավոք, այդ միությունը կարճատև կյանք ունեցավ՝ ընդամենը մի քանի շաբաթ: Միքայել Վարանդյանը միության պառակտման մեջ իրավացիորեն մեղադրում է Ժնևի հնչակյան կենտրոնին, որի որոշմամբ հնչակյանները վերստին հեռացան և շարունակեցին իրենց ինքնուրույն գործունեությունը, բայց մյուս կողմից խոսելով նոր ստեղծվող կուսակցության ղեկավարության մասին, Վարանդյանն ուղղակիորեն գրում է, որ «թիֆլիզցիներու մեծամասնութեան մեջ պարզ դիտավորութիւն կար՝ վերցնել գործի ղեկավարությունը Հնչակեան երկու պարագլուխներու ձեռքեն- պարոն և տիկին Նազարբէկեաններու- որոնք համակրանք չէին վայելէր Կովկասի մեջ»[6]: Այս մտայնությունը հաստատում է նաև պատմաբան Գ. Խուդինյանը գրելով. «Չնայած 1890-ի վերջերին Հ. Յ. Դաշնակցության բանակցությունները Հնչակյան կուսակցության ներկայացուցիչների հետ ավարտվել էին միության մասին համաձայնագրի ստորագրումով, և փաստորեն Հնչակյան կուսակցությունը դարձել էր Հայ Յեղափոխականների դաշնակցության բաղկացուցիչ մասը, բայց երկու կուսակցությունների միավորման գործընթացն ըստ էության չէր ավարտվել, ավելին, այն սկսել էր լուրջ ճեղքեր տալ: Ժնևի և Թիֆլիսի միջև առկա տարաձայնություններն արտաքինից սքողված էին գաղափարական շղարշով, բայց դրա խորքում թաքնված էր քաղաքական առաջնության հասնելու ձգտումը»[7]:

Անշուշտ, հայ ազատագրական պայքարի ղեկավարման տեսանկյունից ավելի նպատակահարմար էր կենտրոն դարձնել Թիֆլիսը, որն ավելի մոտ էր Արևմտյան Հայաստանին և գտնվում էր հայաշատ Անդրկովկասում, և ոչ թե Եվրոպայում գտնվող Ժնևը: Սակայն ակնհայտ էր մի կարևոր հանգամանք, որը մեր կարծիքով վճռորոշ դեր կատարեց այս հարցում թե՛ Նազարբեկյանի, որին իրավացիորեն քննադատում էին մարքսիզմի գաղափարական դոգմատիզմի մեջ, և թե՛ Քր. Միքայելյանի կողմից ամեն կերպ ղեկավարողի դիրքը պահպան-

---

[5] **Հ. Ղևոնդյան,** Հեղափոխական նարոդնիկական շարժումը հայ իրականության մեջ XIX դարի 70-80 ական թվականներին, Երևան, 1991, էջ 15:

[6] **Մ. Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիուն, Երևան, 1992, էջ 59

[7] **Գ. Խուդինյան,** նշվ. աշխ., էջ 164:

ելու, առաջնությունը չզիջելու մտայնության պալմաններում, միության յուրաքանչյուր փորձ ի սկզբանե դատապարտված էր ձախողման։ Ցավոք, սա ևս իրականություն էր։

Ինչպես վերը նշվեց, 1890-ական թթ.-ից ազգային կուսակցությունների համագործակցության փայլուն օրինակ էր 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունը։ Արևմտյան Հայաստանի խոշոր և հայաշատ այդ կենտրոնում իրենց կուսակցական կառույցներն ունեին հնչակյանները, դաշնակցականները և հատկապես արմենականները։ Թուրքական իշխանությունները վաղուց էին ձգտում ջաղջախել Վանի հայությանը, որը Արևմտյան Հայաստանի համար դարձել էր առաջադիմական- լուսավորական և ազատագրական գաղափարների տարածման յուրատեսակ կենտրոն։ Երբ թուրք-քրդական ուժերը պաշարեցին Վանը, ապա քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպման գործին ձեռնամուխ եղան Վանի արմենականները Մկրտիչ Ավետիսյանի, դաշնակցականները՝ Ալեքսանդր Պետրոսյանի և հնչակյանները՝ Մարտիկ Սարուխանյանի ղեկավարությամբ, որոնք իրենց փոքրաթիվ ուժերով արժանի հակահարված տվեցին թշնամուն և մեկ անգամ ևս ակնառու կերպով ցույց տվեցին, թե ինչպիսի մեծ ուժ է ազգային ուժերի միաբանությունը։

Հայ ազգային կուսակցությունների միության հաջորդ փորձերը տեղի են ունենում 1890- ական թթ. վերջերին։ 1894-96 թթ. արևմտահայերի զանգվածային կոտորածներից հետո Հնչակյան կուսակցությունը թե՛ կազմակերպական և թե՛ գաղափարական առումով խիստ թուլացավ։ Կ.Պոլսի ու Արևմտյան Հայաստանի նրա կուսակցական կառույցները հիմնականում ջաղջախվեցին ու կազմակերպվեցին, իսկ գլխավորապես արևմտահայ հնչակյան գործիչները հեռացան Նազարբեկի հնչակյան կենտրոնից։ Տարաձայնությունների խորացումը հանգեցրեց կուսակցության պառակտմանը և նոր՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցության առաջացմանը։ Վերջինիս ղեկավար գործիչները՝ Արփիարյան, Տամատյան, Ռշտունի, Ապահ, մերժելով արևմտահայության մեջ սոցիալիզմի քարոզչությունը, որոշեցին կուսակցությանը դնել զուտ ազգային հիմքերի վրա և մերժել առանձին զինված ցույցերի գործելակերպը։[8]

Առաջ մղելով միմիայն Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը վերակազմյալներն այսպիսով գաղափարական առումով ընդհուպ մոտեցան ՀՅԴ-ին։

Այս հանգամանքն անշուշտ, դաշնակցության հետ միավորվելու վերակազմյալների ձեռնարկած գործում չէր կարող որոշակի դերաատարություն չունենալ։ Ինչևէ, ՀՅԴ-ի հետ միավորվելու վերակազմյալ հնչակյանների փորձերը բախվեցին դաշնակցության առաջնորդների կարծր դիրքորոշմանն ու

[8] **Գ. Հովհաննիսյան,** Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915թթ.), Երևան, 2012, էջ 118։

անհաջողությամբ վերջացան։ Որպես միության պայման ՀՅԴ-ն առաջ էր քաշել վերակազմյալ մի քանի ղեկավար գործիչների և կուսակցության ղեկավար Արփիարյանի հեռացման հարցը։ Եվ չնայած, հանուն միության, 1901թ. Արփիարյանը հեռացավ կուսակցությունից, սակայն դրանից հետո էլ բաղձալի միությունն, այնուամենայնիվ, չկայացավ։[9]

ՀՅԴ-ի պատմության ուսումնասիրողներից Հրաչ Տասնապետյանն անդրադառնալով այս հարցին, գրում է. «Հ. Յ. Դաշնակցութեան առաջին 10 տարիներու յարաբերական գործունեութեան ամենէն կնճռոտ եւ ըստ ընթացքի անհաճոյ հարցերէն մեկն է եղած «հին» թե «նոր», «մայր» թե «վերակազմեալ» հնչակեաններուն հետ միութեան կամ առնուազն համերաշխ գործակցութեան խնդիրը, որուն համար «Դրօշակի» խմբագրութեան հետ յաջորդաբար կապ հաստատած են եւ խօսակցութիւններ ունեցած՝ Միհրան Սվազլեան, Յարութիւն Ճանկիլեան, Յովհաննես Շահնազար և ուրիշներ։ Դժբախտաբար, հարցը երբեք պիտի չյանգեր դրական ու քիչ թե շատ ամբողջական լուծման մը՝ Հնչակեաններու յաջորդական պառակտումներուն, ներքին պարբերական անհասկացողութիւններուն եւ Արփիար Արփիարեանի էնթրիկներուն պատճառով»[10]։ Իհարկե, դաշնակցության պատմաբանի նման տեսակետում կա ճշմարտություն, սակայն, մեր կարծիքով, խնդիրն ավելի խորքային պատճառ ուներ, քանի որ նույնիսկ Արփիարյանի կուսակցությունից հեռանալուց հետո էլ միությունը չկայացավ և այս անգամ էլ ՀՅԴ-ն առաջ քաշեց վերակազմյալ մի քանի հայտնի դեմքերի հեռացման հարցը՝ դրանով խնդրի լուծումը մտցնելով փակուղի։

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ ՀՅԴ-ի այլ քաղաքական ուժերի հետ միավորվելուց խուսափելու թերևս հիմնական պատճառը ներազգային կյանքում իր առաջնային դիրքերը զիջելու մտավախությունն էր։ Ինչ վերաբերում է հնչակյանների սոցիալիստական թևի ներկայացուցիչներին, ապա կարող ենք փաստել, որ նույն մտայնությունը կար և նրա առաջնորդների շրջանում, որն էլ հենց 20-րդ դարի սկզբին դարձավ հին և նոր (վերակազմյալ) հնչակյանների կարճատև միության փլուզման գլխավոր պատճառը։

20-րդ դարի սկզբին քայքայված Արմենական կուսակցության առանձին-առանձին գործող խմբերի և Վերակազմյալ Հնչակյանների չափավոր թևի գաղափարական նույնության հիմքի վրա ձևավորվեց նոր՝ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը (1908թ. Եգիպտոս)[11]։

---

[9] Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.), Երևան, 2003, էջ 65-66։

[10] Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ ընդհ. ժողովը (1890-1924), Հրաչ Տասնապետեան, Աթենք, 1988, էջ 48։

[11] **Սարգսյան Ս.,** Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1927թթ), Երևան, 2009, էջ 66-67։

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ ազգային կուսակցությունների միավորման, նոր կուսակցությունների առաջացման գործընթացը շարունակվեց մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Սփյուռքում ազգային կուսակցությունների միավորման ակնառու դրվագը 1921թ. Վերակազմյալ հնչակյան կուսակցության և Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունների միավորումն էր, որի արդյունքում ստեղծվեց Ռամկավար ազատական կուսակցությունը:

Ամփոփելով ընդգծենք, որ գաղափարակից կուսակցությունների միության անհրաժեշտության գիտակցումով ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական ու կուսակցական գործիչները զգալի ջանքեր գործադրեցին, որոնք, ցավոք, բավարար չեղան համընդհանուր միավորման գործում, հանգամանք, որն անկասկած բացասաբար անդրադարձավ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա:

Բանալի բառեր- Հայաստան, ազատագրություն, պայքար, ազգային, կուսակցություն, համերաշխություն, գաղափարախոսություն, միություն:

Հասմիկ Համբարձումյան, Հայ ազգային կուսակցությունների միավորման խնդիրը (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ) - 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին մեր ազգային գերխնդիրը հայության արևմտյան հատվածի ազատագրումն էր օսմանյան տիրապետությունից, որն իր տեսական արտացոլումն ունեցավ նորաստեղծ կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում: Սակայն կուսակցությունների առաջին գործնական քայլերը շուտով ցույց տվեցին, որ միմյանցից անկախ գործելակերպով նրանք չեն կարող որևէ լուրջ արդյունք ակնկալել: Այդ պատճառով տարբեր կուսակցությունների և անհատ գործիչների կողմից ձեռնարկվում են քայլեր կուսակցությունների միավորման նպատակով: Թեպետ եղան որոշակի հաջողություններ, սակայն, ցավոք, ազգային կուսակցությունների ընդհանուր միություն տեղի չունեցավ, որն էլ բացասաբար անդրադարձավ հայ ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա:

Асмик Амбарцумян, Проблема объединения армянских национальных партий (конец XIX века – начало XX века) - В конце 19-го и начало 20-го века главная задача армянского народа было освобождение Западной Армении от османского ига, который теоретически отражался в програмных документах армянских национальных партий. Однако, первые практические шаги этих партий вскоре доказали, что отдельными действиями не могут ожидать каких – либо серезных результатов. По этому разные партии и отдельные деятели принимают меры для объединения сторон. Несмотря на некоторые успехи, к сожалению, союза национальных партий не состоялось, что в последствии негативно отражалось на армянской освободительной борьбе.

Hasmik Hambardzumyan, The problem of unification of Armenian national parties (the late XIX century and early XX century) - In the late 19th and early 20th centuries, the liberation of the western part of Armenians from the Ottoman supremacy was our national priority. This had its theoretical reflection in the program documents of the newly-formed parties. However, the first practical steps of the political parties soon showed that they could not expect any serious results with their independent working style. For that reason different parties and individual figures took steps to unite parties. Although there were some successes, unfortunately, the general unity of the national parties did not take place, which negatively affected the further process of the Armenian liberation struggle.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԱՐԱ ԱԶԱՏՅԱՆ

Հայ պատմագրության մեջ վիճահարույց և հակասական գնահատականների արժանացած հիմնահարցերից է ՀՀ խորհրդայնացումը:

Խորհրդահայ պատմաբանները հասկանալի պատճառներով ՀՀ անկման գործընթացը ներկայացրել են խորհրդային գաղափարախոսությանը համահունչ սկզբունքներով՝ շատ հաճախ աղավաղելով և կեղծելով պատմական ճշմարտությունը:

Այսպես, խորհրդահայ պատմագրությունը գտնում էր, որ ՀՀ գործիչները իրենց արևմտամետ դիրքորոշմանը կառչած մնալով և պայքարելով իշխանությունը պահպանելու համար, պատճառ հանդիսացան տարածքային կորուստների:

1920-30-ական թվականներին, երբ տակավին խորհրդահայ պատմագրությունը գտնվում էր ձևավորման փուլում, մեկը մյուսի հետևից հրատարակվեցին Աշ. Հովհաննիսյանի[1], Ա. Կարինյանի[2], Ա. Խանջյանի[3], Հ. Ազատյանի[4], Լեոյի[5], Գ. Աբովի[6], Մ. Ներսիսյանի[7], Վ. Պարսամյանի[8], Կ. Ղազարյանի[9] և այլոց ուսումնասիրությունները, որոնք հիմնականում գաղափարաքաղաքական նշանակություն ունեցող գործեր էին և կրում էին կոնյունկտուրային բնույթ: Այս հեղինակները հիմնականում նպատակ են ունեցել բացահայտելու դաշնակցության «բուրժուական» էությունը: 1920-ական թվականներին սուր բանավեճ էր ընթանում Դաշնակցության սոցիալական էության գնահատման շուրջ: Այս բանավեճը շարունակվեց մինչև 1928թ., երբ ՀԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենո-

---

[1] **Հովհաննիսյան Ա.,** Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք», գիրք 2, Եր., 1923, նույնի՝ Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք», գիրք 3, Եր., 1923, նույնի՝ Դաշնակցությունը և պատերազմը, Եր., 1924, նույնի՝ Գաղութահայ խնդիրներ, Եր., 1925, նույնի՝ Դաշնակցական Հայաստանի գործերից, «Նորք», գիրք 5-6, Եր., 1925, նույնի՝ Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», գիրք 1, Եր., 1927, նույնի՝ Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1929:

[2] **Կարինյան Ա.,** Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Եր., 1924, նույնի՝ Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, նույնի՝ Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, նույնի՝ Հին Թուրքիան և թուրքահայությունը, «Նորք», գիրք 1-2, Եր., 1926, նույնի՝ Նացիոնալիզմի նոր դիրքերը, Մոսկվա, 1929, նույնի՝ Դաշնակցությունը և իր «զինակիցները», Եր., 1932:

[3] **Խանջյան Ա.,** Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները, Եր., 1933, նույնի՝ Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակ, Եր., 1935:

[4] **Ազատյան Հ.,** Խորհրդային իշխանությունը և միջազգային կապիտալը, «Նորք» գիրք 1, Եր., 1926:

[5] **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925:

[6] **Աբով Գ.,** Դաշնակցությունն անցյալում և այժմ, Եր., 1929:

[7] **Ներսիսյան Մ.,** Դաշնակցական «դրախտավայրը կամ սովի ու մահվան աշխարհը», Եր., 1932, նույնի՝ Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Եր., 1935:

[8] **Պարսամյան Վ.,** Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում (1920թ. նոյեմբերի 29), Եր., 1932:

[9] **Ղազարյան Կ.,** Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում, «Տեղեկագիր», մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ, Եր., 1935, №1:

ւմում ընդունվեց հետևյալ բանաձևը. «Դաշնակցությունը եղել է և է հայ բուրժուազիայի իդեաների ու ձգտումների արտահայտիչ ու մարտական կուսակցությունը: Նա կատարել է և կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը: Դաշնակիզմը բուրժուական ազգայնական շովինիստական հակահեղափոխական իդեոլոգիան է: Նա հայ իրականության ֆաշիզմն է»[10]:

Ինչ վերաբերում է ՀՀ անկման գործընթացի վերաբերյալ խորհրդահայ պատմաբանների դիրքորոշմանը, ապա խորհրդահայ հեղինակ Ա. Հովհաննիսյանը գրում է, որ նոյեմբերին արդեն Հայաստանում առկա ներքին և արտաքին նպաստավոր պայմանների հետևանքով երկրում ստեղծվել էր հեղափոխական դրություն, որի հետևանքը հանդիսացավ դաշնակների տիրապետության տապալումը: Հեղինակը նշում է, որ նոյեմբերի սկզբներից իշխանությունը գրավելու խնդիրը Հայաստանում արդեն իսկ որոշված էր բոլշևիկյան կուսակցության համար[11]: Մեկ այլ խորհրդահայ պատմաբանի՝ Կ. Ղազարյանի համոզմամբ մայիսյան ապստամբությունից արդեն պարզ էր, որ Հայաստանը կանգնած է խորհրդայնացման շեմին: Մայիսյան ապստամբությունը հեղինակը համարում է «իշխանությունը հայ բուրժուազիայի ձեռքից գրավելու առաջին փորձը», իսկ նոյեմբերի վերջին բռնկված շարժումը՝ մայիսի շարունակությունը, որն էլ լուծեց այդ հարցը[12]:

Մ. Ներսիսյանը, խոսելով մայիս-նոյեմբեր ամիսներին ընկած ժամանակահատվածում կատարված իրադարձությունների մասին՝ այդ համապատկերի վրա ներկայացնում է Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, գտնելով, որ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հեղափոխության հաղթանակն ապահովելու համար արդեն կային բոլոր նախապայմանները: «Դաշնակցական բանակը երբեք այնքան հեղափոխականացված չէր, որքան 1920թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Զինվորության հեղափոխական ելույթներն ու ըմբոստությունները, հատկապես նոյեմբեր ամսին, հասնում են ամենաբարձր աստիճանին: Զորքերն այլևս չեն կռվում: Նրանք դիմադրում են դաշնակցական կառավարության հավատարիմ մնացած խմբապետական զորամասերին և մեծ խմբերով վերադառնում են իրենց գյուղերն ու հայտարարում այնտեղ խորհրդային իշխանություն»[13],- գրում է հեղինակը:

Անշուշտ, Մ. Ներսիսյանի այս ուսումնասիրությունը ընդգծված հակադաշնակցական ուղղվածություն ունեցող գործ էր, որտեղ հեղինակը չի

---

[10] **Խանջյան Ա.,** Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները, Եր., 1933, էջ 23:

[11] **Հովհաննիսյան Ա.,** Համազգային կրիզիսը (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ), Եր., 1926, էջ 17:

[12] **Ղազարյան Կ.,** Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում, «Տեղեկագիր», մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ, Եր., 1935, №1,, էջ 78-79:

[13] Նույն տեղում, էջ 112:

թաքցնում իր կողմնակալ մոտեցումը շատ փաստերի և իրադարձությունների նկատմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1920-30-ական թվականներին պատմագիտական ուսումնասիրությունների մեծ մասը հրատարակվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտի կողմից, ապա միանգամայն պարզ է դառնում, որ այդ ուսումնասիրությունները պետք է կրեին պատմակուսակցական բնույթը[14]:

Հարկ է նշել, որ 1920-30-ական թվականների պատմագիտական գրականության մեջ Հայաստանի խորհրդայնացումը անվանվել է «նոյեմբերյան հեղափոխություն», բայց 1936թ. պաշտոնապես ընդունված այդ արտահայտությունը հանվում է շրջանառությունից, այն պատճառաբանությամբ, թե նոյեմբերին մի նոր հեղափոխություն տեղի չի ունեցել, այլ դա Հոկտեմբերյան հեղափոխության շարունակությունն էր Ռուսաստանի նախկին ծայրամասերից մեկում՝ Հայաստանում[15]:

Ի տարբերություն 1920-1930-ական թվականների, երբ «Նոյեմբերյան հեղափոխություն» վերտառության ներքո հիմնականում ներկայացվում էին 192-0թ. մայիսից նոյեմբեր ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները, ապա 1950-1980-ական թվականներին Հայաստանի խորհրդայնացումը պատմաբանները գլխավորապես ներկայացրել են շարադրանքը սկսելով Հոկտեմբերյան հեղափոխությունից՝ այն հասցնելով մինչև 1921թ.: Միաժամանակ, խորհրդահայ պատմաբանները Հայաստանի խորհրդայնացման պատմությունը ներկայացրել են Ռուսաստանի և Անդրկովկասի այդ շրջանի պատմության համատեքստում: Ուստի 1950-1980-ական թվականներին հրատարակված աշխատություններում մեծ տեղ է հատկացված երեք հիմնախնդիրների՝ Հոկտեմբերյան հեղափոխության, մայիսյան ապստամբության և Հայաստանի խորհրդայնացման ուսումնասիրությանը, որոնք խորհրդահայ պատմաբանների կողմից շղթայական կապով կապված են եղել միմյանց հետ:

Թվում էր, թե 1950-1980-ական թվականներին, անհատի պաշտամունքի դատապարտման, ազգային զարթոնքի պայմաններում պատմաբանների նոր սերունդը նորովի կլուսաբաներ պատմության շատ հիմնահարցեր, սակայն այս շրջանում ևս պատմաբանների մեծ մասը շարունակում էր նախկին հայեցակարգերին համահունչ շարադրել պատմությունը, հրատարակվում էին աշխատություններ, որոնք գրեթե ոչ մի նորույթ չէին պարունակում:

---

[14] **Քառյան Ս.,** Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրություն, Եր., 2003, էջ 231:

[15] Տե՛ս **Հարությունյան Շ.,** Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1963, Ուրվագծեր, Եր., 1967, էջ 381, Մայիլյան Պ., Հայաստանում սովետական իշխանության հաստատման պրոբլեմը սովետահայ պատմագրության մեջ, Եր., 1974, էջ 49:

Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ 1950-1980-ական թվականներին աշխատություններով հանդես եկան Հ. Էլչիբեկյանը[16], Գ. Ղարիբջանյանը[17], Ծ. Աղայանը[18], Գ. Գալոյանը[19], Ս. Սահրադյանը[20], Ս. Ալիխանյանը[21], Ա. Եսայանը[22], Ա. Մնացականյանը[23], Մ. Արզումանյանը[24] և ուրիշներ:

Այս հեղինակները վերնագրային փոքրիկ տարբերությամբ մեկը մյուսի հետևից հրատարակեցին մի շարք աշխատություններ, որոնք բովանդակային առումով և քննարկվող խնդիրների տեսակետից գրեթե նույնն էին: Շատ դեպքերում կարծիքների բախման չենք հանդիպում, նույն տեսակետներն են զարգացվում նրանց աշխատություններում: Վերոնշյալ հեղինակների աշխատություններում հիմնականում գովերգվում է Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար դերը «աշխատավորության հեղափոխության պայքարում», նրանց «ազատագրման» գործում՝ Հայաստանի խորհրդայնացման օրն ընդունելով նոյեմբերի 29-ը:

1970-ական թվականներին հրատարակված աշխատություններից ցանկանում ենք առանձնացնել Ս. Ալիխանյանի «Գ. Կ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում» գիրքը, որտեղ վեր է հանված Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար Գ. Օրջոնիկիձեի խաղացած դերը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման համար մղված պայքարում:

Պատմագրության մեջ այս աշխատությունն առանձնանում է նրանով, որ Ս. Ալիխանյանը, ի տարբերություն խորհրդահայ մնացյալ հեղինակների, իր գրքում դրեց հետևյալ հարցադրումը՝ ե՞րբ է տեղի ունեցել Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում: Նա խորհրդահայ պատմաբան-

---

[16] **Эльчибекян А.,** Установление советской власти в Армении, Ер., 1954: Его же՝ Великая октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, Ер., 1957:

[17] **Ղարիբջանյան Գ.,** Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Եր., 1955:

[18] **Աղայան Ծ.,** Հոկտեմբերյան Ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Եր., 1957, Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти, Е. 1962.

[19] **Галоян Г.,** Борьба за Советскую власть в Армении, М. 1957, Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922, Е., 1969, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության կեղծարարության դեմ, Եր., 1961, Պատմության քառուղիներում, Եր., 1982:

[20] **Սահրադյան Ս.,** Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեները Հայաստանում, Եր., 1961:

[21] **Ալիխանյան Ս.,** Սովետական ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Եր., 1964, նույնի՝ Գ. Կ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1974:

[22] **Եսայան Ա.,** Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1965, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922թթ., Եր., 1967:

[23] **Մնացականյան Ա.,** Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները, Եր., 1961, նույնի՝ Կոմունիստական պարտիան հայ ժողովրդի ազատարարն է, Եր., 1964, նույնի՝ Ամերիկյան ագրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից, Եր., 1953, նույնի՝ Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Եր., 1976, նույնի՝ Հայ ժողովրդի ազատագրումը և վերածնունդը, Եր., 1970:

[24] **Արզումանյան Մ.,** Արհավիրքից վերածնունդ, Եր., 1973, նույնի՝ Դարավոր գոյամարտ, Եր., 1989:

ների մեջ առաջինն էր, որ քննարկման առարկա դարձրեց Հայաստանի խորհրդայնացման օրը՝ նոյեմբերի 29, թե՞ դեկտեմբերի 2: Հեղինակը նշում է, որ նոյեմբերի 29-ին Իջևանում Հայհեղկոմը հրապարակում է Հայաստանը սովետական սոցիալիստական հանրապետություն հռչակելու վերաբերյալ իր դեկլարացիան[25]: «Դաշնակցականները իշխանությունը հանձնեցին այն ժամանակ միայն, երբ չէին կարող այլևս չհանձնել այն, այլապես կտապալվեին ժողովրդական ուժով»[26],- գրում է հեղինակը: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ դաշնակցականները ուրիշ ելք չունենալով, իշխանությունը խաղաղ ճանապարհով «զիջեցին» Հայհեղկոմին: Հեղինակը դրականորեն է վերաբերվում Երևանի համաձայնագրի ստորագրմանը, գտնելով, որ այն «նպաստեց Հայաստանի աշխատավորության արագ և անարյուն հաղթանակին»[27]:

Պետք է նշել, որ Ս. Ալիխանյանը խորհրդահայ պատմագրության մեջ առաջինն էր, որ իր աշխատության մեջ քննարկման առարկա դարձրեց Հայաստանի խորհրդայնացման օրը ճշտելու հարցը: Ընդհանրապես խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված էր Հայաստանի խորհրդայնացման օրը համարել նոյեմբերի 29-ը: Խորհրդահայ պատմագրությունը նոյեմբերի 29-ը դիտում էր որպես հայ ժողովրդի ազատագրման, «դաշնակցականների տիրապետության» տապալման ու խորհրդային կարգերի հաստատման օր, ինչը ճիշտ չէր, որովհետև օրինական իշխանափոխությունը տեղի ունեցավ դեկտեմբերի 2-ին: Խորհրդային պատմաբանները փորձում էին հիմնավորել հակառակը, որ Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին՝ անտեսելով այն հանգամանքը, որ օրինական իշխանափոխությունը և իրավապայմանագրային ձևակերպումը տեղի է ունեցել դեկտեմբերի 2-ին: Խորհրդահայ պատմաբանները չէին ընդունում սփյուռքահայ հեղինակների արտահայտած այն իրավացի տեսակետը, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել խաղաղ ճանապարհով, առանց որևէ հեղափոխության ու դիմադրության հանդիպելու, առանց մի կաթիլ արյուն թափելու[28]: Հարկ է նշել, որ դա հաստատել է նաև Հայհեղկոմի անդամ Ա. Նուրիջանյանը, հայտնելով Օրջոնիկիձեին, որ «Քարվանսարան գրավվեց առանց մի գնդակ արձակելու»[29]:

Խորհրդահայ պատմաբանները չէին ընդունում Երևանի համաձայնագիրը և Հայաստանի խորհրդայնացման գործընթացը ուզում էին ամբողջությամբ վերագրել Հայհեղկոմին, ինչն անընդունելի է, քանի որ օրինական իշխանու-

---

[25] **Ալիխանյան Ս., Գ.** Կ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, էջ 41:

[26] Նույն տեղում, էջ 50:

[27] Նույն տեղում, էջ 52:

[28] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 535, Քաջազնունի Հ., ՀՅ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 45, Խատիսյան Ալ., ՀՀ ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 318, Իրազեկ Յ., Մեր պատմութեան ամենատխուր էջը, «Դրօշակ», №10, հոկտեմբեր, 1930, Փարիզ , էջ 241:

[29] **Ալիխանյան Ս.,** Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Եր., 1964, էջ 188:

թյունը Դաշնակցական կառավարությունը բոլշևիկներին հանձնեց դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրով, իսկ նոյեմբերի 29-ին Հեղկոմը պարզապես մտավ Իջևան և ***հայտարարեց*** (ընդգծումը մերն է – Ա. Ա.) Հայաստանի խորհրդայնացման մասին: Սա ընդամենը հայտարարություն էր, ուրիշ ոչինչ: Համեմատության համար նշենք, որ այդպիսի մի հայտարարություն էլ եղել էր նոյեմբերի 17-ին Ալեքսանդրապոլում թուրքերի աջակցությամբ կազմված մեկ ուրիշ Հեղկոմի կողմից, որի նպատակը, ըստ խորհրդահայ պատմագրության մեջ շրջանառվող տեսակետի, մինչև Հայաստանի խորհրդայնանալը ոչ միայն Ալեքսանդրապոլի, այլև Հայաստանի Հեղափոխական կոմիտե դառնալն էր[30]: Նման մի հայտարարություն էլ եղել էր ավելի վաղ՝ մայիսի 10-ին, դարձյալ Ալեքսանդրապոլում, երբ բոլշևիկները զենքի ուժով գրավել էին քաղաքը[31], իսկ ՌՀԿ-ն հրապարակել էր կոչ՝ Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելու մասին, միաժամանակ հայտարարելով, որ «շուտով քաղաք պիտի մտնի Կարմիր բանակը, ապահովելով քաղաքացիների կյանքն ու գույքը, թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիներից»[32]: Սակայն մայիսի 10-ին հաղթանակած ապստամբությունը մայիսի 14-ին պարտվեց[33]:

Այսպիսով, Հայհեղկոմը նոյեմբերի 29-ին մտնելով Իջևան, պարզապես հայտարարեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու մասին, մինչդեռ գլխավոր իրադարձությունների կենտրոնը Երևանն էր, որտեղ բանակցություններ էին ընթանում Լեգրանի և Վրացյանի կառավարության միջև, որի արդյունքում էլ ստորագրվեց իշխանությունը բոլշևիկներին հանձնելու վերաբերյալ համաձայնագիրը:

Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը ժողովրդի հիշողությունից ջնջելու, ինչպես նաև Դաշնակցական կառավարության անունը մաքրելու և խորհրդայնացման գործընթացն ամբողջությամբ Հայհեղկոմին վերագրելու նպատակով Ալ. Մյասնիկյանը 1921թ. նոյեմբերի 16-ին նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման համաժողովրդական տոնի օր հայտարարելու մասին ստորագրեց դեկրետ, որտեղ ասվում էր. «Դաշնակների բուրժուա-ազգայնական կառավարության տապալման ու Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարման օրը՝ նոյեմբերի 29-ը, հայտարարվում է մեր երկրի բանվորների և գյուղացիների համար համաժողովրդական տոն»[34]: Ահա հենց այս հիմքով էլ նոյեմբերի 29-ը հայտարարվեց Հայաստանի խորհրդայնացման օր:

---

[30] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու 1920թ. նոյեմբեր-1922 հունվար), էջ 10:

[31] Մեծ հոկտեմբերի ուղիով (հոդվածների ժողովածու), Եր., 1977, էջ 163:

[32] Ռնոլյուցիոն կոչեր և թռուցիկներ 1902-1921, Եր., 1960, էջ 548:

[33] **Ղարիբջանյան Բ.,** Սովետական իշխանության համար մղված պայքարում, Եր., 1966, էջ 17-18:

[34] ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Եր., 1921 նոյեմբեր-դեկտեմբեր, №13, էջ 113:

Սփյուռքահայ հեղինակների դիրքորոշումը Հայաստանի խորհրդայնացման գործընթացի հետ կապված միատարր չէ: Այստեղ առկա է կուսակցական պատկանելիության գործոնը: Բայց, ի տարբերություն խորհրդահայ և սփյուռքի ոչ դաշնակցական կամ նախկին դաշնակցական որոշ պատմաբանների, ՀՅԴ պատմագիր, հուշագիր հեղինակները չեն կեղծել իրականությունը, այլ երբեմն գիտակցաբար կամ անգիտակցաբար շրջանցել են կամ էլ ոչ հիմնավոր կերպով են ներկայացրել որոշ փաստեր: Դաշնակցական պատմագրությունը փորձում էր հիմնավորել, որ բոլշևիկները առաջնորդվում էին համաշխարհային հեղափոխության գաղափարներով և պատրաստ էին զոհաբերել Հայաստանը՝ Թուրքիայի միջոցով այդ ծրագիրն իրականացնելու համար:

Պետք է նշել, որ սփյուռքահայ պատմագրությանը հիմնականում հատուկ է նկարագրական բնույթը, այն զերծ է քննական-վերլուծական մոտեցումից, ինչը չենք կարող ասել խորհրդահայ պատմագրության մասին:

Դեռ 1920-ական թվականներից Ս. Վրացյանը[35], Ալ. Խատիսյանը[36] և Ռ. Տեր Մինասյանը[37] լուրջ քայլեր կատարեցին Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը մատուցելու ուղղությամբ: Նրանց աշխատությունները ունեն սկզբնաղբյուրային և գիտական նշանակություն միանշանակ:

Բարձր գնահատականի է արժանի Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունը, որը հեղինակը շարադրել է ոչ թե կուսակցական դիրքերից, այլ որպես պետական գործիչ: Աշխատությունը բավականին տարողունակ է, այն կարելի է համարել դաշնակցական պատմագրության գլուխգործոցը: Այստեղ հեղինակը անդրադարձել է Հայաստանի Հանրապետության պատմության գրեթե բոլոր խնդիրներին, այդ թվում՝ Հայաստանի խորհրդայնացման գործընթացին: Պետք է նշել, որ Հայաստանի խորհրդայնացմանը Ս. Վրացյանն անդրադարձել է նաև իր մյուս աշխատություններում[38]: Վերջինս Հայաստանի խորհրդայնացումը համարում էր անխուսափելի և նշում, որ 1920թ. նոյեմբերին Հայաստանն ընկել էր երկու կրակի միջև. մի կողմից թուրքերն էին սպառնալիքով ու վերջնագրերով խոսում, մյուս կողմից՝ հայ և ռուս բոլշևիկները: «Կառավարությանը ուրիշ ելք չէր մնում, քան ընտրել փոքրագույն չարիքը՝ տեղի տալ և համաձայնության գալ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի հետ: Հայաստանի խորհրդայնացումը այլևս դառնում էր անխուսափելի»[39],- գրում է

---

[35] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

[36] **Խատիսյան Ալ.,** ՀՀ ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968:

[37] **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982:

[38] **Վրացյան Ս.,** Հայաստաի Հանրապետություն, Եր., 1993, նույնի՝ Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թուրքական սալի միջեւ, Պէյրութ, 1953թ., նույնի՝ Կեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ե, Պէյրութ, 1966, նույնի՝ Ինչու՞ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, Թեհրան, 1982:

[39] **Վրացյան Ս.,** Հայաստանը բոլշեւիկեան մուրճի և թուրքական սալի միջև, էջ 126-127:

հեղինակը: Հ. Իրազեկը ևս Հայաստանի խորհրդայնացումը համարում է «չարիք-ներից փոքրագույնը և փրկության միակ հույսը»[40]: Հ. Քաջազնունու կարծիքով Հայաստանի խորհրդայնացումը ժամանակի խնդիր էր, վերջինս գտնում է, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո բոլշևիկների հաջորդ քայլը պիտի լիներ մտնել Հայաստան և Վրաստան: «Հայաստանի ժամը հնչեց ու բոլշևիկները դեկ-տեմբերին արեցին այն, ինչը չէր հաջողվել անել մայիսին»[41]:

Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի ուսումնասիրությունը հետխորհրդային շրջանում բոլորովին էլ չկորցրեց իր արդիականությունը և շարունակում է մնալ պատմաբանների ուշադրության կենտրոնում:

Հետխորհրդային շրջանում գիտական ասպարեզ մտավ պատմաբան ուսումնասիրողների երրորդ խումբը, որը արխիվային նորահայտ փաստաթղ-թերի հիման վրա սկսեց աստիճանաբար վեր հանել այդ իրադարձությունների իրական ու ճշգրիտ պատմությունը և տալ օբյեկտիվ գնահատականներ: ԽՍՀՄ փլուզումը հայ պատմագիտության առջև նոր ճանապարհներ բացեց: Հետխոր-հրդահայ պատմագրության մեջ կարելի է առանձնացնել երկու թև՝ խորհրդահայ պատմագրության ավագ սերնդի ներկայացուցիչները[42], որոնք շարունակում էին ապրել ու ստեղծագործել նաև հետխորհրդային շրջանում և երիտասարդ սերն-դի ներկայացուցիչները[43], ովքեր անկախության պայմաններում փորձեցին նո-րովի ներկայացնել և գնահատել ՀՀ անկման գործընթացը:

Առաջին խմբի հեղինակների մասին պետք է նշել, որ նրանք հիմնականում հայեցակարգ փոխելու խնդիր են ունեցել, վերանայել են նախորդ շրջանում իրենց զարգացրած տեսակետները:

---

[40] **Իրազեկ Յ.,** Մօտիկ անցեալից. պատմական դեպքեր և ապրումներ (1917-1922), Պէյրութ, 1956, էջ 84:

[41] **Քաջազնունի Հ.,** նշվ. աշխ., էջ 44-45:

[42] **Զոհրաբյան Է.,** 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», Եր., 2002, նույնի՝ Նախիջևանյան հիմնահարցը, Եր., 2010, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Եր., 2002, Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Եր., 1995, Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006:

[43] **Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Եր., 2000, Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1992, նույնի՝ Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, Եր., 2005, նույնի՝ Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, նույնի՝ Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում, Եր., 2016, նույնի՝ Հայաստանի հանրապետությունը 1918-1920թթ., Եր., 2018, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Եր., 1996, Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Եր., 2004, նույնի՝ Զորավար Սեպուհ, Եր., 2005, նույնի՝ Ռուբեն, Եր., 2007, Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թվականներին և Մեծ Բրիտանիան, Եր., 2012, Գևորգյան Հ., Դրո, Եր., 1999, Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Եր., 2002, նույնի՝ Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում, Եր., 2007, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Եր., 2007:

Ընդհանուր առմամբ հետխորհրդահայ պատմագրության մեջ գերիշխող էր այն տեսակետը, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել խաղաղ և կամավոր, առանց դիմադրության և առանց ռազմական ընդհարման[44]:

Հետխորհրդահայ պատմագրության ներկայացուցիչներից Ա. Սիմոնյանը Հայաստանի խորհրդայնացումը համարում է բազում հարցականներով լի ժամանակաշրջանի սկիզբը, և նշում, որ ժողովրդի տարբեր խավերում գիտակցում էին, որ ստեղծված պայմաններում թերևս նոր իշխանությունը միակ ուժն է, որ կարող է հայ ժողովրդին դուրս բերել ահավոր կացությունից[45]: Ցավով պետք է նշել, որ բոլշևիկների հետ կապված հույսերը ամենևին էլ Խորհրդային իշխանության հաստատման սկզբնական շրջանում չիրականացան:

Ամփոփելով նշենք, որ խորհրդահայ, հետխորհրդահայ և սփյուռքահայ պատմագրությունը, անկախ տեսակետների իրարամերժ լինելուց և պատմագիտական ուսումնասիրությունների ստեղծման պատճառներից, այնուամենայնիվ, մեծ նշանակություն է ունեցել ՀՀ անկման պատմության համակողմանի ուսումնասիրման, քննարկման և վերլուծության ուղղությամբ:

Բանալի բառեր - Հայ պատմագրություն, խորհրդահայ պատմագրություն, սփյուռքահայ պատմագրություն, հետխորհրդահայ պատմագրություն, աշխատություն, ուսումնասիրություն, Հայաստանի առաջին հանրապետություն, խորհրդայնացում:

Արա Ազատյան, Հայաստանի Առաջին Հանրապետության անկման պատմության պատմագրության շուրջ - ՀՀ անկման (խորհրդայնացման) հիմնահարցը մշտապես եղել է հայ պատմագրության ուշադրության կենտրոնում, որի ուսումնասիրման շուրջ թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում ստեղծվել է պատմագիտական և հուշագրական հարուստ գրականություն, կազմվել են նաև փաստաթղթերի ժողովածուներ, սակայն մինչ այժմ չի մարել հիմնահարցի նկատմամբ գիտական հանրության հետաքրքրությունը: Այս հիմնահարցի շուրջ առկա պատմագիտական աշխատությունները կարելի է բաժանել երեք խմբի՝ խորհրդային, հետխորհրդային և սփյուռքյան: Այս երեք խմբերը ներկայացնող հեղինակները տարբեր կերպ են լուսաբանել ու գնահատել ՀՀ անկման հիմնահարցը: Ուստի մեր նպատակն է հանդիսացել ներկայացնել հայ պատմագրության այս երեք ուղղությունների հիմնական մոտեցումները Հայաստանի անկման հիմնահարցի վերաբերյալ:

Ара Азатян, К вопросу об историографии истории падения Первой Республики Армения - Проблема падения (советизации) Республики Армения всегда находилась в центре внимания армянской историографии, об изучении

---

[44] Տ՛ես **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999, էջ 49, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920թթ., Եր., 2005, էջ 330:

[45] **Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյամարտը 1920-1921, Եր., 2000, էջ 351:

которой как в Армении, так и в диаспоре создалась богатая историографическая и мемуарная литература, составлени сборники документов, но интерес научного сообщества к этому вопросу не исчерпан. Историографические работы по этому вопросу можно разделить на три группы - советскую, постсоветскую и диаспорную. Авторы, предсталяюшие эти три группы, рассмотрели и оценили проблему падения Армении по-разному. Поэтому наша цель состояла в том, чтобы представить основные подходы этих трех направлений армянской историографии к вопросу о падении Армении.

Ara Azatyan , About the histography of the history of the fall of the first Republic of Armenia - The issue of the fall (sovietization) of the RA has always been in the centre of attention of historigraphy, and round that study historical and commemorative literature has been formed not only in Armenia, but also in diaspora. Collections of documents also have been formed, but up to now the scientific society is deeply interested in this issue. Historical works about this issue can be divided into three groups – soviet, post-soviet and diaspora. The authors introducing these three groupe, illustrated and esteemed the issue of the fall of the RA differently. So our aim is to introduce the main approaches of these directions of Armenian historigraphy about the fall of Armenia.

1979Թ. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ՍԱԹԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը մեծ հետք թողեց Իրանի նորագույն պատմության վրա: Հեղափոխությունը և հեղափոխության հաղթանակը փոփոխություններ առաջ բերեցին ինչպես Իրանում և տարածաշրջանում այնպես էլ համաշխարհային քաղաքականության մեջ: Միջազգային հանրության ուշադրությունը այս շրջանում կենտրոնացած էր Իրանում տիրող ներքաղաքական խնդիրների վրա, որոնք էլ առիթ ու պատճառ հանդիսացան հեղափոխության ծավալման համար:

Սույն հոդվածում փորձել ենք վերլուծել ու ներկայացնել իսլամական հեղափոխության նախադրյալները, Իրանում ստեղծված նախահեղափոխական իրադրությունը և կառավարության վարած քաղաքականությունը, ինչպես նաև դիտարկել ենք արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունը: Իրանի իսլամական հեղափոխությունը կարելի է համարել 20-րդ դարի խոշորագույն իրադարձությունը: Այն համաշխարհային պատմության մեջ խաղացել է նոր ու առանձնակի դեր՝ հասարակության զարգացման հիմքում դնելով ժողովրդի դարավոր հոգևոր մշակույթը՝ իսլամը: Իրանական հեղափոխությունը, ինչպես նշել է իմամ Խոմեյնին[1], մյուսներից տարբերվում է ոչ միայն իր խնդիրներով, այլև պայքարի ձևերով: Հեղափոխության յուրահատկությունները բխում են նրա առաջացման նախապայմաններից և ունեցած պատմական դերից, այդ երկրի հոգևոր զարգացման աստիճանից ու միջազգային այն իրադրությունից, որտեղ այդ պետությունը հայտնվել էր տվյալ ժամանակաշրջանում: 20-րդ դարի 70-ական թթ. կեսերին իրանական հասարակությունն ընկել էր խորը ճգնաժամի մեջ, որը համակել էր երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները: Չնայած նրան, որ 1970-ական թթ. կեսերին, շահի իշխանությունն ամուր ու զանգվածային էր թվում, արդեն 1977 թ. կեսերին սկսվեցին սոցիալական բողոքներ, որոնք գնալով վերածվում էին հեղափոխական տենդի: 1977 թ. մայիսից մինչև 1978 թ. հունիսը ընկած ժամանակահատվածում շահական վարչակարգը անհանգստացած չէր, քանի որ այդպիսի բողոքի ակցիաներն, ըստ

[1] Իմամ Խոմեյնին (Ռահ) ծվել է 1902 թ: Ծնվել և իր մանկությունն է անցկացրել սրբազան Խոմեյն քաղաքում, որը գտնվում է Թեհրանից 400 կմ դեպի հարավ: Հայրը եղել է հոգևորական: Մայրը հանրահայտ հոգևորական՝ Աղա Միրզա Ահմադ Խանսարի դուստրն էր: Իմամ Խոմեյնու հայրը բռնությունների դեմ պայքարի պատճառով գնդակահարվել է, երբ նա դեռևս 4 ամսական էր: Խոմեյնին ընտանիքի վերջին երեխան էր, իսկ ահա նրա ավագ եղբայրը՝ Մուրթազան եղել է նրա արաբական քերականության և տրամաբանության առաջին ուսուցիչը: 19 տարեկանում տեղափոխվել է Արաքի հոգևոր ճեմարանը և ուսուցանել է հոչակավոր հոգևորականներ՝ այաթոլլահ Նուրոլահ Արաղի և այաթոլլահ Շեյխ Աբդոլքարիմ Հայերու դպրոցը: Այնուհետև, երբ այաթոլլահ Խոմեյնին տեղափոխվել է Ղում հոգևոր կենտրոն, հենցայստեղ էլ նա ձևավորվում է որպես գաղափարախոս նեհետագայում նաև ականավոր հասարակական ու քաղաքական գործիչ:(Rajaee F., Islamism and Modernism: The Changing Discourse in Iran,The university of Texas at Austin, Modern Middle East Serires, No. 24, Texas 2007).

ղեկավարության, որևէ վտանգ չէին ներկայացնում. դրանք հիմնականում կազմակերպվել էին հոգևորականության կողմից[2]: Իրանում հեղափոխության կազմակերպումը պատկերացնելու համար պետք է վերլուծել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, շահի վարած քաղաքականության բացասական դերը, Իրանում օտարերկրացիների ազդեցության ընդլայնումը, նրանց կողմից իրականացվող թալանն ու բռնությունները: Իրանի շահը՝ Մոհամմադ Ռեզա Փեհլևին, (1941-1979 թթ.) մեծ ուշադրություն էր դարձնում զինված ուժերին: Նա ժամանակի ընթացքում ստեղծեց հզոր զինված ուժեր, մինչդեռ ոմանք այն կարծիքն ունեն, որ Իրանում շահական բանակը թույլ էր, այդ պատճառով էլ հեղափոխությունը հաղթեց[3]: Շահի վարած քաղաքականության շնորհիվ Իրանի՝ ԱՄՆ-ից զենքի գնման ցուցանիշները տարեց տարի ավելանում էին, իհարկե, այս քաղաքկանությունը ձեռնտու էր ԱՄՆ-ին, ով, զինելով Իրանին, ապահովում էր Իրանից իր երկիր ներմուծվող նավթի մատակարարումը, և բացի այդ էլ ապահովության երաշխիք էր տարածաշրջանում որևէ հակաամերիկյան գործունեության ծավալման դեմ, ինչպիսին կարող էր լինել Խորհրդային Միության ազդեցության տարածումը տարածաշրջանում: Բացի այդ՝ պաշտոնական Վաշինգտոնն այսպես կարողանում էր պահել իր վերահսկողությունը Իրանի ռազմական գործողությունների վրա[4]: Իրանում յուրահատուկն այն էր, որ բանակը պաշտպանում էր ոչ այնքան երկրի սահմանները, որքան անմիջապես գահը՝ շահին: Շահն իր պաշտպանությունն ապահովում էր ոչ միայն բանակի և ոստիկանության ուժերով, այլև գաղտնի կազմավորման՝ ՍԱՎԱԿ-ի միջոցով /ساواک, short for سازمان اطلاعات و امنیت کشور Sāzemān-e Ettelā'āt va Amniyat-e Keshvar, Organization of National Security and Information /, որի հիմանական նպատակն էր սահմանափակել մարդկանց ազատությունը, կանխել հակաշահական ընդվզումները, ճնշել Իրանի ժողովրդի դիմադրությունը: Այսպիսի պայմաններում անհրաժեշտ էր Իրանում ծագած համընդհանուր պետական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային ճգնաժամը հնարավորինս հաղթահարել և այս երկրի համար նոր հորիզոններ բացել միայն արմատական կառուցվածքային վերափոխումների միջոցով, որն իրագործեց հոգևորականությունն իր առաջնորդի՝ Այաթոլլահ Ռուհոլլահ Մուսավի Խոմեյնիի ղեկավարությամբ[5]: Հարկավոր է նշել, որ Իրանի ղեկավար շրջանների վարած քաղաքականության հետևանքով նավթային աննախադեպ եկամուտների ժամանակաշրջանն Իրանի հասարակության համար հանդիսացավ

---

[2] **Gülriz Şen**, Post-Revolutionary Iran's Foreign Policy Toward The United States: A Historical Sociological Analiysis of State Transformation and Foreign Policy,Middle East Technical University Press, September 2013, p. 117-118.

[3] Trl., By **S. Moosavi:** The Islamic revolution of Iran: A Sociological study, Vol.1, London, AL HODA 2001, p. 68.

[4] **Ramazani R. K.,** The US and Iran. The Patterns of Influence, N.Y., 1982, p. 34.

[5] **Հովհաննիսյան Ն.,** Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Եր., 2004, էջ 24:

սոցիալ-քաղաքական ճգնաժամի նախաշեմ: Մի կողմից շատ էր զգացվում որակավորված մասնագետների պակասությունը, մյուս կողմից արագորեն տարածվում էր գործազրկությունը, և նկատվում էր բնակչության մեծամասնության կենսամակարդակի արագ անկում: Աշխատավոր զանգվածների վիճակն ավելի էր վատանում, իսկ երկրում բարձրանում էր դժգոհության ալիք կառավարման մարմինների նկատմամբ: Այս ամենի համատեքստում խորանում էին երկրի ֆինանսատնտեսականխնդիրները: Շահը ֆինանսական սուր ճգնաժամի մեղքը բարդեց Իրանում գործող միջազգային նավթային մոնոպոլիաների վրա՝ նրանց մեղադրելով, որ չեն կատարել իրենց խոստումներն արտահանվող նավթի վերաբերյալ: Երկրում լայն ծավալ էին ընդունել կոռուպցիան, գանձագողությունը, պետական միջոցների հափշտակումը: Այս բոլորի ֆոնի վրա ուժեղանում էին միապետական իշխանության մեկուսացումը և զանգվածային դժգոհությունը շահի բռնապետական քաղաքականության նկատմամբ: Շահական վարչակարգն անզոր գտնվեց հաղթահարելու երկրի առջև ծառացած տնտեսական և սոցիալական խնդիրները, ուստի դժգոհողների նկատմամբ դիմում էր խստագույն հետապնդումների քաղաքականությանը: Շահը լայնորեն օգտագործում էր գաղտնի ոստիկանության՝ ՍԱՎԱԿ-ի հզոր ու ծավալուն ապարատը՝ ցանկացած ընդդիմություն ճնշելու համար: Որպես այդ քաղաքականության արդարացում՝ միապետը ֆրանսիական «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում ասել էր. «Չկարծեք, որ ես անձամբ հանդիսանում եմ բացարձակապետության կողմնակից: Սակայն… ներկայումս երկրին անհրաժեշտ է իմ իշխանությունը»[6]: Դեռևս 60-70-ական թթ. հողային բարեփոխումները հոգևորականությանը զրկել էին հսկայական չափերի հասնող վակուֆային /մզկիթապատկան/ կալվածքներից: 1978 թ. կառավարությունը վերացրեց հոգևորականությանը հատկացվող դրամական նպաստը: Առհասարակ, նկատի ունենալով շիիթական հոգևորականության քաղաքական հավակնությունների ծավալները, շահն աշխատում էր հետևողականորեն իջեցնել նրանց քաղաքական կարգավիճակը և պետության մեջ ունեցած կշիռը: Հարկ է նշել, որ արևմտյան աթեիզմի և «անհավատ օտարերկրացիների» ներթափանցումն Իրան հոգևորականությունը դիտում էր որպես ավանդական բարքերի ու սովորույթների աղճատում ու ոչնչացում, իսլամական նորմերից հեռացում և բարոյազրկում: Երկրի փրկությունը և առաջադիմությունը հոգևորականությունը տեսնում էր բացառապես «իսլամական կառավարություն» և «իսլամական հասարակություն» ստեղծելու մեջ: Դա դիտվում էր նաև որպես ազգային համախմբման միակ և եզակի հնարավորություն: Իրանի քաղաքական դաշտը շատ թույլ էր զարգացած: Արդեն 1970-ական թվականների սկզբին էլ ակնհայտ էր դառնում

[6] **Բայբուրդյան Վ.,** Իրանի պատմություն, Եր., 2006, էջ 698:

ամերիկյան ազդեցության մեծացումը Իրանում: ԱՄՆ-ը շահագրգռված էր Մերձավոր և Միջին Արևելքում զարգացող իրադարձությունների ողջ ընթացքը պահել իր ուշադրության տակ, քանզի ԱՄՆ-ը արդեն կախվածության մեջ էր Մերձավոր և Միջին արևելյան նավթից[7]: Նշենք, որ այս տարածաշրջաններից մատակարարվող նավթը միշտ էլ կարևորվել է Ամերիկյան նավթային հաշվեկշռում: Ինչպես նշվել է ԱՄՆ Պաշտպանության նախարարության 1978-1979 թթ. պաշտոնական զեկույցում. «ԱՄՆ-ի կախվածությունը նավթի արտաքին աղբյուրներից ավելի էր մեծանում, ինչը ԱՄՆ-ին ավելի էր շահագրգռում Մերձավոր և Միջին Արևելքում կատարվող բոլոր իրադարձություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերել»[8]: Պետք է նշել, որ Իրանում չկային լավ կազմակերպված և հեղինակություն ունեցող կուսակցություններ, որոնք ի վիճակի լինեին ոտքի հանելու և իրենց հետևից տանելու հոծ զանգվածներին: Գործող քաղաքական կազմակերպությունները թույլ էին և շատ սահմանափակ: Անկազմակերպ էր բանվորական և գյուղացիական բնակչությունը, թույլ էր իրանական բուրժուազիան, որի մի աչքն անընդհատ շահնշահի կողմն էր՝ նրա բարյացակամությունը շահելու ակնկալությամբ: Քաղաքական ուժ էր նաև բանակը, որը ծառայում էր միայն միապետին: Բավականին ուժեղ էին ազգային անվտանգության ծառայությունների դիրքերը, որոնք ահ ու սարսափ էին տարածում հասարակության մեջ և հավատարմորեն ծառայում էին միապետին: 70-ական թթ. առաջին կեսին քաղաքային բնակչության շրջանում առավել մեծ հեղափոխական ակտիվություն էր դրսևորում ուսանողությունը: Նրանցից շատերը, դժգոհ լինելով երկրի քաղաքական դրությունից, ուսումնական հաստատություններն ավարտելուց հետո գերադասում էին հեռանալ երկրից, իսկ նրանք, ովքեր սովորում էին արտասահմանում, առհասարակ հրաժարվում էին վերադառնալ հայրենիք: Նման պայմաններում միապետության սոցիալական բազան աստիճանաբար սահմանափակվում էր: Ըստ էության, թվում էր, թե շահական իշխանության միակ հուսալի հենարանը մնում էր բանակն ու գաղտնի ոստիկանությունը[9]: Հսկայական բանակն ապահովված էր գեր ժամանակակից զենքերով, իսկ անհրաժեշտության դեպքում նրանց օգնության էր գալիս նաև գաղտնի ոստիկանությունը: 1975 թ. մարտին շահը հայտարարեց, որ քաղաքական բոլոր կուսակցություններն ու խմբավորումները ցրվում են և ստեղծվում է միակուսակցական համակարգ: Կազմակերպվեց «Հեզբ-ե Ռասթախիզ-ե մելլաթ-ե Իրան» («Իրանի ժողովրդի վերածնություն») կուսակցությունը, որը, ըստ շահի, կոչված էր խորհրդանշել զանգվածների «ներդաշնակ» մասնակցությունը քաղաքականությանը և նպաստել նրա

[7] **Ramazani R. K.,** The US and Iran. The Patterns of Influence. N.Y., 1982, p.34.
[8] US Departmant of Defence Annual Report, Fiscal Year 1979, Feb. 2, 1978, Wash., 1978, p.16.
[9] **Abrahamian E.,** Iran Between Two Revolutions, New Jersey, 1983, p. 496.

մոբիլիզացմանը ազգի «արդիականացման» համար: Այդ կուսակցության հիմնական գաղափարական-քաղաքական սկզբունք հայտարարվեց հավատարմությունը «շահնշահական կարգին», սահմանադրությանը և «շահի ու ժողովրդի հեղափոխության» ծրագրին[10]: Սակայն նոր կուսակցությունը չկարողացավ իրականացնել իր առջև դրված խնդիրը՝ դառնալ մի կազմակերպություն, որի մեջ լուծվեին բոլոր ընդդիմադիր տեսակետները: 1978 թ. հոկտեմբերի 2-ին «Ռասթախիզը» ցրվեց և դադարեց գոյություն ունենալուց: Շահը որոշեց իրականացնել աստիճանական ազատականացման քաղաքականություն: Թույլ տվեց խոսքի ազատություն և երկրում որոշ ընդդիմության գոյություն: Ազատականացման քայլերն ու «արևմտականացման» հախուռն ընթացքն ունեցան այն հետևանքը, որ վախի ու լռության պատը ճեղքվեց: Ընդդիմադիր ուժերը սկսեցին աճել հատկապես 1977 թ. ամռան ընթացքում: Իրանական մտավորականության շրջանում ծավալվեց սուր գաղափարական պայքար, որը հանդիսացավ երկրում հեղափոխական իրադրության ստեղծման գործոններից մեկը[11]: 1977 թ. աշնանը՝ նոյեմբերի 13-ին, շահը այցելեց ԱՄՆ: Սպիտակ տուն այցի ժամանակ նրա հակառակորդները բողոքի ելույթներ կազմակերպեցին, որի ժամանակ հնչում էին «մահ շահին», «դեմ ենք Ամերիկայի հետ իմպերիալիզմին» և այլ կարգախոսեր: Այս իրադարձությունները հեռարձակվեցին ոչ միայն ամերիկյան հեռուստաալիքներով, այլև ողջ աշխարհում, որն էլ ամրապնդեց ընդդիմության դիրքերն Իրանում[12]: Իրանի տարբեր քաղաքների փողոցներում անցկացվող բողոքի ակցիաները 1978 թ. հունվարին արդեն բազմապատկվեցին: Այս շրջանում հուզումներ եղան նաև աշխատավոր ժողովրդի շրջանում, քանզի քաղաքային վարձու աշխատանքի վճարը բավականին ցածր էր: Իրանում մեծ թիվ էր կազմում աշխատավոր դասը, որոնց մուտքն իսլամական հեղափոխություն հնարավոր դարձրեց հեղափոխության հաղթանակը, քանզի աշխատավոր խավը արդեն միացավ ոտքի ելած հոգևորականությանը, մտավորականությանը և ուսանողությանը. այսպիսով հասարակության բոլոր խավերը միացան մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, այն է իսլամական հեղափոխության հաղթանակը: 1978 թ. սեպտեմբերին Ջալեհ հրապարակում տեղի ունեցան զինված բախումներ, որոնք որակվում էին նաև որպես կոտորածներ: Գնալով բողոքի ցույցերը ավելի մեծ ծավալներ ստացան՝ ընդունելով համատարած բնույթ, որին արդեն սկսեցին մասնակցել հասրակության բոլոր խավերը: Բողոքի ցույցերը ուղեկցվում էին նաև համազգային գործադուլներով[13]:

---

[10] **Aldasam C.D.,** Relations Between The U.S. and Iran: United States Army War College: Pennsylvania 2013: p.4

[11] **Abrahamyan E.,** նշվ. աշխ., էջ 503:

[12] **Հարությունյան Բ.,** Իսլամական հեղափոխության պատմական գործընթացը, Իմամ Խոմեյնի -100. ՀՀ ԳԱԱ, Գիտաժողովի նյութերի ժողովածու, 1999, էջ 44:

[13] **Gülriz Şen**, նշվ.աշխ., էջ 119:

Հարկ է փաստել, որ այս շարժումն առաջին օրվանից ղեկավարում էր Իմամ Խոմեյնին: Իրաքում վտարանդության մեջ ապրող Այաթոլլա Խոմեյնին մշտապես ելույթներ էր ունենում շահական բռնատիրությանն «ամերիկյան իմպերիալիզմի» դեմ: Այդ ելույթներում նա առաջ էր քաշում Իրանում «Իսլամական հանրապետություն» ստեղծելու գաղափարը: Այս գաղափարների իրականացմանը հասնելու համար շահական կառավարության դեմ հոգևորականության պայքարի մեթոդները բազմապիսի էին՝ անօրինական հակակառավարական հրատարակչությունների տարածում, քարոզներ մզկիթներում, բացահայտ հանրահավաքներ և այլն: Խոշոր համալսարաններում սկսվեցին հանրահավաքներ և ցույցեր, իսկ 1977 թ. նոյեմբերի 23-ին կասկածելի պայմաններում մահացավ Խոմեյնիի ավագորդին՝ Հաջի Մուսթաֆան, ով 47 տարեկան էր, ում մահվան համար Խոմեյնին մեղադրեց շահական վարչակարգին և հատկապես ՍԱՎԱԿ-ին[14]: Բոլոր նշված իրադարձությունները կարող ենք ներկայացնել որպես նախահեղափոխական իրադրություն, որը պարարտ հող նախապատրաստեց բուն հեղափոխության համար: Կարող ենք վստահորեն ասել, որ «Իրանի Իսլամական հեղափոխությունը սկսվեց 1978 թ. հունվարի 7-ից», ինչպես գրված է եղել «Էտտելա» թերթի երեկոյան համարում: Այս ամենին էլ հաջորդեց Այաթոլլահ Խոմեյնիի տնային կալաքն ու Իրաքից վտարումը[15]: Այս ամենից բացի՝ 1977 թ. երկրում հասունացել էր նաև տնտեսական ճգնաժամ՝ նավթի գների ընդգծվածանկման հետևանքով, որն էլ այն կայծն էր, որից բռնկվեց Իրանի իսլամական հեղափոխությունը[16]:

Այսպիսով, Իրանում տեղի ունեցած հեղափոխությունն ուներ իր նախադրյալները: Երկրում առաջացած քաղաքական, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքականության խնդիրները պատճառ և առիթ հանդիսացան ժողովրդական լայն զանգվածներին համախմբվելու՝ հանուն Իրանում իսլամական հեղափոխության հաղթանակի:

Բանալի բառեր - Իսլամական հեղափոխություն, Իմամ Խոմեյնի, հեղափոխական նախադրյալներ, շահ Մոհամմադ Ռեզա Փեհլևի:

Սաթիկ Ղուկասյան, 1979թ. Իրանի Իսլամական հեղափոխության նախադրյալները - Ներկայացնելով Իրանի իսլամական հեղափոխության նախադրյալները նախ և առաջ պետք է կարևորել այն հանգամանքը, որ իսլամական հեղափոխությունը ուղղված էր Իրանում տիրող շահական վարչակարգի դեմ և հեղափոխության հաղթանակը Իրանի նորագույն պատմության ոսկե էջերից մեկն է համարվում: Իրանի ժողովրդին հեղփոխության տարիներին առաջնորդում

[14] **Khomeini, Ruhollah**, Islamic government, Tehran, 2005, p. 16.
[15] **Panahi M.H**.,նշվ. աշխ., էջ 41:
[16] **Nasr, Seyyed Vali Reza,** Forces of fortune, New York, London,Toronto,Sydney, Free Press 2009, p. 135.

էր իմամ Խոմեյնին: Այս հեղափոխությունը կարելի է համարել 20-րդ դարի ամենակարևոր իրադարձություններից մեկը: Իրանում 2500 տարվա թագավորական իշխանությունը տապալվեց և Իրանը հայտարարվեց իսլամական հանրապետություն՝ կառավարման հիմքում դնելով իսլամական սկզբունքները: Որպես իսլամական հեղափոխության արդյունք հիայտ եկավ պետության կառավարման նոր համակարգ, այն է՝կրոնական ժողովրդավարություն: Հեղափոխության հաղթական ավարտից հետո կարևոր և վճռորոշ ձայնը երկրում պատկանում էր միայն իրանցի ժողովրդին, քանզի հեղափոխության առաջնորդ իմամ Խոմեյնին հեղափոխության սկզբից իվեր հաշվի էր առնում իրանցի ժողովրդի կարծիքն ու տեսակետը: Խոմեյնին պետության կառավարման հիմնական սկզբունք հռչակեց «Ոչ Արևելք, ոչ Արևմուտք» կարգախոսը, որը դեռ գործում է Իրանի Իսլամական Հանրապետությունում: Հեղափոխության հաղթանակից ավելի քան 30 տարի անց Իրանը տնտեսապես ամենակախյալ երկրից վերածվեց տնտեսապես հզոր և ինքնավար երկրի:

Сатик Гукасян, Предпосылки Иранской Исламской революции 1979 года - Исламская революция во-первых была направлена против шахского режима. Надо отметить, что победа революций занимает особое место в всемирной истории .Народ Ирана во главе Имам Хомейни сотворил такую революцию, которую вправе можно отнести к числу важных событий 20-го века. После 2500 лет крушилась королевская власть и образовалась народная исламская Республика, в котором основываються исламские принципы, народовластие.В итоге революций в системе правления общества вводилась новая идея под названием <<религиозное народовластие>>. После победы революций стал решительным голос народа. В реальности победа революций является результатом правильного политического курса Имам Хомейни, поскольку глава революций дал большое значение народу и его взглядам. В его деятельности особое место занимает тезис <<ни Запад, ни Восток>>, который до сих пор используют в стране.После победы революций, спустя 30 лет Иран из зависимой экономической страны превратился в авторитарную, сильную ведущую страну.

Satik Ghukasyan, The prerequisites of the 1079 Iran Islamic revolution - First of all the Islamic Revolution directed against the regime of Shah, and the victory of the revolution is one of the brightest pages of Iran's history.The Iranian people, led by Imam Khomeini, carried out a revolution that could be considered one of the most important events of the twentieth century.The 2,500-year rule of the kingdom collapsed,an Islamic republic was established based on Islamic principles, democracy and the principles of the republic.As a result of this revolution, a new concept was introduced in the system of public administration - "religious democracy". After the revolution's victory, the important and decisive voice was the people.In fact, the

victory of the revolution was the result of the right and co-operation of Imam Khomeini because the revolution leader took into consideration the people's opinion.The key motto of his activity was "No West, no East", which is still functioning in Iran.Over the next 30 years after the victory of the Islamic Revolution, Iran has turned into an economically autonomous, powerful and advanced state from the most economically powerful country.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-1998 թթ.)

ՍԵՐԳԵՅ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունը անկախության վերականգնումից հետո ձեռնամուխ եղավ դիվանագիտական հարաբերությունների ձևավորմանը աշխարհի տարբեր երկրների հետ: ՀՀ անկախության հռչակագրի 6-րդ կետում նշվում էր. «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը»:[1] Ելնելով այս հիմնադրույթից ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը դարձավ Արևելյան Եվրոպայի երկրների հետ դիվանագիտական, քաղաքական, մշակութային կապերի հաստատումը: Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը ԽՍՀՄ տարիներին համարվել էին սոցիալիստական ճամբարի մի մասը և այդպիսով գտնվել էին միևնույն համակարգի մեջ: Այս առումով բացառություն չէր նաև Բուլղարիայի Հանրապետությունը:

Հոդվածում փորձ է արվել ուսումնասիրել ՀՀ և ԲՀ միջև դիվանագիտական հարաբերությունների ձևավորումը և զարգացումը: Հայ-բուլղարական հարաբերությունները կարևորվում են ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցներում համագործակցության շրջանակներում:

Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունն ունի մոտ երկու հազարամյակի պատմություն: Այն հարուստ է փոխադարձ օգնության ու համագործակցության բազմաթիվ փաստերով, հոգևոր-մշակութային արտահայտված ընդհանրություններով:[2] Երկու ժողովուրդների փոխհարաբերությունները չեն սահմանափակվում միայն մերձեցման ու ռազմական համագործակցության փաստերով: Դարեր շարունակ հայերն ու բուլղարները ապրել ու ստեղծագործել են պատմական գրեթե միանման պայմաններում

ՀՀ և ԲՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. հունվարի 18-ին: Մինչ այդ 1991 թ. դեկտեմբերի 12-ին Բուլղարիան ճանաչեց ՀՀ անկախությունը: Այս առնչությամբ ՀՀ ԱԳ նախարարությունը հավաստում էր իր հարգանքը ԲՀ դեսպանությանը և իր խորին շնորհակալությունը հայտնում

[1] ՀՀ Անկախության հռչակագիր, http://www.gov.am/am/independence/, (25.08.2018):

[2] **Ճինգոզյան Կ.,** Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից, Ե., 1966, էջ 9:

ԲՀ կառավարությանը՝ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչելու և երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու ցանկություն արտահայտելու կապակցությամբ: ՀՀ կառավարությունը միաժամանակ համոզմունք էր հայտնում, որ ՀՀ-ի և ԲՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը համապատասխանում է երկու կողմերի շահերին և կնպաստի միջազգային համագործակցությանը ու համընդհանուր խաղաղության ամրապնդմանը:[3] ԲՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Մ. Լյուբոմիռսկայային հղված նոտայում ՀՀ իշխանությունները վերահաստատում էին իրենց տրամադրվածությունը աշխատել ԲՀ կառավարության հետ տարբեր ոլորտներում ներառելով անվտանգությունը, կայունությունը և վստահությունը, գոյություն ունեցող անվտանգությունը և համագործակցությունը Եվրոպայում: Վերջիններս ցանկություն էին հայտնում հաստատել միջազգային հարաբերություններ այնպիսի նորմերի վրա որտեղ ամենակարևորը օրենքի գերակայությունն է, մարդու իրավունքների պաշտպանությունը և հիմնական ազատությունները՝ հենվելով հումանիզմի և ժողովրդավարության սկզբունքների վրա: Դրա խորացումը երկու երկրներում հիմք է տալիս նոր հնարավորությունների և բացում է համագործակցության լայն հնարավորություններ, հիմքում դնելով դարերի ավանդույթը և ընկերությունը բուլղար ու հայ ժողովուրդների միջև:[3]

Այս ամենը հաշվի առնելով ՀՀ կառավարությունը հայտարարում էր.

1. ԲՀ հարաբերությունները ՀՀ հետ հիմնավորվում են միջազգային ճանաչված նորմերի և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա. ավելի կոնկրետ անկախության սկզբունքի և տարածքային ամբողջականության, հավասարության, փոխադարձ չմիջամտամանը ներքին գործերին և խնդիրների խաղաղ կարգավորմանը:
2. Երկրները կզարգացնեն երկարաժամկետ և կայուն հիմքով փոխշահավետ համագործակցություն քաղաքականության, առևտրի, տնտեսական, մշակութային, հումանիտար, տեղեկատվական և բնապահպանական, ինչպես նաև կրթության, առողջապահության, տուրիզմի և սպորտի ոլորտներում:
3. Կողմերը ցանկություն ունեին պահպանել կանոնավոր հարաբերություններ կառավարական մակարդակում, ինչպես նաև հարաբերություններ ձևավորեն տարածքային միավորների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:
4. Կողմերը կաշխատեն զարգացնելու միջխորհրդարանական հարաբերությունները և փոխանակումներ կանեն:

[3] АМВнР (Архив Министри на външните работи), д. 10, оп. 49-3, а. е. 230, л. 7.

[3] Նույն տեղում, թ. 11:

5. Կողմերը կփորձեն իրենց միջև ուղղիղ կապ հաստատել և զարգացնել հարաբերությունները հանրային-քաղաքական, մշակութային, կրթական, կրոնական և այլ կազմակերպություններում:
6. Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն տնտեսության մեջ փոխադարձ հետաքրքրություն առաջացնող ոլորտների զարգացմանը, շուկաների ակտիվացմանը փոխադարձ տնտեսական և շուկայական կապերին, այս նպատակների իրականացման համար կպատրաստեն անհրաժեշտ բոլոր իրավա-պայմանագրային հիմքերը:
7. Կողմերը կապահովեն ամենաշահավետ տնտեսական, ֆինանսական և իրավաբանական պայմանները, որպես նախապայման տարբեր հաշվապահական գործունեությունները ապահովելու համար, որպեսզի պաշտպանեն միասին կապիտալի ներդրման և ստեղծեն միասնական ընկերություններ, երրորդ երկրների հետ: Նրանք կգործեն որպեսզի հաստատեն գործնական համագործակցություն մարզային և տեղական մակարդակներում, ինչպես նաև կապեր կստեղծեն երկու երկրների իրավաբանական և ֆիզիկական անձերի միջև:
8. Կողմերը ակտիվ կգործեն նաև Սևծովյան համագործակցության ուղղությամբ, կողմերի համար կարևոր է անցումը շուկայական հարաբերություններին և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրումը:
9. Կողմերը կգործեն նաև շրջակա միջավայրի պահպանման և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ոլորտներում, կերաշխավորեն փոխադարձ էկոլոգիական անվտանգություն, խուսափեն անդրազգային աղտոտումներից և հատուկ ուշադրություն դարձնեն Սև ծովի ջրերի մաքրությանը:
10. Կողմերը կունենան կանոնավոր քննարկումներ տարբեր մակարդակներում կապված երկողմ հարաբերությունների և միջազգային խնդիրներին որոնք փոխադարձ հետաքրքրություն են առաջացնում, և միջազգային կազմակերպություններում կհամագործակցեն, որի անդամներն են կամ կդառնան:[4]

1992 թ. հունվարի 18-ին ստորագրվեց արձանագրություն Բուլղարիայի և Հայաստանի ԱԳ նախարարությունների միջև:[5] Սոֆիայում ՀՀ արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը և Բուլղարիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ստոյան Գաննը ստորագրեցին Հայաստանի և Բուլղարիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մա-

[4] Նույն տեղում, թ. 12-13:

[5] ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ), Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 218, թ. 71:

սին և երկու երկրների արտգործնախարարությունների միջև կոնսուլտացիաներ անցկացնելու վերաբերյալ արձանագրություններ:[6] Փաստաթղթում նշվում էր, որ Բուլղարիայի կառավարության և Հայաստանի կառավարությանը ցանկանում են հաստատել ընկերական հարաբերություններ և զարգացնել փոխադարձ հավասար համագործակցություն, որոնք ուղղված են ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի և այլ փաստաթղթերի հիման վրա, որոնք ուղղված են Եվրոպայում անվտանգությանը և համագործակցությանը :[7]

ՀՀ արտաքին գործերի նախարարության մամլո քարտուղար Գառնիկ Բաղալյանի տեղեկությունների համաձայն, փաստաթղթերի ստորագրումից հետո տեղի ունեցած բանակցությունների ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց երկու երկրների միջև բարեկամության և համագործակցության վերաբերյալ պայմանագրի մշակման, հյուպատոսական կոնվենցիայի և Երևանում ու Սոֆիայում դեսպանատներ բացելու վերաբերյալ:[8]

ՀՀ արտաքին գործերի նախարար Ռ. Հովհաննիսյանին, փոխնախարար Ա. Նավասարդյանին, եվրոպական երկրների բաժնի պատասխանատու Ք. Տեր-Ստեփանյանին և պատվիրակության մյուս անդամներին ընդունեց և զրույցներ ունեցավ նաև Բուլղարիայի նախագահ Ժելյու Ժելևը, վարչապետ Ֆիլիպ Դիմիտրովը, Բուլղարիայի խորհրդարանի արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Յորդանովը: Զրույցների ընթացքում շոշափվեցին հայ-բուլղարական պատմական կապերի ամրապնդման և զարգացման հեռանկարների, երկու երկրների միջև երկկողմ փոխշահավետ համագործակցության շրջանակների ընդլայնմանն առնընչվող հարցեր, մասնավորապես՝ առևտրատնտեսական, տրանսպորտի, գիտատեխնիկական, մշակութային և այլ բնագավառներում:[9]

Կողմերը պայմանավորվեցին համագործակցել ՄԱԿ-ի և Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի, սևծովյան երկրների համագործակցության և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Շոշափվեցին նաև Արցախի հիմնահարցի լուծման ուղիները, նշվեց դրանում միջազգային հանրության և խաղաղասիրական ուժերի մասնակցության անհրաժեշտությունը:[10]

Այսպիսով, սկսվեց ՀՀ և ԲՀ միջև երկկողմ դիվանագիտական ու քաղաքական հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործընթացը: Հայ-բուլղարական հարաբերությունների զարգացումը պայմանավորված էր նաև

---

[6] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, թիվ 12 (357), 21 հունվարի 1992 թ., էջ 3:
[7] АМВнР, д. 10, оп. 49-3, а. е. 230, л. 15.
[8] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,, թիվ 12 (357), 21 հունվարի 1992 թ., էջ 3:
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում:

բուլղարահայ համայնքի քանակական աճով ու ստվարացմամբ և երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրա ակտիվության աճով:[11] Ըստ Բուլղարիայի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հայերի թիվը 2001 թ. դրությամբ կազմել է 10 832:[12] Սակայն հայկական աղբյուրներում նշվում է ավելի մեծ թիվ մոտ 50 հազար[13], որոնցից շուրջ 35 հազարը[14] անկախության առաջին տասնամյակում արտագաղթածներն են:

ՀՀ-ի և ԲՀ-ի միջև հարաբերությունները զարգանում էին ինչպես միջպետական, այնպես էլ միջազգային համագործակցության ճանապարհով: Հայ-բուլղարական հարաբերություններում 1991-1998 թթ. կարևոր էր իրավապայմանագրային դաշտի ձևավորումը, միջազգային կառույցներում համագործակցությունը, քանզի երկու երկրներն էլ գտնվում էին հետխորհրդային տրանսֆորմացիայի ժամանակաշրջանում: ԽՍՀՄ փլուզումից և սոցիալիստական ճամբարի անկումից հետո կարևոր էր ընտրել այն ճանապարհը որով կզարգանային ԽՍՀՄ և նախկին սոցիալիստական երկրները: Հետևաբար, այնպիսի գործընթացների ժամանակ, ինչպիսին է հետխորհրդային տրանսֆորմացիան, երբ նախընթաց ժամանակահատվածում մեկ միության մեջ միավորված են եղել բոլորովին տարբեր հետագիծ ունեցած և անգամ տարբեր քաղաքակրթությունների պատկանած երկրներ ու ժողովուրդներ, այդ միության քայքայումից հետո նորանկախ երկրների հետագա ընթացքը որոշող մեկնակետը պետք է լինի այն «տեղը», որտեղ նրանք գտնվել են մինչև միավորման գործընթացը[15]: Այս առումով Հայաստանի և Բուլղարիայի պատմական անցյալը շատ տեղերում է զուգորդվել դեռևս վաղ անցյալից սկսած: Ուստի հարաբերությունների ձևավորման արդի ժամանակաշրջանում դա ևս կարևորագույն տեղ էր զբաղեցնում:

Մինչև իրավապայմանագրային դաշտի ձևավորումը և նոր պայմանագրերի կնքումը երկու երկրները որոշեցին առաջնորդվել ԽՍՀՄ և Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության միջև 1976 թ. կնքված պայմանագրով:[16] Միաժամանակ ՀՀ Արդարադատության նախարարությունը իր պատրաստակամությունն էր հայտնում համագործակցել Բուլղարիայի կառավարության հետ և ակնկալում էր, որ այն կլինի բեղմնավոր և փոխշահավետ: ՀՀ Արդարադատության նախարար Վ. Ստեփանյանը հավաստում էր, որ կառավարությանը ներ-

---

[11] **Մինասյան Է.,** Հայ-բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ., «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Երևան, 2009, էջ 48-62:

[12] Население към 01.03.2001 г. по области и етническа група, http://www.nsi.bg/Census/Ethnos.htm, (12.08.2018).

[13] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 128: Մալխասյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, 2007, էջ 22:

[14] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 128:

[15] **Թորոսյան Տ.,** Ինքնության պահպանման խնդիրը տրանսֆորմացման գործընթացներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2006, № 1, էջ 3-21:

[16] АМВнР, д. 10, оп. 49-3, а. е. 227, л. 2.

կայացվել է նոր պայմանագրի կնքման նպատակահարմարությունը:[17] Հարկ է նշել, որ նոր պայմանագրի մշակման գործընթացը բավական երկարատև էր:

1993թ. սկսվել և շարունակվել են երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հենքի ստեղծման աշխատանքը: ՀՀ և ԲՀ համագործակցության լայն հեռանկարներ ունեն նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Բուլղարիան թեև բնակչությամբ և տարածքով մեծ երկիր չէ, սակայն միջազգային հարաբերություններում ակտիվ ներկայության պատկառելի փորձ ուներ:[18]

1993 թ. մայիսի 17-18-ը ՀՀ ԱԳ նախարարության պատվիրակության աշխատանքային խումբը եղավ Բուլղարիայում այդ երկրի արտգործնախարարության հրավերով: Բուլղարիա կատարած այցելության ընթացքում բանակցություններ տեղի ունեցան երկկողմ հարաբերություններ հաստատելու համար, քննարկվեցին միջպետական պայմանագրերի նախագծերը: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին նաև Սոֆիայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն բացելու հարցը: Նախատեսվեց մի շարք տնտեսական պայմանագրերի, ինչպես նաև մշակութային համագործակցության վերաբերյալ պայմանագրերի կնքում Հայաստանի և Բուլղարիայի միջև:[19]

1994 թ. հունիսին Սոֆիայում բացվեց ՀՀ դեսպանությունը՝ հայտնի գրող և հրապարակախոս Սևդա Սևանի գլխավորությամբ, որը բավական ակտիվ գործունեություն իրականացրեց հայկական համայնքի կյանքը կազմակերպելու և դժվար խնդիրները լուծելու համար: [20] Բուլղարիան, ինչպես և Հայաստանը այս տարիներին գտնվում էին բավական դժվարին սոցիալ-տնտեսական իրադրության մեջ և հայկական համայնքի գոյության պահպանության տեսանկյունից դեսպանության բացումը կարևորագույն իրողություն էր:

1994թ. ապրիլի 25-26ը ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը պաշտոնական այցով մեկնեց Բուլղարիա: Սոֆիայում վերջինս հանդիպումներ ունեցավ Բուլղարիայի արտաքին գործերի նախարար Ստանիսլավ Դասկալովի, Ազգային ասամբլեայի փոխնախագահ Յորդան Շկոլագերսկու, Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Վալենտին Կարաբաշևի հետ:[21] Այցը նախապատրաստվել էր դեռևս 1993 թ. դեկտեմբերին, երբ Սոֆիայում էր գտնվում ՀՀ ԱԳՆ պատվիրակությունը Սևծովյան տնտեսա-

---

[17] Նույն տեղում:

[18] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ1:

[19] «Ազգ» օրաթերթ, «Բուլղարիայի և Հունաստանի հետ ավելի սերտ հարաբերություններ», թիվ 103 (354), 3 հունիսի 1993 թ., էջ 2:

[20] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ1:

[21] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ արտգործնախարարի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 79 (943), 28 ապրիլի 1994 թ., էջ 1:

կան համագործակցության գագաթաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:[22] Հանդիպումների ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները, ընդգծվեցին տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտությունը: Հանդիպումների ընթացքում նշվեց, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հայ-բուլղարական հարաբերությունները պետք է կառուցվեն նոր մակարդակով: Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին զարգացնել համագործակցությունը ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի, ՍԾՏՀ շրջանակներում:[23] Քննարկման առարկա դարձավ նաև Բալկաններում տիրող իրավիճակը և Բոսնիայի հակամարտությունը միջազգային հանրության մասնակցությամբ լուծելու ուղիները: ԲՀ ԱԳ նախարար Ս. Դասկալովին Վ. Փափազյանը հանձնեց «Համագործակցության և բարեկամության մասին» պայմանագրի հայկական նախագիծը: Ազգային ասամբլեայի փոխնախագահի հետ հանդիպման ժամանակ ընդգծվեց երկու երկրների օրենսդիր իշխանությունների շփումների և համագործակցության անհրաժեշտությունը: Այս հանդիպման ընթացքում հավանության արժանացավ նաև խորհրդարանային «Բարեկամության խմբերի» ստեղծման գաղափարը, կարևորվեց երկկողմ հարաբերությունների իրավական բազայի ստեղծումն արագացնելու անհրաժեշտությունը:[24]

Հայ-բուլղարական պաշտոնական պատվիրակությունների փոխադարձ այցերի շնորհիվ 1994 թ. սկսած՝ երկու երկրների միջև ստորագրվեցին երկու տասնյակից ավելի միջպետական համաձայնագրեր:[25] Այդ համաձայնագրերից առաջինը վերաբերում էր երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցությանը:[26]

1995 թ. կարևոր տարեթիվ էր հայ-բուլղարական հարաբերությունների զարգացման դիտանկյունից: Հայաստանի համար խիստ կարևորվեց Բուլղարիայի հետ համագործակցությունը, քանզի 1995 թ. դրությամբ Սոֆիան դիվանագիտական հարաբերություններ ուներ 130 պետությունների հետ և մոտ 300 միջազգային կազմակերպությունների անդամ էր:[27] Սա լայն ասպարեզ էր բացում Հայաստանի համար Արևելյան Եվրոպայի երկրների միջոցով դեպի

---

[22] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 218, թ. 71:

[23] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ արտգործնախարարի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 79 (943), 28 ապրիլի 1994 թ., էջ 1:

[24] Նույն տեղում:

[25] **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Ե., 2014, էջ 371:

[26] Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԲՀ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին, Երևան , 2002, էջ 347-349:

[27] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի » , թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

աշխարհի տարբեր ծայրեր և միջազգային կազմակերպությունների հետ շփումներ հաստատելու համար:

1995 թ. փետրվարի 12-15-ը Երևան ժամանեցին Բուլղարիայի արտաքին գործերի, ֆինանսների, էկոնոմիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության և արդարադատության նախարարությունների փորձագետների 13 հոգուց բաղկացած պատվիրակությունը: ՀՀ արտգործնախարարության մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանը մամուլի ասուլիսում նշեց, որ հայ-բուլղարական հարաբերությունները ջերմ են ու բարեկամական և զարգացման մեծ պոտենցիալ ունեն:[28]

ՀՀ նախագահի Բուլղարիա այցի նախապատրաստական աշխատանքների համար կարևոր էր 1995 թ. փետրվարի 23-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդիպումը Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ս. Սևանին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին դեսպանատան աշխատանքները և ՀՀ նախագահի՝ Բուլղարիա պաշտոնական այցելության ծրագիրը:[29]

Ապրիլի 10-ին Բուլղարիա մեկնած ՀՀ պատվիրակությունը հանդիպեց Բուլղարիայի նախագահ Ժելյու Ժելևի, վարչապետ Ժան Վիդենովի, խորհրդարանի նախագահ Բլագովեստ Սենդեվի, ինչպես նաև բուլղարահայ համայնքի հետ: ՀՀ պաշտոնական պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարար Վ. Փափազյանը, ներքինն գործերի նախարար Վանո Սիրադեղյանը, Էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանը, տրանսպորտի և խորհրդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը, Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Սևդա Սևանը, պաշտոնական այլ անձինք:[30]

Երկու երկրների նախագահների բանակցությունների արդյունքում ստորագրվեց 10 փաստաթուղթ:[31] Գլխավոր փաստաթուղթը՝ երկու երկրների միջև բարեկամության և համագործակցության միջպետական պայմանագիրն էր, որը ստորագրեցին երկու երկրների ղեկավարները: Այնուհետև ստորագրվեցին քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին, եկամուտների և ակցիզի կրկնակի հարկման մասին, միջկառավարական օդային հաղորդակցության, կապիտալ ներդրումների շահագործման և փոխպաշտպանության, միջազգային ավտոմոբիլային փոխադրումների, բույսերի կարանտինի և պաշտպանության բնագավառում համագործակցության և

---

[28] «Ազգ» օրաթերթ, «Բուլղարիայի և Հայաստանի միջև սերտ համագործակցություն», թիվ 28 (782), 16 փետրվարի 1995 թ., էջ 1:

[29] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունելություն ՀՀ նախագահի մոտ» , թիվ 37 (1157), 24 փետրվար 1995 թ., էջ 1:

[30] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահը մեկնեց Բուլղարիա», թիվ 81 (1201), 11 ապրիլի 1995 թ., էջ 1:

[31] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Նախագահի այցելությունը Սոֆիա», թիվ 82 (1202), 12 ապրիլի 1995 թ., էջ 1:

անասնաբուժասանիտարական համագործակցության մասին պայմանագրեր ու համաձայնագրեր:

Փաստաթղթերից հատկապես կարևոր էր ՀՀ և ԲՀ միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին պայմանագիրը: Ըստ պայմանագրի կողմերը պարտավորվում էին զարգացնել իրենց հարաբերությունները և համագործակցությունը ինքնիշխան հավասարության, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնամխելիության, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքները և հիմնական ազատությունները հարգելու, ժողովուրդների իրավահավասարության և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքի, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքների հիման վրա:[32] Պայմանագիրը ուժի մեջ է մտել 1997 թ. նոյեմբերի 7-ից:[33]

Մյուս փաստաթղթերը հայկական կողմից ստորագրեցին ԱԳ նախարար Վ. Փափազյանը, ՆԳ նախարար Վ. Սիրադեղյանը, Էկոնոմիկայի նախարար Ա. Եղիազարյանը և տրանսպորտի ու հաղորդակցության նախարար Հ. Քոչինյանը: Ապրիլի 11-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և պատվիրակության անդամները Սոֆիայում ծաղկեպսակ դրեցին Անհայտ զինվորի հուշարձանին, այցելեցին Սբ. Ալեքսանդր Նևսկու տաճարը: Նույն օրը Լ. Տեր-Պետրոսյանը հանդիպում ունեցավ Բուլղարիայի վարչապետ Ժ. Վիդենովի հետ, որի ժամանակ մտքեր փոխանակվեցին երկու երկրներում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական վերափոխումների, տնտեսության ոլորտում փոխգործակցության հարցերի շուրջ: Նույն օրը ՀՀ նախագահը այցելեց նաև Սոֆիայի համալսարան: Տեղի ունեցած հանդիսավոր արարողությանը հաստատության ռեկտոր Իվան Կալովը նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հանձնեց Սոֆիայի համալսարանի պատվավոր դոկտորի կոչման վկայագիրը:[34]

1995 թ. ապրիլին ՀՀ նախագահի այցելության վերջին օրը ապրիլի 12-ին Լ. Տեր-Պետրոսյանը այցելեց Բուլղարիայի խորհրդարան՝ Ժողովրդական ժողով և հանդիպում ունեցավ նրա նախագահ, ակադեմիկոս Բլագովեստ Սենդովի հետ: Խորհրդարանում ելույթի ընթացքում ՀՀ նախագահը Բուլղարիայի խորհրդարանի պատգամավորներին ներկայացրեց Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը, տնտեսական բարեփոխումների ընթացքը, այն գործոնները, որոնք ազդում են մեր երկրի իրավիճակի վրա և որոնցով Հայաստանը տարբերվում է

---

[32] Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, Պայմանագիր ՀՀ և ԲՀ միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին, Երևան , 2002, էջ 480-484:

[33] Նույն տեղում, էջ 484:

[34] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Նախագահի այցելությունը Սոֆիա», թիվ 82 (1202), 12 ապրիլի 1995 թ., էջ 1:

վարչահրամայական հասարակարգից՝ ազատ, քաղաքացիական, ժողովրդավարական հասարակագի անցնող մյուս երկրներից, այդ թվում Բուլղարիայից: Նախագահն անդրադարձավ նաև տարածաշրջանային խնդիրներին, ներկայացրեց հանրապետության առաջիկայում ընդունվելիք Սահմանադրության նախագծի հիմնական դրույթները:[35]

Հայաստանում ստեղծված բարդ քաղաքական դրությունը, 1995 թ. Սահմանդրության ընդունում, խորհրդարանական, իսկ 1996 թ. նախագահական ընտրությունները, որոշակիորեն դանդաղեցրեցին ԲՀ հետ հարաբերությունների զարգացման արագ ընթացքը: Սակայն դա պայմանավորված չէր միայն ներհայաստանյան խնդիրներով, խնդիրներ կային նաև ԲՀ-ում, որտեղ անդադար կառավարությունների փոփոխություններ էին, այդ տարիներին այստեղ ուժեղացան թուրք քաղաքական գործիչները, իսկ որոշակի ժամանակահատված նույնիսկ վերջիններս ղեկավարեցին կառավարությունը: Այս դիտանկյունից կարևորվեց երկու երկրների հարաբերությունները Թուրքիայի հետ, քանզի երկուսն էլ ունեին հակասություններ այս երկրի հետ և համագործակցությունը այս ճակատում բավական կարևոր էր: Սակայն այստեղ Բուլղարիան վարում է զգույշ քաղաքականություն, քանզի Թուրքիան համարվում է Բուլղարիայի խոշորագույն տնտեսական գործընկերներից: Բուլղարիայում էին ապրում շուրջ 800 000 էթնիկ թուրքեր, որոնք մեծապես ազդում էին ինչպես Բուլղարիայի տնտեսական, այնպես էլ քաղաքական գործունեության վրա: Թուրքերը Բուլղարիայում երկրորդ էթնիկ խումբն են բուլղարներից հետո: Նրանք 8 տարի շարունակ Բուլղարիայի կառավարող կոալիցիայի անդամներ են եղել:[36] Բուլղարիայում կառավարական ճգնաժամի ժամանակահատվածում Ժելյու Ժելևը կառավարությունը կազմելու մանդատը հանձնեց Բուլղարիայում բավական կշիռ ունեցող թուրքական կուսակցությանը, որը պառլամենտում 3-րդ ուժն էր համարվում և, իբր հանդես էր գալիս որպես հավասարակշռող ուժ:[37] Այս պայմաններում հայկական կողմը նույնիսկ ստիպված էր հարաբերություններ հաստատել թուրք գործիչներ ընդգրկող բուլղարական կառավարություններում: Սակայն թուրքերը այստեղ հանդես էին գալիս գլխավորապես Բուլղարիայի Հանրապետության և տեղի թուրքական համայնքի շահերից ու հայերի համար դժվարություններ չէին առաջացնում:

Այնուամենայնիվ, քաղաքական հարաբերությունները որոշակի դադարից հետ սկսեցին վերականգնվել և դրա լավագույն ապացույցն էր 1997 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ նախագահի կողմից Բուլղարիայի ԱԳ նախարար Նադեժդա

---

[35] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահի պաշտոնական այցը Սոֆիա ավարտվեց» , թիվ 83 (1203), 13 ապրիլի 1995 թ., էջ 1:

[36] **Նահապետյան Հ.,** Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Ե., 2010, էջ 93:

[37] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիան Ամերիկա չէ, և հայերն այնտեղից կվերադառնան Հայաստան» , թիվ 71 (2028), 14 ապրիլ 1998 թ., էջ 3:

Միխայիլովայի և նրա գլխավորած պատվիրակության մի խումբ անդամների ընդունելությունը: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանը, Բուլղարիայում ՀՀ գործերի հավատարմատար Ս. Սևանը: Ն. Միխայլովան Հայաստանի նախագահին ներկայացրեց Բուլղարիայում անցկացվող բարեփոխումները և աջակողմյա կառավարության նվաճումներն անցած ժամանակաշրջանում: Անդրադառնալով տարածաշրջանային համագործակցությանը, Միխայլովան կարևորեց տրանսպորտային միջանցքի ծրագրին Հայաստանի մասնակցությունը:[38]

Լ. Տեր-Պետրոսյանը իր գոհունակությունը հայտնելով Միխայլովայի այցի առթիվ, նշեց, որ երկու երկրների խնդիրներն ընդհանուր են, ուստի՝ հասկանալի միմյանց համար: Պատմության ընդհանրությունը, ինչպես նաև բուլղարահայ համայնքի առկայությունը մերձեցնում են երկու երկրներին: Զրույցի ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունները, տնտեսական կապերի խորացման, երկու երկրների գործարարների շփման հնարավորությունները, Սևծովյան համագործակցության շրջանակներում հարաբերությունների զարգացումը:[39]

Նույն օրը Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը ևս ընդունեց Բուլղարիայի արտաքին գործերի նախարարին: Բ. Արարքցյանը անդրադառնալով հայ-բուլղարական հարաբերություններին, նշեց, որ այդ փուլում նկատվում են փոխշահավետ համագործակցության ընդլայնման հեռանկարներ: Այդ առնչությամբ Բուլղարիայի արտգործնախարարը նշեց, որ ստորագրված շուրջ 15 միջպետական համաձայնագրերը ստեղծում են կայուն հիմք, որի վրա կխարսխվեն երկկողմ քաղաքական և տնտեսական հարաբերությունները: Բ. Արարքցյանը նաև հույս հայտնեց, որ միջխորհրդարանական կապերի ընդլայնումը կօժանդակի միջպետական համագործակցության զարգացմանը, այդ թվում միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Բուլղարիայի արտգործնախարարը հավաստիացրեց, որ իր երկիրը կանի հնարավորը նպաստելու համար եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրմանը: Երկուստեք կարևորվեց նաև միջազգային և տարածաշրջանային անվտանգության և համագործակցության հարցերում փոխգործակցությունը, քննարկվող մի շարք հարցերի վերաբերյալ արձանագրվեց մոտեցումների ընդհանրություն:[40]

Խոսելով տարածաշրջանային հիմնախնդիրների, մասնավորապես, ղարաբաղյան հակամարտության մասին, Աժ նախագահ Բ. Արարքցյանը նշեց, որ ուժային լուծումները քաղաքական պարտադրանքի ձևով չեն կարող

---

[38] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահն ընդունեց Բուլղարիայի արտգործնախարարին» , թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1:

[39] Նույն տեղում:

[40] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունելություն Ազգային ժողովի նախագահի մոտ» , թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1:

հանգեցնել հիմնախնդրի հանգուցալուծմանը, առանջին դեպքերում կարող են առաջ բերել հակազդեցություն: Նա կարևորեց հակամարտող կողմերի միջև անմիջական փոխշփումները՝ բանակցային գործընթացի շարունակությունը: Երկուստեք հույս հայտնվեց, որ երևելաեվրոպական և կովկասյան տարածաշրջաններում կայունության և խաղաղության ամրապնդմանը կնպաստեն տնտեսական համագործակցության զարգացումը և բարի կամքի դրսևորումը: Ընդունելությանը ներկա էին նաև ՀՀ ԱԳՆ փոխնախարար Վարդան Օսկանյանը, Բուլղարիայիում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ս. Սևանը:[41]

Բուլղարիայի ԱԳ նախարարը իր այցի շրջանակներում հանդիպեց նաև ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանին: Ողջունելով հյուրերին, վարչապետն ընդգծեց, որ Հայաստանի և Բուլղարիայի միջև քաղաքական խնդիրներ գոյություն չունեն, ինչը հնարավորություն է տալիս առանց խոչընդոտների զարգացնել տնտեսական և մշակութային կապերը: Նրա խոսքերով, երկու ժողովուրդների միջև առկ է ջերմ համակրանք, և դա բարենպաստ մթնոլորտ է ստեղծում հարաբերությունների հետագա խորացման համար: Թեև Հայաստանի և Բուլղարիայի միջև ստորագրված են մի շարք համաձայնագրեր, որոնք որոշակի իրավական հիմք են ստեղծում երկկողմ հարաբերությունների զարգացման համար, սակայն, ըստ վարչապետի, դա դեռևս բավարար չէ, և անելիքները շատ են: Հանդիպման ընթացքում երկու երկրների միջև որպես հեռանկարային ոլորտներ նշվեցին տրանսպորտային անվտանգությունը, առողջապահությունը, մշակույթը: Կարևորվեց նաև Հայաստան-Վրաստան-Բուլղարիա եռակողմ համագործակցությունը:[42]

1997 թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի և Բուլղարիայի արտգործնախարարներ Ա. Արզումանյանը և Ն. Միխայիլովան արձանագրություն ստորագրեցին մի շարք պայմանագրերի վավերացման և փոխանակման մասին: Երկու երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարները ընդգծեցին, որ պայմանագրերով ստեղծվում են իրավական հիմքերը Հայաստանի և Բուլղարիայի հարաբերությունների համար:[43] Բանակցությունների ընթացքում նշվել է, որ Հայաստանը և Բուլղարիան կարող են համագործակցել ինչպես ՄԾՏՀ շրջանակներում, այնպես էլ տուրիզմի, տրանսպորտի, հանցագործության դեմ պայքարի և այլ ոլորտներում:[44] Հանդիպման ընթացքում Ն. Միխայլովային տրվեց նաև հավաստում, որ Հայաստանը 2002-2005 թթ. Բուլղարիային կաջակցի ՄԱԿ-ի

---

[41] Նույն տեղում:

[42] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Վարչապետն ընդունեց Բուլղարիայի դեսպանին» , թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1:

[43] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը կխորանա» , թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:

[44] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը կխորանա» , թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:

անվտանգության խորհրդի անդամ դառնալու հարցում: Բանակցությունների ընթացքում քննարկվեց նաև ԼՂ խնդիրը: Այս առնչությամբ Ն. Միխայիլովան հայտնեց, որ Բուլղարիան ողջունում է 1994 թ. ի վեր ղարաբաղյան ռազմաճակատում պահպանվող զինադադարը, պատրաստ է աջակցել հակամարտության կարգավորմանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերին և հանդես է գալիս հակամարտությունը բանակցությունների միջոցով կարգավորելու օգտին:[45]

Հարկ է նշել, Հայաստանի համար կարևոր էր նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ Բուլղարիայի վերաբերմունքը, ինչը մշտապես արծարծվում էր տարբեր տեսակի հանդիպումների ժամանակ: Դեռևս Ղարաբաղյան հակամարտության տարիներին Բուլղարիան մի քանի անգամ իր վերաբերմունքը արտահայտեց կոնֆլիկտի լուծման շուրջ և դա շարունակվեց նաև զինադադարի պայմանագրի ստորագրումից հետո: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ընդամենը երկու ամիս անց ԲՀ ԱԳ նախարար Ստոյան Գաննը ՀՀ իր պաշտոնակից Ր. Հովհաննիսյանին հղած նամակում նշում էր, որ Բուլղարիան անհանգստացած է և հետևում է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող զարգացումներով և պատրաստ է իր ուժերի ներածի չափով գործողություններ ձեռնարկել որպիսի խնդիրը լուծվի քաղաքական երկխոսությունների ճանապարհով, հիմք ընդունելով Միջազգային իրավունքի սկզբունքները և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքային տեսանկյունից, Բուլղարիայի Հանրապետությունը հարգանքով և հասկանալով է մոտենում առանձին երկրների բնակչության ինքնորոշմանը: Միաժամանակ Ս. Գաննը խնդրի լուծման ամենաընդունելի տարբերակը էր համարում որպես հիմք Հելսինկյան եզրափակիչ ակտը և այլ փաստաթղեր ուղղված ապահովության և համագործակցությանը Եվրոպայում: Այս ամենի հետ կապված բուլղարները աջակցում էին Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ կոնֆերանսին, որտեղ ուղիներ ճանապարհներ էին փնտրվում ճգնաժամը խաղաղ պայմաններում լուծելու և հետագա փոխադարձ զարգացում ապահովելու համար: Բուլղարիայի կառավարությունը կոչ էր անում անհապաղ կրակի դադարեցում, որով հնարավորություն կլինի մարդկային կորուստներից զերծ մնալ և ստեղծել շահավետ պայմաններ խնդիրը քաղաքական միջավայրում լուծելու համար:[46] Բուլղարիայի կառավարությունը այսպիսով փաստում էր, որ մի շարք փաստաթղթերի հետ միասին իրենց համար ընդունելի է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Հետագա տարիներին Բուլղարիան որդեգրեց ԼՂ հարցում ավելի հավասարակշիռ մոտեցում, ստատուս քվոն չխախտելու և Ադրբեջանի հետ

[45] Նույն տեղում:
[46] АМВнР, д. 10, оп. 49-3, а. е. 226, л. 3.

հարաբերությունները կայունության մեջ պահպանելու համար: Բուլղարիան Ադրբեջանի հետ ներգրավված էր մի շարք տարածաշրջանային ծրագրերում, որոնց վտանգումը խիստ անբարենպաստ ազդեցություն կունենար բուլղարների տնտեսական դրության վրա:

Վերը նշված հանդիպման ընթացքում ՀՀ արտգործնախարար Ա. Արզումանյանը ընդգծեց տարածաշրջանի երկրների միջև եռակողմ և քառակողմ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը: ԲՀ արտգործնախարարը նշել է, որ եվրոպական արժեքները լավ հիմք կարող են հանդիսանալ Հայաստանի և Բուլղարիայի համագործակցության համար: Կարևորելով իր՝ որպես Բուլղարիայի առաջին արտգործնախարարի այցը Հայաստան, Ն. Միխայլովան իրեն անվանել է բարի կամքի դեսպան Հայաստանում: «Քաղաքականությունը նոր պահանջներ է դնում մեր առջև և, ի պատասխան այս պահանջների, ես անհրաժեշտ համարեցի այցելել Հայաստան»- նշել է Ն. Միխայլովան: «Հայաստանի և Բուլղարիայի շահերի ասպարեզը մեկն է և, ի շահ երկու կողմերի, այդ ասպարեզը պետք է օգտագործվի: Բուլղարիան կողջունի, եթե Հայաստանը համագործակցի իր հետ ահաբեկչության, կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, թմրանյութերի փոխադրման, կանխարգելման ոլորտներում»,- նշեց Բուլղարիայի արտգործնախարարը: Նախարարները կարևորեցին Ասիան Եվրոպային միացնող «Մետաքսի»՝ որպես վստահության և բարգավաճման ճանապարհի նշանակությունը: Հանդիպման վերջում նախարարները քննարկել են նաև Հայաստանի և Բուլղարիայի մոտեցումները հարևան պետությունների հետ հարաբերությունների կարգավորման խնդրում:[47]

Այսպիսով, հայ-բուլղարական հարաբերությունները 1991-1998 թթ. բավական ակտիվ զարգացում ապրեցին: Դրանք ընգրկեցին կյանքի տարբեր ոլորտներ ներառելով, ինչպես արտաքին ու ներքին քաղաքականությունը, այնպես էլ տնտեսական, մշակութային, հասարակական գործընթացները: Հայ-բուլղարական միջպետական հարաբերությունների զարգացման համար խիստ կարևոր էր հայկական համայնքի և տեղի հայկական կառույցների առկայությունը, որոնք լրացուցիչ խթան էին ստեղծում երկկողմ հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործում: Անշուշտ, երկկողմ հարաբերությունների մեջ կարևոր էր նաև ԼՂ հակամարտության նկատմամբ Բուլղարիայի ունեցած հավասարակշիռ մոտեցումը: Նույն կերպ Հայաստանը կարևորում էր նաև Բալկաններում կայունության պահպանմանը և այս հարցում իր աջակցությունն էր հայտնում Բուլղարիայի կառավարող շրջաններին: Սակայն, հարկ է նշել, որ երկկողմ հարաբերությունները այս տարիներին երբեմն դանդաղում էին, ինչը գլխավորապես պայմանավորված էր երկու երկրների քաղաքական ճգ-

[47] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի շահերի ասպարեզը մեծ է» , թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:

նաժամերով: Այնուամենայնիվ, 1991-1998 թթ. Բուլղարիայի և Հայաստանի միջև հարաբերությունների ձևավորումը և զարգացումը հիմք հանդիսացան հետագա շրջանում դրանց առավել ամրապնդմանն ու առաջընթացին:

Բանալի բառեր- Հայաստանի Հանրապետություն, Բուլղարիայի Հանրապետություն, դիվանագիտական հարաբերություններ, Լևոն Տեր-Պետրոսյան, Ժելյու Ժելև, Սևդա Սևան, Արևելյան Եվրոպա, ՄԾՏՀ, ԵԱՀԿ, Սոֆիա, արտգործնախարարություն:

Սերգեյ Բաղդասարյան, Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև երկկողմ քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների ձևավորումը և զարգացումը (1991-1998թթ.) - Հոդվածը վերաբերում է 1991-1998 թթ. ԲՀ և ՀՀ քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների ձևավորմանը և զարգացմանը: Անդրադարձ է կատարվում Բուլղարիայի կողմից Հայաստանի անկախության ճանաչմանը, երկու երկրների միջև դիվանագիտական կապերի հաստատմանը, միջպետական, միջխորհրդարանական, միջկառավարական հանդիպումներին և քննարկումներին: Կարևորվում է միջպետական պայմանագրերի դերակատարությունը, հատկապես 1995 թ. ՀՀ և ԲՀ միջև կնքված բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին պայմանագրին: Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունները կարևորվում են նաև միջազգային համագործակցության դիտանկյունից մասնավորապես այնպիսի միջազգային կառույցներում, ինչպիսիք են ՄԱԿ, ԵԱՀԿ, ՄԾՏՀ և այլն:

Сергей Багдасарян, Формирование и развитие двусторонних политических и дипломатических отношений между Республикой Армении и Республикой Болгарии (1991-1998 г.г.) - Статья относится к периоду 1991-1998 гг. Она охватывает такие темы как формирование и развитие политических и дипломатических отношений между Республикой Армении и Республикой Болгарии,признание Болгарией независимости Армении, установление дипломатических связей между двумя странами, межгосударственные, межпарламентские, межправительственные совещания и дискуссии. Подчеркивается роль межправительственных соглашений, особенно с 1995 года, с момента подписания Договора о дружбе и сотрудничестве между Республикой Армения и Республикой Болгария. Отношения между Арменией и Болгарией также подчеркиваются в контексте международного сотрудничества, особенно в таких международных организациях, как ООН, ОБСЕ, ОЧЭС и другие.

Sergey Baghdasaryan, Formation and development of bilateral political and diplomatic relations between the Republic of Armenia and the Republic of Bulgaria (1991-1998) - The article refers to formation and development of political and diplomatic relations between the Republic of Armenia and the Republic of Bulgaria

during the period of 1991 - 1998. It touches such topics as Bulgaria's recognition of Armenia's independence, establishment of diplomatic ties between the two countries, interstate, inter-parliamentary, intergovernmental meetings and discussions. The role of intergovernmental agreements is highlighted, especially since 1995 when the Treaty of Friendship and Cooperation between the Republic of Armenia and the Republic of Bulgaria was signed. The relations between Armenia and Bulgaria are also highlighted in the context of international cooperation, particularly in such international organizations as the UN, OSCE, BSEC and others.

ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ)

ԼԻԼԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Թեև աշխարհի առաջին կին դեսպան ընդունված է համարել Ալեքսանդրա Կոլոնտային, ով 1923-1952 թվականներին եղել է ԽՍՀՄ դեսպանը Նորվեգիայում, Մեքսիկայում և Շվեդիայում, բայց իրականում այդ պատիվը վերագրվում է մեծ հայրենասեր ու բարերար Դիանա Հովհաննեսի Աբգարին, ում անունն այսօր շատերին ծանոթ չէ:

Դիանա Հովհաննես Աբգարյանը (օրիորդական անունը՝ Անահիտ Աղաբեկյան) ծնվել է 1859 թվականի հոկտեմբերի 12-ին Բիրմայի (այժմ՝ Մյանմա) մայրաքաղաք Ռանգունում (այժմ՝ Յանգոն)՝ բարեկեցիկ ընտանիքում:

Նրա ծննդյան տեղի, ինչպես նաև նրա կյանքի շատ այլ իրադարձությունների մասին տարբեր, հաճախ, իրարամերժ տեսակետներ կան: Տարբեր աղբյուրներում Դիանայի ծննդյան վայրը նշված է Բիրման, սակայն Բուենոս Այրեսում տպագրվող «Արմենիա» պարբերականի 1984 թվականի համարներից մեկում որպես նրա ծննդյան վայր է ներկայացվում Նոր Ջուղան, իսկ «Հայ զինվոր» թերթի 2004 թվականի 3-րդ համարում լույս տեսած ակնարկում նշվում է Հնդկաստանի Բոմբեյ (այժմ՝Մումբայ) քաղաքը:[1]

Հայտնի է, որ նրա նախնիներն ապրել են Նոր Ջուղայում: Աղաբեկյանները Ջուղայից գաղթել են Պարսկաստան 18-րդ դարի վերջին, իսկ արդեն այնտեղից՝ Հնդկաստան: Նրա հայրը՝ Հովհաննեսը, Հնդկաստանում բնակություն հաստատած աղաբեկյաններից էր, իսկ մայրը՝ Զմրուխտը, ծագումով Շիրազից էր:

Դիանան սովորել է կանանց մենաստանում՝ «Արևելյան սեմինարիայում», որտեղ էլ ստացել է անգլերեն կրթություն: Իսկ հայերենը նա սերտել էր դեռ փոքր տարիքից. տանը միայն մայրենի լեզվով էին խոսում: Սեմինարիայում Անահիտը ուսանում էր Ռաբինդրանաթ Թագորի հետ:

1890 թվականին Աբգարն ամուսնացել է ծնունդով նորջուղայեցի, մեծահարուստ վաճառական Միքայել Աբգարյանի (Մայքլ Աբգար) հետ, որն էլ կանխորոշել է օրիորդի հետագա կյանքի ընթացքը: Միքայելն Անահիտին Դիանա էր անվանում: Այս անունով էլ նա հայտնի դարձավ: Ամուսինները հասցրեցին շրջագայել Հոնկոնգում, Չինաստանում և Ճապոնիայում: Ծագող արևի երկրի հին Կոբե քաղաքում էլ հենց որոշեցին բնակություն հաստատել, որտեղ առևտրային ընկերություն հիմնեցին, որը զբաղվում էր հատկապես մետաքսի ներմուծմամբ: Բացի առևտրական ձեռնարկությունից, բացեցին նաև «Great Eastern» - «Մեծ Արևելք» հյուրանոցը :

---

[1] «Ով ով է. հայեր» կենսագրական հանրագիտարան Ա հատոր, Երևան 2005թ. «Հայկական Հանրագիտարան» հրատարակչություն, էջ 46:

1892 թվականին Դիանան հրատարակեց իր առաջին վեպը՝ «Սյուզանը», իսկ ավելի ուշ՝ «Պատմություններ հայրենիքից» ժողովածուն: Դիանա Աբգարը շուտով Ճապոնիայի ամենապահանջված անգլալեզու հեղինակը դարձավ:

Աբգարյանների ընտանիքում հինգ երեխա ծնվեց, նրանք ապրում էին ապահով՝ առանց որևէ կարիքի:

Ամուսնու մահից հետո (1906թ.) ընկերության ամբողջ ղեկավարությունը Դիանան իր ձեռքն առավ՝ միաժամանակ շարունակելով իր գրական գործունեությունը:

Երեխաների հետ տեղափոխվելով նավահանգստային Յոկոհամա քաղաքի Յամատե թաղամաս, նա հերթական առևտրի տունը բացեց, որը համագործակցում էր Չինաստանի, Եվրոպայի ու ԱՄՆ-ի համապատասխան ընկերությունների հետ:

1909 թվականի Ադանայի հայերի կոտորածներից հետո Դիանան հանդես է գալիս դրանք դատապարտող հոդվածներով: Նա այդ ժամանակ նամակագրական կապի մեջ էր մ հայտնի քաղաքական և հասարակական գործիչների հետ, որոնց թվում էր Նյու Ջերսիի նահանգապետ Վուդրո Վիլսոնը:[2]

Նա այն կարծիքին էր, որ Ադանայում տեղի ունեցած կոտորածը կազմակերպվել ու իրականացվել է երիտթուրքերի կառավարության կողմից:[3]

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին և դրա ընթացքում Դիանա Աբգարը հանդես է եկել հայ ժողովրդին նվիրված դասախոսություններով, հոդվածներով, աշխատակցել է Յոկոհամայի «The Japan Gazette» անգլալեզու ճապոնական թերթին: Այդ թերթի հրատարակչությունը անգլերեն հրատարակել է նրա «The Truth About the Armenian Massacres»՝ «Ճշմարտությունը հայության ջարդերի մասին» (1910), «The Case of the Armenians»՝ «Հայկական հարցը», Betrayed Armenia՝ «Դավաճանված Հայաստան» (1912), «In His Name»-«Իր անունով» (1911), «The Peace of Europe»՝ «Եվրոպայի խաղաղությունը», «The Peace Problem»՝ «Խաղաղության հարցը» (1912), «Peace and No peace»՝ «Խաղաղություն և ոչ խաղաղություն» (1912) աշխատությունները:

Նրա աշխատությունների ու գրքերի գլխավոր առաքելությունն էր՝ ճապոնական հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդին և տեղեկացնել նրա տառապանքների մասին:

Աբգարը համագործակցում էր աշխարհի բազմաթիվ քաղաքական ու հոգևոր գործիչների հետ: Նա նաև օգնում էր բազմաթիվ հայ փախստականների, որոնք Սիբիրով ու Ճապոնիայով փորձում էին ԱՄՆ և Կանադա հասնել:

---

[2] « Դիանա Աբգարն ու հայ փախստականները» լեզվագետ Մելինե Մեսրոպյան ասպիրանտուրական աշխատանք, 2004թ., էջ 15

[3] http://www.azg.am «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #1, 09.04.2008թ:

Դիանա Աբգարի գործերի մասին կարելի է երկար խոսել: Դրանցից մեկը Մեծ եղեռնից մազապուրծ ԱՄՆ-ի քաղաքացի Հարություն Թաշճյանի, նրա կնոջ եւ դստեր պատմությունն է: 1915 թվականին նրանք Խարբերդից փախել են Ռուսաստան, ապա հասել Սիբիր եւ Վլադիվոստոկ, որտեղից նրանց ուղարկել են Ճապոնիա՝ Տոկիո եւ Յոկոհամա:

Այստեղ նրանք հայտնվել են ճապոնական ոստիկանության կասկածի տակ, որը Ռուսաստանից եկած հայերին կասկածում էր բոլշևիկյան լրտեսներ լինելու մեջ: Այդ ժամանակ Դիանա Աբգարը Սանքոյան ազգանունով շանհայցի մի հայ օրիորդի եւ Ճապոնիայում ամերիկյան հյուպատոսի ընկերակցությամբ գնացել է Թաշճյանների մոտ և նրանց օգնության ձեռք մեկնել: Նրա ջանքերով ընտանիքը մեկնել է Կանադա, որտեղից էլ գնացքով հասել է Միացյալ Նահանգներ: Փախստականների մեկնելուց հետո էլ Աբգարը անընդհատ հետաքրքրվել է նրանց ճակատագրով:

Ճապոնիայում Դիանային այցելել է Սուրբ Էջմիածնի պատվիրակ Ռուբեն Ծ. Վրդ. Մանասյանը: Վերջինս Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված նամակում գրում է. «Տիկին Դիանա Աբգարը չի եղել հարուստ՝ ապրելով մի երկրում, ուր օտարների համար փակված է ամեն մի ապրուստի աղբյուր: Նա, շնորհիվ իր լեզվագիտության և մտավոր ընդունակությունների, կարողացել է ապրուստի միջոց ստեղծել և հասարակության մեջ աչքի ընկնող դիրք գրավել:

Նա Հեռավոր Արեւելքի տիրուհին է, ում դիմում են ամենքը: Երկրաշարժի ժամանակ, երբ հրո ճարակ դարձած Յոկոհամա քաղաքը կործանվում է, և կոտորվում են հարյուր հազարավոր մարդիկ, տիկին Աբգարյանն իր ընտանիքով փրկվում է Աստծո նախախնամությամբ, բայց կորցնում է իր ամբողջ ունեցվածքն ու միանգամայն ընչազուրկ վերադառնում Կոբե»:[4]

1919 թվականին Դիանան մասնակցել է Խարբինում (Չինաստան) կայացած Սիբիրի և Ծայրագույն Արևելքի հայերի համաժողովին, որտեղ նրան ընտրել են պատվավոր նախագահ: Համագումարի օրակարգի գլխավոր և կարևորագույն հարցը եղել է Հայաստանին շուտափույթ օգնություն հասցնելը. որի նպատակով կազմակերպվել է հանգանակություն և հատուկ պատվիրակության միջոցով ուղարկվել Հայաստան:[5]

Իզուր չէ, որ իր անշահախնդիր գործունեության համար Աբգարը շահել է «Մայր» պատվանունը:

1920 թվականի հուլիսի 2-ին Դիանա Աբգարը նշանակվել է Հայաստանի առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ և գլխավոր հյուպատոս Ծայրագույն Արևելքում, Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ճապոնիայում: Պահպանվել է Հայաստանի Հանրապետության վարչապես

[4] http://www.azg.am «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #1, 13-01-2017:

[5] **Հանրարձում Պսակեան,** «Հանդիպումներ և պատահարներ» «Հայրենիք», թիվ 1, 1963թ., էջ 69:

Համո Օհանջանյանի նամակը Դիանա Աբգարին՝ վերջինիս հյուպատոս նշանակելու մասին:

«Յարգելի Տիկին,

Ինձ լաւ յայտնի է, որ Ծայրագոյն Արևելքում ոչ ոք չի գործել այնքան, ինչքան Դուք, մեր նորածին Հայրենիքի շահերը պաշտպանելու և մեր հայրենակիցների ծանր վիճակը թեթևացնելու համար: Նոյնպէս ինձ յայտնի է, որ այդ հեռու վայրերում ոչ մի հայ չունի այդքան մեծ հեղինակութիւն տեղացիների և մեր հայրենակիցների մոտ, ինչպէս Դուք, ուստի ես Ձեզ նշանակում եմ Հայաստանի պատուաւոր հիւպատոս Ճապոնում և յուսով եմ, որ չէք մերժիլ ստանձնել այդ ծանր պաշտօնը յօգուտ մեր երիտասարդ հայրենիքին: Սորա հետ միասին ուղարկում եմ Ձեզ համապատասխան հաւատարմագիր. վստահ եմ, որ ճապոնական կառավարութեան կողմից ոչ մի արգելքի չէք հանդիպիլ ստանալու անհրաժեշտ «exequator»:[6]

Դիանա Աբգարի դիվանագիտական գործունեության մասին ճապոնական լեզվով նյութեր պահպանվել են ճապոնիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական արխիվում:

Առաջին նյութը 1920 թվականի օգուստոսին ստորագրված Սևրի պայմանագրի հոդվածներում Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ հակասության մասին հարցումն է, որն արտաքին գործերի նախարար Կոուսայ Ուչիդան ուղարկել է Ֆրանսիայում ճապոնիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Դոուիչի Մացուդային 1920 թ. նոյեմբերի 19-ին: Այստեղ գրված է. «Սեւրի պայմանագրի մեջ Սիրիայի, Միջագետքի եւ Պաղեստինի նկատմամբ չնայած կա մի դրույթ, որ սրանք պիտի ունենան մանդատի կարգավիճակ՝ համաձայն Ազգերի լիգայի դաշնագրի 22-րդ հոդվածի դրույթների, սակայն նույն պայմանագրի 88-րդ հոդվածի մեջ նշված է, որ Հայաստանը Թուրքիայի կողմից ճանաչվելու է որպես ազատ եւ անկախ պետություն, ու չնայած Հայաստանը դիմել էր, որ Ամերիկայի հովանավորության տակ մանդատ ստանա, Հայաստանի մանդատի կարգավիճակի վերաբերյալ ոչ մի դիտողություն չկա...»:[7]

Երկրորդ փաստաթուղթը ուղղակիորեն կապվում է Դիանա Աբգարի հետ: «Հայաստանի հանրապետության պատվավոր հյուպատոսի հավատարմագրման մասին» վերնագրով այս փաստաթուղթը 1920 թվականի դեկտեմբերի 3-ին արտաքին գործերի նախարարի տեղակալ Մանսանաո Ուեկուսան ուղարկել է Կանագավայի նահանգապետ Կոուսայ Ինուեին: Սկզբում նշվում է, որ «եթե ճապոնիայի կայսրության հետ պայմանագրային հարաբերություն չունեցող պետությունը ցանկանում է մեր տարածք հյուպատոս ուղարկել, կարգն այն է, որ

[6] «Վանք մատենաշար, թիվ 16» «Դիանա Աղաբեկ Աբգար, կյանքը և գործունեությունը», Նոր Ջուղա, Հայ կնոջ տարվա առիթով, 2011թ., էջ 20:

[7] http://www.azg.am «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #1, 13-01-2017:

միմյանց ճանաչած դիվանագիտական հաստատությունների միջոցով մեր կառավարության մտադրության շուրջ հարցում արվի... և այս մասին տիկին Աբգարին բացատրել ենք»: Հետո երեք տեսանկյունից քննարկվում են Հայաստանի Հանրապետության ճանաչման եւ Հայաստանի հյուպատոսի ընդունման հարցերը: Սկզբում գրվում է, որ «Քանի որ Հայաստանը ճանաչող երկրները Հայաստանին վերաբերվում են իբրեւ անկախ պետության, Հայաստանի հյուպատոսի ընդունումը մերժելու հիմք միջազգային օրենքով չկա»: Սակայն հետո նշվում է. «Հաղորդել ենք, որ տիկին Դիանա Աբգարը պատերազմից առաջ շրջաբերականներ է տարբեր կողմեր հղել, որոնք չեղյալ էին հայտարարել Մեծ պետությունները, և մենք պիտի քննարկենք՝ սա ճշմարիտ է, թե՞ ոչ», իսկ ամենավերջում նշվում է. «Եթե Հայաստանը Ազգերի լիգայի դաշնագրի 22-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ բաժինների դրույթների համաձայն մանդատ պիտի ստանա, այդ դեպքում այն հարցը, թե Հայաստանը ուրիշ երկրներ հյուպատոսներ կարող է ուղարկել, թե՞ ոչ, պիտի որոշվի Հայաստանի հովանավոր երկրի խնամակալության աստիճանով...» և «մենք պետք է հետաձգենք Հայաստանի Հանրապետության հյուպատոսի ընդունումը, մինչև այս երկրի ստատուսը հաստատվի»:

Երրորդ վավերագիրը Դիանա Աբգարի կոնկրետ գործունեության մասին է: «Հայ փախստականների օգնության հիմնադրամին նվիրատվության մասին» վերնագրով այս փաստաթուղթը 1922 թ. հուլիսի 27-ին Կանագավայի նահանգապետ Կոուսայ Ինուեն ուղարկել է ներքին գործերի նախարար Ռենտարո Միձունոյին, արտաքին գործերի նախարար Կոուսայ Ուչիդային եւ որոշ նահանգապետերի: Նշվում է, որ Դիանա Աբգարը «1890 թ. նոյեմբերին ամուսնու հետ մեր երկիր է եկել, երկար տարիներ Կոբե քաղաքում նրանք զբաղվել են առեւտրով, հետո այրիացել է եւ 1907 թ. Յոկոհամա քաղաք է տեղափոխվել ու կրկին կառավարել է «Աբգար» առեւտրի տունը: 1920 թ. հոկտեմբերին Հայաստանի կողմից Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս նշանակվելու առիթով դիմել է մեր կառավարությանը՝ հաստատվելու համար, սակայն հաստատում չի ստացել: Այնուամենայնիվ, այս տիկինը որպես Ամերիկայում հայերի ասոցիացիայի Ճապոնիայի մասնաճյուղի գլխավոր նախագահ եւ Յոկոհամայի քրիստոնեական երիտասարդական ասոցիացիայի փոխնախագահ, Ճապոնիայով Ամերիկա մեկնող ազգակիցների փրկության համար ներդնում է իր ջանքերը»:[8]

Դիանա Աբգարի դեսպան նշանակվելուց հետո Ճապոնիան դե ֆակտո ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը՝ հեշտացնելով տիկնոջ մարդա-

[8] http://www.azg.am «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #1, 13-01-2017:

սիրական գործունեությունը և փախստականներին տրվող օգնությունը: Նրա հովանավորությունն են վայելել նաև Սինգապուրի և Ինդոնեզիայի հայերը:

Աբգարը ողջ կյանքում եղել է Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու նվիրյալ, մինչև կյանքի վերջ կապ պահպանել Էջմիածնի հետ: Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, ըստ արժանվույն գնահատելով Աբգարի գործունեությունը, 1926 թվականին արժանացրել է նրան հատուկ կոնդակի՝ հայ ժողովրդի շահերին ծառայելու և դժվար պահերին նրա կողքին լինելու համար:[9]

Ստորև ներկայացնում ենք կոնդակի նախաբանը՝ ըստ ՀՀ Ազգային արխիվում պահվող սևագիր օրինակի.

«Գէորգ ծառայ Յիսուս Քրիստոսի

Մեծարգոյ եւ համեստափայլ Տիկին Դիանա Ա. Աբգարի,

Հարազատ դստեր Մայր Աթոռոյս

ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական…»:[10]

«Դիանա Աբգարի շնորհիվ Հայաստանը (1918-1920թթ) դարձավ առաջին պետություններից մեկը, որը կանանց ձայնի իրավունք է շնորհել: Այս իրադարձությունները խոսում են այն մասին, որ կանանց առաջընթացը հնարավոր է և այնպիսի հասարակություններում, ինչպիսին Հայաստանն է»,- գրում է University Press of America»-ն:[11]

Դիանա Աբգարը մահացել է 1937թվականի մայիսի 28-ին Յոկոհամայում: Նա թաղված է ամուսնու կողքին՝ օտարազգիների համար նախատեսված «Գայձին Բոտի» գերեզմանատանը: Դիանա Աբգարը զարգացած, ազգանվեր, գթառատ կնոջ ուանելի կերպար է:

Բանալի բառեր – Դիանա Աբգար, հայրենասեր, մարդասեր, բարերար, հյուպատոս, գրող, հրապարակախոս, դեսպան, դիվանագետ, գաղթականություն, Հայաստանի հանրապետություն, Ճապոնիա:

Լիլիթ Մինասյան, Դիանա Աբգար (Կյանքն ու գործունեությունը) հոդվածը նվիրված է հայազգի հայտնի կին դիվանագետ, հումանիստ և մտավորական Դիանա Աբգարի կյանքին և գործունեությանը: Այնտեղ վեր են հանված բացառիկ այս գործչի հայրենանվեր և պետականամետ գործունեության հիմնական կողմերը: Միաժամանակ մատուցվում են տեղեկություններ նրա անձնական կյանքի վերաբերյալ:

Лилит Минасян, Диана Абгар (Жизнь и деятельность) - статья посвящается жизни и деятельности известной женщины-дипломата, гуманиста и интеллигента армянского происхождения Дианы Абгар.В ней выявлены основные стороны

---

[9] «Շողակն Արարատյան», Էջմիածին, 2012թ. ապրիլ, Բ, էջ 3-4:

[10] «Վանք մատենաշար, թիվ 16» «Դիանա Աղաբեկ Աբգար, կյանքը և գործունեությունը», Նոր Ջուղա, Հայ կնոջ տարվա առիթով, 2011թ., էջ 25:

[11] Նույն տեղում, էջ 26:

деятельноти этой исключительной дипломатки, которые были направлены на благо родины и государства.Одновременно преподносятся сведения о ее личной жизни.

Lilit Minasyan, Diana Abgar (Life and activity) - The article is dedicated to the life, social work and activity of this famous Arminian woman, diplomat, humanist and intellectual -Diana Abgar. At the same time there are mentioned all the main sides of the patriotic activities of this great public figure. There is given some information about her private life.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՍՎԵՏԼԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում վարվող հարկային քաղաքականության արդյունավետությունը գնահատելիս ներկայումս որոշակի տեղեկատվական խնդիրներ են առաջանում: Եվ այդ խնդիրները հիմնականում ծագում են հարկագանձման «տեղեկատվական հետադարձ կապի» ապահովման շրջանակում: Ընդհանուր առմամբ, «հարկագանձման տեղեկատվական հետադարձ կապ» եզրույթը չի օգտագործվում մասնագիտական գրականությունում, դրա փոխարեն գործածվում են «հավաքագրված հարկերի նպատակային օգտագործում», «հարկերի հասցեական վերաբաշխում» մեկնաբանումները:[1] Սակայն, կարծում ենք, որ տեղեկատվական հետադարձ կապի ներդրումը հարկագանձման ոլորտում առավել ընդգրկուն է ներկայացնում հավաքագրված հարկերի և դրանց նպատակային վերաբաշխումների գործառույթները, որոնք են հիմք են հանդիսանում հանքարդյունաբերությունում կիրառվող հարկային քաղաքականության արդյունավետության համալիր գնահատման համար:

Հանքարդյունաբերության հարկագանձման ոլորտում հետադարձ կապը հարկերի հավաքագրման և վերաբաշխման ոլորտում կարևորվում է այնքանով, որքանով որ հարկային քաղաքականությանը մասնակից շահառուները սոցիալ-տնտեսական տարբեր շարժառիթներ ունեն, ուստի և հասցեական տեղեկատվություն են ակնկալում հարկերի հավաքագրման և օգտագործման գործառույթներից: Նման տեղեկատվությունը կարևորվում է նաև հարկերի կարգավորիչ, խթանիչ, վերահսկողական վերբաշխիչ գործառույթների արդյունավետությունը գնահատելիս:

Այսպես, հասարակական կազմակերպությունները, երբեմն նաև պետական վերահսկիչ մարմինները, հաճախ տեղեկացված չեն լինում բնապահպանական ու բնօգտագործման վճարումների հավաքագրումների չափերից, որոնք պետք է կոնկրետ ուղղվեին հանքարդյունաբերության էկոլոգիական վնասների փոխհատուցմանը, որի հիմնական պատճառը հարկագանձող մարմինների և բնապահպանական կազմակերպությունների միջև տեղեկատվական

[1] **Atkinson, A. B.** "Optimal Taxation and the Direct Versus Indirect Tax Controversy". Can. J. Econ 2014. 590: page 45.

հետադարձ կապի բացակայությունն է:[2] Նույն պատճառաբանությամբ լեռնահանքային կազմակերպությունները լիարժեք տեղեկատվություն չեն ստանում, թե որքանով են իրենց կողմից պետական բյուջե կատարվող վճարները ծառայում նպատակին, օգտագործվում իրենց համայնքում բնապահպանական միջոցառումների վրա, որի հիմնական պատճառը հարկագանձման տեղեկատվական հետադարձ կապի բացակայությունն է:

Ընդ որում, հարկագանձման արդյունքները հետաքրքրում են լեռնահանքային արդյունաբերության ոլորտի ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահառուներին: Վճարելով բարձր հարկեր, հանքարդյունաբերական կազմակերպությունները փորձում են պարզել դրանց օգտագործման հասցեականությունն ու արդյունավետությունը, որպեսզի հանրությանը հաշվետու լինեն իրենց կողմից ձևավորած էկոլոգիական վնասի փոխհատուցման աշխատանքների գծով: Մյուս կողմից, հանրային պահանջմունք է առաջանում պարզելու, թե որքանով են հանքարդյունաբերության ոլորտից հավաքագրված հարկերը ծառայել իրենց նպատակին և չկան արդյոք այդ ոլորտում ֆինանսական միջոցների փոշիացումներ:[3] Բնականաբար, նման հարցադրումները ստանում են իրենց պատասխանները, եթե գործում է հարկագանձման տեղեկատվական հետադարձ կապ հարկային քաղաքականության մասնակից բոլոր շահառուների միջև (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Շահառուների փոխկապվածության տեղեկատվական հոսքերի համակարգման մոտեցումները հանքարդյունաբերող ոլորտում

[2] **Իշխանյան Ա., Գյուլխանդանյան Ե., Մանուսյան Ս. և Մանուսյան Ա.** (2013): Քաղաքացիական հասարակություն, զարգացման և բնապահպանական ակտիվիզմը հայաստանում, http://eprints.lse.ac.uk/54755/1/Ishkanian_Civil_ Society_Development_Enviromental_ Activism_America_2013.pdf

[3] ՀՀ Էներգիայի և բնական պաշարների նախարարություն և Հայաստանի զարգացման գործակալություն (2011): Հանքարդյունաբերությունը Հայաստանում 2011թ. www.ada.am/files/622/publications/Mining-industry-in-Armenia.pdf

Հարկագանձման տեղեկատվական հետադարձ կապի ձևավորումը հանքարդյունաբերության շահառուների շրջանում առաջնահերթորեն պետք է հիմնվի ոլորտի տեղեկատվական հոսքերի համակարգման վրա: Այս առումով, մեր կողմից առաջարկվում է յուրաքանչյուր լեռնահանքային կազմակերպություն դիտարկել որպես հարկագանձման և հարկերի հասցեական վերաբաշխումն արտացոլող տեղեկատվական համակարգման առանձնացված կենտրոն, որտեղ կամփոփվեն ոչ միայն հարկային վճարումները, այլև հարկերի օգտագործման ուղղություններից ստացվող արդյունքները, շահառուների սպասումներից շեղումները (տես գծապատկեր 1):

Ընդ որում, հարկերի հավաքագրման և դրանց համայնքային վերաբաշխման տեղեկատվական հոսքերի համակարգումը առաջարկում ենք իրականացնել հաշվապահական հաշվառման գործիքակազմով, որն ենթադրում է.

- ըստ առանձին ուղղությունների հավաքագրվող հարկերի կառավարչական հաշիվների բացում, որոնք կգործեն ոչ ինտեգրացված սկզբունքով, այսինքն գործող հաշվապահական հաշվառման հաշվային պլանից դուրս,
- ըստ առանձին ուղղություններով լեռնահանքային ոլորտի զարգացման և վնասների փոխհատուցման նպատակով հանրային միջոցներով ֆինանսավորումն արձանագրող կառավարչական հաշիվների վարում,
- նոր հաշվապահական հաշվառման թղթակցությունների կիրառում, որոնք տեղեկատվական փոխկապակցման դաշտ կձևավորեն հարկերի հավաքագրման և դրանց վերաբաշխման միջոցով հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման ֆինանսավորվող արձանագրող հաշիվների միջև:

Փաստորեն, հաշվապահական հաշվառման գործիքակազմով առաջարկվող տեղեկատվական համակարգը նպատակ է հետապնդում համակարգելու հանքարդյունաբերության հարկային քաղաքականության հարկաանձման արդյունքների և և դրանցից բխող հետևանքների փաստացի արդյունքները՝ հետադարձ կապ ապահովելով հարկատուների և հավաքագրված հարկերի հաշվին ֆինանսավորվող բնապահպանական ծրագրերի օգտատերերի միջև (տես գծապատկեր 1):

Աղյուսակ 1

Լեռնահանքային կազմակերպությունից հարկերի հավաքագրման և հանրային ֆինանսավորմամբ համայնքում էկոլոգիական վնասների փոխհատուցման հաշվետվություն (մլն դրամ)

	Հարկատեսակներ, բնօգտագործման և բնապահպանական վճարներ			Էկոլոգիական վնասների փոխհատուցումներ	
T1	Շահութահարկ	120	C1	Առողջապահական միջոցառումներ	49
T2	Ռոյալթի	160	C2	Բուսական ծածկույթի վերականգումներ	58
T3	Ջրավազան թափված վնասակար նյութերի համար	27	C3	Մակերևույթային ջրերի մաքրման աշխատանքներ	44
T4	Մթնոլորտի աղտոտման համար	15	C4	Հողի ռեկուլտիվացիա	21
T5	Թափոնակուտակումների համար	33	C5	Համայնքի սոցիալական զարգացման ծրագրեր	67
		355			239
	Դրական սալդո ΣT < ΣC			Բացասական սալդո ΣT > ΣC	116

Այս նպատակով, մեր կողմից առաջարկվում է որպես տեղեկատվական կենտրոն ընդունել գործող կոնկրետ լեռնահանքային կազմակերպությունը, որի շուրջն են փաստորեն տեղի ունենում հանքարդյունաբերության հարկային հետևանքների ձևավորումները: Ընդհանուր առմամբ, հանքարդյունաբերության հարկագանձման արդյունքների և դրանցից բխող սոցիալ-տնտեսական հետևանքների տեղեկատվական հոսքերի համակարգումը հենց լեռնահանքային կազմակերպություններում հիմնավորում ենք նրանով, որն առաջին հերթին հենց նրանք են հանրությանը հաշվետու ոլորտի կայուն զարգացման գծով, փորձելով հիմնավորել բնապահպանական նորմերի շրջանակում իրենց գործունեության անհրաժեշտությունն ու տնտեսական նպատակայնությունը:[4] Հետևաբար, լեռնահանքային կազմակերպությունները պետք է պարբերաբար հաշվետվություններ ներկայացնեն, թե ինչ չափերով և որ ուղղություններով են պետությանը հարկեր ու բնապահպանական, բնօգտագործման վճարներ կատարել, և դրա դիմաց, հանրային ռեսուրսներով ինչպիսի ֆինանսավորումներ են իրականացվել հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար (տես աղյուսակ 1):

[4] **Szumilas M** (2010).Explaining Odds Ratios. J Can Acad Child Adolesc Psychiatry. 2010 Aug; 19(3), 227–229.

Փաստորեն, լեռնահանքային կազմակերպությունից հարկերի հավաքագրման և դրա դիմաց հանրային ֆինանսավորմամբ համայնքում էկոլոգիական վնասների փոխհատուցման հաշվետվությունն հանդես է գալիս մի յուրատեսակ հաշվեկշիռ, որը ներկայացնում է ոլորտում վարվող հարկային քաղաքականության կարևորագույն բաղադրիչների գործունեության ամփոփոփ պատկերը. այն է՝ հարկերի ֆիսկալ, կարգավորիչ, խթանիչ, սոցիալական արդարության գործառույթների արդյունքները:[5] Ընդ որում, այդ յուրատեսակ հաշվեկշռման արդյունքում ստացվում է բացասական սալդո, երբ հավաքագրված հարկերն գերազանցում են էկոլոգիական վնասների փոխհատուցումներին, և հակառակը (տես աղյուսակ 1):

Ներկայացվող հաշվետվական տեղակտվական հոսքերի համակարգման նպատակով մեր կողմից առաջարկվում են մի շարք նոր կառավարչական հաշիվներ, և հաշվային թղթակցություններ որոնք կհաշվեկշռեն լեռնահանքային կազմակերպության հարկագանձման արդյունքներն և դրանցից բխող համայնքային սոցիալ- տնտեսական հետևանքները): Ընդ որում, նման հաշվառում կազմակերպելու պարտավորվածությունը նպատակահարմար ենք համարում դնելու հենց հանքարդյունաբերող կազմակերպությունների վրա, որոնք էլ տեղեկատվական հետադարձ կապ կապահովվեն հարկագանձման բոլոր շահառուների միջև:

Այս առումով, առաջարկում ենք կիրառել «Հարկագանձման հատույց» համադրող հաշիվը, որն իր դեբետային մասում արձանագրում է լեռնահանքային կազմակերպության գործունեության հետևանքով բնապահպանական վնասների փոխհատուցման ծախսերը, իսկ կրեդիտային մասով՝ կազմակերպությունից գանձվող բյուջետային մուտքերը:

Այսպես, օգտվելով աղյուսակ 1-ի տվյալներից, առաջարկվող հաշիվներով և հաշվային թղթակցություններով ներկայացնենք հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպության հարկագանձման, և պետբյուջեից իրականացված ֆինանսավորվող միջոցառումների սոցիալ-տնտեսական հետևանքների տեղեկատվական հոսքերի համակարգման մեխանիզմը:

1. Հաշվետու ժամանակաշրջանում պետբյուջե է վճարվել շահութահարկ՝ 120 մլն դրամ.

Դտ «Հարկագանձման հատույց»……120

Կտ «Բյուջետային փաստացի գանձումներ շահութահարկի գծով»….120

---

[5] **Հարությունյան Տ.,** Հարկման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, «Զանգակ 97», 2006, էջ 24-26:

2. Հանքարդյունաբերող կազմակերպությունը պետբյուջե է փոխանցել բնօգտագործման վճար՝ 160 մլն դրամ

Դտ «Հարկագանձման հատույց»……..160

Կտ «Բյուջետային փաստացի գանձումներ բնօգտագործման վճարների գծով»….160

3. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պետբյուջե են փոխանցվել բնապահպանական վճարներ՝ 75 մլն դրամ.

Դտ «Հարկագանձման հատույց»……..75

Կտ «Բյուջետային փաստացի գանձումներ բնօգտագործման վճարների գծով»….75

4. Պետբյուջեից հանքարդյունաբերության ուղղակի հետևանքների ազդեցության տակ գտնվող համայնքի բնակչության առողջապահանական լրացուցիչ գործողություններին միտված 49 մլն դրամի սուբսիդիաներ են տրամադրվել.

Դտ «Բնապահպանական փոխհատուցումներ առողջապահական միջոցառումների գծով»……49

Կտ «Հարկագանձման հատույց»……49

5. Հաշվետու ժամանակաշրջանում հանքարդյունաբերող կազմակերպության շրջակա միջավայրի բուսական ծածկույթի վերականգման ֆինանսավորումը պետբյուջեից կազմել է 58 մլն դրամ

Դտ «Բնապահպանական փոխհատուցումներ ՝ բուսական ծածկույթի վերականգման գծով»……58

Կտ «Հարկագանձման հատույց»……58

6. Մակերևույթային ջրային ավազանի մաքրման աշխատանքների գծով հաշվետու ժամանակաշրջանում հանրային ֆինանսավորումը կազմել է 44 մլն դրամ.

Դտ «Բնապահպանական փոխհատուցումներ ՝ մակերևույթային ջրերի մաքրման գծով»……44

Կտ «Հարկագանձման հատույց»……44

7. Հաշվետու ժամանակաշրջանում հանքարդյունաբերող կազմակերպության շրջակա միջավայրի հողային տարածքների ռեկուլտիվացիայի գծով պետբյուջեից ֆինանսավորումը կազմել է 21 մլն դրամ.

Դտ «Բնապահպանական փոխհատուցումներ ՝ հողի ռեկուլտիվացիայի գծով»……21

Կտ «Հարկագանձման հատույց»……21

8. Հանքագործների համայնքի սոցիալական զարգացման պետբյուջեից լրացուցիչ սուբսիդավորումը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 67 մլն դրամ.

Դտ «Բնապահպանական փոխհատուցումներ՝ հողի ռեկուլտիվացիայի գծով»……67
Կտ «Հարկագանձման հատույց»……67

Այսպիսով, մեր կողմից առաջարկվող հաշիվներն ու դրանց փոխկապակցող հաշվային թղթակցությունները համակարգում են հանքարդյունաբերության ոլորտի հարկագանձման տեղեկատվական հոսքերը, և դրանք ամփոփում մեկ համադրող հաշվում (տես գծապատկեր 4): Իսկ այդ համադրմամբ մեկնաբանվում է հարկագանձման նպատակայնությունը, այսինքն, ինչպես էկոլոգիական վնասների փոխհատուցման հարկային ռեսուրսատարողությունը, այնպես էլ այդ ռեսուրսների օգտագործման լիարժեքությունը: Եվ եթե «Հարկագանձման հատույց» հաշվի դեբետային շրջանառությունը գերազանցում է կրեդիտային շրջանառությունից, ապա արձանագրվում է հարկային ռեսուրսների թերօգտագործում (բացասական սալդո) և հակառակը:

«Հարկագանձման հատույց»

	120 (1)	49 (4)
	160 (2)	58 (5)
	75 (3)	44 (6)
ցասական սալդո ←	183	21 (7)

Գծապատկեր 2. «Հարկագանձման հատույց» առաջարկվող հաշվի գործունեության մեխանիզմը

Առաջարկվող հաշիվները տեղեկատվության խմբավորման նպատակ են հետապնդում, ուստի ինչպես «Հարկագանձման հատույց» համադրող հաշիվը, այնպես էլ «Բյուջետային փաստացի գանձումներ» և «Բնապահպանական փոխհատուցումներ» կուտակիչ հաշիվները հաշվետու ժամանակաշրջանում չեն փակվում և ընդամենը տեղեկատվական աղբյուր են հանդիսանում լեռնահանքային կազմակերպությունների էկոլոգիական ուղղությամբ հաշվետվողականության համար:

Բանալի բառեր - ռոյալթի, թափոններ, հարկեր, բնապահպանություն, հարկագանձման հատույց:

Նոննա Խաչատրյան, Սվետլաննա Մուրադյան, Տեղեկատվական հոսքերի համակարգման հիմնախնդիրները հանքարդյունաբերության հարկագանձման ոլորտում - Հարկագանձման ընթացքի և դրանցից բխող արդյունքների տեղեկատվական հոսքերի համակարգման առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է ստեղծում հանքարդյունահանող կազմակերպության կողմից հանրային հաշվետվողականության կազմակերպման համար, համայնքին ներկայացնելով հարկագանձման ռեսուրսների միջոցով գործարարության արդյունքում շրջակա միջավայրին պատճառած էկոլոգիական վնասների փոխհատուցումները:

Нонна Хачатрян, Светланна Мурадян, Проблемы системитации информационных потоков в сфере налогооблажения горнодобывания - В статье предлагается новый механизм систематизации информационных потоков, что создает возможность для горнодобывающей компании организовывать процесс публичной отчетности и представляя экологический ущерб сообществу от горнодобывания. При этом, сообщества не только регулярно информируется об ущербах деятельности горнодобывающих компании на окружающую среду, но и получает уведомление о финансирования на предотвращения экологических рисков.

Nonna Khachatryan, Svetlanna Muradyan, Problems of systematizationinfromation flows in the field of mining taxation - The article proposes a new mechanism for the systematization of information flows, which creates an opportunity for the mining company to organize a public reporting process and present environmental damage from mining to the community. At the same time, the community is not only regularly informed about the damage to the mining company's activities on the environment, but also receives notification of funding realization for the prevention of environmental risks.

ԱՆՀԱՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է: Այն թույլ է տալիս անձին համարվել տվյալ սոցիալական խմբի անդամ և ներկայանալ որպես այդպիսին այլ սոցիալական խմբերին: Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր: Անձի սոցիալական կայացումը պայմանավորված է լինում թե՛ սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործողության բնույթից և թե՛ անհատական հատկանիշներից: Անձն ունի սոցիալական պատասխանատվության զգացում, այսինքն՝ հասարակության, սոցիալական միջավայրի նկատմամբ իր գործունեության, արարքի արդյունքը կանխատեսելու ունակություն:

Սոցիալական պատասխանատվության էությունը բացատրել է Մաքս Վեբերը՝ որպես չափանիշ առանձնացնելով «սպասումը», երբ անձը գործողությունը, արարքը կողմնորոշում է դեպի սպասվող պատասխան ռեակցիան: Մարդը, ի տարբերություն կենդանիների, կարող է կանխատեսել, թե մյուս մարդիկ ինչ են սպասում իր գործողություններից ու արարքներից, ինչպես նաև նրանց արձագանքն այդ գործողությունների հանդեպ:

Փոխադարձ սպասումների կապվածությունն առանձին անձի համար ստեղծում է կանխատեսելիության իրավիճակ, սոցիումում գոյություն ունենալու և զարգանալու կայուն, հուսալի պայմաններ: Սոցիալական ցնցումները խախտում են կայունությունը, ծնում են տագնապի, անվստահության տրամադրություններ: Տեղի է ունենում սոցիալական իրականության ապակայունացում: Սպասումները, կողմնորոշումը դեպի ուրիշները ապահովում են կանխատեսելիության, համախմբվածության, կանոնավորության զգացողություն, որոնք իրենց հերթին ընկած են քաղաքակրթության զարգացման հիմքում:

Միաժամանակ անձը՝ որպես սոցիալական հարաբերությունների սուբյեկտ, ունի ինքնավարություն, հասարակությունից որոշակի չափով անկախություն:

Անձնական անկախությունը ենթադրում է ինքնագիտակցության, ինքնավերլուծության, ինքնագնահատման, ինքնավերահսկման ընդունակության առկայություն:

Անձի ինքնագիտակցությունը որոշում է կենսական դիրքորոշումը, վարքագծի սկզբունքները, որոնք հիմնված են աշխարհայացքային կողմնորոշումների, սոցիալական արժեքների, գաղափարների և բարոյական նորմերի վրա:

Անձի և սոցիալական միջավայրի փոխհարաբերությունները, միջավայրին հարմարվելու և ինքնահիրացման պայմանները նշանակալի չափով որոշվում են

անձի ազատությամբ, նրա ինքնուրույնության աստիճանով: Անձի ազատությունը հանգում է ընտրության հնարավորությանը, որն ընձեռում է հասարակությունը: Հասարակության մեջ անձի ազատությունը բացարձակ չէ: Այն կարգավորվում է այլ անձանց ազատության սահմաններով: Յուրաքանչյուրի ազատությունն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի ազատությունը:

Մարդու փոխազդեցությունը հասարակության հետ նշանակում է՝ սոցիալականացում: Մարդը սոցիալականացվում է հասարակության հետ, այլ մարդկանց հետ հաղորդակցվելու միջոցով:

Կազմակերպական սոցիալականացումը անձի կողմից կազմակերպությունում գործող արժեքների ընդունման, ունակությունների բացահայտման, պահանջվող վարքագծի և սոցիալ-մշակութային մտահորիզոնի ձևավորման գործընթաց է, որը կարևոր է կազմակերպությունում սեփական դիրքի ամրապնդման և որպես լիիրավ անդամ հադես գալու համար[1]: Ընդհանուր առմամբ սոցիալականացման գործընթացներն ուղղված են անձի և կազմակերպության հետաքրքրությունների համադրմանը: Սոցիալականացման արագությամբ և արդյունավետությամբ է որոշվում անձնակազմի հոսունությունը, արտադրողականությունը և հավատարմությունը: Այսինքն կազմակերպության գործունեության կայունությունն ու արդյունավետությունը կախված է վերջինս՝ նոր աշխատողներին սոցիալականացնելու ունակությունից[2]:

Սոցիալականացման հակադիր գործընթացը, որն ուղղված է կազմակերպության մշակույթի փոփոխությանը, կոչվում է անհատականացում: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ աշխատողները, համաձայն չլինելով կազմակերպական մշակույթի հիմնական սկզբունքների հետ, ներազդում են կազմակերպության սոցիալական համակարգի վրա:

Սոցիալականացումն իրականացվում է մի քանի փուլերով.[3]

- *Նախնական* փուլում աշխատողը պարզում է աշխատանքի և կազմակերպության մասին՝ մինչև աշխատանքի ընդունվելը: Այնուհետև ընդհանուր պահանջները հաստակեցվում են կոնկրետ կազմակերպության ընդունվելիս ընտրության գործընթացում:
- *«Բախման»* փուլում նոր աշխատողը արդեն անմիջականորեն աշխատանքային գործընթացում բախվում է իրականությանը, համեմատում է այն իր սպասումների հետ:
- *«Կերպարանափոխության»* փուլում տեղի է ունենում հարմարում շեղումներին, սպասումների և իրականության համաձայնեցում:

---

[1] «Организационное поведение»: Учебник для вузов / Под ред. Г. Р. Латфуллина, О. Н. Громовой.: ЗАО Издательский дом «Питер»; Санкт-Петербург; 2004. С. 236.

[2] **Шейн Э.** Организационная культура и лидерство. – СПб.: Питер, 2008. – С. 116.

[3] **Горелов О.И.** Организационное поведение: учеб.курс -М: МИЭМП, 2009. – с. 328.

Կազմակերպություն հաջող մուտք գործելու անհրաժեշտ պայմանն է ուսումնասիրել կազմակերպության այն արժեքների, կանոնների, նորմերի և վարքի կարծրատիպերի ամբողջությունը, որոնք առանցքային են անձի և կազմակերպական միջավայրի փոխգործունեության սկզբնական փուլի համար:

Անձի մուտքը կազմակերպություն սոցիալականացման բարդ և կարևոր գործընթաց է, որի հաջողությունից է կախված ոչ միայն աշխատողի, այլև կազմակերպության հետագա արդյունավետ գործունեությունը[4]:

Կազմակերպություն անձի մուտքի առաջին և կարևոր խնդիրը հարմարվողականության (ադապտացիա) խնդիրն է [5]:

Կազմակերպական միջավայրին նոր աշխատողների սոցիալ-մշակութային ադապտացիային նպաստում է կազմակերպական մշակույթը, իսկ նոր աշխատատեղում աշխատողի հաջողությունները առաջին հերթին կախված են ոչ թե աշխատանքի բնույթից, այլ այն սոցիալական պայմաններից, որոնցում նա աշխատում է:

Հիմնական արժեքային, վարքագծային և նորմատիվային բնութագրիչները, որոնք ի սկզբանե պետք է աշխատողը ուսումնասիրի կազմակերպություն մուտք գործելիս, հետևյալներն են.

- կազմակերպության առաքելությունը և հիմանական նպատակները,
- կազմակերպության նպատակին հասնելու անհրաժեշտ ենթակառուցվածքի գործիքակազմը,
- կերպարը, որն ունի և ստեղծում է կազմակերպությունը,
- կազմակերպության առանձնահատկությունն ապահովող սկզբունքները, կանոններն ու նորմերը,
- պարտականությունները, որոնք պետք կատարի աշխատողը,
- վարքագծի ստանդարտները, որոնց պետք է հետևի աշխատողն իր պարտականությունները կատարելիս:

Հարմարվողականության գործընթացի ոչ ճիշտ կազմակերպման հետևանքով կարող է առաջանալ «սոցիալականացման ճգնաժամ», որի արդյունքում աշխատողն ունենում է տագնապի և անվստահության զգացողություն: Նոր աշխատողի հաջողված սոցիալականացման մասին կարելի է դատել հետևյալ բնութագրիչներից ելնելով՝[6]

- Չունի լարվածության, վախի, անվստահության զգացողություն:
- Արդեն տիրապետում է անհրաժեշտ ծավալի գիտելիքների և ունակությունների:

---

[4] **Горелов О.И.** Организационное поведение: учеб. курс – М: МИЭМП, 2009. – с 331.

[5] **Грошев И.** Особенности влияния организационной культуры на эффективность деятельности персонала фирмы//Проблемы теории и практики управления. 2006. №7. С. 115.

[6] **Шведова Т.О.** Организация системы адаптации новых сотрудников//Справочник по управлению персоналом.-2010. №4.-С.41-42.

❖ Աշխատանքային ցուցանիշները բավարարում են ստորաբաժանման ղեկավարին:

❖ Իր աշխատանքը համարում է արդարացի գնահատված և այլն:

Սոցիալականացումն իրականացվում է մի շարք բազմաբնույթ մեխանիզմների միջոցով, որոնք դասակարգվում են հետևյալ խմբերում.[7]

Ավանդական մեխանիզմը այն հայացքների, համոզմունքների և վարքագծի նորմերի յուրացումն է, որոնք բնորոշ են անձի ընտանիքին և մոտ շրջապատին:

Ինստիտուցիոնալ մեխանիզմը գործում է տարբեր կազմակերպությունների, կառույցների հետ անձի փոխգործունեության ընթացքում, օրինակ՝ մանկապարտեզ, դպրոց, բուհ, բանակ, պետական կառավարման մարմիններ և այլն:

Ոճականացված մեխանիզմը գործում է ենթամշակույթի շրջանակներում: Ենթամշակույթը նորմերի, արժեքների, վարքագծային դրսևորումների ամբողջություն է, որը բնորոշ է մարդկանց որոշակի խմբի, որով էլ պայմանավորված է տվյալ մարդկանց ապրելաոճը:

Միջանձնային մեխանիզմը իրագործվում է այլ մարդկանց հետ շփման ընթացքում, ընդ որում վերջիններս պետք է էական նշանակություն ունենան անձի համար, օրինակ՝ ծնող, ուսուցիչ, ընկեր և այլն:

Ռեֆլեքսային մեխանիզմը իրականացվում է անհատական ապրումների և գիտակցության, ներքին երկխոսության միջոցով, որում անձը ուսումնասիրում, գնահատում, ընդունում կամ մերժում է ընտանիքին, հասակակիցներին, հասարակության տարբեր ինստիտուտներին բնորոշ այս կամ այն արժեքները:

Յուրաքանչյուր անձի սոցիալականացումը իրականացվում է այս բոլոր մեխանիզմներով: Սակայն սոցիալականացման գործընթացում դրանցից յուրաքանչյուրի դերը, տեսակարար կշիռը տարբեր է:

Կազմակերպական սոցիալականցման ամենադժվար հաղթահարելի խնդիրը համարվում է աշխատողների վարքի շեղումները:

Անձի այն սոցիալական գործողությունները, արարքները, գործունեությունը, որոնք չեն համապատասխանում, հակասում են տվյալ հասարակության մեջ ընդունված և գործածվող վարքի նորմերին, կոչվում են ***շեղվող վարք:***

Անձի սոցիալական վարքի շեղումները իրենց արտահայտությունն են գտնում նրա տարբեր անկարգությունների, իրավախախտումների, հանցագործությունների, զանցանքների և այլաբնույթ բացասական դրսևորումների մեջ: Անձի վարքի շեղման նախադրյալները դրվում են նրա օնթոգենետիկական զարգացման սկզբնափուլում՝ վաղ մանկության և նախադպրոցական տարիքում և աստիճանաբար խորանում, արմատավորվում են հաջորդ տարիքային շրջաններում: 2-3 տարեկան երեխայի կամակորությունը, իր ուզածին

[7] **Мудрик А.В.** Социализация человека. 2-е изд.- Академия: Высшее профессиональное образование, 2006. – с 25.

ամեն գնով հասնելու ձգտումը, 5-6 տարեկանի նեգատիվիզմը (անձի ակտիվ դիմադրությունը մանկավարժական ներգործությանը, որը հակասում է իր պահանջմունքներին), ստախոսությունը, բամբասկոտությունը և ցինիկությունը այն հոգեբանական նախադրյալներն են, որոնք կարող են դառնալ հետագայում անձնային որակներ և շեղել անձի վարքը:

Մենեջմենթում «շեղված վարքագիծ» հասկացությունը, բացի ոչ օրինական գործողության, նշանակում է աշխատատեղում աշխատողի կողմից ցանկացած անթույլատրելի գործողության իրականացում, այդ թվում՝ խաբեություն և գողություն այլ աշխատողներից, սպառողներից, գործընկերներից, մատակարարներից և այլն:

Այսպիսով, շեղված վարքագիծը վարքի այնպիսի դրսևորումն է, որը հավանության չի արժանանում ղեկավարության կողմից: Ըստ ամերիկյան հետազոտողների՝ աշխատողների շեղված վարքագծի տարբեր դրսևորումների պատճառով կազմակերպությունները տարեկան 20 մլրդ դոլարի վնաս են կրում, ամերիկյան կազմակերպությունների մոտ 30%-ի սնանկացման պատճառը է հանդիսանում աշխատողների կողմից կազմակերպական վարքագծի նորմերի խախտումը[8]:

Ըստ Ա. Կիբանովայի՝ աշխատողն իրավունք ունի ընդունել կամ չընդունել կազմակերպությունում գոյություն ունեցող վարքագծի նորմերը, արժեքները և փիլիսոփայությունը: Անձի վարքագծի յուրաքանչյուր ձև կարելի է բնութագրել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ մոտիվներով: Կախված անձի վարքագծի հիմնական տարրերից՝ տարբերում են կազմակերպությունում վարքագծի դրսևորման չորս ձև՝[9]

1. Կազմակերպության կարգապահ և հավատարիմ անդամ, որը հակված է կազմակերպության արժեքներն ու վարքագծի նորմերն ընդունելուն:
2. Կազմակերպության «հարմարվող» անդամ, որը հակված է ընդունել կազմակերպության արժեքները, համապատասխանել վարքագծի ձևերին և նորմերին, սակայն նրան չի կարելի համարել վստահելի աշխատող, քանի որ կարող է ցանկացած պահի անել այնպիսի բան, որը հակասում է կազմակերպության արժեքներին, բայց համապատասխանում է իր հետաքրքրություններին:
3. Կազմակերպության «օրիգինալ» անդամ, որը ընդունում է կազմակերպության արժեքային համակարգը, բայց չի համապատասխանում վարքագծի նորմերին: Այս դեպքում աշխատողի մոտ կարող է դժվարու-

[8] **В. Субботин,** Отклоняющееся поведение в организациях: как с этим бороться. 06.06. 2007. http://www.antropos.ru/ articles_item.php? lang=rus&aid=63

[9] Управление персоналом: Учебник для вузов/Под ред. А.Я. Кибанова - М.:"Издательство ПРИОР", 2010. –С.218.

թյուններ առաջնային գործընկերների և ղեկավարների հետ փոխհարաբերություններում:

4. Կազմակերպության «ապստամբ» անդամ, որը բնութագրվում է նրանով, որ անձը չի ընդունում ո՛չ արժեքային համակարգը, ո՛չ վարքագծի նորմերը, անընդհատ ստեղծում է բախումնային իրավիճակներ: Այս դեպքում խոսքը գնում է շեղված վարքագծի մասին (տե՛ս գծապատկեր 5):

բարձր	հնազանդություն	սոցիալական անհատականություն
սոցիալականացում	մեկուսացում	ապստամբություն
ցածր	ցածր	բարձր

անհատականացում

Գծապատկեր 5. Անհատականացման և սոցիալականացման մատրիցա[10]

Երկու ծայրահեղ իրավիճակները՝ լրիվ հնազանդությունը և լրիվ ապստամբությունը, բացասական ազդեցություն են ունենում կազմակերպության գործունեության վրա (ինչպես նաև աշխատողի կարիերայի վրա): Մեկուսացումը ևս դիտվում է որպես անարդյունավետ իրավիճակ: Կառուցողական բանավեճերը և փորձարկումները, խրախուսող մշակույթը թույլ են տալիս ստեղծագործ անձանց իրենց էական ներդրումն ունենալ կազմակերպության նպատակների իրագործման մեջ:

Վարքագծի շեղման պատճառները կարող են պայմանավորված լինել ինչպես անձի անհատական առանձնահատկություններով, այնպես էլ անձի շրջապատով՝ հասարակություն, քաղաքականություն, սոցիալական լարվածություն աշխատանքում, ընտանիքում և այլն:

Այսպիսով, վերը շարադրվածից կարող ենք եզրահանգել, որ յուրաքանչյուր կազմակերպությունում կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նոր աշխատողների հարմարվողականությանը և սոցիալականացման գործընթացի գիտացված և ճիշտ իրականացմանը: Եթե կառավարիչը հետքրքրված է նոր աշխատողի գործունեության արդյունավետությամբ, ապա պետք է յուրաքանչյուր աշխատողի ընկալի որպես անհատ և անցկացնի միջոցառումներ հարմարվողականության

[10] **Ньюстром, Дж.В., Дэвис, К.** Организационное поведение / Дж. В. Ньюстром, К. Дэвис - СПб: Издательство Питер-Юг, 2006. – С.106.

ժամանակահատվածը կրճատելու և աշխատողին սահուն կերպով կոլեկտիվում ներգրավելու ուղղությամբ: Դա կհանգեցնի կարճ ժամանակահատվածում աշխատողի աշխատանքի արտադրողականության աճին և արդյունքում կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Բանալի բառեր - Սոցիալականացման գործընթաց, կազմակերպական սոցիալականացում, անձնակազմի հոսունություն, սոցիալ-մշակութային հարմարվողականություն, անհատականացում, սոցիալականացման ճգնաժամ, շեղված վարքագիծ:

Տաթևիկ Սարգսյան, Անհատի սոցիալականացումը կազմակերպությունում - Անձի մուտքը կազմակերպություն սոցիալականցման բարդ և կարևոր գործընթաց է, որի հաջողությունից է կախված ոչ միայն աշխատողի, այլև կազմակերպության հետագա արդյունավետ գործունեությունը: Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է: Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր:

Հոդվածում ներկայացվել է անձի սոցիալականացման էությունը, մեխանիզմները և դերը կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Татевик Саргсян, Социализация индивида в организации - Вхождение человека в организацию – это сложный и важный процесс социализации, от успешности которого зависит дальнейшее эффективное функционирование, как сотрудников, так и самой организации. Социализация - это процесс усвоения индивидом социальных норм, ценностей и знаний, принятых в обществе. Человек участвует в процессе социализации на протяжении всей своей жизни, без которых он не может взять на себя какую-либо общественно значимую социальную роль.

В статье представлены сущность, механизмы и роль социализации человека в повышении эффективности деятельности организации.

Tatevik Sagsyan, The individual's socialization in the company - Individual’s entry into a company is a complicated and important process of socialization, which efficiency depends not only on the employee, but also on the organization's further effective functioning. Socialization is a process of mastering social norms, values and knowledge adopted by the individual in that society. A person is involved in the process of socialization throughout his life, without which he can’t fulfill his duties in the society.

The article presents the essence, mechanisms and the role of a person's socialization in raising the effectiveness of the organization's activities.

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՌՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ (BALANCED SCORECARD) ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ժամանակակից աշխարհում, բարձր մրցակցության, տեխնոլոգիական առաջընթացի և արագ փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում կառավարման նոր համակարգերի կիրառումը դարձել է անհրաժեշտություն: Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (ՑՀՀ) մեթոդոլոգիայի հեղինակներ Դեվիդ Նորթոնի և Ռոբերտ Կապլանի կարծիքով ընկերության կառավարումը միայն ֆինանսական վիճակն արտացոլող տվյալներով նման է այնպիսի ինքնաթիռ վարելուն, որի խցիկում առկա է միայն մեկ կառավարման վահանակ:[1] Ընկերությունների կառավարման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք պահանջում են որոշակի գրաֆիկական մոդելների, ցուցանիշների ուսումնասիրություն, մշակում և կիրառում: Եվ հենց դրանք էլ թույլ են տալիս առավելագույնս օգտագործել կառավարման տարբեր մակարդակների աշխատակիցների գիտելիքները, ունակություններն ու կառավարչական որոշումներ ընդունելու հնարավորությունը:[2] Իհարկե, կազմակերպության ռազմավարության նախագծումը, մշակումը, պլանավորումը, դրա իրագործումն ու վերահսկողությունն իրականացվում է ղեկավարների, անձնակազմի կողմից, այլ ոչ թե ծրագրային պահովման: Սակայն, ռազմավարության իրագործումն ու Ցուցանիշերի հաշվեկշռված համակարգի արդյունավետությունը մեծապես կախված են համապատասխան ծրագրերից և ավտոմատացման գործիքներից:

Ավտոմատացման շնորհիվ ՑՀՀ իրագործումը դառնում է համակարգված և կառուցվածքային: Ծրագրային միջոցները ընկերության բազմաբնույթ տվյալները վերածում են տեղեկատվության և գիտելիքի և հնարավորություն են տալիս մշակել և օգտագործել կատարողականի մասին տեղեկատվությունը: Գործունեության իրական տվյալները համակարգված ձևով ներկայացվում են օգտագործողին, ինչը հնարավորություն է տալիս արագ որոշումներ կայացնել, համապատասխան փոփոխություններ և/կամ ճշգրտումներ իրականացնել:

Փոքր կազմակերպությունները, իհարկե, կարող են ցուցանիշների հաշվեկշռված համակարգ կիրառել MC Office Excel ծրագրով (Նկար 1), սակայն, կառավարման տարբեր մակարդակներ, շատ աշխատակիցներ ու ստորաբաժանումներ ունեցող ընկերություններում կարիք կա ներդնելու հատուկ ծրագրեր,

---

[1] **Kaplan, R.S.** and **Norton, D.P.** (1996), The Balanced Scorecard: Translating Strategy into Action, Harvard Business School Press, Boston, MA., 322 page.

[2] **Ваганян Г.А., Ваганян О.Г.** Виртуальные технологии менеджмента (системотехника электронного управления). Монография. Ереван, Нжар, 2005., стр. 50.

որոնք նախատեսված են մեծ քանակությամբ տվյալների հետ աշխատանքի համար, ունեն հարուստ գործիքակազմ՝ ՑՀՀ-ի հնարավորությունները ամբողջությամբ կիրառելու համար: MC Office Excel-ի և տարբեր ծրագրերի հիմքում ընկած են Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի հիմնական հասկացությունները:

Բաղադրիչներ (Perspectives): ՑՀՀ-ի համատեքստում ընկերության գործունեությունը դիտարկվում է որպես ֆինանսներ, հաճախորդներ, ներքին գործընթացներ և ուսուցում ու աճ բաղադրիչների ամբողջություն: Հաշվեկշռվածության գաղափարը կայանում է նրանում, որ բաղադրիչներից յուրաքանչյուրի համար սահմանվում են միմյանց հետ կապված երկարաժամկետ ռազմավարական խնդիրներ և նպատակներ:[3] Ռազմավարական նպատակների իրականացման առումով կարևորվում են արդյունավետ կազմակերպվող գործընթացները, որոնք ուղղված են հաճախորդների ներգրավմանն ու նրանց պահանջմունքների բավարարմանը և որոնցում ներգրավված են բանկի բոլոր աշխատակիցները:

Բնութագրիչներ (Measures): Յուրաքանչյուր ռազմավարական նպատակ կարող է բնութագրվել/չափվել մի քանի ցուցանիշներով, որոնց անվանում են արդյունավետության առանցքային ցուցանիշներ (Key performance indicators)

Թիրախային արժեք (Targets): Արդյունավետության առանցքային ցուցանիշներով արտահայտված բնութագրիչները պետք է ունենան իրենց թիրախային արժեքներ, որոնց նպատակաուղղված է ընկերության գործունեությունը:

Գործողություններ (Initiatives): Այստեղ ներկայացվում են այն գործողությունները, որոնք միտված են թիրախային ցուցանիշներին և ռազմավարական նպատակներին հասնելուն:

Երբ ցուցանիշների համակարգ է ստեղծվում առևտրային բանկի, դրա առանձին ստորաբաժանումների և յուրաքանչյուր աշխտակցի համար առանձին, համապատասխան ծրագրային գործիքի կիրառումը անխուսափելի է: Ժամանակակից ծրագրերը օգտվողների կարգավիճակից կախված՝ առաջարկում են տեղեկատվության հասանելիության, ցուցանիշների, ռազմավարական քարտեզների հետ աշխատելու ազատության տարբեր մակարդակներ:

[3] **Պետրոսյան Լ.Վ.** «Առևտրային բանկերում Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (Balanced Scorecard-BSC) կիրառման միջազգային փորձը», Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի գիտական հոդվածների 8-րդ ժողովածու, Երևան 2017, էջ 174 :



Նկար 1. MC Office Excel-ի միջոցով ՑՀՀ-ի օրինակ[4]

Ինչպե՞ս ընտրել ծրագրային ապահովում, որն առավելագույնս հարմար կլինի կոնկրետ առևտրային բանկի գործունեությանը: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի համակարգ, որը.

- հեշտությամբ կարելի է ադապտացնել և հարմարեցնել հենց տվյալ բանկի պահանջներին և ռազմավարական նպատակներին
- հնարավորություն է տալիս ապահովել և՛ քանակական, և՛ որակական տվյալների հաշվետվությունների ստեղծում՝ տարբեր գրաֆիկների, թվային տվյալների և որակական արդյունքների վերլուծության հիման վրա
- թույլ է տալիս ստացված հաշվետվության տվյալները արտածել օգտագործման համար հարմար տարբերակով (excel, pdf, Power Point)
- հեշտությամբ կարելի է ինտեգրել բանկի առկա համակարգերի հետ առանց ժամանակի և միջոցների էական կորուստի
- ապահովում է տարբեր օգտատերերի իրավասությունների սահմանափակում: Առանձին օգտատերեր պետք է ունենան տվյալների հետ աշխատանքի և տվյալներ դիտելու տարբեր իրավասություններ: Օրինակ՝ հաճախորդների սպասարկման մասնագետի և տնօրինության անդամի համար ցուցանիշների համակարգերի (scorecards) առանձին դաշտերը պետք է տարբերակված լինեն
- ունի բջջային հավելված, քանի որ ժամանակակից աշխարհում սմարթֆոնների միջոցով բիզնեսի կառավարումը դարձել է անհրաժեշտություն: Կոնկրետ ծրագրային ապահովումը պետք է նախատեսված լինի նաև այդ տարբերակով օգտագործելու համար

[4] https://www.clearpointstrategy.com/

- ունի անվտանգության բարձր մակարդակ: Առևտրային բանկի գործունեության բոլոր կարևորագույն ցուցանիշները, ներքին գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը, ռազմավարական նպատակներին վերաբերող տեղեկատվությունն արտացոլվում է Ցուցանիշների հաշվեկշռված համակարգում, հետևաբար, անվտանգ և ապահով համակարգի կիրառումը խիստ կարևոր է:

Գոյություն ունեն տարբեր ծրագրեր ու գործիքներ, որոնցից են[5].

QickScore, BSC Designer, ClearPointStrategy, Strategy Map, iStrategy, ESM (Executive Strategy Manager), PeopleSoft Scorecard, QPR Software, i-nexus, Theoris Vision, GroSum, Andara, Corporater, SmartDraw, PBL Scorecard, Spider Strategies.

Քանի որ Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի ինստիտուտի (Balanced scorecard institute) կողմից հավաստագրված ծրագիրը QickScore-ն է, ավելի մանրամասն անդրադառնանք այդ ծրագրային ապահովմանը [6]:

Ծրագրի գործիկազմը ներկայացնենք ստորև:

Ցուցանիշների համակարգը կամ գնահատման քարտը (Scorecard) որոշակի ժամանակահատվածում ամբողջ ընկերության, առանձին կազմակերպական միավորի կամ աշխատողի մակարդակով առաջընթացի գրաֆիկական ներկայացումն է՝ կոնկրետ նպատակին հասնելու իմաստով:



Նկար 2. ՑՀՀ-ի գնահատման քարտ

[5] https://www.predictiveanalyticstoday.com/open-source-balanced-scorecard-software/

[6] https://balancedscorecards.com/

Ռազմավարական քարտեզը (strategy map) ավտոմատ գեներացվում է՝ բաղադրիչներից և համապատասխան ընտրված նպատակներից ելնելով: Այն հստակ պատկերում է պատճառահետևանքային կապերը, որ առկա են տարբեր բաղադրիչների համար սահմանված նպատակների մեջ:



Նկար 3. ՑՀՀ-ի ռազմավարական քարտեզ

Կառավարման վահանակների (dashboards) շնորհիվ իրական ժամանակում ներկայացվում են տարբեր ցուցանիների փոփոխությունները: Գրաֆիկական պատկերների միջոցով արտահայտված տվյալները կիրառվում են իրավիճակն արագ գնահատելու ու համապատասխան որոշումներ կայացնելու համար:



Նկար 4. ՅՀՀ-ի կառավարման վահանակ

Գործողությունները (Initiatives) կարող են ներկայացվել որոշակի սահմանված բյուջեի և ժամանակի կտրվածքով:



Նկար 5. ՅՀՀ-ի գործողությունների ներկայացման օրինակ

Ծրագիրը հնարավորություն է տալիս ցուցանիշները ներկայացնել ամփոփ հաշվետվությունների տեսքով կամ էլեկտրոնային նամակով ծանուցումներ ստանալ, երբ, օրինակ, որևէ ցուցանիշ նվազում է սահմանային շեմից:

Նկար 6. ՑՀՀ-ի հաշվետվության օրինակ

Այսպիսով, Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի ծրագրերը հնարավորություն են տալիս գնահատել առևտրային բանկի գործունեությունը՝ ըստ չորս բաղադրիչների և ըստ կառավարման տարբեր մակարդակների: Հարուստ գործիքակազմի շնորհիվ բանկի ղեկավարները, աշխատակիցները կարողանում են հետևել արդյունավետության առանցքային ցուցանիշների արդյունքներին, դրանց դինամիկային, ցանկալի արժեքին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումների իրագործմանը: Գրաֆիկական պատկերներն ու հաշվետվությունները, իրական ժամանակում արտացոլելով փոփոխություն-ները, հնարավորություն են տալիս վերահսկել բանկի գործունեությունը, ճիշտ և ժամանակին կառավարչական որոշումներ ընդունել, անհրաժեշտության դեպքում, փոխել գործողությունների ծրագիրը՝ նախանշված նպատակներին հասնելու համար:

Բանալի բառեր - Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ (ՑՀՀ), առևտրային բանկ, ծրագրային ապահովում, ավտոմատացում, գնահատման քարտ, կառավարման վահանակ, ռազմավարական քարտեզ:

Լիանա Պետրոսյան, Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (Balanced Scorecard) ծրագրային ապահովումն ու գործիքակազմը - Հոդվածում ներկայացված են կառավարման ժամանակակից գործիք հանդիսացող Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի ծրագրային ապահովման տարբերակները, դրանց հնարավորություններն ու առավելությունները: Մանրամասն ներկայացված է այդ ծրագրերից մեկը, որի նկարներով բացահայտվում են տվյալների ներկայացման, դրանց փոփոխման և կառավարման համար առաջարկվող լուծումները: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև ավտոմատացված համակարգի պահանջներին՝ դրա ընտրությունն ու ինտեգրումը բանկի առկա միջավայրին ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով:

Лиана Петросян, Программное обеспечение и инструментарий Сбалансированной системы показателей (Balanced Scorecard) - В статье представлены варианты программного обеспечения сбалансированной системы показателей как современного инструмента управления, их возможности и преимущества. Подробно описана одна из этих программ, в иллюстрациях которой выявляются предлагаемые решения для представления данных, их изменения и управления. Особое внимание уделено требованиям автоматизированной системы, чтобы более эффективно сделать ее выбор и интеграцию в существующею среду банка.

Liana Petrosyan, Software and toolkit of Balanced Scorecard - In the article different types of Balanced Scorecard software, their capabilities and advantages are presented. One of the programs is examined more detailed. Its screenshots reveal provided solutions for data presentation, change and management. Particular attention is drawn to criteria of choosing automated system to make the integration process into the bank's existing environment easier.

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴԱՐԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՎԱՆՈ ՂԱԶԱԶՅԱՆ

Ներդրումների իրականացումը ցանկացած երկրում հանգեցնում է տնտեսավարման ակտիվացմանը և կայուն զարգացմանը: Ընդ որում, ցանկացած պարագայում ներդրումային ծրագրերը իրենց սոցիալ-տնտեսական հետևանքներն են թողնում ինչպես տնտեսության միկրո, այնպես էլ մակրո մակարդակներում: Փորձը ցույց է տալիս, որ ներդրումների նկատմամբ պետությունը ցույց է ատլիս առանձնահատուկ կարգավորման քաղաքականություն[1], քանի որ եթե միկրոմակարդակում ներդրումները դիտարկվում են գործարարության ընդլայնման կամ ակտիվացման տեսանկյունից, ապա մակրոմակարդակով դրամց կառավարումը խնդիր է դնում որոշելու ներդրումների մուլտիպլիկացիոն էֆֆեկտը, արդյունավետության դրսևորումները ոչ միայն կոնկրետ ոլորտում, այլև դրան հարող տնտեսական այլ հատվածներում:

Տնտեսության միկրո մակարդակում ներդրումները հիմնականում դրսևորվում են հիմնականում մի շարք արդյունքներով, ինչպիսիք են.

- ընթացող արտադրության ընդլայնումը և զարգացումը՝ ապահովելով եկամուտների աճ և ձեռնարկատիրական գործունեության կայուն մակարդակ,
- արդեն իսկ բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող ոչ ընթացիկ ակտիվների վերափոխումը նորերով,
- արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը, կիրառելով տեխնոլոգիական նոր լուծումներ,
- մրցունակ ապրանքատեսակների արտադրություն և ծառայությունների մատուցումը
- ապրանքների և ծառայությունների որակի բարձրացում և նոր շուկաների ձեռքբերումը:[2]

Տնտեսության մակրոմակարդակով օտարերկրյա ուղղակի ներդրումները պատճառահետևանքային ազդեցություն են ունենում մի շարք ոլորտներում, ինչպիսիք են.

- մակրոնտեսական մասշտաբով ընդլայնված վերարտադրության քաղաքականության իրականացումը

---

[1] **Պողոսյան Ս.,** "Ներդրումների կառավարման հիմնախնդիրները զբոսաշրջության ոլորտում", "Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա", #3 (153), մարտ, 2013 թ., էջ 12-13:

[2] **Кузяев К.** Прямые иностранные инвестиции::начало экономического чуда? // Общество и экономика. 2007. №4. С. 38-44.

- նորամուծությունների խթանումը՝ ուղղված որակի բարձրացմանը և մրցունակության ապահովմանը,
- տնտեսության տարբեր հատվածների զարգացման հավասարակշռության ձգտումը,
- բյուջետային մուտքերի ավելացմամբ՝ պետության սոցիալական գործառույթների իրականացման աջակցումը:[3]

"Օտարերկրյա ներդրումների մասին" ՀՀ օրենքը ներկայացնում է մեր հանրապետությունում ներդրումների հիմնական տեսակները, որոնք կարող են լինել ինչպես գույքային, ոչ նյութական ակտիվների, այնպես էլ դրամային կամ արժեթղթերի տեսքով (տես գծապատկեր 1): Ընդ որում, ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է օտարերկրյա ներդրումների իրականացման երաշխիքներ, որոնք վերաբերում են ակտիվների պաշտպանվածությանը, դրանց ազգայնացման և բռնագանձման ապահովագրությանը, օտարերկրյա կապիտալի ազատ տեղաշարժերին և այլն:[4]



Գծապատկեր 1. Օտարերկրյա ներդրումների հիմնական տեսակները ՀՀ-ում[5]

Դրան զուգահեռ, մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է, որ ՕՈՒՆ-ների ներգրավման հարցում լուրջ մակրոտնտեսական մարտահրավեր է հանդիսանում նաև հարկային ճկուն քաղաքականության իրականացումը: Մի կողմից, ՕՈՒՆ-ների ակտիվացմամբ, ընդունող երկրում արձանագրվող տնտեսական աճը հանգեցնում է լրացուցիչ հարկող եկամուտների աճի մի շարք հարկատեսակների գծով, ինչպիսիք են.

- շահութահարկը, քանի որ ձևավորվում են նոր արտադրություններ, ծառայությունների մատուցման ոլորտներ, որոնց գործունեությունը ուղեկցվում է հարկային հետևանքներով,

[3] Иностранные инвестиции: Учебное пособие / **Хазанович Э.С.** — М.:1. Кнорус, 2009. С. 105-106.
[4] Օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքը, 1994:
[5] Կազմված է հեղինակի կողմից:

- եկամտային հարկը, քանի որ ներդրումների հետևանքով ձևավորվում են նոր աշխատատեղեր և վճարվող աշխատավարձի հավելաճ, անուղղակի հարկեր (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ), քանի որ ներդրումների արդյունքում աճում է ապրանքաշրջանառությունը, աճում են արտադրանքի վաճառքի և ծառայությունների մատուցման ծավալները:[6]

Սակայն մյուս կողմից, պետությունը ձգտում է օտարերկրյա ներդրումների գծով հնարավորինս սահմանել հարկային և մաքսային արտոնություններ, ավելի շատ ձգտելով ոչ թե հարկերի գանձապետական (ֆիսկալ), այլ խթանիչ գործառույթների իրականացմանը (տես գծապատկեր 2): Եվ ստացվում է այնպես, որ անհրաժեշտություն է առաջանում գնահատելու ներդրումային գործունեության հարկային արտոնությունների արդյունքում բյուջե «թերհավաքագրված հարկերի» հիմնավորվածությունը, այսինքն վերլուծելու ներդրումների գծով հարկային քաղաքականության արդյունավետությունը:



Գծապատկեր 2. Տնտեսավարման համակարգում հարկերի գործառույթները[7]

Հատկանշական է, որ ներկայումս ՀՀ-ում պետությունը ներդրումների գծով թիրախավորում է հարկային այնպիսի գործիքների կիրառումը, որոնք նպաստում են նաև ներդրումների կարգավորիչ գործառույթների իրականացմանը: Այսպես, ՀՀ գործում է սահմանամերձ բնակավայրերում հարկային արտոնություններ սահմանելու մասին օրենք[8], որը նպատակ է հետապնդում աջակցելու ներդրումային քաղաքականության ակտիվացմանը և դրանով իսկ մարզերի համաչափ զարգացմանը:

---

[6] **Պետրոսյան Ա.,** Կրկնակի հարկման կարգավորման բարելավման ուղիները ՀՀ ներդրումային ծրագրերում, //Այլընտրանք, 2016, էջ 99-101:

[7] Կազմվել է հեղինակի կողմից:

[8] «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքը, 2014



Գծապատկեր 3. Օտարերկրյա ներդրումների խթանման օրենսդրական ուղիները ՀՀ-ում[9]

Ընդ որում, ՀՀ հարկային օրենսդրությունը ներդրումների խթանման առումով չի սահմանափակվում միայն սահմանամերձ բնակավայրերով, այլ տրամադրում է նաև հարկային և մաքսային համընդհանուր որոշակի արտոնություններ (տես գծաատկեր 3): Այսպես, Ավելացված արժեքի հարկից ազատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են:[10]

Շահութահարկի գծով գործող օրենսդրական դաշտում նույնպես առկա են դրույթներ, որոնք նպաստում օտարերկրյա ներդրումների խթանմանը: Այսպես, եթե շահութահարկի դրույքաչափը, որպես կանոն, սահմանված է 20%, ապա

[9] Կազմվել է հեղինակի կողմից:
[10] ՀՀ հարկային օրենսգիրք 64-րդ հոդված, 2-րդ կետ, 37-րդ ենթակետ:

առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ նվազ դրույքաչափերով.

1) ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման դիմաց ստացված եկամուտների մասով՝ հինգ տոկոս.
2) պասիվ եկամուտների մասով՝ տասը տոկոս,
3) Համահայկական բանկից ստացվող շահաբաժինների մասով՝ զրո տոկոս.
4) արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ զրո տոկոս:[11]

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող շահութահարկ վճարողի շահութահարկի գումարը հարկման բազայի նկատմամբ հաշվարկվում է շահութահարկի նվազեցված հետևյալ դրույքաչափերով.

- հինգ տոկոս դրույքաչափով, եթե շահութահարկ վճարողների խմբի կողմից հարկային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների մաքսային արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 միլիարդ դրամ.

- երկու տոկոս դրույքաչափով, եթե այդ գումարը կազմում է առնվազն 50 միլիարդ դրամ:[12]

Որպես կանոն, ներդրումները ուղեկցվում են նոր աշխատատեղերի ստեղծմամբ, և այս առումով մեր հանրապետությունում նույնպես գործում են ներդրումներին աջակցման խթանիչ դրույթներ: Այսպես, ՀՀ կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

Մեր հանրապետությունում ներդրումների իրականացման օրենսդրական խթաններ են գործում ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի հարկերի գծով: Այսպես, ավելացված հարկի վճարման գումարի ժամկետը հետաձգվում է ԱՏԳԱԱ դասակարգչի 841920000, 841990150, 8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8426, 8429, 8430, 8435, 8441, 84431, 8452

[11] ՀՀ հարկային օրենսգիրք, հոդ. 125, կետ 4:
[12] ՀՀ հարկային օրենսգիրք, հոդ. 125, կետ 4:

(բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 8478, 8479, 85023100 կամ 870410 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում: Ընդ որում, հաշվարկված ԱԱՀ-ի գումարների՝ պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է՝

1) մեկ տարի ժամկետով, եթե ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկման բազան պակաս է 70 միլիոն դրամից.
2) երկու տարի ժամկետով, եթե ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկման բազան կազմում է 70 միլիոն դրամից (ներառյալ) մինչև 300 միլիոն դրամ.
3) երեք տարի ժամկետով, եթե ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկման բազան կազմում է 300 միլիոն դրամ և ավելի:[13]

Բացի այդ, ԱԱՀ-ից ընդհանրապես ազատվում են ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը:[14]

Ազատ տնտեսական գոտում ներդրումներ կատարողները ազատվում են ինչպես գույքահարկից, ավելացված արժեքի հարկից, այնպես ուղղակի հարկերից: Շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:[15]

Սակայն, միայն հարկային օրենսդրությունը չէ, որ անուղղակի կերպով խթանում է ՀՀ-ում ներդրումների իրականացմանը: Վերլուծաբանները նշում են, որ ՀՀ կառավարությունը մշտապես կարգավորում է գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերը և սահմանում է մաքսային արտոնու-

[13] ՀՀ հարկային օրենսգիրք, հոդվ. 79, կետ 1:
[14] ՀՀ հարկային օրենսգիրք, հոդվ. 64, կետ 2, ենթակետ 23:
[15] ՀՀ հարկային օրենսգիրք, հոդ. 128, կետ 2:

թյուններ:[16] Այսպես, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված կարգով կարգավորվում են գերակա ոլորտում ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծումն օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանների հաստատման հետ կապված հարաբերությունները:

Մասնագիտական գրականությունում օտարերկրյա ներդրումների խթանման կարևոր գործոն են համարում նաև կրկնակի հարկման կանխարգելումը ինչպես ընդունող, այնպես էլ դոնոր երկրներում:[17] Դեռևս 2004 թ. ՀՀ կառավարությունը ընդունել է որոշում եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու վերաբերյալ:[18] Այս առումով, հեղինակները օտարերկրյա ուղղակի ներդրումների պարագայում առաջարկում են կրկնակի հարկման կանխարգելման մոտեցումներ (տես գծապատկեր 4):

Հարկ է նշել, որ չնայած վերոնշյալ հարկային և մաքսային աջակցող լծակների, մեր կարծիքով, օտարերկրյա ներդրումային խթանման շրջանակը դեռևս կարիք ունի ընդլայնման և բարելավման: Նախ, այս ոլորտում թերևս շրջանցվում է սփյուռքի գործոնը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծ է սփուռքահայության ներուժը հայրենիքում ներդրումներ կատարելու առումով: դակցության ոլորտից: Տնտեսության մի շարք ոլորտներում (ադամանդագործություն, ոսկերչություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տրանսպորտ, շինարարություն, ներկայումս ֆինանսական հատված, զբոսաշրջություն և առևտուր) իրականացված ներդրումների գերակշիռ մասը կապված է սփյուռքի հետ: Միայն1994–2001 թթ. ընթացքում հայաստանյան տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 69 տոկոսը սփյուռքի հետ կապված ներդրողներն են եղել, որոնց կողմից 1998–2004

[16] Անանյան Ա. Ներդրումային գործունեության պետական կարգավորման հիմնախնդիրները, //Այլընտրանք, հոկտեմբեր-դեկտեմբեր 2017, էջ 77-85

[17] Եսայան Ե.Ս., Օտարերկրյա ուղղակի ներդրումային քաղաքականության պետական կարգավորումը, // Վիճակագրության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութեր, Եր. 2014 թ., էջ 179-180

[18] "Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին" ՀՀ կառավարության 2004 թ. 7 հոկտեմբերի 1398-Ն որոշումը

թթ. կատարել են շուրջ 275 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում, ինչը կազմել է վերոնշյալ ժամանակահատվածում կատարված ներդրումների շուրջ 25%-ը:[20]



Գծապատկեր 4 Կրկնակի հարկման կանխարգելման սխեման ՕՈՒՆ-ների բնագավառում[19]

Բանալի բառեր - շահութարկի արտոնություններ, հարկային օրենսգիրք, ներդրումների շահութաբերություն, ներդրումներից հարկեր:

Վանո Ղազազյան, Ներդրումների օրենսդրական խթանման հիմնախնդիրները ՀՀ-ում - Այսպիսով, ներդրումների օրենսդրական խթանման հիմնախնդիրների վերլուծության հիման վրա մեր կողմից կատարվել են մի շարք եզրահանգումներ.

[20] Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ, զարգացման հեռանկարներ, //Տնտեսագետ, ՀՊՏՀ, 2015, էջ 96 (252):

[19] **Պետրոսյան Ա.,** Կրկնակի հարկման կարգավորման բարելավման ուղիները ՀՀ ներդրումային ծրագրերում, //Այլընտրանք, 2016, էջ 99-101:

Առաջին, դեռևս ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտում հստակ չեն արձանագրվում դրույթներ, որոնք ուղղակիորեն վերագրվում են հարկային լծակներով ներդրումային գործունեության խթանմանը: Գործող օրենսդրական նորմերով արտոնությունները, որոնք գործում են ուղղակի և անուղղակի հարկերի հաշվարկման ոլորտում, անհրաժեշտ է կոնկրետացնել և հստակ թիրախավորել հենց ներդրումային գործունեությանը:

Երկրորդ, ՀՀ-ում անհրաժեշտ է ընդունել օրենք, որը կամբողջացներ ոչ միայն օտարերկրյա ներդրումների, այլև տեղացի գործարարների և սփյուռքի ներդրումների աջակցման գործընթացը: Տեղական ներդրումների օրենսդրական պաշտպանվածության պակասը հաճախ ստիպում է հայաստանաբնակ գործարարներին դուրս հանել կապիտալը երկրից և գործունեություն ծավալել արտասահմանում:[21] Մյուս կողմից, սփյուռքահայ գործարարները չունենալով ոչ մի լրացուցիչ արտոնություն ներդրումների իրագործման ոլոտում, առանձնապես չեն մոտիվացվում հայրենիքում գործունեություն ծավալման ուղղությամբ:

Երրորդ, անհրաժեշտ է մշակել ներդրումների ոլորտում կիրառվող հարկային քաղաքականության իրագործման արդյունավետության գնահատման մեթոդաբանություն, նրանում հակակշռելով ներդրումային գործունեությունից ձևավորվող հարկերի հավաքագրման արդյունքները և ներդրումներին տրվող հարկային արտոնություններից կրճատվող հարկային մուտքերը: Դրանով իսկ կհիմնավորվեն ներդրումային ոլորտում կիրառվող հարկագանձման ֆիսկալ, խթանիչ և կարգավորիչ գործառույթների ֆինանսատնտեսական հետևանքները:

Вано Казазян, Проблемы законадательного стимулирования инвестиции в РА - В статье анализируются пути законодательного стимулирования иностранных инвестиции в РА. В частности, в действовавшем Налоговом Кодексе РА четко не приводятся специальные статьи, прямо относящие к стимулированию иностранных инвестиций по налоговым рычагам. В этой связи, предлагается конкретизации статей налоговых льгот, нацеленные именно на иностранные инвестиции в РА. Кроме того, предлагается принять специальный закон, стимулирующее не только иностранные, но и внутренние и национальные инвестиции, имея ввиду также финансовые внедрения от армянской диаспоры. В статье, обосновывается необходимость применения методики оценки эффективности налоговой политики в области инвестиции.

Vano Ghazazyan, Problems of legislative incentives of investments in RA - The article analyzes ways of legislative stimulation of foreign investments in the Republic of Armenia. In particular, the current Tax Code of Armenia does not clearly state special articles, directly related to the promotion of foreign investment in tax levers. In

[21] Կապիտալի արտահոսքը մտահոգիչ է դառնում, // https://www.aravot.am/2018/03/16/943016/

this connection, it is proposed to specify the articles of tax benefits, aimed specifically at foreign investments in Armenia. In addition, it is proposed to adopt a special law, that stimulates not only foreign, but also domestic and national investments, having in view also financial implications from the Armenian diaspora. The article substantiates the necessity of applying the methodology for assessing the effectiveness of the tax policy implementation in the field of investment.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՕՐԻՆԱԿՈՎ

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆ

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության գործարար ակտիվությունը և հուսալիությունը բնութագրվում է նրա ֆինանսական դրությամբ:

Ֆինանսական դրությունը իրենից ներկայացնում է կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսավորման հնարավորությունը և ինքնազարգացման ունակությունը: Այն արտացոլվում է ֆինանսական ռեսուրսերի օպտիմալ ձևավորման, նպատակահարմար տեղաբաշխման և արդյունավետ օգտագործման մեջ:[1]

Կազմակերպության տնտեսական գործունեությունը իրականացվում է տարբեր ոլորտներում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսական և այլն, որտեղ միջոցների անընդմեջ շրջանառության հետևանքով անընդհատ փոփոխվում է ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների կառուցվածքը, ֆինանսական ռեսուրսների պահանջարկը՝ ազդելով նրա ֆինանսական դրության վրա:

Կայուն ֆինանսական դրություն ունենալու համար կազմակերպությանը անհրաժեշտ է հաջողությամբ իրականացնել իր տնտեսական գործունեությունը, անընդհատ փոփոխվող միջավայրում պահպանել ակտիվների ու պասիվների միջև օպտիմալ հավասարակշռվածություն և թույլատրելի ռիսկի սահմաններում ապահովել վճարունակության ու ներդրումային գրավչության բարձր մակարդակ:

Ֆինանսական դրության վերլուծական հետազոտություններով շահագրգռված են և՛ տվյալ կազմակերպությունը, և՛ շուկայի մասնակիցները: Հետևաբար ֆինանսական վերլուծությունն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթ:

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը և գնահատումը իրականացվում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տվյալների հիման վրա: Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն են: Դրանց նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է, որն օգտակար է օգտագործողների լայն շրջանակների կողմից տնտեսական որոշումներ կայացման համար:

[1] Տնտեսական գործունեության վերլուծություն ,Ա. Սարգսյան, Կ. Առաքելյան, , Երևան, Տնտեսագետ, 2005 թ., էջ 312:



Գծապատկեր 1. Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության մեթոդները

Բացի հիմնական ֆինանսական հաշվետվություններից՝ ֆինանսական վերլուծաբանը օգտագործում է տեղեկատվության այլ աղբյուրներ ևս՝ տնտեսական վիճակագրություն, ճյուղի մասին հաշվետվություն, առևտրային հրապարակումներ, մրցակիցների հրապարակումներ, ԶԼՄ հրապարակումներ և այլն:

Կայուն ֆինանսական դրությունը և իրականացված վերլուծությունները կարևոր նշանակություն ունեն նաև կազմակերպությունների վարկանշման գոր-

ծընթացում: Մասնավորապես՝ ելնելով կազմակերպության որակական և ֆինանսական գնահատականներից ՀՀ ԿԲ-ը իրականացնում է ՀՀ տարածքում գործող առևտրային կազմակերպությունների վարկանշում: Ընկերության ֆինանսական վերլուծություն իրականացնելիս՝ հաշվի են առնվում ակտիվների արդյունավետությունը, գործունեության արդյունավետությունը, կապիտալ և լևերիջը, շահութաբերությունը և պարտքի ծածկույթը: Նշված ցուցանիշները հաշվարկվում են ինչպես փաստացի, այնպես էլ կանխատեսվող երկու տարիների համար: Կանխատեսումն իրականացվում է երկու տարբեր մոտեցումներով (էքսպերտային և մոդելային) և ստացված արդյունքների հիման վրա տրվում է ֆինանսական գնահատական: Վարկանիշերը տրվում են հայկական այբուբենի տառերով: Առավելագույն վարկանիշ է համարվում 'Ա+', իսկ նվազագույն՝ 'Զ' վարկանիշը : Ընդ որում 'Ա+'-ից 'Գ -' վարկանիշերը համարվում են ներդրումային վարկանիշներ, իսկ 'Դ+'-ից 'Զ' վարկանիշերը՝ ոչ ներդրումային վարկանիշներ: [2]

Համապատասխան վարկանիշ ունեցող ձեռնարկությունները ունենում են արտոնություններ ԿԲ հետ գործառնություններում, ինչպես նաև բանկերի հետ կնքվող գործարքներում: Բարձր վարկանիշը կշահագրգռի բանկերին վարկավորել տվյալ ձեռնարկություններին, ինչպես նաև ձեռք բերել այդ ձեռնարկությունների կողմից թողարկված պարտատոմսերը:

Ֆինանսական գործակիցների՝գոյություն ունեցող մեծաթիվ բազմության մեջ ֆինանսական վերլուծաբանների և հետազոտողների կողմից օգտագործվում են այն գործակիցները, որոնք համարվում են առավել կարևոր ցուցանիշներ ֆինանսական և ներդրումային որոշումների ընդունման համար: Կանոնավոր ուսումնասիրության և վերլուծության նպատակով ավելի հարմար է ֆինանսական ցուցանիշները բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝

1. իրացվելիություն և վճարունակություն,
2. շահութաբերություն,
3. ֆինանսական կայունություն,
4. գործարար ակտիվություն:

Ցուցանիշների հաշվարկման հիմքում ընկած են համապատասխան հաշվետվությունների տվյալները:

[2] https://www.cba.am/am/sitepages/oercintroduction.aspx

Աղյուսակ 1. Կազմակերպության ֆինանսական դրության գնահատման գործակիցների ամփոփ համակարգը

Գործակից	Բանաձև	Նորմատիվ
Բացարձակ իրացվելիության	$\frac{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{200}/ \ Դ_{ֆ}}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{490}/ \ Բ_{պ}}$	≥ 0.25
Արագ իրացվելիության		≥ 1
Ընթացիկ իրացվելիության	$\frac{\text{Չև } \mathbf{1}, \text{տող} \mathbf{220}/ Բ_{ա}}{\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{490}/ Բ_{պ}}$	≥ 2
Ակտիվների շահութաբերության	$\frac{/\text{Չև } \mathbf{2}, \text{տող } \mathbf{160}/ Շ_{զ}}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{230}/Ա}$	-
Սեփական կապիտալի շահութաբերության	$\frac{/\text{Չև } \mathbf{2}, \text{տող } \mathbf{160}/Շ_{զ}}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{300}/ՍԿ}$	-
Ֆինանսական անկախության	$\frac{\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{300}/ ՍԿ}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{230}/ Ա}$	> 0,5
Ֆինանսական կախվածության	$\frac{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{360} + \text{տող } \mathbf{490}/ ՓԿ}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{230}/ Ա}$	< 0,5
Ֆինանսական ռիսկի	$\frac{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{360} + \text{տող } \mathbf{490}/ ՓԿ}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{300}/ ՍԿ}$	< 1,0
Ֆինանսական լծակի	$\frac{/\text{Չև } \mathbf{2}, \text{ տող } \mathbf{160}/ Շ_{զ}}{/\text{Չև } \mathbf{2}, \text{տող } \mathbf{60}/ Շ_{հ}}$	
Ակտիվների շրջանառելիության	$\frac{/\text{Չև } \mathbf{2}, \text{ տող } \mathbf{010}/ Հ}{/\text{Չև } \mathbf{1}, \text{տող } \mathbf{230}/ Ա}$	

Եվ խոշոր, և փոքր, և միջին կազմակերպությունները մշտապես ուշադրության կենտրոնում պետք է պահեն ֆինանսական դրությունը և պարբերաբար իրականացնեն նշված վերլուծությունները: Այսպիսի վերլուծությունների իրականացումը էլ ավելի է կարևորվում այնպիսի կազմակերպություններում, ինչպիսին է «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, որը համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն: «Իջևանի ԲԿ»-ի գործունեության կարևորագույն *նպատակն է* ապահովել Իջևան քաղաքի և տարածաշրջանի ազգաբնակչության բժշկական սպասարկման բարձր որակը՝ միջազգային չափանիշներին համապատասխան ախտորոշման և բուժման նորագույն մեթոդների կիրառմամբ: Այս համատեքստում էապես կարևորվում է ԲԿ-ի կայուն և հեռանկարային ֆինանսական դրությունը:

Կազմակերպության իրացվելիության վերլուծություն իրականացնելու նպատակով կատարենք վերջինիս ակտիվների և պասիվների համապատասխան վերախմբավորում /աղյուսակ 2/:

Աղյուսակ 2. <<Իջևանի Բկ>> ՓԲԸ-ի ակտիվների և պասիվների վերախմբավորումը [3]

ԱԿՏԻՎ		2015	2016	ՊԱՍԻՎ		2015	2016
1		2	3	4	5	6	7
Առավել իրացվելի ակտիվներ (ԱI)	Դրամական միջոցներ և համարժեք-ներ	1 498,6	8 813,6	Հրատապ պարտավորություն-ներ (ՊI)	Կրեդիտո-րական պարտքեր	22125,9	16840,7
Արագ իրացվելի ակտիվներ (ԱII)	Դեբիտորա-կան պարտքեր	4891,6	7830	Կարճաժամկետ պասիվներ (ՊII)	Ընթացիկ ֆինանսական պարտ.	-	-
Դանդաղ իրացվելի ակտիվներ (ԱIII)	Պաշարներ	24763,3	27672,2	Երկարաժամկետ պասիվներ (ՊIII)	Ոչ ընթացիկ պարտավո-րություններ	589830,0	5199942,4
Դժվար իրացվելի ակտիվներ (ԱIV)	Ոչ ընթացիկ ակտիվներ	648566,8	565429,7	Մշտական պասիվներ (ՊIV)	Սեփական Կապիտալ	63605,4	66386,4

Աղյուսակից ակնհայտ է, որ անհրաժեշտ անհավասարությունները պահպանված չեն: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը իրացվելի չէ:

Աղյուսակ 3. «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության իրացվելիության ցուցանիշների հաշվարկ 2015-2016 թթ. [4]

Ցուցանիշները	Գումարը, հազ. Դրամ		Բացարձակ շեղումը, հազ. դրամ	Նորմատիվ
	Նախորդ տարի, 2015թ,	Հաշվետու տարի, 2016թ.		
1	2	3	4	5
1.Դրամական միջոցներ և համարժեքներ	1498.6	8813.6	7315	-
2.Դեբիտորական պարտքեր	4891,6	7830	2938.4	-
3.Ընթացիկ ակտիվներ	31153.5	44315.8	13162.3	-
4.Ընթացիկ պարտավորություններ	26284.9	23416.7	2868.2	-
5.Բացարձակ իրացվելիության գործակից (1/4)	0.057	0.376	0.319	≥ 0.25
6.Արագ իրացվելիության գործակից ((1+2)/4)	0.243	0.711	0.468	≥ 1.0
7.Ընթացիկ իրացվելիության գործակից(3/4)	1.185	1.892	0.707	≥ 2.0

[3] «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Ձև 1, 2016 թ.:
[4] Նույնը:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս է, որ բացարձակ իրացվելիության գործակիցը աճել է 2016 թ. և գտնվել է նորմայի սահմաններում: Սա վկայում է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտը ունի այնքան դրամական միջոցներ և դրա համարժեքներ, որպեսզի կարողանա մարել ամենահրատապ կարճաժամկետ պարտավորությունները: Այնինչ՝ նախորդ տարի ցուցանիշը ցածր է եղել նորմայից: Արագ իրացվելիության գործակիցը, ըստ նախորդ և հաշվետու տարիների աճել է, և համապատասխանաբար կազմել է 0.243 և 0.711 միավոր, որոնք կրկին ցածր են նորմայից: Սա վկայում է, որ տնտեսվարող սուբյեկտը չունի դեբիտորական պարտքերի գծով սպասվելիք մուտքագրումներ, որոնց հիման վրա էլ կարող է մարել կարճաժամկետ պարտավորությունների մի մասը: Ընթացիկ իրացվելիության գործակիցը բավականին ցածր է եղել նորմատիվային արժեքից 2015 թ. և աճել է 0.707 միավորով 2016 թ.՝ չհատելով նորմատիվային սահմանը:

Աղյուսակ 4. Ընթացիկ իրացվելիության վրա ազդող գործոնների ազդեցության հաշվարկը 2015-2016 թթ.[6]

Ցուցանիշներ	**Նախորդ տարի**	**Հաշվետու տարի**	**Շեղումը**	**Հաշվարկ**
1	**2**	**3**	**4**	**5**
1.Ընթ. ակտիվները, հազ. Դրամ, Ձև 1	31153.5	44315.8	13162.3	
2.Ընթ. պարտավորություն-ները, հազ. Դրամ, Ձև 1	26284.9	23416.7	-2868.2	
3.Զուտ շահույթը, հազ. Դրամ, Ձև 2	732.6	7401.2	6668,6	
4.Ընթ. իրացվելության գործակիցը	1.185	1.892	0.707	
5.Միավոր շահույթին բաժին ընկնող ակտիվները	42.53	5.99	-36.4	= -36.4*0.029 = - 1.0556
6.Միավոր պարտավորություն-ներին բաժին ընկնող շահույթը	0.029	0.316	0.287	=0.287*5.99 = 1.72

[6] Տնտեսական գործունեության վերլուծություն , **Անդրեասյան Ա.,** Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 20:

$$Գ_{ԻԸ} = \frac{Ը_{ա}}{Ը_{պ}} = \frac{Ը_{ա}}{Շ_{զ}} \times \frac{Շ_{զ}}{Ը_{պ}}$$

Ընթացիկ իրացվելիության առավել ամբողջական գնահատումը իրականացվում է վերոնշյալ բանաձևի միջոցով, որտեղ՝

$Շ_{զ}$ – զուտ շահույթի գումարն է,

$Ը_{ա}$ / $Շ_{զ}$ - միավոր շահույթին բաժին ընկնող ընթացիկ ակտիվների չափն է,

$Շ_{զ}$/ $Ը_{պ}$ – միավոր ընթացիկ պարտավորություններին բաժին ընկնող շահույթի մեծությունն է:

Կատարված հաշվարկը ցույց է տալիս, որ չնայած հաշվետու տարում գրանցվել է ընթացիկ իրացվելիության գործակցի աճ, վերջինս ավելի մեծ կլիներ և, հնարավոր է, կգերազանցեր նորմատիվային ցուցանիշը, եթե միավոր շահույթին բաժին ընկնող ակտիվների մեծությունը բացասական ազդեցություն չունենար գործակցի վրա:

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող առավել ընդհանրական ցուցանիշը շահութաբերության մակարդակն է: Ի տարբերություն շահույթի, որը արտացոլում է տնտեսական գործունեության արդյունավետության մեծությունը բացարձակ մեծությամբ, շահութաբերությունը ներկայացնում է այն հարաբերական մակարդակով:

Աղյուսակ 5. «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի շահութաբերության ցուցանիշների հաշվարկ 2015-2016 թթ.

Ցուցանիշ	Գումարը, հազ. դրամ		Շեղումը
	Նախորդ տարի, 2015 թ.	Հաշվետու տարի, 2016 թ.	
1	**2**	**3**	**4**
1.Իրացումից հասույթ, Զև 2	259174.1	293742.1	2678250
2.Ինքնարժեք, Զև 2	225726.2	225926.6	2004
3.Համախառն շահույթ, Զև 2	33447.9	67815.5	343676
4.Իրացումից շահույթ, Զև 2	3741	30847,1	27106,1
5.զուտ շահույթ, Զև 2	732.6	7401.2	6668,6
6.Ակտիվների միջին արժեք, Զև 1	679720.3	609745.5	-699748
7.Ընթացիկ ակտիվների միջին արժեք, , Զև 1	31153.5	44315.8	13162.3
8.Սեփական կապիտալի միջին արժեք, Զև 1	63605.4	66386.4	2781

9.Ոչ ընթացիկ պարտավորությունների միջին արժեք, Ձև 1	589830.0	519942.4	-698876
10.Իրացման շահութաբերություն, %(4/1)	1,443	10,501	9,058
11.Ներդրումային կապիտալի շահութաբերություն, %(5/(8+9))	0,112	1,262	1,150
12.Ակտիվների շահութաբերություն, %(5/6)	0,108	0,012	-0,096
13.Ընթացիկ ակտիվների շահութաբերություն,%(5/7)	0,024	0,167	0,143
14.Սեփական կապիտալի շահութաբերություն, %(5/8)	1,152	11,149	9,997
15.Ինքնարժեքի շահութաբերություն, %(4/2)	1,657	13,654	11,996
16.Համախառն շահութաբերություն, %(3/1)	12,906	23,087	10,181

Հաշվարկները ցույց են տալիս, որ շահութաբերության բոլոր գործակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աճել են, ինչը վկայում է կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման մասին:

Կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում ակտիվներն անընդհատ գտնվում են շրջանառության մեջ՝ մատակարարման, արտադրության և իրացման փուլերում՝ մեկից անցնելով մյուսը: Որքան արագ է կատարվում այդ շրջանառությունը, այնքան բարձր է կազմակերպության գործարար ակտիվության մակարդակը՝ ակտիվների նույն մեծության պայմաններում: Ակտիվների շրջանառության տևողության աճը հանգեցնում է դրանց շրջանառելիության դանդաղեցմանը և, որպես հետևանք՝ կազմակերպության ֆինանսական դրության վատացմանը: Իսկ ակտիվների շրջանառելիության արագացման արդյունքում ավելանում է արտադրանքի իրացումից ստացված հասույթը: Վերլուծվող կազմակերպության տվյալներով որոշենք ակտիվների շրջանառելիությունն՝ ըստ պտույտների և մեկ պտույտի տևողություն:

Աղյուսակ 6. «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի ակտիվների շրջանառելիության ցուցանիշների հաշվարկ 2015-2016 թթ.

Ցուցանիշները	Գումարը, հազ. Դրամ		Շեղումը	
	2015 թ.	2016 թ.	Բացարձակ, հազ. Դրամ	Հարաբե-րական,%
1	**2**	**3**	**4**	**5**
1.Իրացումից հասույթ, Ձև 2	259174.1	293742.1	2678250	13.34
2.Ակտիվների միջին արժեք, Ձև 1	679720.3	609745.5	-699748	-10.29
-ոչ ընթացիկ ակտիվներ	648566.8	565429.7	-831371	-12.82
-ընթացիկ ակտիվներ	31153.5	44315.8	13162.3	42.25
3.Ակտիվների շրջանառելիությունը, պտույտ(1/2)	0,381	0,482	0,100	26,344
-ոչ ընթացիկ ակտիվների	0,400	0,520	0,120	30,002
-ընթացիկ ակտիվների	8,319	6,628	-1,691	-20,325
4.Մեկ պտույտի տևողությունը((2* օրերի թիվ)/1)	944,150	747,283	-196,868	-20,851
-ոչ ընթացիկ ակտիվների	900,877	692,971	-207,906	-23,078
-ընթացիկ ակտիվների	43,273	54,312	11,039	25,510

Հաշվարկները վկայում են, որ 2016 թ. ակտիվների շրջանառելիությունը՝ ըստ պտույտների աճել է, բայց այդ աճը ավելի մեծ կլիներ, եթե ընթացիկ ակտիվների մասով այդ ցուցանիշը բացասական չլիներ: Միևնույն ժամանակ, 1 պտույտի տևողությունը բացասական աճ է գրանցել, որն էլ ավելի մեծ կլիներ, եթե ընթացիկ ակտիվների մասով այդ ցուցանիշը դրական չլիներ:

Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական դրության ամենահիմնական բնութագիրը դրանց գործունեության կայունության ապահովումն է երկարատև ժամանակահատվածում: Ֆինանսատնտեսական կայուն վիճակի ապահովումը պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր ֆինանսական կառուցվածքով, արտաքին ու ներքին վարկատուներից և ներդրողներից կախվածության աստիճանով և այլ բնույթի ազդող գործոններով: Ելնելով տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական կայունության կարևորությունից՝ փորձենք գնահատել «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը:

Աղյուսակ 7. «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի ֆինանսական կայունության ցուցանիշների հաշվարկ 2015-2016 թթ.

Ցուցանիշները	Գումարը, հազ. Դրամ+		Շեղումը		Նորմատիվ
	2015թ.	2016թ.	Բացարձակ, հազ. Դր	Հարաբերական,%	
1	2	3	4	5	6
1.Սեփական կապիտալ, Ձև 1	63605.4	66386.4	2781	4.37	-
2.Փոխառու կապիտալ (ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ), Ձև 1	616114,9	543359,1	-72755,8	-11.81	-
3.Ընդհանուր կապիտալ, Ձև 1	679720.3	609745.5	-69974,8	-10.29	-
4. Ոչ ընթացիկ ակտիվներ, Ձև 1	648566.8	565429.7	-831371	-12.82	-
5. Ոչ ընթացիկ պարտավորություններ, Ձև 1	589830.0	519942.4	-698876	-11.85	-
6. Զուտ շահույթ մինչև հարկումը, Ձև 2	915.7	9251.4	8335,7	910.31	-
7. Զուտ շահույթ հարկումից հետո, Ձև 2	732.6	7401.2	6668,6	910.26	-
8. Ֆինանսական անկախության գործակից (1/3)	0,094	0,109	0,015	16,350	≥ 0.5
9. Ֆինանսական կախվածության գործակից(2/3)	0,906	0,891	-0,015	-1,688	≤ 0.5
10. Ֆինանսական ռիսկի գործակից (2/1)	9,687	8,185	-1,502	-15,503	≤ 1
11. Երկարաժամկետ ներդրումների կառուցվածքի գործակից(5/4)	0,909	0,920	0,010	1,112	–
12. Ֆինանսական լծակ(6/7)	1.250	1.250	0	0	

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները՝ կազմակերպությունը 2016 թ. հիմնականում գրանցել է նվազող ցուցանիշներ: Հաշվարկված գործակիցները չեն բավարարում նորմատիվային պահանջներին: Այնուամենայնիվ, 16.35 տոկոսային կետով աճել է ֆինանսական անկախության գործակիցը, իսկ ֆինանսական ռիսկի և ֆինանսական կախվածության գործակիցները նվազել են: Նշենք, որ կազմակերպության ֆինանսական կայունությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ բարձր է առաջին (նորմատիվը՝ ≥ 0,5) ու ցածր՝ երկրորդ (նորմատիվը՝ ≤ 0,5) և երրորդ (նորմատիվը՝ ≤ 1,0) ցուցանիշների մակարդակը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ լուսաբանված ֆինանսական դրության գնահատման ցուցանիշների համակարգը մեծապես կնպաստի, որ տնտեսվա-

րող սուբյեկտները, օգտագործելով բերված բանաձևերն ու ելակետային տվյալները, դրանց հիման վրա օբյեկտիվորեն գնահատեն իրենց ֆինանսական կայուն վիճակը, գործարար ակտիվության և շահութաբերության մակարդակ-ները:

Կատարված ֆինանսական վերլուծությունը ամբողջացնենք SWOT վերլուծության միջոցով:

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի SWOT վերլուծություն: Սկսած 1980-ական թվականներից SWOT վերլուծությունը ակտիվորեն օգտագործվում է կառավարման և շուկայաբանության ոլորտի մասնագետների կողմից: SWOT-ի տեխնիկան համարվում է, կարելի է ասել, միակ գործիքը, որը չի կորցրել արդիականությունը որպես կառավարչական գործիքակազմի տարր իր ողջ գոյության ընթացքում: Այսօրվա պայմաններում էլ ցանկացած ձեռնարկության բիզնես-վերլուծությունը սկսվում է SWOT-ի գնահատումից: Այն կարող է իրականացվել արտադրական ձեռնարկությունների, տարածքների, պետական կամ ոչ առևտրային կազմակերպությունների, տնտեսության տարբեր ոլորտ-ների կամ շուկաների և անձանց համար: [7] Այսպիսով՝ SWOT վերլուծությունը ռազմավարական պլանավորման մեթոդ է, որը հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության արտաքին և ներքին միջավայրի գործոնների ազդեցությունը՝ կազմակերպության գործունեության վրա առանձնացնելով գործոնների չորս հիմնական կատեգորիա՝

S = Strengths, ապրանքի կամ ծառայության ուժեղ կողմեր: Կազմակերպության ներքին այնպիսի բնութագրիչներ, որոնք ապահովում են շուկայում առավելություններ կամ առավել շահավետ պայմաններ համեմատած մրցակիցների հետ, այլ կերպ ասած այն ոլորտները, որտեղ կազմակերպության ապրանքն իրեն զգում է ավելի լավ և կայուն քան մրցակիցներինը:

W = Weaknesses, ապրանքի կամ ծառայության թույլ կողմերը կամ թերությունները: Կազմակերպության այնպիսի ներքին բնութագրիչներ, որոնք արգելակում են բիզնեսի աճը, խանգարում են ապրանքին առաջատարը լինել շուկայում, համարվում են շուկայում անմրցունակ:

O = Opportunities, կազմակերպության հնարավորությունները: Արտաքին միջավայրի գործոններ, որոնք կարող են ապագայում բարենպաստ ազդել բիզնեսի զարգացման վրա:

T = Threats, կազմակերպության սպառնալիքները: Արտաքին միջավայրի գործոններ, որոնք կարող են ապագայում թուլացնել կազմակերպության

[7] https://hy.wikipedia.org/wiki/SWOT_%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, 27.04.2018:

մրցունակությունը շուկայում և հանգեցնել վաճառքի ծավալների նվազման և շուկայի մասնաբաժնի կորստի: [8]

Կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի մասին պատկերացում մենեջերները կարող են ստանալ տարբեր հաշվետվություններից՝ ներառյալ բյուջեները, ֆինանսական ցուցանիշները, շահույթի և կորստի մասին հաշվետվությունները, ինչպես նաև աշխատողների հետ հարցում կատարելով կազմակերպության հանդեպ վերաբերմունքի և աշխատանքից բավարարվածության աստիճանի մասին: Մենեջերների աշխատանքային ժամանակի ավելի քան 80%-ն օգտագործվում է ինֆորմացիայի ստացման և փոխանցման վրա: Անհատական հանդիպումների կամ ղեկավարների հետ պարբերաբար հանդիպումների ժամանակ էլ բացահայտվում են կազմակերպության արժանիքներն ու խոցելի կողմերը: [9]

Իրականացնենք SWOT վերլուծություն «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տվյալների հիման վրա /աղյուսակ 2.9/: Փորձենք հասկանալ, թե որոնք են հիվանդանոցի արտաքին և ներքին միջավայրերի ուժեղ և թուլլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները, և ինչպես կարելի է թույլ կողմերը փոխարկել ուժեղի, իսկ սպառնալիքները համապատասխանաբար՝ հնարավորությունների: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օգտագործվում է որոշակի ռազմավարություն. օգտագործել կազմակերպության ուժեղ կողմերը հնարավորությունները մաքսիմիզացնելու և սպառանալիքները հնարավորինս չեզոքացնելու համար, իսկ արտաքին միջավայրի հնարավորությունները օգտագործել ի նպաստ ներքին միջավայրի թույլ կողմերի կարգավորման:

Աղյուսակից ակնհայտ է դառնում, որ հաստատությունը ունի մի շարք ուժեղ և զարգացման հեռանկարներ ապահովող բնութագրիչներ: Մասնավորապես, շահութաբերության բոլոր գործակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աճել են, ինչը վկայում է կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման մասին:

---

[8] **Jeffrey P.** Harrison Strategic planning and swot analysis, Chapter 5, Health Administration Press, 2010, page 3.

[9] Մենեջմենթի հիմունքներ **Հովհաննիսյան Ա.Ա.,** Երևան, 2015, էջ 254:

Աղյուսակ 2.9 «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի SWOT վերլուծություն

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ	**1. Շահութաբերության նորմալ և աճող ցուցանիշներ:** **2. Գրագետ և հեռանկարային մենեջմենթի առկայություն:** **3.Նորագույն բժշկական սարքավորումներով հագեցվածություն՝ որոշակի մակարդակով:** **4. Կոսմետիկ վերանորոգված շենք:** **5.Պետության կողմից երաշխավորված անվճար եվ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ցուցաբերում եվ սպասարկում բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի:**[10]	1.Իրացվելիության անբավարար մակարդակ: 2.Շտապօգնության մեքենաների անբավարար քանակ: 3. Որոշ տեսակի նորագույն բժշկական սարքավորումների բացակայություն: 4. Սպասարկման ոչ այնքան մատչելի գների առկայություն: 5. Պետական պատվերների ոչ ճկուն համակարգ: 6. Անվճար սպասարկման ակցիաների ոչ հաճախակի իրականացում: 7. Տեղեկացվության ցածր մակարդակ բնակչության շրջանում 8. Թույլ մարքեթինգային քաղաքականություն
	Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ	**1.Պետական աջակցություն առողջապահության ոլորտում:** **2. Բժշկական ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ:** **3. Բնակչության եկամուտների մակարդակի աճ:** **4. Միջազգային համագործակցության և փորձի փոխանակման ծրագրեր:**	1.Բնակչության ցածր կենսամակարդակ: 2. Ոլորտում մրցակցության բարձր մակարդակի առկայություն: 3. Մատուցվող բժշկական ծառայությունների որակի նկատմամբ պահանջների աճ բնակչության կողմից: 4. Շուկայում նոր բժշկական ծառայությունների առաջարկ:

Վերանորոգված շենքը, հատկապես մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքն ի վիճակի է լիովին իրականացնելու Տավուշի մարզի հղիներին և կանանց անհրաժեշտ բժշկական օգնությունն ու սպասարկումը: Դե իսկ արդիականացված և նորագույն սարքավորումներով հագեցված հիվանդանոցը արդեն իսկ բարձրացնում է բնակչության վստահությունը մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

[10] ՀՀ Կառավարության N 318-Ն որոշում պետության կողմից երաշխավորված անվճար եվ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եվ սպասարկման մասին, 2004 թ.:

Այնուամենայնիվ, որոշ էական սարքավորումների բացակայությունը, ինչպես նաև տեղեկացվածության պակասը, հիմք է հանդիսանում բնակիչների թերահավատության համար, ինչը հանգեցնում է հատկապես դեպի մայրաքաղաք հոսքերի ավելացմանը՝ բժշկական ծառայություններից օգտվելու նպատակով:

Խնդիրը կայանում է նրանում, որ բնակիչները գերադասում են մի փոքր ավելի գումար ծախսել, բայց օգտվել մայրաքաղաքի առավել որակյալ համանման ծառայություններից: Եթե անգամ բնակիչները ցանկանում են բուժզննում անցնել տեղի հիվանդանոցում խնդիր են հանդիսանում, օրինակ, մի շարք անալիզներ հանձնելու համար անհրաժեշտ լաբորատոր սարքերի, իսկ սարքավորումների առկայության դեպքում էլ՝ համապատասխան մասնագետների կամ նրանց փորձի պակասը: Վերջին խնդրի լուծման հիմնական ուղի կարող է հանդիսանալ մասնագետների վերապատրաստման և փորձի փոխանակման շարունակական աշխատանքները:

Սոցիալական ցանցերում ոչ ակտիվ գործունեությունը ևս կարելի է դասել հաստատության թույլ կողմերի շարքին: Այս միջոցով հնարավոր է և՛ գովազդել հիվանդանոցի գործունեությունը, և՛ մարդկանց ավելի իրազեկ դարձնել նոր ակցիաներին կամ հիվանդանոցում տեղի ունեցած փոփոխություններին: Քիչ չեն դեպքերը, երբ բնակիչները անգամ տեղյակ չեն հիվանդանոցում մատուցվող ծառայությունների վերաբերյալ և միանգամից փորձում են համապատասխան մասնագետ գտնել մայրաքաղաքում կամ հարակից քաղաքներում: Համալիր և ամբողջական տեղեկատվության տարածման արդյունավետ տարբերակ կհադիսանա մշտապես թարմացվող ինտերնետային կայքի և սոցիալական տարբեր ցանցերում պրոֆեսիոնալ կերպով ղեկավարվող էջերի առկայությունը:

Լուրջ խնդիր է հանդիսանում շտապօգնության մեքենաների անբավարար քանակը հիվանդանոցում: Քանի որ հիվանդանոցը սպասարկում է ոչ միայն Իջևան քաղաքի բնակիչներին, միաժամանակ մի քանի շտապ կանչերի դեպքում բնակիչները հայտնվում են առողջության և կյանքի վտանգման խնդրի աջև:

Ներքին միջավայրի խնդիրներից է հիվանդանոցի իրացվելիության ոչ բավարար մակարդակը: Թեպետ գործակիցները աճել են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, բայց դրանք չեն գտնվում նորմայի սահմաններում: Գործակիցների դրական փոփոխությունը հնարավոր է կապել իրականացվող մենեջմենթի հետ. հիվանդանոցի կառավարող մարմնի փոփոխությունից հետո գրանցվել է տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների աճ, որոնք ձգտում են մոտենալ նորմայի սահմաններին:

Բնակչության ցածր կենսամակարդակը արտաքին գործոն է, որն ունենում է որոշիչ ազդեցություն մարդկանց՝ հիվանդանոցի բժշկական ծառայություններից օգտվելու որոշման վրա: Եթե լինեն համապատասխան ֆինանսական մի-

ջոցներ, ապա այդ ծառայություններից օգտվողների թիվն անհամեմատ ավելի մեծ կլիներ: Այս համատեքստում մեկ այլ խնդիր է որոշ ծառայությունների ոչ մատչելի գները բնակչության կարիքավոր խավերի համար: Չի գործում զեղչերի ճկուն համակարգ:

Այսպիսով՝ SWOT վերլուծությունից հետո ավելի հստակ և պարզ են դառնում կազմակերպության առավելություններն ու թերությունները և շուկայական իրավիճակը: SWOT վերլուծությունը կազմակերպությանը զարգացման արդյունավետ ուղի ընտրելու, վտանգներից խուսափելու, առկա ռեսուրսները և հնարավորություններն արդյունավետ օգտագործելու հնարավորություն է ընձեռնում:

Նույնիսկ այն դեպքում, երբ ամեն ինչ բարեհաջող է ընթանում, անհրաժեշտ է իրականացնել SWOT վերլուծություն, քանի որ այն կհամակարգի կազմակերպության և շուկայական իրավիճակի մասին առկա տեղեկատվությունը և հիմք կհանդիսանա օպտիմալ կառավարչական որոշումների համար:

Բանալի բառեր- ֆինանսական դրություն, ֆինանսական գործակից, ֆինանսական ցուցանիշ, ֆինանսական հաշվետվություններ, SWOT վերլուծություն:

Գայանե Ավետիսյան, Անահիտ Սիմոնյան, Կազմակերպության ֆինանսական դրության գնահատումը - Մրցակցությանը դիմակայելու, կայուն զարգացում ապահովելու համար յուրաքանչյուր կազմակերպություն պետք է իրականացնի ֆինանսական դրության գնահատում: Դա անհրաժեշտ է առկա ձախողումները բացահայտելու և կազմակերպության զարգացման հետագա ուղղությունները որոշելու համար: Հոդվածում ներկայացված են այդ վերլուծության կարևորությունը, ֆինանսական գործակիցների ամփոփ համակարգը և գործնական հաշվարկներ: Կատարվել է SWOT վերլուծություն՝ բացահայտելու համար ուսումնասիրվող կազմակերպության ներքին միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի սպառնալիքներն ու հնարավորությունները:

Гаяне Аветисян, Анаит Симонян, Оценка финансового состояния организации - Чтобы справиться с конкуренцией и обеспечить устойчивое развитие, каждая организация должна провести оценку своего финансового положения. Это необходимо для выявление существующие сбои и для определения дальнейшие направления развития организации. В статье представлена важность этого анализа, когерентная система финансовых коэффициентов и практические расчеты. Был проведен SWOT-анализ для выявления сильных и слабых сторон внутренней среды исследуемой организации, угроз и возможностей внешней среды.

Gayane Avetisyan, Anahit Simonyan, Assessment of the financial position of a company - In order to cope with competition and ensure sustainable development,

every organization must conduct an assessment of its financial position. It is necessary to detect existing failures and to identify further directions of development. The article presents the importance of that analysis, a coherent system of financial coefficients and practical calculations. A SWOT analysis has been performed to reveal the strengths and weaknesses of the internal environment of the investigated organization, and the threats and opportunities of the external environment.

BARRIERS TO ENTER INTERNATIONAL MARKETS, MARKETING ANALYSIS

HOVHANNES YERITSYAN

The globalization has had an important influence on international marketing. Progressively more markets have become open to international organizations, as the cost and complexity of foreign operating has been reduced by globalization. Companies are able to access lower cost resources and labor in developing countries. This permits companies to price their products lower and open up a broader market of people across various ranges of disposable income.

There are a number of factors that progressively drive international trade and marketing efforts. There is the potential to increase the customer base and market share; they are generally more familiar with the domestic business, closer and better known with respect to market demand, language, economies, laws, culture and market infrastructure. The next step is to enter other country markets within the region and eventually enter the most attractive region outside the domestic market. This eventually leads transnational companies to achieve a presence in all major regions of the world and for some expansion within these regions to achieve a very broad breadth of international marketing. As a company builds a greater breadth of international marketing, it is in the position to build a global brand and a global marketing company [1; 92-100].

Not all businesses enter international markets as part of a strategic market plan. As shown below, many businesses are forced to consider international markets due to global competition [2; 6-18]. The U.S. automotive and consumer electronics industries were forced to enter international markets reactively due to the competitive challenge of foreign brands; overproduction and excess capacity; and saturating domestic markets. If they had not made this move, many of these companies may not have survived a world of global competition. Others like McDonald's, Yum Brands, Starbucks and Apple have pursued a "proactive" international market strategy. They saw an opportunity to leverage their competitive advantage; to grow sales and profits; to take advantage of lower cost production; and to enjoy tax benefits. To succeed in global markets, however, depends heavily on knowledge accumulation and deployment of an efficient and effective global marketing strategy [3; 85].

Table 1. Reactive and Proactive Market Entries [3]

Reactive Market Entry	Proactive Market Entry
• Competitive pressure and survival • Overproduction and excess capacity • Saturated domestic market	• Competitive advantage • Sales profit growth • Low cost production and tax benefits

International Market Attractiveness Index: As there are a variety of considerations to take into account in making an international market entry decision, it is useful to create an overall international market attractiveness score. As shown in Table 2, it started by creating two major categories. The first category is built around market opportunity considerations. The second category addresses the political, economic, and cultural environment. Each has ten sub-factors that are rated on a scale from zero (disastrous) to 100 (excellent). While a business may want to modify what is presented in Table 2, the benefit is still an overall score and score for each core factor. If a business is looking at several international markets with resources limited to one new market per year, they could create the Market Attractiveness Portfolio below to prioritize the international markets under consideration [4].

Table 2. *International Market Attractiveness Index [4]*

INTERNATIONAL MARKET ATTRATCIVENESS INDEX		
COMPANY Yum Brands PRODUCT: Taco Bell COUNTRY/REGION: Russia		
Market Attractiveness Factors	**Importance**	**Rating***
Market Factors	**40%**	-
Level of need, want or desire for your product at your price	0.20	40
Size of market opportunity that could buy your product	0.30	50
Market potential: non-buyers that could buy your product	0.15	80
Degree to which your product is affordable in this market	0.20	80
Degree your product offers performance not available in this market	0.15	80
	1.00	**66**
Country Factors	**60%**	-
Degree to which foreign businesses can operate in this market	0.25	40
Political stability and attitudes toward your country of origin	0.25	60
Language and religious barriers that make success difficult	0.15	50

Cultural differences in values, attitudes, customs that cause failure	0.15	50
Degree to which a market infrastructure is in place	0.20	60
	1.00	**52**
Market Attractiveness Score		**59**
*Rating can range from zero (disastrous) to 100 (excellent) where 50 is a neutral rating (not good or bad		

In the example above, the total market attractiveness is 59, slightly above average of 50. The market factors had a score of 66 while the country factors were 52. The ultimate decision to enter depends on the market and profit potential as well as other opportunities for international market investment. A Market Attractiveness Index could potentially be created for the top 5 international markets. A company is considering to prioritize them with respect to level of market attractiveness. In addition, this international marketing analytic highlights potential trouble spots (individual scores less than 50).

Barriers to international market success: If marketing activities and goals of the company are restricted to keep the same the domestic and international marketing messages, the elements of 4 Ps (branding, pricing in international currency, foreign distribution channels and promotion/advertising) may not be transformed well. So the companies can meet some barriers to international market success while expanding their activities in foreign markets:

Language: Does the brand name and advertising translated into meanings that could be embarrassing?

Non-Verbal Language: Are any cultural norms violated with respect to numbers, color, and symbols?

Religion and Values: Does the brand or advertising offend religious beliefs and/or cultural values?

Political Stability: The degree that a country is socially and economically stable.

Laws and Regulations: The degree that foreign business regulated and allowed to operate in a country.

Market Infrastructure: The degree roads, utilities, transportation, banking, media and retail are in place.

Language: The first important step when the company is entering an international market must be a comprehensive analysis of how the brand name and advertising is translated in the language of foreign country. The wrong translations may often result unintentional meanings as shown below [5].

- Colgate once marketed Cue toothpaste in France not knowing Cue was a well-known pornographic magazine.
- Clairol's Mist Stick translated in Germany to “manure”, since "mist" in German means "manure”.
- Italy's Traficant mineral water in Spanish translated to “trafficker”, since "Traficant" means "trafficker”.
- In China, Kentucky Fried Chicken’s slogan “***Finger Lickin’ Good***” translated to ***“Eat Your Fingers Off”***.
- Schweppes Tonic Water translated to ***Schweppes Toilet Water*** in Italian.

Non-verbal Language: Not all language or communication is verbal. Every country has a non-verbal language with respect to the meaning of numbers, colors, gestures and symbols. These factors are similarly essential as understanding language translations. The misunderstanding, interpretation or wrong transformation of non-verbal language may reduce the brand reputation and marketing efficiency. In this context, colors play an important role in every culture [6], as shown in Table 3. In western cultures green is considered a more positive color. So, American companies follow the environmental trend to sell eco-friendly goods, habitually offering green-themed packaging or ad promotions to underline the products accordance with "green" standards. This is not working in France or China. The studies have shown that green is not a good option for packaging in these countries. Blue color is often associated with the "safety", at the same time it can be interpreted with immortality and freedom or cleanliness.

Table 3. Non-verbal cultural meaning of color and numbers

Color	Country: Meaning	Country: Meaning
Red	**China**: Good Luck	**Europe**: Danger
Green	**Middle East**: Luck	**Indonesian**: Forbidden Color
Violet	**Brazil**: Mourning	**Asia**: Symbol of Expense
Black	**China**: Trust/High Quality	**Western**: Evil/Sexy
White	**Japan**: Mourning	**Western**: Cleanliness/Purity

Number	Lucky	Unlucky
4	Ireland	China, Japan, Korea
7	Western Cultures	China
8	China and Japan	-
13	-	Western Cultures
15	Spanish Languages	-

Numbers also have different significances among different cultures [7]. Some hotels in the UK or U.S. do not have a 13th room 13 or a 13th floor. In the same way, Japanese company Nippon Airways does not have the seats with 4 or 9 numbers. Packaging, prices of products having negative connotations of numbers should be avoided in foreign markets.

Hand gestures are another way of communicating, but the meaning of a hand gesture can have different meanings in different cultures [8]. For example, former President George H. W. Bush used a peace sign in waving to a crowd in a visit to Australia. Instead of his palm facing outwards, it faced inwards. The meaning of this hand gesture in Australia was similar to the meaning of the middle finger in Western culture. The O.K. gesture generally means that everything is good, well, or O.K. However, in Latin America and France it is considered as an insulting sign as it is thought to mean 'your anus.' In Australia, it means zero and in Turkey, giving someone the O.K. sign implies that they are homosexual.

Religion and Values: Different religions in the World have their principal knowledges, traditions and beliefs about alcohol, food, and nudity. At the same time, seasons and religious holidays are similarly important. This is key factor while planning marketing promotions in foreign markets. Many cultural values are originated from country religions and unique cultural behaviors. For example, the religious believes below play a large role in shaping country behaviors and attitudes with respect to food and beverages [9].

Buddhism: Refrain from meat, vegetarian diet is desirable, moderation in all foods.

Eastern Orthodox: Restrictions on meat and fish, fasting on religious holy day.

Hinduism: Beef is prohibited, all other meat and fish restricted or avoided, alcohol avoided.

Islam: Pork and certain birds prohibited, alcohol prohibited, coffee, teas, stimulants avoided.

Judaism: Pork and shellfish prohibited, meat and dairy at same meal prohibited.

Mormonism: Alcohol and beverages containing caffeine prohibited.

Protestantism: Few restrictions of food or fasting observations, moderation in eating and drinking.

Rastafarianism: Meat & fish restricted, vegetarian diets only, alcohol, coffee, soft drinks prohibited.

Roman Catholicism: Meat restricted on certain days, fasting practiced.

Seventh-day Adventist: Pork prohibited and meat and fish avoided, alcohol, coffee, and tea prohibited.

In addition, views regarding to sexuality, materialism, family, competition and work diverge by country and culture. For example, Starbucks changed its corporate logo, because they understood that the siren was morally incorrect in Saudi Arabia. The next statement more fully explains Starbucks respect for country culture and traditions: ***"We remain highly respectful of the culture and traditions of the countries in which we do business. We recognize that our success is not an entitlement, and we must continue to earn the trust and respect of customers every day."*** - Howard Schultz, Chairman, Starbucks.

Political Instability: A key factor in expanding in an international market is the political stability of the country. For example, the Middle East is obviously a region with high political instability and frequently aggressive views toward many foreign countries and companies. "Political Instability" can be evaluated by a quota of Underlying Vulnerability to Unrest from zero (none) to 100 (extreme) as shown by Image 1 [10]

Image. Political Instability Index [10]



The Political Instability Index accesses the level of threat posed to governments by social protest. This assesses the degree of political and social instability and how it could possibly influence on the stability of the political party in office. Economic Distress is measured the same way and accesses the stress under which the economy is operating.

According to Image 1, low Risk scores include countries like Australia, Western Europe, Chile, Canada and the U.S. Moderate Risk countries include Mexico, Brazil, Peru and certain countries in Eastern Europe, while Medium risk countries include

Russia, Asian countries, Argentina and others. High Risk political unrest are found mainly in Africa, the Middle East, lower Asian countries and others because of social and political instability and economic distress. The higher the political risk associated with a country the higher the risk something will happen to disrupt foreign business operations in that country.

Laws and Government Regulation: Every country has different laws and government regulations with respect to foreign businesses activity within their borders. The following laws and regulations represent examples that a business could potentially meet while they enter into international markets.

Import Duties: Fees and duties paid to do business in a country.

Customs: Problems with a foreign customs office's documentation and requirements.

Trade Barriers: Restrictions on the amount a foreign business can sell in a country.

Advertising: Restrictions on what can be portrayed or claimed in advertising.

Taxation: Various value-added taxes, sales taxes, employee taxes, and tax rates.

Intellectual Property: Illegal infringement of patents, trademarks, or copyrights.

Money Transfer: Restrictions on the transfer of money in and out of a country.

Foreign Investment: Restrictions or regulations on foreign investments

Market Infrastructure: The degree of infrastructure development in an emerging market is another important indicator to reflect the market potential. Dealing with international operations, company will need to trust services provided in the local foreign market. Companies often rely heavily on communication and transportation systems, energy infrastructure to sell and distribute the products and services. It is more reliable and more cost effective to work in countries that already have fully-developed infrastructures including mobile devices and internet access. Underdeveloped market infrastructures only have basic utilities and services that are often unreliable. This limits the ability to operate businesses profitably.

According to Google, in "more than half" of the countries in the southern hemisphere and for two out of three people on earth, internet access is far too expensive. In some countries only one out of a 1000 people can access the internet. In others it is one out of 10,000 people or there is no internet access at all. This is a market infrastructure issue that Google is addressing with an airborne wireless network they are deploying using 12-meter-tall, super-pressurized air balloons powered by the sun. The balloons drift along relatively slow air currents in the stratosphere and run off batteries at night. Google has tested 30 balloons over New Zealand equipped to deliver 3G-like wireless speeds to ground antennas that in turn transmit the signal to wireless devices. The goal is to eventually keep a large fleet of balloons in the skies and change worldwide access with a new, but old infrastructure using balloons [11]. According the

Kerry Rice at Needham & Company, ***"If you have the infrastructure in place, there are a lot of things you can do."***

So the globalization has had an important influence on international marketing. If marketing activities and goals of the company are restricted to keep the same the domestic and international marketing messages, the elements of 4 Ps (branding, pricing in international currency, foreign distribution channels and promotion/advertising) may not be transformed well. So the companies can meet some barriers to international market success while expanding their activities in foreign markets:

Language: Does the brand name and advertising translated into meanings that could be embarrassing?

Non-Verbal Language: Are any cultural norms violated with respect to numbers, color, and symbols?

Religion and Values: Does the brand or advertising offend religious beliefs and/or cultural values?

Political Stability: The degree that a country is socially and economically stable.

Laws and Regulations: The degree that foreign business regulated and allowed to operate in a country.

Market Infrastructure: The degree roads, utilities, transportation, banking, media and retail are in place.

Keywords - international marketing, barriers to enter to international markets, language and non-verbal language in marketing, religion and values in marketing, political stability, laws and regulations, market infrastructure.

Hovhannes Yeritsyan, Barriers to enter international markets, marketing analysis - The globalization has had an important influence on international marketing. If marketing activities and goals of the company are to keep the same domestic and international marketing messages, the elements of 4 Ps may not be transformed well. Companies meet some barriers to international market success while expanding their activities abroad: Language, Non-Verbal Language, Religion and Values, Political Stability, Laws and Regulations, Market Infrastructure.

Հովհաննես Երիցյան, Միջազգային շուկաներ մուտք գործելու արգելքները, մարկետինգային վերլուծություն - Գլոբալիզացիան շարունակում է մեծ ազդեցություն ունենալ միջազգային մարկետինգի վրա: Եթե ընկերության մարկետինգային քայլերը սահմանափակվում են ներքին և միջազգային մարկետինգային հաղորդագրությունների պահպանմամբ, ապա միջազգային շուկաներ մուտք գործելիս ծագում են մի շարք խոչընդոտներ, այդ թվում՝ բրենդավորման, միջազգային արժույթներով գնագոյացման, արտաքին բաշխման ուղիների ընտրության, գովազդի սխալ թարգմանության, միջազգային շուկաներին համապատասխանեցնելու խնդիրները: Այսպիսով, միջազգային

շուկաներում մարկետինգի տեսանկյունից ընկերությունը կարող է հանդիպել որոշ խոչընդոտների՝ լեզու, ոչ-վերբալ տարրեր, կրոն և արժեքներ, քաղաքական կայունություն, օրենքներ և օրենսդրական կարգավորում, շուկայի ենթակառուցվածքներ:

Ованнес Ерицян, Барьеры для выхода на международные рынки, маркетинговый анализ - Глобализация оказала большое влияние на международный маркетинг. Если маркетинговые усилия компании ограничены сохранением внутренних и международных маркетинговых сообщений, то проблемы брендинга, ценообразования по международной валюте, распределения по зарубежным каналам и рекламы могут плохо переводиться или адаптироваться. Таким образом, компании могут столкнуться с некоторыми препятствиями для успеха в международных рынках: язык, невербальний язык, религия и ценности, политическая стабильность, законы и регулирование, инфраструктура рынка.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Theodore Levitt (May-June 1983) "The Globalization of Markets", Harvard Business Review 61.

2. C. Samuel Craig and Susan P. Douglas, "Responding to the Challenges of Global Markets: Change, Complexity, Competition, and Conscience," *Columbia Journal of World Business* 31, no. 4 (Winter 1996).

3. Diana Farell, "Assessing Your Company's Global Potential," *Harvard Business Review* 82, no. 12 (December 2004).

4. International Market Attractiveness Index, http://www.rogerjbest.com/nav.cfm?A=N&C=17&P=2

5. Language and Country Translations, http://www.translationdirectory.com/articles/article2409.php

6. Meaning of Color in Different Countries, http://EzineArticles.com/6259782

7. Meaning of Numbers, Lucky and unlucky numbers in different countries, http://arstechnica.com/civis/viewtopic.php?t=318994

8. Usinier, J.C. and Stolz, J. (2014), Religions as Brands: New Perspectives on the Marketization of Religion and Spirituality. Ashgate Publishing Limited, Routledge.

9. Meaning Gestures in Different Countries http://www.buzzle.com/articles/hand-gestures-in-different-cultures.html

10. Political Instability by Country, http://viewswire.eiu.com/site_info.asp?info_name=social_unrest_table&page=noads

11. Google's Project Loon proposes internet distributed by high flying balloons (video), By Richard Lawler posted Jun 14th, 2013, http://www.engadget.com/2013/06/14/googles-project-loonproposes-internet-spread-by-hot-air-balloo/

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

ՀՈՎՍԵՓ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով[1]: Տվյալ ռազմավարության տիրույթներում սահմանված ՀՀ ԱԱԱ հետևյալ ներքին սպառնալիքները:

- **Պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը, դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը.** ՀՀ գտնվում է անցումային շրջանում և բարեփոխումների ակտիվ փուլում: Ազգային անվտանգության սպառնալիք կարող են լինել պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը և բարեփոխումների գործընթացի դանդաղումը: Դատական իշխանության արդյունավետ, անաչառ և անկախ գործունեությաունը բացառիկ կարևոր նշանակություն ունի ՀՀ համար: Պետական կառավարման համակարգի արդյունավետության կարևոր ցուցանիշ է դրա նկատմամբ հասարակության վստահության մակարդակը:
- **Քաղաքական համակարգի անկատարություն.** Ազգային անվտանգության համար վտանգ է ներկայացնում քաղաքական կուսակցությունների կայացման դեռևս ոչ բավարար մակարդակը: Ներկուսակցական ժողովրդավարացումը կարևոր է՝ որպես երկրում ժողովրդավարության ամրապնդման առանցքային նախապայման:
- **Ժողավրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակը.** Անցումայնի շրջանում գտնվող պետություններում վտանգված են ժողովրդավարական համակրգի հարատևությունն ու արդյունավետությունը: Անմիջական սպառնալիք են՝ մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգի ձևավորումը, ընտրական գործընթացում առկա թերությունները, քաղաքական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը:

---

[1] Տես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, (ՀՀ Նախագահի հրամանագիր, 2007, ՆՀ-37-Ն), ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2007, էջ 23:

- **Հասարակության բևեռացում.** Սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության մակարդակը, մասնագիտական կրթության, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության մակարդակը:
- **Ուրբանիզացում.** Դեռևս ԽՍՀՄ կազմում գտնվելու ժամանակ Հայաստանում բարձր էր ուրբանիզացման մակարդակը: Այս գործընթացը շարունակվեց նաև անկախությունից հետո:
- **Շուկայական տնտեսության կայացման և Ֆինանսաբյուջետային կառավարման մարտահրավերները.** Արդար մրցակցային միջավայրի ձևավորմնա և բնական մենաշնորհների կառավարման ոչ բավարար մակարդակը, ստվերային տնտեսության և կանխիկ դրամաշնորհային մեծ ծավալները պոտենցիալ սպառնալիք են երկրի համար:
- **Ենթակառուցվածքների ցանցի ոչ բավարար մակարդակը.** ՀՀ շարունակում է լրացուցիչ ճանապարհների, ջրատարների, կապի համակարգերի և այլ ենթակառուցվածքների զարգացման կարիք զգալ:
- **Գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը.** Կրթությունը ավանդաբար մեծ դեր ունի Հայաստանում: Գիտակրթական համակարգի կառավարման անարդյունավետությունը, միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև յուրաքանչյուրի համար լիարժեք մատչելիությունը սպառնալիք են ազգային անվտանգության համար:
- **Բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիրակության թերի վիճակը.** Հասարակության և անհատի բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում և շարունակվի կրթության բոլոր մակարդակներում:
- **Ժողովրդագրական բացասական միտումները.** ՀՀ որպես իր ազգային անվտանգության սպառնալիք է դիտում ցածր ծնելիությունը, հիվանդացության և մահացության դեռևս ոչ ցածր և կյանքի միջին տևողության ու որակի ոչ բավարար ցուցանիշները, չկառավարվող և անօրինական արտագաղթը, հատկապես կրթական, գիտական ու մշակութային ներուժի արտահոսքը:
- **Բնապահպանական խնդիրները և բնական պաշարների արդյունավետ կառավարումը.** ՀՀ կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը:

- **Համաճարակները և աղետները.** Պետության տարածքում մահաբեր համաճարակների բռնկումը, ավերիչ երկրաշարժները և այլ բնական ու տեխնածին աղետները սպառնալիք հանդիսացող գործոններ են[2]:

Վերոնշյալ սպառնալիքները որպես քաղաքական իշխանության ցածր մշակույթի արդյունք նպաստել են ՀՀ-ում կոռուպցիայի զարգացմանը: Դրա առկայությունը քաղաքացիների մոտ սպանում է հավատը պետության ու պետականության, օրենքների ու պետական ծառայողների նկատմամբ: Արդյունքում մենք ունեցել են քաղաքական իշխանության լեգիտիմության անկում: Կոռուպցիայի դեմ պայքարող **խորհրդարանականների համաշխարհային կազմակերպության (GOPAC) կողմից** սահմանվել է այդ երևույթի դրսևորման հետևյալ ձևեր՝ **կաշառակերություն և նենգամիտ վճարներ, մանր և խոշոր, բարոյական, քաղաքական կոռուպցիաներ[3]:** Սահմանելով քաղաքական կոռուպցիայի ֆենոմենն իբրև «Ամբողջականության այլասերում կամ ոչնչացում հասարակական պարտականություններն իրականացնելիս կաշառակերության կամ բարեհաճության միջոցով. ռուպցիոն դրսևորումների կիրառումը կամ առկայությունը մասնավորապես պետական, հանրային գործակալության և այլ ինստիտուտների տիրույթներում», դասակարգվում են դրա հետևյալ մակարդակները՝ ֆիզիկական, բարոյական, ցանկացած երևույթի անազատ կարգավիճակի այլասերում[4]: Կոռուպցիան որպես ՀՀ ԱԱԱ սպառնալիք դիտարկելով, կարևորվում է բարեփոխումների շարունակական բնույթը, ինչը հնարավորություն է տալիս հասարակությանը կոռուպցիայի դեմ նպատակամետ պայքարել անհատական, հանրայինն ինստիտուցիոնալ մակարդակում[5]: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ շեշտենք, որ քաղաքական կոռուպցիան իր դրսևորման բազմամակարդակ ձևերով՝ քաղաքական, վարչական և արդարադատության ոլորտներում հավաքագրված էլիտաների լատենտ փոխհամաձայնության արդյունք է: Քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարը առաջին հերթին ենթադրում է բաց հավաքագրված էլիտաներ, որոնք պատասխանատվություն են կրում ինչպես իշխանության իրականացման մշակույթի, այնպես էլ՝ շարունակական բարեփոխումների արդյունավետության համար: Վերջինիս ապահովման նկատառումներով ենթադրվում է, որ նշված էլիտար խմբերը հետամուտ են հանրային կապերի զարգացմանը[6]:

---

[2] Տես՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, (ՀՀ Նախագահի հրամանագիր, 2007, ՆՀ-37-Ն), ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2007, էջ 12:

[3] Տես՝ Կոռուպցիայի վերահսկում. Կոռուպցիայի դեմ պայքարող խորհրդարանականների համաշխարհային կազմակերպություն (GOPAC), Եր., ձեռնարկ, 3-րդ հատ., 2009, էջ 15:

[4] Տես **Arnold J. Heidenheimer, Michael Johnston.** Political Corruption.Concepts & Contexts, Third edition. Transaction Publishers, New Brunswick, New Jersey, 2009, pp. 6-7:

[5] Տես Twoards Good Governance. reform.gov.bb/page/GOOD_GOVERNANCE.pdf (19.10.2012)

[6] Տես **Arvind K. Jain,** Corruption: A Review, JOURNAL OF ECONOMIC SURVEYS Vol. 15, No. 1. 2001 Oxford, p. 72-73.

Պայքարը կոռուպցիայի դեմ ճանաչելով ՀՀ ԱԱԱ ռազմավարության գերակա ուղղություններից մեկը անհարժեշտ է ամրագրել ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք միտված են ժողովրդավարական պետության հզորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, և մասնավորապես կաշառակերության դեմ պայքարի ուժեղացմանը: ՀՀ կառավարության 2009թ. Հոկտեմբերի 8-ի 1272-Ն որոշմամբ սահմանվել են նաև ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման մոտեցումներն ու պահանջները: Վերոնշյալ ծրագրի նպատակներին ու ակնկալվող վերջնական արդյունքները (impact) գնահատվում են Թրանսփերենսի Ինթերնեյշնլ (ԹԻ) կազմակերպության **«Կոռուպցիայի ընկալման ինդեքսի»** և Համաշխարհային Բանկի Ինստիտուտի (ՀԲԻ) **«Կոռուպցիայի վերահսկման ինդեքսի»** միջոցով: ՀՌԻՄԾ իրականացման ընթացքում ստացվող «ելքերը» կամ՝ ՀՌԻՄԾ տերմինաբանությամբ՝ միջանկյալ մակարդակի արդյունքները գնահատվում են հետևյալ ցուցանիշներով.

1. **Գործառնական կոռուպցիայի** նվազեցման ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ **«Կառավարման արդյունավետության ինդեքսի»** և ՀԲԻ **«Կառավարման որակի ինդեքսի»** միջոցով:
2. **Վարչական կոռուպցիայի** նվազեցման ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ **«Օրենքի գերակայության ինդեքսի»** և **«Ձայնային լսելիության ինդեքսի»** միջոցով:
3. **Քաղաքական կոռուպցիայի** ոլորտում առաջընթացը գնահատվում է **«Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքսի»,** Ֆրիդոմ Հաուս (ՖՀ) կազմակերպության **«Քաղաքական իրավունքների ինդեքսի»** և ՀՖ **«Քաղաքական ազատության ինդեքսի»** միջոցով[7]

Անցումային երկրներում կոռուպցիան այնպես է սեռրաչել պետական կառավարման մարմինների հետ, որ նույնպես դժվար է տարանջատել պետությունը կոռուպցիայից[8]: Երևքույթը կանխելու համար նպատակահարմար է առանձնացնել երևույթի գոյության հետևյալ պատճառները.

- Պետության նշանակության, դերի և խնդիրների պատկերացումների խաթարում,
- Իրավական պետության գլխավոր սկզբունքի՝ իրավունքի (օրենքի) գերակայության արհամարհումը,

[7] Տես Հաշվետվություն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. Միջոցառումների ծրագրի 2011 է. Արդյունքների մոնիտորինգ (2011 թ. Առաջին կիսամյակ), Երևան, 2011, http://www.gov.am/files/docs/915.pdf, 17.09.2012, 19:25:

[8] Տես **Մարկոսյան Ա., Հախվեդյան Դ.,** Իրականի և անրիականի միջև. տնտեսագիտական-քաղաքական ուսումնասիրություն, Եր., Տիգրան Մեծ, 2004, էջ 487-488

- Գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման ոչ լիարժեքությունը,
- Սոցիալապես և նյութապես խոցելի, պետական ապարատը, որը պետական կառավարումը դարձնում է անարդյունավետ,
- Ստվերային տնտեսության մերժելի չափերը,
- Ժողովրդավարական պետությանը բնորոշ ինստիտուտների անկատարությունը,
- Նոր հասարակական հարաբերությունների ձևավորման գործում քաղաքական և տնտեսական ռազմավարությունը հասարակությանը մատչելի ներկայացնելու անարդյունավետությունը,
- Օրենսդրության գործընթացում հակակոռուպցիոն գործոնի թերագնահատումը,
- Իրավապահ մարմինների և դատական համակարգի անբավարար գործունեությունը կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման ու կոռուպցիոն տարրերի պատասպխանատվության ենթարկման խնդրում, ինչպես նաև պատժի անխուսափելիության սկզբունքի խախտումը,
- Մարդու քաղաքացիական իրավունքերի, գործող օրենսդրության, սոցիալական արդարության պաշտպանության մեխանիզմների անկատարությունը,
- Պետական կառավարման գործառույթնորի պատշաճ հսկողության և վերահսկողության թուլացումը,
- ՁԼՄ-ների պասիվ կամ ընտրողական մասնկացությունը (լուսաբանումը) հասարակական և քաղաքական կյանքին[9]:

Իշխանության լեգիտիմության համար առանցքային է տեղեկատվության երաշխավորված մատչելիությունը: Այն նվազեցնելով կոռուպցիայի մակարդակը քաղաքական գործիչներին ստիպում է գործելու ազնիվ, բարոյական ու սեփական անվտանգությունից ելնելով սեփական շահերը չներկայացնել որպես հանրային շահ: Դեռևս 1949թ.-ին Միացյալ Թագավորությունում գործողության մեջ է դրվել հասարակության ծառայող ցանկացող քաղաքական գործիչների կոդեքսը: Վերջինս որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջոց ներառեց լորդ Նոլանի մշակած հետևյալ սկզբունքները՝ **«անձնվիրություն, անկաշառելիություն, օբյեկտիվություն, հաշվետվություն, մատչելիություն, ազնվություն, ղեկավա-**

[9] Տես Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումներ ծրագիրը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի N 1522-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 60 (295), 10 դեկտեմբերի 2003թ., էջ 281-282:

ռում»[10]**:** Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ մարմինների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև վերջիններիս կարողություններով, ինչպես նաև իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակական կառույցների միջև, այդ թվում ԶԼՄ-ների, գործարար հատվածի, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների հետ ակտիվ համագործակցությամբ: Վտանգելով պետական իշխանության լեգիտիմությունը՝ կոռուպցիան ունենում է հետևյալ բացասական հետևանքները.

- Ներգրավվածները իրենց անձնական շահի գերակայության նկատառումներով անհիմն բարձրացնում են որևիցե գաղափարախոսություն կամ սկզբունք,
- Կանխարգելում կամ խոչընդոտում է կառավարության կողմից օրենքների և քաղաքականությունների իրականացումը,
- Հասարակությունը կորցնում է քաղաքական գործիչների, քաղաքական կառույցների և գործընթացների հանդեպ վստահությունը,
- Նպաստում է իշխանության հանդեպ միջազգային վստահության կորստին,
- Խրախուսում է ցինիզմը և խոչընդոտում քաղաքական մասնակցությունը,
- Կարող է նպաստել քաղաքական անկայունությանը, հանգեցնել շրջադարձերի և քաղաքացիական պատերազմների,
- Խեղաթյուրում է ընտրությունները և դրանց արդյունքերը,
- Ստեղծում է իրավիճակ, որտեղ աղքատները զուրկ են մնում քաղաքական իշխանությունից,
- Միավորում, ամրապնդում է քաղքական իշխանությունը և նվազեցնում քաղաքական մրցակցությունը,
- Խոչընդոտում է քաղաքական զարգացումը և խրախոսում հովանավորչությունը, փողի վրա հիմնված քաղաքական գործունեություն,
- Նվազեցնում է քաղաքական որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը:

Սոցիալական առումով կոռուպցիայի հետևանքով ձևավորվում են մի շարք վարքագծեր, դիրքորոշումներ և հավատքներ: Կոռուպցիան նաև տարանջատող հատկություն ունի և մեծապես նպաստում է սոցիալական անհավասարությանն ու բախմանը: Կոռուպցիայի վերահսկման համար անհրաժեշտ է բազմակողմանի ռազմավարություն, որը միավորում է պետական և ֆինանսական կառավարման բախումներն ավելի լայն կառուցվածքային կապերի հետամուտ ծրագրերի՝ ներառյալ քաղցաքական համակարգի ներքին կազմակերպումը,

[10] Տես Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ, ԵԱՀԼ, տնտեսական և բնապահպանակն գործունեության համակարգողի գրասենյակ, Ավստրիա, Վիենա. Գրքի թարգ. իրակ. ՀՀ Գլխավոր դատախազության գիտաուսումնական կենտրոնի կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, Եր., էջ 8

պետություն-խորհրդարան և պետություն-քաղաքացիական հասարակության միջև կապը: ՀԲ-ն մշակել է բազմակողմանի ռազմավարություն, որն ընդգրկում է կոռուպցիայի վերահսկման հինգ կարևորագույն տարրերը[11]: Դրանք հիմնված են պետական մակարդակով գնահատումների վրա, որոնք օգնում են առավել խորությամբ ընկալել կոռուպցիայի մակարդակների, պատճառների ու հետևանքներ հատկորոշման մեխանիզմները, ինչպես նաև տրամադրում են իրավիճակի փոփոխման համար անհրաժեշտ գործիքներ՝ քաղաքականություն մշակողներին և քաղաքացիներին օբյեկտիվ տեղեկատվություն հաղորդելու միջոցով: Իրավական ամուր հիմք ունեցող ժողովրդավար պետքությունները կայուն պայմաններ են ապահովում տնտեսական գործունեության համար: Սակայն որպեսզի այդ պայմանները գործեն արդյունավետ, անհարժեշտ է, որ քաղաքական գործիչները ձգտեն վերընտրվել և շատ վստահ չլինեն իրենց ապագայի բերաբերյալ՝ նպաստելով կառավարության զարգացմանը[12]: Մինչդեռ քաղաքական մրցակցային ուժեղ միջավայրը սահմանափակում է կաշառավծությունը և նվազեցնում դրա հավանականությունը՝ հանդիսանալով թափանցիկ վերահսկման միջոց: Թափանցիկության հարցերի ընդգրկումը ՀՀ ազգային անվտանգության ապահովման օրակարգում ներառել են հետևյալ հրամայականները.

- **ռազմական թափանցիկություն.** որը **թույլ կտա փոխադարձաբար հետևել զորավաժություններին և ռազմական նախագծերին,**
- **տեղեկատվական թափանցիկություն.** Այսինքն՝ բնապահպանական իրադրության, հանցավորության (ներառյալ փողերի լվացման և կոռուպցիայի հարցերը), ֆինանսական հոսքերի մասին պաշտոնական տեղեկատվության հասանելիություն,
- **քաղաքական թափանցիկություն.** այսինքն՝ առանձին մակարդակների հանրային իշխանության պատասխանատվությունը քաղաքացիական հասարկության ինստիտուտներին, որն էլ «անվտանգության ժողովրդավարական-կողմնորոշված կարգի» կարևորագույն պայման է,
- **գործառութային թափանցիկություն.** սա ենթադրում է իրավական կողմնորոշված բարեփոխումներ ուղղված իշխանության երեք թևերի միջև բաժանման սկզբունքների հստակ պահպանմանը և իշխանության մակարդակների միջև լիազորությունների սահմանազատմանը (մունիցիպալ, տարածաշրջանային, կենտրոնական),
- **հակակոռուպցիոն գործունեության թափանցիկություն.** որի բացակայությունը ազգային անվտանգությանը անմիջական սպառնացող գործոնն է:

---

[11] http://siteresources.worldbank.org/INTOFFEVASUS/Resources/WB_Anti_Corruption_Guidelines_10_2006.pdf, 01.10.2012, 22:29:

[12] Տես **Ռուզ-Ակերման Սյուզան,** Կաշառվածություն և պետություն. Պատճառները, հետևանքները և բարեփոխումը, Եր. Գիտանք, 2004, էջ 122:

Բանալի բառեր - ազգային անվտանգության ռազմավարություն, ներքին սպառնալիքները, քաղաքական համակարգի անկատարություն, դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակաս, հասարակության բևեռացում, ուրբանիզացում, գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը, քաղաքական թափանցիկություն, գործառութային թափանցիկություն, հակակոռուպցիոն գործունեության թափանցիկություն:

Հովսեփ Մովսիսյան, Կոռուպցիան որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության սպառնալիք - Հոդվածում դիտարկվել է ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության քաղաքականության համակարգը և տվյալ ռազմավարության տիրույթներում սահմանված ՀՀ ազգային անվտանգության ապահովման ներքին սպառնալիքները:

Հոդվածի հեղինակը ուսումնասիրել է կոռուպցիայի դեմ պայքարող խորհրդարանականների համաշխարհային կազմակրպության (GOPAC) կողմից սահմանված այդ երևույթի դրսևորման հետևյալ ձևերը՝ կաշառակերություն և նենգամիտ վճարներ, մանր և խոշոր, բյուրոկրատական, քաղաքական կոռուպցիաներ:

Овсеп Мовсисян, Коррупция как угроза национальной безопасности Республики Армения - В статье рассмотрена система стратегии национальной безопасности РА и внутренние угрозы для обеспечения национальной безопасности РА, определенных в стратегиях.

Автор статьи изучил следующие формы проявления этого феномена, установленные Глобальной организацией парламентариев против коррупции (ГОПАК): коррупция и злонамеренные сборы, малой и большой, бюрократической, политической коррупции.

Hovsep Movsisyan, Corruption as a threat to national security of the Republic of Armenia - The article reviewed the system of the National Security Strategy of RA and internal threats to the national security of the Republic of Armenia defined in the strategies.

The author of the article studied the following forms of manifestation of this phenomenon set by the Global Organization of Parliamentarians Against Corruption (GOPAC): corruption and malicious charges, small and large, bureaucratic, political corruption.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

20-րդ դարը միջազգային հարաբերությունների ասպարեզում եզրափակվեց գաղափարական սկզբունքային հակամարտությամբ: Դրա արդյունքը եղավ այն, որ միջազգային դաշինքների, առանձին պետությունների և տարբեր կառույցների անվտանգության ապահովման վերաբերյալ ավանդական տեսակետներն ու պատկերացումները կորցրեցին իրենց արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի այնպիսի տարածաշրջանում, որտեղ առկա են անցումային ժամանակաշրջանին բնորոշ բոլոր զարգացումները: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության երաշխիքը համընդհանուր ժողովրդավարական արժեքների՝ պետության, հասարակության և անհատի ու վերջիններիս հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործուն համակարգն է:

Կայուն և շարունակական զարգացման միջոցով սոցիալական և իրավական պետության կառուցման, համընդհանուր ժողովրդավարական արժեքների պաշտպանության գործընթացում ի հայտ են գալիս Հայաստանի զարգացմանը խոչընդոտող, ազգային անվտանգությանն սպառնացող բազմաթիվ մարտահրավերներ և վտանգներ: Դրանք դրսևորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական դաշտում, առնչվում են պետության զարգացման բոլոր բնագավառներին և ունեն համաչափ կամ անհամաչափ բնույթ: Այս համատեքստում կարևորվում է անձի և պետության, անհատի և հասարակության պատասխանատվության փոխպայմանավորվածությունը[1]:

Պետության կառավարման և ազգային զարգացման քաղաքականության կերտման տեսանկյունից կարևոր է ազգային անվտանգության և ազգային զարգացման հայեցակարգերը դիտարկել գործառութային կտրվածքով: Այդ նպատակով հիմնարար նշանակություն ունի ազգային անվտանգության հայեցակարգը, գաղափարախոսությունը և ռազմավարությունը համապատասխանությունը ազգային զարգացման տրամաբանությանը: Հայաստանի Հանրապետության համար այս հիմնախնդիրը դառնում է առավել արդիական, քանի որ փոքր երկրների տնտեսական վիճակը և զարգացման տեմպերը միշտ չէ, որ լինում են կայուն: Հայ ժողովուրդը, ըստ էության, բաժանված է երեք խոշոր

[1] **Քոթանջյան Հ.,** Ազգային անվտանգությունը որպես քաղաքագիտության պրոբլեմ / Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, Եր., 2010, էջ 255:

հատվածների՝ Հայաստանի բնակիչներ, Ղարաբաղի բնակիչներ և սփյուռքահայեր: Հայաստանի զարգացման գործընթացում դիտարկվում է նաև որոշակի անհավասարակշռություն՝ քաղաքական, տնտեսական, քաղաքացիական, սոցիալական, ռազմական բաղկացուցիչների միջև, որի պատճառով կարող են ստեղծվել պայմաններ անձի և հասարակության անվտանգության նկատմամբ սպառնալիքների առաջացման համար:

Ավելին, ժամանակակից աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումները, ինչպես նաև տարածաշրջանային մարտահրավերները շարունակում են պահպանել Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացմանը խոչընդոտող անմիջական և հավանական սպառնալիքներ, որոնց չեզոքացումը սկզբունքային նոր մոտեցումներ ու ռեսուրսներ է պահանջում: Այստեղ կարևոր է նաև հաշվի առնել տարածաշրջանի մշակութային-քաղաքակրթական եզակիությունը և իրավահավասար պայմաններում ապահովել արցախահայության ինքնատիպությունն ու մշակութային ինքնությունը, ազգային-ազատագրական պայքարի և պետականության պատմական ավանդույթները[2]:

Ազգային շահերի, դրանց իրականացման հնարավորությունների, ինչպես նաև պաշտպանության համար անհրաժեշտ մեխանիզմների համար կարևոր խնդիր է դրանք սահմանելու և ամրագրելուն ուղղված պետական կառավարման մարմինների ունակությունը: Բացի այդ, առաջնային է նաև այն, որ մշակվող մոտեցումներն ընդունելի լինեն ինչպես քաղաքական և ռազմական էլիտաների, այնպես էլ ժողովրդական լայն զանգվածների շրջանակներում: Որպես կանոն, արտաքին քաղաքականությունը և ազգային անվտանգության համակարգը գլոբալ տեսանկյունից հիմնականում քաղաքական և ռազմական էլիտաների ուշադրության առարկա են: Սակայն, այն երկրներում, որտեղ ժողովուրդն ապրում է պարբերական սպառնալիքի պայմաններում, ազգային անվտանգության խնդիրը դառնում է ժողովրդական զանգվածների մշտական հետաքրքրության առարկան:

Ազգային անվտանգության համակարգի համար կարևոր նշանակություն ունի նորմատիվ իրավական հենքի ապահովումը՝ փոխհամաձայնեցված և փոխկապակցված օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի համակցությամբ: Նորմատիվային ամրագրմամբ սահմանվում են այն իրավական նորմերը և սկզբունքները, որոնք ուղղված են ազգային անվտանգության ապահովման բնագավառում իրավահարաբերությունների կարգավորմանը: Ազգային անվտանգության համակարգի գործառնությանը վերաբերող իրավական

---

[2] **Շիրինյան Լ.,** Այսրկովկասը և եվրոպական արժեքային համակարգը (Անվտանգության համալիր ծրագրի շուրջ), էջ 34, 28-39 / Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում/ ԵՊՀ; Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, կազմ.՝ Ա. Աղաբաբյան; Խմբ. խորհուրդ.-Եր., ԵՊՀ, 2013, 188 էջ:

հիմքերը պետք է կարողանան լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ օրենսդրական մակարդակով ազգային շահերի ամրապնդումը, անձի, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված սպառնալիքների սահմանումը, դրանց հակազդման արդյունավետ համակարգի ստեղծումը, հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունների սահմանումը, ազգային անվտանգության ապահովման համակարգում ընդգրկված մարմինների լիազորությունների և պարտականությունների հստակ սահմանումը, իրավախախտումների կանխարգելման մեխանիզմների ձևավորումը և այլն:

Հարկ է նշել, որ անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգի կատարելագործման, ինչպես նաև քաղաքական-իրավական նախադրյալների ստեղծման ուղղությամբ իրականացվել են մեծածավալ աշխատանքներ: Սակայն, կարելի է համաձայնել նաև արտահայտված այն տեսակետին, որ ՀՀ ազգային անվտանգության բնագավառում հարաբերությունների օրենսդրական կարգավորման կառուցակարգերում եղել են նաև բացեր[3], ինչը պահանջում է ավելի արհեստավարժ մոտեցմամբ ապահովել այդ հարաբերությունների կանոնակարգման համապարփակ ու փոխլրացնող համակարգի առկայություն: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ոլորտը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով, օրենքներով, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ, ՀՀ ռազմական դոկտրինով, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ-ում ազգային անվտանգության երաշխավորման գործընթացների հետ կապված ամրագրումներ են արված Սահմանադրության 1995թ., 2005թ. և 2015թ. տեքստերում: Մասնավորապես, 1995թ. Սահմանադրության մեջ նշված էր, որ Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Միաժամանակ ամրագրված էր, որ կառավարությունն ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը[4]: 2005թ. Սահմանադրությամբ ամրագրվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները, ինչպես նաև սահմանվել են ազգային անվտանգություն ապահովող պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունները: Այսպես, օրինակ, 8.2 հոդված-

[3] Մանրամասն տես **Մեղրակյան Ա.,** Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի երրորդ Հանրապետությունում, <<Հայկական բանակ>> ռազմագիտական հանդես, 20011, հմ. 1-2, էջ 153, 152-160

[4] ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ., 49-րդ և 89-րդ հոդվածներ:

ում նշվում է, որ զինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը[5], 49-րդ հոդվածում՝ Նախագահը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է, 55-րդ հոդվածի 6-րդ մասում՝ Նախագահը կազմավորում և նախագահում է ազգային անվտանգության խորհուրդը, 86-րդ հոդվածում՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել ՀՀ Նախագահը, 89-րդ հոդվածում՝ կառավարությունը ապահովում է ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը[6]:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը կառավարման խառը՝ կիսանախագահական ձևից անցում կատարեց կառավարման խորհրդարանական ձևի: 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ գործադիր իշխանության համար պատասխանատու էին և կառավարությունը, և Հանրապետության նախագահը[7], մինչդեռ գործող Սահմանադրությամբ գործադիր իշխանության համար պատասխանատու է բացառապես կառավարությունը՝ խորհրդարանի վերահսկողության ներքո:

Հանրապետության նախագահը գործադիր իշխանության իրականացման հետ որևէ անմիջական կապ չունի և իրականացնում է խորհրդարանական համակարգին բնորոշ գործառույթներ, որոնք հիմնականում արարողակարգային և խորհրդանշական բնույթի են: Բացի դրանից նա հետևում է Սահմանադրության դրույթների պահպանմանը և դրանով նպաստում հասարակական կյանքում սահմանադրական արժեքների իրացմանը և արմատավորմանը:

---

[5] 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ զինված ուժերի վերաբերյալ որևէ դրույթ ամրագրված չէր: 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով <<Սահմանադրական կարգի հիմունքները>> գլուխը լրացվեց 8.2-րդ հոդվածով: Սահմանադրական մակարդակով զինված ուժերի առաքելության ամրագրումը, որի շրջանակներից զինված ուժերը չեն կարող դուրս գալ, քաղաքական կայունության, ժողովրդավարական զարգացման կարևոր նախապայմաններից է: Մյուս կողմից էլ՝ <<ոչ խաղաղություն, ոչ պատերազմ>> վիճակում հայտնված Հայաստանի Հանրապետությունում օբյեկտիվորեն զինված ուժերն ստանում են հսկայական դերակատարություն: Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., <<Իրավունք>>, 2010, էջ 130-131, 1086 էջ

[6] ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005/Հատուկ թողարկում, 05.12.2005, 8.2, 49-րդ, 55-րդ, 86-րդ և 89-րդ հոդվածներ:

[7] Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության նախագահի ՆՀ-174-Ն հրամանագրի 41-րդ մասի համաձայն՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծերը նախքան Կառավարություն ներկայացնելն ուղարկվում էին Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ՝ կարծիքի:

Խոսելով ՀՀ կառավարության սահմանադրաիրավական պատասխանատվության մասին՝ պետք է նշել, որ իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար կառավարությունը պատասխանատվություն է կրում միանձնյա: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները՝ կառավարությունը մշակում և իրականացնում էր ՀՀ ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին, պաշտպանության և ազգային անվտանգության բնագավառներում քաղաքականությունը մշակում և իրականացնում էր Հանրապետության նախագահի հետ համատեղ:

Ներկայումս վարչապետն ունի բավականին ուժեղ դիրք, բայց նա, ի տարբերություն կիսանախագահական համակարգում Հանրապետության նախագահի, մշտապես գտնվում է խորհրդարանական վերահսկողության ներքո: Այս համատեքստում կարելի է նաև փաստել, որ խորհրդարանական կառավարման ձևով պայմանավորված՝ վարչապետի դերի և կարգավիճակի որոշակի ուժեղացումը չի կարող որևէ կերպ նույնականացվել նախագահական կամ կիսանախագահական կառավարման ձևերի պայմաններում պետության գլխի ազդեցիկ դերակատարության հետ:

Գործող Սահմանադրության 152-րդ հոդվածի համաձայն՝ վարչապետը կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը (որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով): Նոր Սահմանադրության մեջ նորույթ է այն ձևակերպումը, որ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը, իսկ պաշտպանության նաախարարն այդ ուղղությունների շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը (155-րդ հոդված)[8]:

Ազգային անվտանգության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների ստեղծմամբ ամուր հիմք է դրվում նաև այդ ոլորտի ներպետական օրենսդրական ու ենթաօրենսդրական կարգավորման համար՝ որպես <<երկրի օրենսդրության ստեղծվելիք համակարգի հիմք>>[9]: Սահմանադրական դրույթ-

---

[8] ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015թ., ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., 152-րդ և 155-րդ հոդվածներ:

[9] **Նազարյան Ա.Ս.,** Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ՝Հայկական բանակ՝ռազմագիտական հանդես, 2008, հմ. 2-3, էջ 36:

ների իրագործման հաջորդ հիմնարար մակարդակը օրենքների միջոցով կարգավորումներն են: Ամենաընդհանուր ընկալմամբ՝ օրենքների ընդունումը ժողովրդի իշխանության իրագործմամբ ընտրված մարմնի՝ խորհրդարանի կողմից պետական քաղաքականության ծրագրերին և գործադիր իշխանության գործունեությանն ուղղված ամենաակտիվ գործառույթներից մեկն է: Անվտանգության մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներ ընդունելու լիազորությունը կարևորվում է նաև խորհրդարանի կոմից իրականացվող ժողովրդավարական վերահսկողության գործընթացում, քանի որ, ազգային անվտանգության շահերից ելնելով, երբեմն անհրաժեշտ է լինում ժամանակավորապես շրջանցել պետական մարմինների նկատմամբ վերահսկողության համար ընդունված նորմերը: Հետևաբար, ժամանակակից բոլոր խորհրդարաններն օրենքներ ընդունելիս բախվում են մի ընդհանուր խնդրի հետ. ինչպես ստեղծել անվտանգության արդյունավետ ծառայություններ, որոնք ի վիճակի կլինեն իրենց լիազորություններն իրականացնել ի շահ ժողովրդի և միևնույն ժամանակ ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ինչ օրենքներ կիրառել նրանց նկատմամբ և ինչպիսի լիազորություններ շնորհել:

Սահմանադրության ընդունումը պայմանավորեց ազգային անվտանգության ոլորտում համապատասխան օրենսդրության ստեղծումը: Հատկանշական է այն, որ ոլորտին առնչվող օրենքներից յուրաքանչյուրը պարունակում է ազգային անվտանգության ապահովմանն առնչվող ընդամենը մեկ կամ երկու-երեք նորմեր: Նման քանակով և ոչ համակարգված՝ տարբեր տեղերում զետեղված, նորմերի միջոցով գործնականում հնարավոր չէ ստեղծել Սահմանադրությամբ սահմանված հիմունքներից ածանցված ամուր օրենսդրական հիմքեր և ենթաօրենսդրական մակարդակում արդյունավետ կերպով կարգավորել ազգային անվտանգության հետ կապված հարաբերությունները:

2002 թվականին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է Հայաստանի Հանրապետության «ազգային անվտանգություն» հասկացությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգում ազգային անվտանգության մարմինների տեղն ու դերը, դրանց գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, ուղղությունները, ուժերն ու միջոցները, նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության կարգը և այլն[10]:

Արդեն նշվեց, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ ամրագրվեցին Կառավարության վերաբերյալ նոր իրավակարգավորումներ՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում կառավարման

[10] «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2002/6, 05.02. 2002:

խորհրդարանական համակարգին անցմամբ: Միաժամանակ, Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Ազգային անվտանգության խորհուրդը վերանվանվեց Անվտանգության խորհրդի և ամրագրվեց, որ Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները: «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրվեցին Անվտանգության խորհրդի կարգավիճակը, գործառույթը և լիազորությունները, սահմանվեց խորհրդի կազմը և գործունեության կարգի հետ կապված հարաբերությունները, նախատեսվեցին խորհրդի որոշումների տեսակները և դրանց ընդունման կարգը, ինչպես նաև խորհրդի բնականոն գործունեության ապահովմանը վերաբերող այլ դրույթներ (մինչ այդ նշված հարցերը կարգավորում էին ՀՀ Նախագահի 2008 թվականի մայիսի 26-ի «Ազգային անվտանգության խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» ՆՀ-128-Ն հրամանագրով)[11]:

Ընդհանրապես, իրավահարաբերությունների կարգավորվման սկզբունքով ենթադրվում է, որ ամենավերևում գտնվող իրավական ակտը՝ սահմանադրությունը, սահմանում է իրավահարաբերությունների կարգավորման իրավական հիմունքները, դրանից մեկ աստիճան ցածր գտնվող իրավական ակտերը՝ օրենքները, մանրամասնելով այդ հիմունքները, կարգավորում են իրավահարաբերությունները կոնկրետ ոլորտներում և ածանցյալ հիմքեր են ստեղծում հաջորդ մակարդակում այդ հարաբերությունների կարգավորման համար, իսկ ստորին հարթակում գտնվող ակտերը՝ ենթաօրենսդրական ակտերը, մանրամասն և դինամիկ կարգավորման են ենթարկում կոնկրետ հարաբերությունները[12]:

Անվտանգության երկարաժամկետ քաղաքականությունը կազմվում է այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ կառավարության ծրագիրը, ազգային անվտանգության ռազմավարությունը, ռազմական դոկտրինը, տեղեկատվական անվտանգության և անվտանգության այլ ոլորտներին վերաբերող հայեցակարգային փաստաթղթերը, որոնցում ռիսկերի գնահատման հիման վրա սահմանում են անվտանգության տարբեր ոլորտների մարմինների հետաքրքրությունները և առաջնային խնդիրները: Ռազմավարական փաստաթղթերը հետագա բարեփոխումների համար ստեղծում են քաղաքական դաշտ և հիմք են ծառայում գործադիր մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտերի մշակման և տարեկան ծրագրային միջոցառումների պլանավորման ու իրականացման համար:

---

[11] «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), 07.03.2018:

[12] **Քոչարյան Տ.,** ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 80:

Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները որպես ուղեցույց ներկայացված են ՀՀ նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված ազգային անվտանգության ռազմավարությունում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է, որն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով[13]: Ռազմավարությունը սահմանում է ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, ինչպես նաև դրանց դեմ ուղղված սպառնալիքները: Փաստաթղթում արտացոլված է նաև ՀՀ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդրի լուծման հարցում: ՀՀ ազգային ռազմավարությունը միտված է պետության և հասարակության կայուն զարգացումն ապահովելուն՝ ներքին և արտաքին սպառնալիքների կանխման ու դրանց հետևանքների վերացման միջոցով:

ՀՀ ռազմական անվտանգության ռազմաքաղաքական հիմնադրույթները, պաշտպանական ռազմավարությունը, ռազմական անվտանգության ապահովման համակարգը, ինչպես նաև պետական մարմինների՝ ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գործունեության հայեցակարգային հիմնադրույթները սահմանվում են ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատված ռազմական դոկտրինում[14]: Վերջինս պաշտպանական բնույթի փաստաթուղթ է և պետության ռազմական անվտանգության ապահովմանն ուղղված ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերի համախումբն է: Անկասկած, երկրի ներքին (ազգային) անվտանգության ապահովման համակարգում ռազմական անվտանգությունը պահպանում է իր առանձնացված դերակատարությունը: Միևնույն ժամանակ, ռազմական դոկտրինի դրույթները կարող են փոփոխվել՝ կախված ռազմաքաղաքական իրադրությունից, ռազմական սպառնալիքների ու մարտահրավերների բնույթից, ռազմական անվտանգության համակարգի ապահովման համար անհրաժեշտ այլ գործոններից:

---

[13] ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007:

[14] ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՆՀ-308-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 07. 01.2008:

Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր ազգային անվտանգության ապահովման իրավական (օրենսդրական, ենթաօրենսդրական) հիմնախնդիրները վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն մարտահրավերներն ու իրողությունները, որոնք առկա են թե Հայաստանի Հանրապետությունում, թե տարածաշրջանում, թե ընդհանրապես աշխարհում և կարող են ազդել Հայաստանի անվտանգության համակարգի վրա (օրինակ՝ աշխարհաքաղաքական առանցքի՝ Ատլանտյան օվկիանոսից դեպի Խաղաղ օվկիանոս տեղաշարժում, համընդհանրացում, կրոնական բախումներ և միջէթնիկական հուզումների անընդմեջ զարգացումներ[15] և այլն):

Հաշվի առնելով վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները, միջազգային և տարածաշրջանային իրադրության փոփոխությունները, ծավալվող անվտանգության և ռազմաքաղաքական փոփոխությունները՝ ներկայումս գործընթաց է նախաձեռնվում վերանայելու ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը՝ երկրի ազգային անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների, սպառնալիքների ու առաջնայնությունների ճշգրտման նպատակով: Նոր ռազմավարությունը պետք է համահունչ լինի և արտացոլի նաև Հայաստանի Հանրապետությունում կառավարման նոր՝ խորհրդարանական մոդելին անցնելու առաջնահերթությունները, քաղաքական-իրավական ու կառավարչական կառուցակարգերում ազգային անվտանգության համակարգի էությունը, ինչից ելնելով էլ վերանայվելու են նաև անվտանգության ենթաոլորտներին վերաբերող հայեցակարգերը:

Բանալի բառեր - ազգային անվտանգություն, նորմատիվ ակտ, օրենսդրություն, սահմանադրություն, օրենք, ենթաօրենսդրական ակտ, քաղաքականություն, հայեցակարգ, ռազմավարություն, կառավարման համակարգ:

Սնակ Նիկողոսյան, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրավաքաղաքական հայեցակարգային հիմքերի համառոտ վերլուծություն – ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար առաջնային նշանակություն ունի արդյունավետորեն գործող, որակապես բարձր մակարդակի վրա գտնվող իրավաքաղաքական համակարգը, որը պետք է ձևավորվի ու իրականացվի միջազգային և տարածաշրջանային անվտանգային ու ռազմաքաղաքական իրողություններին համապատասխան: Ազգային անվտանգության իրավաքաղաքական հենքի հիման վրա կառուցվում

[15] ***Henry Kissinger***, The Intellectual Underpinnings of the Trilateral Partnership in the 21st Century. "Seeking Opportunities in Crisis: Trilateral Cooperation in Meeting Global Challenges", 2009, p. 98 (http://www.trilateral.org/download/doc/seeking_opportunities2.pdf); *Fareed Zakaria,* The Post-American World. New York, 2009, p. 2:

է երկրի անվտանգության քաղաքականությունը, որն էլ ուղղակիորեն պայմանավորում է պետության զարգացման տեսլականը:

Севак Никогосян, Краткий анализ политико-правовых концептуальных основ национальной безопасности Республики Армения - Для обеспечения национальной безопасности РА имеет особое значие на высоком уровне результативно действуюшая политико-правовая система, которая должна быть сформирована и внедрена в соответствии с международными и региональными безопасностными и военно-политическими реалиями. На политико-правовой основе национальной безопасности строится безопасностная политика страны, которая непосредственно определяет видение развития государства.

Sevak Nikoghosyan, Brief analysis of political-legal conceptual bases of national security of the Republic of Armenia - In order to ensure national security, the Republic of Armenia has a particularly significant, highly effective, politically-legal system, which should be formed and implemented in accordance with international and regional security and military-political realities. The country's security policy is being built on the political and legal basis of national security, which directly determines the vision of the development of the state.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՈՎՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ

Նոտարիատի համակարգն ունի կարևոր դերակատարում արդարադատության ապահովման ոլորտում: Նոտարի կողմից վավերացված կամ հաստատված փաստաթուղթը ձեռք է բերում օրենքով նախատեսված ապացուցողական ուժ, ուստի կարևոր է վավերացման կամ հաստատման գործընթացի պատշաճ իրավական կարգավորման ապահովումը:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *նոտարը վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն)*, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ *նոտարը վավերացնում է փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը*: Նույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ*, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ *նոտարը, վավերացնելով ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը, չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ*:[1]

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: <u>Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը</u> կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել*:[2]

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում առաջանում է իրավական անորոշություն: Այսպես. եթե փաստաթղթերի վրա առկա՝ ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը վավերացվում է միայն այն դեպքում, երբ փաստաթուղթը չունի գործարքի բնույթ, ապա ինչպես է օրենքը թույլատրում վերանշյալ դեպքերում վավերացնել ֆիզիկական անձանց ստորագրությունները, եթե փաստաթուղթը հանդիսանում է գործարք: Բացի այդ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը կրում

---

[1] «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք / Ընդունված է Ազգային Ժողովի կողմից 4 դեկտեմբերի 2001 թ.// /http://www.arlis.am/

[2] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք / Ընդունված է Ազգային Ժողովի կողմից 5 մայիսի 1998 թ. // /http://www.arlis.am/

է ինպերատիվ բնույթ և չի նախատեսում բացառություններ, որոնց դեպքերում նոտարը կարող է նաև վավերացնել ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը այն դեպքում, երբ փաստաթուղթը կրում է գործարքի բնույթ: Նշված իրավական խնդրի լուծում կարող է հանդիսանալ «Նոտարիատի մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառակապակցությամբ լրացնելը, ինչպես դա ամրագրել է ռուս օրենսդիրը: Այսպես. «Նոտարիատի վերաբերյալ ՌԴ օրենսդրության հիմքերի մասին» ՌԴ օրենքի 80-րդ հոդվածի համաձայն՝ *չի թույլատրվում ստորագրության իսկության վավերացում գործարքի բովանդակություն ունեցող փաստաթղթերի վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի*:[3] Իհարկե, այդպիսի մոտեցումը կարող է բավարար լինել միայն այն գործարքների համար, որոնք պարտադիր նոտարական վավերացում չեն պահանջում, սակայն կիրառելի չէ նոտարական վավերացում պահանջող գործարքների դեպքում: Մեր կարծիքով, վերոնշյալ լուծումը թերի է, քանի որ հնարավոր է մի այնպիսի իրավիճակ, երբ քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել այնպիսի գործարք, որն օրենքով ենթակա է պարտադիր նոտարական վավերացման, և վերջինիս փոխարեն նրա խնդրանքով գործարքը ստորագրում է այլ քաղաքացի: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կառուցապատման իրավունքի ձեռքբերման, օտարման, հիփոթեքի և այլ պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման*: Հետևաբար առաջանում է հետևյալ իրավական խնդիրը՝ ի՞նչ գործողություններ պետք է ձեռնարկի նոտարը այն պարագայում, երբ, օրինակ, ֆիզիկական արատ, հիվանդություն կամ անգրագիտություն ունեցող հողամասի սեփականատերը կառուցապատման պայմանագիր է կնքում: Նախ, նոտարը չի կարող վավերացնել միայն քաղաքացու ստորագրության իսկությունը, քանի որ ստացվում է, որ նոտարը հաստատում է միայն այն հանգամանքը, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ, այլ ոչ թե փաստաթղթում շարադրված փաստերը, որպիսի պարագայում գործարքը չի կարող համարվել նոտարական վավերացում ստացած: Այդ դեպքում կառուցապատման պայմանագիրը կհամարվի չկնքված, նույնիսկ եթե նոտարը վավերացնի ստորագրությունը: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը հստակ տարանջատում է ստորագրության իսկության վավերացման ինստիտուտը գործարքի վավերացման ինստիտուտից, այսինքն՝ ստորագրության իսկության վավերացումը չի կարող համարվել գործարքի նոտարական վավերացում:

---

[3] Закон РФ «Основы законодательства Российской Федерации о нотариате»// Вступил в силу 11 февраля 1993 года// http://www.consultant.ru/

Միևնույն ժամանակ, նոտարը չի կարող նաև վավերացնել ինչպես գործարքը, այնպես էլ ստորագրության իսկությունը: Նոտարը, իր մատուցած ծառայությունների դիմաց ստանում է վարձատրություն: Եթե նոտարին հնարավորություն ընձեռել կատարել միաժամանակ երկու նոտարական գործողություն, ապա նոտարը պետք է ֆիզիկական արատ, հիվանդություն կամ անգրագիտություն ունեցող քաղաքացու գանձի գումար երկու նոտարական գործողությունների համար, ինչը, մեր կարծիքով, հավասարության սկզբունքի խախտում կհանդիսանա, քանի որ ֆիզիկական արատ, հիվանդություն կամ անգրագիտություն ունեցող քաղաքացին ստիպված կլինի վճարել ավելին, քան այլ քաղաքացիները: Այդ իսկ պատճառով վերոնշյալ լուծումը արդարացված չի կարող լինել:

Ուսումնասիրվող իրավական խնդրի մեկ այլ լուծման տարբերակ կարող է հանդիսանալ ֆիզիկական արատ, հիվանդություն կամ անգրագիտություն ունեցող քաղաքացու փոխարեն այլ անձի կողմից ստորագրված գործարքը ենթարկել միայն նոտարական վավերացման, բացառելով ստորագրության իսկության վավերացումը: Նոտարը տվյալ պարագայում պետք է ուղղակի նշում կատարի, թե ինչով է պայմանավորված այլ անձի կողմից գործարքի ստորագրության կատարումը, միաժամանակ նշելով, որ այլ անձի ստորագրությունն առաջացնում է իրավունքներ և պարտականություններ ոչ թե վերջինիս համար, այլ այն անձի համար, ում փոխարեն կատարվել է ստորագրություն: Մեր կարծիքով, այդպիսի մոտեցումն ավելի նպատակահարմար կլինի, քանի որ կբացառի ինչպես կրկնակի վճարելու անհրաժեշտությունը, այնպես էլ կկարգավորի գործարքի վավերացման և ստորագրության իսկության վավերացման ինստիտուտների փոխգործակցությունը: Բացի այդ, ֆիզիկական արատ, հիվանդություն կամ անգրագիտություն ունեցող քաղաքացու փոխարեն այլ անձի կողմից գործարքի պարտադիր նոտարական վավերացումը հնարավորինս կերպով կպաշտպանի վերոնշյալ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Այսպիսով, մեր կարծիքով, վերոնշյալ հարցի պատշաճ իրավական կարգավորորման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ օրենսդրական փոփոխությունները և լրացումները.

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթում նշված *«ստորագրությունը»* բառը փոխարինել *«գործարքը»* բառով:
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը լրացնել հետևյալ պարբերությամբ՝ *«Այդպիսի գործարքն առաջացնում է իրավական հետևանքներ այն քաղաքացու համար, ում փոխարեն կատարվել է ստորագրություն»*: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ մասի իրավական նորմը այդ դեպքում կունենա հետևյալ խմբագրությունը՝

«Եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: Այդպիսի գործարքը պետք է վավերացնի նոտարը կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել: Այդպիսի գործարքն առաջացնում է իրավական հետևանքներ այն քաղաքացու համար, ում փոխարեն կատարվել է ստորագրություն»:

3. Լրացում կատարել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթում, *«փաստաթուղթը»* բառը լրացնել *«գործարքի բնույթ չկրող»* բառակապակությամբ: Այդպիսի լրացումը կօգնի խուսափել ստորագրության իսկության վավերացման և գործարքի վավերացման ինստիտուտների իրավական նորմերի հակասություններից: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի իրավական նորմը կստանա հետևյալ խմբագրությունը՝

«Եթե անձը ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող ստորագրել, ապա նրա հանձնարարությամբ, նրա ու նոտարի ներկայությամբ գործարքի բնույթ չկրող փաստաթուղթը կարող է ստորագրել այլ անձ: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարքի բնույթ չկրող փաստաթուղթը չէր կարող ստորագրել նոտարական գործողություն կատարելու համար դիմած անձը:»

Բանալի բառեր - նոտար, հիվանդություն, անգրագիտություն, ստորագրության իսկություն, գործարքի վավերացում:

Հովսեփ Քոչարյան, Ստորագրության իսկության և գործարքի վավերացում. օրենսդրական կարգավորման որոշ հիմնախնդիրներ - Հոդվածում ուսումնասիրվում է ստորագրության իսկության վավերացման և գործարքի վավերացման իրավական ինստիտուտների փոխգործակցության հիմնախնդիրները ՀՀ օրենսդրությունում: Հեղինակը՝ ուսումնասիրելով վերոնշյալ ինստիտուտների իրավական կարգավորումը, հանգել է այն եզրակացության, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի իրավական նորմերը պետք է շարադրել նոր խմբագրությամբ:

Овсеп Кочарян, Заверение подлинности подписи и сделок: некоторые правовые проблемы законодательного регулирования - В статье рассматриваются правовые проблемы воздействия институтов заверения подлинности подписи и сделок в законодательстве РА. Автор, исследуя правовое

регулирование вышеуказанных институтов, приходит к выводу о необходимости изложения в новой редакции правовых норм, закрепленных в ч. 4 ст. 296 ГК РА, а также в ч. 3 ст. 44 Закона РА «О нотариате».

Hovsep Kocharyan, The certification of the authenticity of signature and transactions: some legal problems of legislative regulation - The article deals with the legal problems of the impact of the institutions of certificating the authenticity of signatures and transactions in the legislation of the Republic of Armenia. The author, investigating the legal regulation of the above-mentioned institutions, comes to the conclusion that it is necessary to present in the new edition the legal norms enshrined in the Part 4 of Art. 296 of the Civil Code of the Republic of Armenia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք / Ընդունված է Ազգային Ժողովի կողմից 4 դեկտեմբերի 2001թ.// /http://www.arlis.am/

2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք / Ընդունված է Ազգային Ժողովի կողմից 5 մայիսի 1998 թ. // /http://www.arlis.am/

3. Закон РФ «Основы законодательства Российской Федерации о нотариате»// Вступил в силу 11 февраля 1993 года// http://www.consultant.ru/

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Սեփականության իրավահարաբերությունների դադարումը (ինչպես յուրաքանչյուր իրավահարաբերության) հնարավոր է որոշակի իրավաբանական փաստերի կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում, որոնք կոչվում են իրավունքը դադարեցնող (մի շարք ռուս հեղինակներ օգտագործում են «правопрекращающий» տերմինը)։ Այն իրավաբանական փաստերը, որոնց հետ օրենքը կապում է սեփականության իրավունքի դադարումը, հանդիսանում են սեփականության իրավունքի դադարման հիմքեր (եղանակներ)։[1]

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է սեփականության անձեռնմխելիությունը, մասնավորապես ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում ամրագրվում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, և ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի։ Այս նպատակով էլ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ գլուխը՝ «Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների դադարելը» վերտառությամբ կարգավորում է սեփականության իրավունքի դադարման հետ կապված իրավահարաբերությունները։

Անհրաժեշտ է նշել, որ սեփականության իրավունքը հանդիսանում է բավականին «կայուն», «հաստատուն» գույքային իրավունք և նրա իրավական կարգավորումը ունի կարևորագույն նշանակություն քաղաքացիական շրջանառության մեջ, այդ պատճառով օրենքը հատուկ կարգավորում է սեփականության իրավունքի դադարման եղանակները։ Սեփականության իրավունքի դադարումը կարող է լինել կամավոր և հարկադրաբար։

Սեփականատիրոջ գույքը թույլատրվում է հարկադրաբար վերցնել միայն Քաղ. օր.-ի 279-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքերով։ Այդ հիմքերի ցանկը ամրագրված է սպառիչ կերպով և արգելվում է այդ ցանկի ընդլայնում մեկ այլ օրենքով։ Սրանում է կայանում սեփականատիրոջ իրավունքի կարևորագույն երաշխիքներից մեկը։ Սեփականատիրոջ կամքից անկախ նրա գույքը վերցնելու կոնկրետ հիմքերը պետք է ուղղակիորեն մատնանշված լինեն օրենքով։

Սեփականատիրոջ գույքը թույլատրվում է հարկադրաբար վերացնել կամ առգրավել միայն օրենքով նախատեսված ներքոնշյալ հիմքերով. 1. Երբ պարտավորություններով գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդվ. 281), 2.

[1] Տե՛ս **З. А. Ахметьянова**, Вещное право, Учебник, Казанский (Приволжский) Федеральный университет, § 11. Основания прекращения права собственности, 2011.

Երբ օտարվում է այն գույքը, որը օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (հոդվ. 282), 3. Երբ հողամասը վերացնելու կապակցությամբ օտարվում է անշարժ գույք (հոդվ. 283), 4. Երբ վերցվում են անտնտեսավար պահվող մշակութային արժեքները (հոդվ. 284), 5. Երբ կատարվում է ռեկվիզիցիա (հոդվ. 285), 6. Երբ կատարվում է բռնագրավում (հոդվ. 288), 7. Երբ իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հոդվածներ), 8. Երբ գույքն օտարվում է Քաղ. օր.-ի 197 հոդվածի 4-րդ կետով, 208, 220 հոդվածներով նախատեսված դեպքերում:

Քաղ. օր.-ի 288-րդ հոդվածը, որպես սեփականության իրավունքի դադարման հիմք, նախատեսում է բռնագրավումը: Ըստ այդ հոդվածի՝ օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց առգրավվել դատավճռով, որպես հանցագործության պատժամիջոց (բռնագրավում):

Քրեական օրենսգրքի համաձայն գույքի բռնագրավումը կիրառվում է որպես լրացուցիչ պատիժ շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար: Քրեական օրենսգիրքը նախատեսում է գույքի բռնագրավման կիրառում մի շարք հանցագործությունների դեպքում տնտեսության, հասարակական կարգի, անվտանգության, պետական իշխանության և այլ ոլորտներում:[2]

Բռնագրավում չի կարող տարածվել դատապարտյալին պատկանող հետևյալ գույքի վրա.

1) գործածության մեջ գտնվող տնային օգտագործման առարկաների, հագուստեղենի, կոշկեղենի, սպիտակեղենի, անկողնային և մանկական պարագաների, բացառությամբ պերճանքի առարկաների և այն առարկաների, որոնք պատրաստված են թանկարժեք նյութերից կամ ունեն պատմական կամ գեղարվեստական արժեք.

2) դատապարտյալի մասնագիտական պարապմունքների համար անհրաժեշտ առարկաների, ձեռնարկների ու գրքերի, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտյալը դատարանի դատավճռով զրկված է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, և այն առարկաների, որոնք պատրաստված են թանկարժեք նյութերից կամ ունեն պատմական կամ գեղարվեստական արժեք.

3) այն անձանց ընտանի կենդանիների (2 միավոր), ընտանի թռչունների (10 միավոր), անասնակերի, հերթական ցանքի համար անհրաժեշտ սերմացուի, որոնց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է.

4) աննշան արժեք ունեցող և մինչև 5.000 դրամ արժողությամբ այլ գույքի, եթե դրանք մեկ միասնական խմբաքանակ չեն կազմում.

---

[2] Տե՛ս ՀՀ «Քրեական օրենսգիրք», ընդ. 2003 թվականի ապրիլի 18-ին, 49-րդ հոդված 5-րդ կետ, 50-րդ հոդված 3-րդ կետ, 55-րդ հոդված, բաժիններ 8, 9, 11:

5) հաշմանդամների համար նախատեսված հատուկ փոխադրամիջոցների։[3]

Կարծում ենք Քաղ. օր.-ի 288-րդ հոդվածով ամրագրված բռնագրավման բովանդակությունը այդքան էլ ճիշտ չէ։ Սույն հոդվածում օրենսդիրն անհիմն օգտագործում է «առգրավում» տերմինը, որը սակայն բռնագրավման դեպքում կիրառել, նպատակահարմար չէ։ Բանն այն է, որ «առգրավում» և «բռնագրավում» հասկացությունները իրավունքի տեսության մեջ տարբեր իմաստ և կիրառություն ունեն։ Առգրավումը, ինչպես արդեն վերը նշեցինք, գույքը հատուցման միջոցով վերցնելն է, իսկ բռնագրավումը՝ անհատույց։ Մյուս նկատառումը, որը ցանկանում ենք անել այս հոդվածի բովանդակության հետ կապված, հետևյալն է. բռնագրավումը կարող է կիրառվել ոչ միայն հանցագործություն կատարելու, այլև այլ իրավախախտումներ կատարելու դեպքում[4], ուստի օրենսդրի տրված բնորոշումը բռնագրավման վերաբերյալ կարծում ենք ունի որոշակի շտկումների կարիք։ Մասնավորապես, սույն հոդվածը առաջարկում ենք խմբագրել հետևյալ կերպ. «Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից անհատույց կարող է վերցվել որպես հանցագործության կամ այլ իրավախախտում կատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոց»։

Բացի սեփականության իրավունքի դադարման վերոհիշյալ հիմքերից, պետական սեփականության իրավունքը կարող է դադարել ապապետականացման (մասնավորեցման), իսկ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը՝ պետականացնելու (ազգայնացնելու) միջոցով (Քաղ. օր. 279 հոդվ.)։

Պետական և մասնավոր սեփականության դադարման համար օրենսդիրը սահմանում է առանձնահատուկ հիմքեր, որոնք բնութագրական չեն մասնավոր սեփականության իրավունքի դադարմանը։ Այդ առանձնահատուկ հիմքերից է հանդիսանում պետական և համայնքային գույքի մասնավորեցումը։[5]

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 171-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը կարող է իր սեփականության ներքո գտնվող գույքը հանձնել քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը՝ պետական գույքի մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով։

Այս հիմքը վերաբերում է այն գույքին, որը գտնվում է հանրային, այլ ոչ թե մասնավոր սեփականատերերի սեփականության ներքո, և դրա ուժով չի կարող համարվել որպես սեփականության իրավունքի դադարման ընդհանուր հիմք։ Միաժամանակ, այն հանդիսանում է նաև սեփականության իրավունքի առաջացման հիմք մասնավոր սեփականատերերի համար (ֆիզիկական և իրավա-

---

[3] Տե՛ս ՀՀ «Քրեակատարողական օրենսգիրք» կից հավելված, ընդ. 2004թ. դեկտեմբերի 24-ին, Ցանկ դատարանի դատավճռով բռնագրավման ոչ ենթակա գույքի

[4] Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը, ընդ. 1985 թվականի դեկտեմբերի 6-ին

[5] Տե՛ս **З. А. Ахметьянова,** Вещное право, Учебник, Казанский (Приволжский) Федеральный университет, § 11. Основания прекращения права собственности, 2011

բանական անձինք)։ Մասնավորեցումը իրականացվում է հանրային սեփականատիրոջ որոշման հիման վրա և ենթադրում է նրա կողմից որոշակի վճարի գանձում մասնավորեցված գույքի համար։ Մասնավորեցման օբյեկտ հիմնականում հանդես է գալիս անշարժ գույքը, որի մասին ուղղակիորեն նշվում է օրենքով։ Եվ վերջապես, այն կարող է կատարվել միայն այն կարգով, որը սահմանված է մասնավորեցման մասին օրենքով, այլ ոչ թե քաղաքացիական օրենսդրությամբ։[6] [7]

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթի կիրառման դեպքերը հիմնականում կապված են լինում պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման գործընթացի հետ։ Դրանք կարգավորվում են նաև 29.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով։

Չնայած ՀՀ Սահմանադրական դատարանն որոշեց, որ, «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը և դրա 13-րդ հոդվածն օրենսդրի կողմից ընդունվելու, ուժի մեջ մտնելու և գործողության ընթացքում սահմանադրականության խնդիր չեն հարուցել և իրավաբանական ուժը կորցնելուց հետո չէին կարող կիրառվել դատարանների կողմից, այնուամենայնիվ, դատարանները գործեր քննելիս կիրառում են վերոնշյալ օրենքը՝ հաշվի առնելով, որ իրավահարաբերությունները ծագել են նշված օրենքի գործողության ժամանակ։[8]

Վճռաբեկ դատարանն անդրադարձավ նաև այն վավերապայմաններին, որոնց առկայության դեպքում անձը կարող է մասնակցել սեփականաշնորհման գործընթացին և որոնց դեպքում «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը կարող է կիրառվել։ Վճռաբեկ դատարանը նշեց, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում։ Այդպիսիք են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը։[9]

Սեփականության իրավունքի դադարման առանձնահատուկ հիմքերի մեջ իր ուրույն տեղն է գրավում գույքի պետականացումը (ազգայնացումը)։

---

[6] Տե՛ս **Е.А. Суханов,** Российское гражданское право, Учебник, В 2 томах, Том 1, Москва 2011, էջ 531։

[7] Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», ընդ. 1997թ. դեկտեմբերի 17-ին։

[8] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարան, Որոշում ՍԴԱՈ-24, 2009 թվականի մարտի 24։

[9] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան, Վարչական գործ թիվ ՎԴ/0476/05/08, 2010 թվականի հունիսի 25

Պետականացումը ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի անցումն է պետական սեփականության ներքո օրենքի ուժով, այդ գույքի արժեքի հատուցմամբ:[10]

Գաղտնիք չէ, որ երբ ՀՀ-ն գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմում մեծ թափ էր ստացել մասնավոր գույքի պետականացման գործընթացը: Ինչպես նշում է Սերգեեվան, ազգայնացումը իրականացվում էր տարատեսակ անվանումների ներքո (ազգայնացում, բռնագրավում, հանրապետության սեփականություն հայտարարելով, ռեկվիզիցիա և այլն) և ամենատարբեր պատճառներով, բայց դրա էությունը մնում էր անփոփոխ: Որոշ բացառություններով ազգայնացումը կրում էր անհատույց բնույթ, այսինքն՝ նախկին սեփականատիրոջը չէր տրվում փոխհատուցում վերցվող գույքի դիմաց:[11]

Պետականացման մասին հատուկ օրենք գոյություն չունի, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված այն դրույթներին, որոնք վերաբերում են պետականացմանը, մասնավորապես գույքի պետականացման դեպքում դրա արժեքի փոխհատուցմանը (Քաղ. օր.-ի 279-րդ հոդված 4-րդ կետ): Կարծում ենք, կա անհրաժեշտություն ընդունելու «Պետականացման (ազգայնացման) մասին» ՀՀ օրենք, որը կկարգավորի Հայաստանի Հանրապետությունում ազգայնացման կարգը, պայմանները, կսահմանի ազգայնացվող գույքի փոխհատուցման կարգը, դրա իրականացման հետ կապված հարաբերությունները և այլն: Ինչպես այսօր առանձին օրենքով մանրակրկիտ կերպով կարգավորվում է մասնավորեցման (ապապետականացման) հետ կապված հարաբերությունները, կարծում ենք, նույն տրամաբանությամբ պետք է կարգավորվի նաև պետականացումը: Միջազգային փորձը վկայում է, որ պետականացման գործընթացը մասնավորեցման գործընթացի հակակշռող և հավասարակշռող գործոնն է, իսկ պետականացման մասին օրենքը՝ կարևոր միջոց սեփականության մի ձևից մյուսին անցումը կամայականություններից և կողմնակալ վերաբերմունքից զերծ պահելու համար:

Բանալի բառեր - սեփականության իրավունք, սեփականության իրավունքի դադարում, Սահմանադրական դատարան, Վճռաբեկ դատարան, բռնագրավում, մասնավորեցում (ապապետականացում), պետականացում (ազգայնացում)

Արման Թադևոսյան, Սեփականության իրավունքի դադարման հարկադրական եղանակների հիմնախնդիրները ՀՀ օրենսդրության մեջ - Սեփականության իրավունքի դադարման հիմքերից բռնագրավմանը վերաբերող Քաղ. օր.-ի 288-րդ հոդվածն ունի խմբագրման կարիք: Սույն աշխատանքում առաջարկում

---

[10] Տե՛ս **Л. Ю. Грудцина, А.А. Спектор,** Гражданское право России, Учебник для ВУЗов, Москва Юстицинформ, 2008 էջ 112

[11] Տե՛ս **А. П. Сергеев,** Гражданское право, учебник, Том 1, Москва 2005, էջ 430

ենք Քաղ. օր.-ի 288-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. «Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից անհատույց կարող է վերցվել որպես հանցագործության կամ այլ իրավախախտում կատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոց»:
Անհրաժեշտություն կա առավել մանրամասն կարգավորելու պետականացման (ազգայնացման) հետ կապված հարաբերությունները: Առաջարկում ենք ընդունել «Պետականացման (ազգայնացման) մասին» ՀՀ օրենք, որը կպաշտպանի օրինապահ սեփականատերերի իրավունքները, կերաշխավորի սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը և կկանոնակարգի սեփականության փոխանցումը մասնավոր սեփականատիրոջից պետությանը:

Арман Тадевосян, Проблемы принужденного прекращения права собственности в армянском законадательстве - Статья 288 Гражданского кодекса относящий конфискации как один из оснований прекращения права собственности требует необходимости в редактировании. В этой работе мы предлагаем редактировать статья 288 ГК следующим образом: ''В случаях предусмотренных законом, имущество может быть безвозмездно изьято у собственника в качестве меры ответственности за совершение преступления или другого правонарушения''.

Необходимо более тесно регулировать отношения, связанные с национализацией. Мы предлагаем принять закон РА ''О национализации'', который будет защищать права собственников, гарантировать неприкосновенность права собственности и регулировать передача собственности от частного владельца государству.

Arman Tadevosyan, The issues of the termination of the right of ownership by forcible means in Armenian legislation - Article 288 of the Civil Code of the Republic of Armenia relating to the confiscation of the bases for termination of the right of ownership needs to be edited. In this work, we propose to edit Article 288 of the Civil Code as follows: “In cases provided by a statute, property may be taken without compensation from an owner as a means of responsibility for the commission of a crime and violation of law”.

It is necessary to regulate more detailed the relations associated with nationalization. We propose to adopt the “Law on Nationalization” of the RA, which will protect the rights of loyal owners, guarantee the immunity of the right of ownership and regulate the transfer of ownership from a private owner to state.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

THE PECULIARITIES OF THE USE OF THE PASSIVE VOICE

JEMMA MILITONYAN

In his article "Politics and the English Language" (1946) George Ornwell firmly states: "Never use the passive where you can use the active."A passive verb shows action in reverse. It represents a subject not as doing something but as being done to. It pictures for a reader life in the abstract, life without action: still-life. Some linguists claim that the use of the Passive Voice detracts from the smoothness, interest, and emphasis of the sentence.

The verbal category of Voice is an expression of relationship between an action and its subject and object. Gorrell and Laird (1953) define voice as a distinction in verb forms between the active, in which the subject of the verb is the actor, and the passive, in which the subject of the verb receives the action, i.e., the action of the verb is being done to the subject.

As a grammatical category, Voice is connected with the sentence structure more than other verbal categories. There are two voices in English:

1. The **Active Voice,** that shows that the action is performed by its subject, i.e. that the subject is the doer of the action.
   e.g. Jack painted the wall.
2. The **Passive Voice** that shows that the subject is acted upon, that it is the recipient of the action.
   e.g. The wall was painted by Jack.

The opposition is based on the direction of an action. Active Voice is used to denote actions directed from the person or thing expressed by subject, whereas Passive Voice forms show that an action is directed towards the subject.

Active vs. Passive

Quirk et al. (1985: 159) define voice as a grammatical category that makes it possible to view the action of a sentence in two ways, without any change in the facts that are reported in the sentence. But we must be aware of the semantic differences that exist between the Active and the Passive voice.

1. The difference in meaning

According to Chomsky (1965) the active and passive sentences in the following two pairs are not completely synonymous.

Everyone in the room speaks two languages. (i.e., any two languages per person)

Two languages are spoken by everyone in the room. (i.e., two specific languages that everybody speaks)

The same is stated by Lakoff (1968):

Few people read many books. (i.e., There are few people in this world who read lots of books.)

Many books are read by few people. (i.e., There are many books that are read by very few people.)

2. Some Active Voice sentences with surface structure objects do not have a passive equivalent since the verbs are not truly transitive (*have, resemble, mean, contain, suit, become, etc.*):

*Helen has a cat. - *A cat is had by Helen.*

*Roger weighs 200 pounds. - *200 pounds was weighed by Roger.*

In the same way, there are passive sentences in English that have no Active Voice variant:

*Sarah was born in Armenia. - *Someone bore Sarah in Armenia.*

*It is believed that the Armenian genocide inspired the Nazis in their plans for the extermination of Jews. - *Someone believes that the Armenian genocide inspired the Nazis in their plans…*

Thus, there are three key times where English will not allow a verb to become passive:

a) when a verb refers to an activity that relates equally to two entities and either one could be the subject (symmetrical)
b) when the verb in question "contain, cost, weigh," etc. indicates a non-changing relationship between two items (static)
c) when the focus is meant to be on the subject and occurs with verbs such as annoy, posses, know, believe, and join (Dixon, 1991, p. 307).

Verbs that are more likely to be used in the passive are verbs "whose object is likely to be human, or else something with specific reference that is being particularly focused on" (Dixon, 1991, p. 305).

Passive Function

In fact, there are few instances when the Passive Voice is quite useful and is sometimes the best choice.

The passive is often used:

1. When the agent is predictable or stereotypical based on the information given in the sentence.

e.g. The operation to repair his heart was completed successfully.

We do not need to read "by the surgeon" at the end of the sentence because it is predictable that a surgeon would be an obvious choice as an agent in this situation.

2. When the agent is unknown or unimportant, or when the receiver of the action is more important than the agent. Newspapers often use the Passive Voice when they report on a crime, and they don't know who committed the crime. It is one of the most useful tools that the journalist can use in order to report the news accurately, without violating a suspect's right to trial.

BRIDGEWATER - A 28-year-old woman walking along Route 22 late Saturday was killed in a motor vehicle accident, police said Monday.[1]

Marie Murray (2009) subscribes to the view that Passive Voice means unclear about agency, and especially about blame as it is the best weapon of denial. Let's take into consideration of the US Presidential statements on the Armenian Genocide.

Today we solemnly reflect on the first mass atrocity of the 20th century—the Armenian Meds Yeghern—when one and a half million Armenian people ***were deported, massacred, and marched*** *to their deaths in the final days of the Ottoman empire.*

"Deported", "massacred", "marched" by whom?

3. When the writer wants to make a statement sound objective without revealing the source of information.

e.g. It is assumed/believed that he will announce his candidacy soon.

4. When the writer wants to avoid responsibility or hide the truth. The passive voice is especially useful where apologies are required: personal apologies for what people have done personally. Because instead of having to say, "I'm sorry", the passive voice allows a culprit to say "It is regrettable" as well as instead of saying "I made a mistake" the abstract term "mistakes happened" or "mistakes were made" can be used.

For example, in 1986, then-Vice President George H.W. Bush offered an unsatisfying, passive-voice explanation for the Iran-Contra scandal in which the Reagan administration sold weapons to Iran in order to finance an illegal war on Nicaragua by saying:

"Clearly, mistakes were made."

And again in 2004, then-President George W. Bush offered a similar unsatisfying, passive-voice explanation for the Abu Ghraib scandal, in which U.S. officials tortured detainees at an Iraqi prison:

"It's also important for the people of Iraq to know that in a democracy, everything is not perfect, that mistakes are made."

5. When there is a need to put distance between the authors and the work being presented. Considered to be objective, impersonal, and well suited to science

[1] https://www.usatoday.com/story/news/local/somerset-county/2018/08/27/bridgewaterpedestrian-fatal-route-22-shivangi-sharma /110843 3002/

writing, the passive voice became the standard style for medical and scientific journal publications for decades. Ding (1998, 2002) thinks that the scientists are not as important as the information that they are reporting and that they understand that their experiments need to be repeatable and falsifiable. The use of the Passive Voice also removes the scientist who originally performed the experiment from the position of "privileged observer" (Ding 2002: 147) and instead allows other scientists to come in and observe further iterations of the experiment for themselves.

Passive Voice is often preferred in lab reports and scientific research papers, most notably in the Materials and Methods section, where a procedure "is followed.

This research ***was conducted*** *to identify and interpret how spaces* ***were differentiated*** *… The questions* ***were approached*** *using quantifying procedures …In this study, visual content analysis* ***was conducted*** *to interrogate visual images… Each software pack* ***was analyzed*** *for spatial positioning of gender …* [2]

Alley (1996) thinks that many people in the scientific community share the misconception that the Passive Voice is the better mode for writing documents. According to him the main goal of scientific writing "is to communicate" (p. 105) efficiently, and therefore the active voice would be the better choice because the active voice is more straightforward. Nowadays, most medical and scientific style manuals support the Active over the Passive Voice. Scientists often now prefer Active Voice in most parts of their published reports, even occasionally using the subject "we" in the Materials and Methods section.

We *used the generic inverse variance method to combine effects of individual observational studies …. We pooled data only if at least three studies … we used the mean* P_0 *from the other included studies to convert OR into RR.* ***We*** *added observational studies with unadjusted results, irrespective of their risk of bias judgment to meta-analyses for sensitivity analyses.*[3]

As the above examples show, there are a number of times when using the passive voice to describe something makes sense and is sometimes the best choice There are many reasons for turning to the passive, including the need for special emphasis or rhythm, for strategic rearrangements of different kinds to increase cohesion, to avoid responsibility or hide the truth, and for certain more thematic effects.

Key words - passive voice, active voice, agent, scientific style, grammatical sense, recipient, verbal category.

---

[2] **Kordjazi, Z.** (2013). *Spatial Positioning of Gender in Two Award-winning Software Programs for Learning English: A Visual Content Analysis.* BELT Journal, Porto Alegre, v.4, n.1, pp. 86-109.

[3] https://www.nature.com/articles/s41598-018-32098-7

Jemma Militonyan, The Peculiarities of the Use of the Passive Voice - In the last few years there was a debate about the usage of the passive voice in English. On the side of the debate that wishes to banish passive voice, many linguists claim that the use of the passive voice causes readers to have to think harder about the topic at hand or that the passive voice obscures the real agent of the sentence. According to them the use of the passive voice detracts from the smoothness, interest, and emphasis of the sentence. On the other side of the debate, studies show that the use of the passive voice does not actually obscure anything. The aim of this article is to investigate the peculiarities of the usage of the Passive Voice in different situations and for different purposes. It compares active and passive voices showing that the use of the passive voice is sometimes just a matter of stylistic and rhetorical choice.

Ջեմմա Միլիտոնյան, Կրավորական սեռի գործածման առանձնահատկությունները - Վերջին տարիներին բուռն քննարկումներ են ընթանում անգլերեն լեզվում կրավորական սեռի գործածման շուրջ: Լեզվաբանների մի մասը պնդում է, որ կրավորական սեռի գործածումը հանգեցնում է նրան, որ տվյալ թեման դժվարըմբռնելի է դառնում ընթերցողի համար, գործողության իրական կատարողը դառնում է անհայտ և այն բացասաբար է ազդում նախադասության սահունության և շեշտադրման վրա: Մյուսները դեմ են արտահայտվում այս պնդումներին: Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել տարբեր իրավիճակներում և տարբեր նպատակների համար կրավորական սեռի գործածման առանձնահատկությունները՝ ցույց տալով, որ երբեմն ոճական և ճարտասանական բնույթ:

Джемма Милитонян, Особенности использования страдательного залога - В последние несколько лет идут дебаты об использовании страдательного залога в английском языке. Многие лингвисты утверждают, что использование страдательного залога затрудняет понимание содержания текста и скрывает реального исполнителя действия в предложении. Другие же выражаются против этих утверждений. Это статья изучает особенности использования страдательного залога в разных ситуациях и для разных целей. Он сравнивает действительный и страдательный залоги показывая, что использование страдательного залога иногда является просто вопросом стилистического и риторического выбора.

REFERENCES:

- Alley, M. (1996). *The craft of scientific writing* (3rd ed.). New York: Springer.
- Chomsky, N. (1965). *Aspects of the Theory of Syntax*. Massachusetts. MIT Press.
- Ding, D. (1998). *Rationality reborn: Historical roots of the passive voice in scientific discourse*, in J.T. Battalio ed., Essays in the Study of Scientific Discourse: Methods, Practice, and Pedagogy, Ablex, Stamford, CT, pp. 117–135.

- Ding, D. (2002). *The passive voice and social values in science*. Journal of Technical Writing and Communication, 32(2), 137-154.
- Dixon, R. M. W. (1991). *A new approach to English grammar, on semantic principles*. Oxford: Clarendon Press.
- Gorrell, Robert M., Charlton Laird (1953). *Modern English Handbook*. Englewood Cliffs, N.J.: Prentice-Hall.
- Kordjazi, Z. (2013). *Spatial Positioning of Gender in Two Award-winning Software Programs for Learning English: A Visual Content Analysis*. BELT Journal, Porto Alegre, v.4, n.1, pp. 86-109.
- Lakoff, G. (1968). *Deep and Surface Grammar*. Indiana University Linguistics Club.
- Murray M. (2009). *The passive voice is the penultimate weapon of denial*, The Irish Times, 7/31/2009.
- Ornwell, G. (1946). *Politics and the English Language*. Horizon, London.
- Quirk, Randolph, Sidney Greenbaum, Geoffrey Leech & Jan Svartvik (1985) *A Comprehensive Grammar of the English Language*. London and New York: Longman.

ՎԱԶԳԵՆԸ ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

ՌԻՄԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

(«Նրա թռիչքը աղեղ է կապում ժամանակների միջև, և այս է նրա խիզախումի գերագույն խորհուրդը»)

Անդրադառնալով Վազգեն Սարգսյանի գրականությանը՝ Հրաչյա Թամրազյանը գրում է. «Դա երկրից բարձրացող գրականություն է,… նա փորձում էր շոշափել երկրի աղը, ականջը հողին հպած՝ լսել նրա ձայնը, որից նա հասակ էր առնում, զորանում օրըստօրե: Նա տիրական քայլերով մտավ գրականություն՝ բերելով իր նոր հերոսներին, իր տիպաբանությունը, որոնք իր տեսակի շարունակությունն էին և նոր ուղի պիտի հարթեին մռայլ ու անուղեշ ժամանակներում»[1]:

Եվ ո՛վ կմտածեր, որ «նրան վիճակված էր մղոններով առաջ անցնել իր գրական հերոսներից՝ ինքն իրենով, իր կյանքով կերտելով պատմությունը, փլուզելով մեզ պաշարած անզորության պատնեշները աշխարհազորով»[2]:

Ո՛վ կմտածեր, որ նման վերապատիվ իրավունք էր վիճակված Վազգենին, ում շնորհիվ մռայլ ու անուղեշ ժամանակներում «խելահեղ բեմահարթակներ պիտի հայտնվեին», «ազգային զարթոնքի և հերոսականության համար» լուսաշերտ պիտի բացվեր, ու ներս խուժեր նույն ինքը՝ նորին մեծություն պատմությունը՝ գրված նոր էջից:

1988-ի համաժողովրդական զարթոնքն ամրագրեց այդ էջը. շարժման առաջնորդները սերնդի գրողներն էին՝ Հակոբ Մովսես, Վանո Սիրադեղյան, Վազգեն Սարգսյան, ովքեր «…անապատի ու մինչ Ելից հասնելու ողջ ընթացքի մեր հենասյուներն էին, որ պահեցին էս երկիրը: .... տղերքը՝ հատկապես …Վազգենը, տանում էին շարժման ողջ բեռը: Եվ դա, ուրեմն՝ նաև ճակատագրորեն, որ գրողական սկիզբը մերեր, ինչ-որ չափով անցավ դարձներ դարերի՝ երկու ցնցուն ժամանակների անցումը»[3]: Ու կատարեցին նրանք այդ մեծ առաքելությունը՝ «դառնալով այդ օրերի աղը, այդ օրերի գոյավորողները»[4]: Կատարեցին՝ մի կողմ թողնելով գրիչը, քանզի, ինչպես Վազգենն էր ասում, «հողը գրիչով չեն վերցնում»[5], նաև «երբեմն շահերն ավելի կարևոր են, քան, ասենք, ցանկությունները»[6]: Իսկ այստեղ հայրենիքի շահն էր խոսում:

Այո՛, Վազգենը «ոչ թե գիր ու գրականությամբ, այլ իր ճակատագրով» կերտեց այդ պատմությունը՝ «միաձուլվելով նրան և իր ետևից տանելով մի

---

[1] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ., Ե., «Նաիրի», 2010, էջ 309:

[2] Նույն տեղում, էջ 310:

[3] **Հ. Թամրազյան,** Բայց ինչպես ապրենք այսպես ակամա, «Հայացք Երևանից», 2002, թ. 6, 30-31:

[4] Նույն տեղում, էջ 30-31:

[5] **Վ.Սարգսյան,** Պատմության սկիզբն ու շարունակությունը, «Գրանիշ», 2017, 1 դեկտեմբերի:

[6] **Վ. Սարգսյան**, Ելույթ խորհրդարանում, 1992, 10 մարտի, himnaqar.blogspot.com:

ամբողջ հերոսական սերունդ»[7], որն իր կյանքով գծեց հայրենիքի նոր սահմանները:

Վերակերտվում էին և Հոգևոր Հայրենիքի սահմանները, որտեղ «զինվոր է ամեն ճշմարիտ արվեստագետ»: Իրավացի է Թամրազյանը. «Հայրենիքը պետք է շնչավորվի Հոգևոր Հայրենիքով. միայն այդ դեպքում կկայանա ժամանակների փոխկանչը, և կգոյավորվի գալիքը»[8]:

Հոգևոր Հայրենիքին զինվորագրվեց նաև Հրաչյա Թամրազյանը, ով անկախության և հետանկախության տարիներին լույս ընծայեց մի շարք ժողովածուներ՝ «Զայների կղզի» (1989), «Նոր տոմար» (1991), «Աղեղնավոր» (1993), «Լռության ծես» (1996), «Պաշարված ամրոց» (1999), «Զվարթ գիտություն» (2001), «Համլետ» (2002), «Մի հոգու թատրոն» (2005), «ARS POETICA» (2007)՝ խենթախոսելով ժամանակի և ժամանակի հերոսի հետ: Ժամանակի հերոսն այլևս Վազգենն էր, ով «մի բոպե ազատ ժամանակ չուներ… բանակ էր ստեղծում, պատերազմ էր շահում: Նույնիսկ շունչ քաշելու ժամանակ չուներ»[9]: Նա արժանապատվորեն կրում էր բանակաշինության «ծանր», բայց միևնույն ժամանակ «հաճելի հոգսը»՝ համոզմունքով. «Բանակն ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարն է, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերագնահատումը և հայացքն ապագային»[10]:

Ըստ Թամրազյանի՝ բանաստեղծը որպես թիրախ պիտի ընտրի, կանգ առնի պատմության հոսքի մեջ էական, բացառիկ նշանակություն ունեցող փաստերի վրա: Արցախյան հերոսամարտը մեր պատմության ամենաէական փաստերից էր. զարկ տվեց հետագա սերունդների երևակայությանը, վերարթնացրեց ներքին բնագիրը, սրեց նրա ներզգացողությունը, վերստեղծեց այդ ժամանակաշրջանի կենդանի պատկերն ու ոգին, նշաձող դարձավ նաև ապագայի համար՝ սերունդների երթում «կենդանի պահելով …ճանապարհի զգացողությունը, հոգու կեռմաններով իրար կապելով անցյալն ու գալիքը»[11]:

Հայակուլ 20-րդ դարը Արցախյան հերոսամարտով բոլորելն իրավամբ բացառիկ էր հայ ժողովրդի համար, բացառիկ էր և ժողովրդի հերոսի դերակատարումը, ով 1992-ին «Արծիվ» մահապարտների ջոկատի հավաքագրման համար «կենաց և մահու ընտրության կոչով» դիմեց իր զինակից ընկերներին, հայկական բանակի բոլոր մարտիկներին՝ պաշտպանել «հայ ժողովրդին, հայ ժողովրդի սահմանները, հայ ժողովրդի անձեռնմխելիությունը»:

---

[7] **Հ. Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 310:

[8] Նույն տեղում, էջ 329:

[9] **Հ. Թամրազյան**, Բայց ինչպես ապրենք այսպես ակամա, «Հայացք Երևանից», 2002, թ. 6, էջ 30:

[10] **Վ. Սարգսյան,** «Հայ զինվոր», 1997, 27 դեկտեմբերի:

[11] **Հ. Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 162:

Խնդրեց, հորդորեց հեռու մնալ քաղաքական հոսանքներից ու խաղերից, իրական թշնամուն թողած՝ դավաճաններ չփնտրել ազգակիցների մեջ: «Եվ, եթե… Հայաստանի յուրաքանչյուր քաղաքից, յուրաքանչյուր շրջանից, եթե ընդամենը 10-15 տղա գա, մենք կունենանք 500 հոգանոց մահապարտների զորագունդը»[12]: Մի զորագունդ, որը պիտի կռվեր ամենավտանգավոր, ամենաբարդ հատվածում, որտեղ ապրելու հավանականությունը 50-50 է, ու պիտի հաղթեր, որովհետև իրականում ոչինչ չի պատահել, թշնամին էլ նույն թշնամին է: «Ուղղակի խաթարվել է մեր հավատը մեր ուժերի նկատմամբ: Հիմա հարկավոր է ևս մի հարված, հարկավոր է ևս մի արթնացում, ցնցում, և այդ ցնցումը մենք պիտի անենք՝դարձյալ հին տղաներով, որպեսզի մեր բանակը մեզնից ոգևորվի: …Եթե մենք վաղը չէ մյուս օրը հավաքվեցինք, ուրեմն մենք դեռ կանք, մենք դեռ կռվելու և հաղթելու ենք…»[13]: Այո՛, Վազգենն արթնացրեց հայ ժողովրդի կիսակենդան հոգիները, ապացուցեց աշխարհին՝ հայը կա, կռվելու, հաղթելու, պետություն է ստեղծելու՝ իր արյան գնով: «Մենք մեր ազգային պատերազմն անընդհատ հետաձգել, բերել հասցրել ենք 21-րդ դարի շեմին, հիմա էլ նստենք-մտածենք, թե այդ կռվում արժե՞, թե չարժե՞ զոհվել:… Տարիներ հետո սերունդները մեր մասին դատելու են …այսպես՝ ստեղծեցի՞նք պետություն, թե՞ ոչ, պաշտպանեցի՞նք մեր հայրենիքի սահմանները, թե՞ ոչ»[14],- հարցազրույցներից մեկում խոստովանում է Վազգեն Սարգսյանը:

Նկատենք՝ Վազգենն այս պատերազմը «դարաբաղյան» անվանելը մեծագույն թյուրիմացություն էր համարում. «Սա Ամենայն Հայոց Պատերազմ է: Անկասկած վերջինը: Անկասկած ամենահաջողը մեր պատմության մեջ»[15]:

Ճշմարիտ գրողը, ըստ Թամրազյանի, կռահում է գալիքի կեռմանները, տեսնում այն հավերժական ուղևորներին, ովքեր «գրողի կամոք կերպարափոխվում են կյանքի և գրականության խաչուղիներում»: Համոզված է՝ անհատներն են փրկում հասարակությանը, ու «բարոյական մի հանճար կարող է կյանքը փրկել ինքնակործանումից և ահռելի մի կորով աղեղ կապել պատմության փլվածքների վրայով»[16]: Այստեղ թռիչք էր պետք, ինչը վիճակված էր Վազգենին: «Նրա թռիչքը աղեղ է կապում ժամանակների միջև, և այս է նրա խիզախումի գերագույն խորհուրդը»[17],- գրում է բանաստեղծը:

Հետագա զարգացումներն արձանագրեցին Վազգենի բացառիկ դերը մեր պատմության հոսքի մեջ, որտեղ բռունցքված «արյուն էր տալիս մեր փոքրիկ ածուն» հանուն Արցախի, որն այլևս վերածվել էր մի անառիկ ամրոցի, և որի

---

[12] **Վ.Սարգսյան,** Հեռուստաելույթ, 1992, 15 օգոստոսի, himnaqar.blogspot.com:
[13] Նույն տեղում:
[14] **Վ.Սարգսյան,** «Հայ զինվոր», 1997, 27 դեկտեմբերի:
[15] **Վ.Սարգսյան,** Վազգեն Սարգսյանի նամակը Լևոն-Տեր Պետրոսյանին, 1997, 1 հոկտեմբերի, norikyan.do.am:
[16] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 303-311:
[17] Նույն տեղում, էջ 311:

«պատերին զարկվելով՝ թշնամին ջարդուփշուր էր լինում»: Վազգենն իրավացի էր. «Ադրբեջանը պետք է իմանա, որ Արցախը մի տեղ է, որին այլևս խփել, կուլ տալ հնարավոր չէ»[18]:

Ուշագրավ է Թամրազյանի դիտարկումը՝ Արցախի ոգեկանչը, Արցախյան գոյամարտն օգնեցին՝ երկրաշարժից հետո մեր կոտրված ողնաշարը շտկելու: «Ե՞րբ է ժողովուրդն այդպես հանգիստ նայել մահվան աչքերին, իմացյալ մահվան ու ժողովրդական հերոսացման այսպիսի բռնկումներ ապրել: **Հիրավի բիբլիական երկիր ու ճակատագիր, որ ծառս է եղած, միտված է դեպի ապագան**»[19]:

Մենք խորանում ենք կյանքի խորհրդավոր խոռոչում,
Հարում է դարը դարին, սիրտն է սրտին միանում,
Մենք դրոշմվում ենք խորքին, մեր հայացքը չի կորչում,
Մենք մեզ հսկում ենք հեռվից՝ միակամ ու միանուն: («Թվելյաց երգեր»)[20]

1990-ականների սկզբի ամեն պահը քայլ էր դեպի անկախություն, ազատություն. «Ու մոտ է շունչը քո, Ազատությո՛ւն»: Եկել էր ժամը՝ բուժելու «երկրի մարմինը վերքոտ»:

Նրանք հատեցին սահմանը դարի
Իբրև նոր հոգի ու իբրև նոր մարդ,
Որ մեռած սերմը հարություն առնի –
Ծիսական տարի և մի Նոր տոմար: («Նրանք քայլում են»)[21]

Նոր տոմար, փառահեղ հաղթանակ և «պյուռոսյան հաղթանակի զգացողություն»: Խոյանքից հետո գալարապտույտ անկում ապրեցինք, քանի որ «պատմությունը չենք ֆիքսում, ամրագրում, դարձնում կյանքի ու ստեղծագործության փաստ»[22]:

88-ի սխրանքը տեղի տվեց «խոր նիհիլիզմի, ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր արտագաղթի, ինքնամեկուսացման և խորշանքի», որից էլ ծլարձակեց «մարդատյացության, ազգային ոչնչապաշտության որոմը»[23]: Եղծվեց իրականությունը, որտեղ մեզ վիճակվեց տեսնել՝ ինչպես է «ամբոխը հերոսին իջեցնում բեմից», ինչպես է «հոգևորը, հոգեկանը վերածվում դոնդողի», որից անհնար է «դուրս կորզել մարդկային ապրումները, պոկել մարդկային դիմակը»[24]:

---

[18] **Վ. Սարգսյան,** Հայ զինվորը պետք է ենթարկվի հայ եֆրեյտորին ,«Հայաստանի Հանրապետություն», 1992, 24 հունվարի, թ. 15 (360):
[19] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 329-330:
[20] **Հ.Թամրազյան,** Աղեղնավոր, Ե., «Նաիրի», 1993, էջ 11:
[21] **Հ.Թամրազյան**, Նոր տոմար, Ե., «Նաիրի», 1991, էջ 91:
[22] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ., Ե., «Նաիրի», 2010, էջ 326:
[23] **Հ.Թամրազյան,** Նախ պետք է հոգու անդունդից վեր մագլցել, «Ժամանակ», 2006, թ.159, էջ 7:
[24] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 320-321:

Ու ինձ դեռ երեկ թվում էր, որ միշտ
Պիտի ուս ուսի քայլենք միասին,
Ես անգետ էի, ես չգիտեի,
Որ պիտի գրեմ սև մաղձի մասին: («Սև աղանդ»)

Հոգեզրկման մի պրոցես սկսվեց, որն ընթացավ «բուռն տեմպերով» ու «խզման եզրին հասցրեց մեր հավաքականությունն ընդհանրապես»: Գլուխ բարձրացրեց ատելության որոմը, որը թունավորեց, ոչնչացրեց ամեն ինչ: Պատճառները, Թամրազյանի կարծիքով, անբացատրելի են. «…գաղափարազո՞ւրկ էինք, բարոյազո՞ւրկ էինք, բայց դե անպատրաստ ու անպատասխանատու՝ մտանք նոր աշխարհ ու չկարողացանք բացվել այդ աշխարհի առջև: Մութ, ստոր կրքերն առաջ անցան մեզնից՝ մեզ տանելով դեպի ինքնաոչնչացում»[25]:

Ատելության մեջ կթաղենք հոգին,
Կփակվենք մեր մեջ՝ աներազ, անիղձ,
Ու ոչ մի հերոս էլ մեզ չի փրկի,
Ոչ ոք չի ելնի մթան քարայրից: («Սև աղանդ»)[26]

Այո՛, մեզ էլ վիճակվեց տեսնել՝ «խաղաղ պայմաններում ինչպես է տարածվում խոսքի հիստերիան, ինչպես են շատերը կամովին տրվում վախի ստվերաշարժերին և դողում նրա ձեռքի տակ»: Մեզ էլ վիճակվեց տեսնել «կեղծիքի, շողոքորթության, ստրկամտության ողջ շարժապատկերը, երբ կյանքը ձեռք էր բերում մահվան ուրվագիծ, քարացման կոնտուր, երբ խոսքը վերածվում էր մղձավանջի»[27]: Երբ կյանքի իրական հերոսները հայտնվեցին ետնաբեմերում, բեմերում՝ խրտվիլակները, խամաճիկները, պուպրիկները՝ մեր բախտն ու ճակատագիրը տնօրինողները: Մեր սպասելիքները պարզապես չիրականացան, ու կանգնեցինք դաժան իրողությունների առջև: Ինքնապաշարվեցինք, ինքնաթունավորվեցինք ու գնացինք ինքնաոչնչացման: Պաշարվեց և մեր ամրոցը (քաղաքը, կղզին): Պաշարումը երկպլան էր՝ ներքին և արտաքին. ներսում դավն էր, «սև աղանդը», խավարած հավատը, ատելության սև ուրվականը, դրսում՝ ահեղ թշնամին, իսկ մեզ պատնեշեցին կամքի ամրակուռ դարպասները:

Մեռյալ քնի մեջ քնեած քաղաք՝
Սառել է կրծքիդ գլուխը օձի,
Սողում է դավը, իբրև սև աղանդ,
Պաշարված, բայց ոչ գերված ամրոցի: («Պաշարված ամրոց»)[28]

---

[25] **Հ.Թամրազյան,** Բայց ինչպես ապրենք այսպես ակամա, «Հայացք Երևանից», 2002, թ. 6, էջ 30:
[26] **Հ.Թամրազյան,** Աղեղնավոր, Ե., «Նաիրի», 1993, էջ 59:
[27] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 346-347:
[28] **Հ.Թամրազյան,** Պաշարված ամրոց, Ե., «Նաիրի», 1993, էջ 135:

Ո՞վ կմտածեր, որ պաշարված ամրոցի սպարապետին մեջքից կխփեն, և «խփողը հսկա պարիսպների տակ, պարիսպներից դուրս կատվի պես թափառողը չպիտի լիներ, այլ...»[29]:

«Պաշարված ամրոց» ժողովածուն, նվիրված Վ.Սարգսյանի հիշատակին, լույս տեսավ 1999-ին՝ Վազգենի եղերական սպանությունից հետո: «Հոկտեմբերի 27-ը,- գրում է բանաստեղծը,- ծանրագույն աղետ էր նոր ոտքի կանգնող մեր երկրի համար: Եղծվել է մեր պատմական հեռանկարը, վտանգվել է ապագան»[30]: Իրավացի է բանաստեղծը՝ սա մի աղետալի ցնցում էր, որ «ջարդեց երկրի ողնաշարը, քանդեց ամեն հոգևոր կառույց՝ դրսևորվելով իբրև հուսալքություն, բարոյական աղետ, արտագաղթ»: Ժողովրդի մեջ ճզմվեց, տրորվեց, պղծվեց հավատը, անարգվեց «մեր տան պատիվը»: «Ոճրագործության զոհ են դարձել մարդիկ, որ հաղթանակի, հերոսականության, բարօրության խորհրդանիշ էին ժողովրդի համար»[31]: Կատարվածն իրավամբ պետականասպանություն էր, «ներքին դավադրություն, պետական հեղաշրջում…, քստմնելի ոճիր, որ նմանը չուներ մեր պատմության մեջ»[32]: Թամրազյանը պնդում, շեշտում է՝ այդ ամենը կապ «չունի ժողովրդի, ժողովրդական տարերքի հետ». «դա թունավորված, թարախակալած, կաթվածահար հասարակության գաղափարագար խավերի ջլատիչ գործունեության արդյունք էր»[33]: Բանաստեղծն առավել քան համոզված է՝ այս ամենի ետևում կանգնած էին «օրվա ոխակալ, քինախնդիր իշխանությունները». «Նրանց բոլորի անունները սև տառերով՝ իբրև անեծք, գրված են մեր նորագույն պատմության մագաղաթին, և յուրաքանչյուրը կարող է իր անունը, մահվան իր քարոզը քաղել այդ սև գրքից»[40]:

Ճշմարիտ է բանաստեղծը, երբ բանաձևում է, որ պատմական անհատին, անկախ համակրանքներից և հակակրանքներից, անհրաժեշտ է մղել հոգևոր սխրանքի և ոչ թե թիկունքից հարվածել գերագույն փորձության պահին, որ ճակատագրորեն կրկնելի է մեր պատմության մեջ: Մենք չենք հանդուրժում մեզնից, ժամանակից բարձրացած անհատներին: Այլափոխության և անցում-ների՝ մութ, անորսալի, պղտոր հորձանուտում թիկունքից ենք հարվածում նրանց[41]: «Մենք նվիրում ենք մեր ընտրյալներին //Արյան կակաչներ ու արյան վարդեր» («Թարթող նշաններ»)[42]:

---

[29] **Ս.Գալոյան,** Երբ ամեն խոսք ասված է, գալիս է բանաստեղծն ու ասում, «ԱԶԳ»,2000,26 փետրվար,էջ 6:
[30] **Հ.Թամրազյան,** Կատարվածը պետականասպանություն էր, «Հայացք Երևանից», 2001, թ. 7, էջ 18:
[31] Նույն տեղում, էջ 18:
[32] Նույն տեղում, էջ 18:
[33] Նույն տեղում, էջ 18:
[40] Նույն տեղում, էջ 18:
[41] Տե՛ս **Հ.Թամրազյան,** Պատմությունը ևս բնագիր է..., «ԱՌԱՎՈՏ», 1998, 21 հունվարի, էջ 4:
[42] **Հ.Թամրազյան,** Եթե կարոտը կյանքի նշան է, Ե., «Սովետ. գրող», 1983, էջ 34:

Վազգենի կյանքը, Թամրազյանի դիտարկմամբ, անձնական խիզախում էր, որը «մեր հավաքական ուժի, հերոսականության խորհրդանիշը» դարձավ, իսկ «մահը սողոսկեց մեր սրտերն՝ իբրև համազգային ողբ, անձնական ողբերգություն՝ դառնալով մեր տրոհման, քայքայման խորհրդանիշը»[43]: Մեր դեմքերին վերստին «հայտնվեցին դավաճանության խարանի, հավիտենական անեծքի բծերը, և մենք միանգամից գահավիժեցինք՝ դառնալով կորուսյալ սերունդ»[44]: Մեր կյանքը վերածվեց պաշարված ամրոցի, որին «ուրացողի արծաթն է կերել», որին «միայն թույնը կփրկի»:

Թվում է՝ հեռանալ է պետք՝ միտք, որ երբեմն-երբեմն հղանում է բանաստեղծի մեջ անզորությունից. հայտածվում է Ղովտի կերպարը: «Ու եթե չի հեռանում՝ …ոչ թե Ղովտի ճակատագրի սարսափն է նրան ետ պահում, այլ այն մտածողությունը, որ իրենն է այս քաղաքը՝ թեկուզ Աղե արձանի աչքերով է նայում այդ քաղաքը, և օրերի խուլ աղաղակը խլանում է սեփական ձայնից»[45],- գրում է Սերգեյ Գալոյանը: Չի կարող հեռանալ, որովհետև իրենն են և՛ քաղաքը, և՛ քաղաքի գործած մեղքերը. «Այդ ե՛ս եմ կռոց շուրթերից կառչել, //Այդ ե՛ս եմ բառը կեղտի մեջ թաղել» /«Լռության ծես»/: Քաղաքի հոգևոր պարտությունն իր պարտությունն է, քաղաքի խայտառակ նահանջը իր նահանջն է, ինչպես և իրենն է գերապատիվ առաքելությունը՝ «մեռյալ քնի մեջ քնեած», պաշարված ամրոցի վերածված քաղաքը դարձի բերելը. մատնության առջև անհապաղ գոցել է պետք հոգին: Քանի դեռ «ատելության ուրվականը շրջում է մեր ներսում, …համընդհանուր կամք է պետք՝ այդ խարանից ազատվելու համար»[46], այլապես մեզ սպառնում է Տեր Ժամանակի ջնջոցը: Մենք «պատժապարտ ենք անուն առ անուն». ի՞նչ պատասխան պիտի տանք հետագա սերունդներին, ի՞նչ պիտի ասենք «անձև ու անավարտ արնահեղ բեմերի» մասին, որտեղ գործվեցին քստմնելի ոճիրներ.

-Դո՛ւք, որ ժառանգներ եք հազարամյա ողբի,
Որ խոսքեր եք հեղել, որ դառել եք մոխիր –
Այսպիսի մի ոճիր ոչ ոք դեռ չի գործել,
Ժամանակն է սրտիդ վարագույրը գոցել:
Թող դահլիճը սոսկա, խեղկատակը խոսի,
Այս բառերով ծածկիր մարմինը հերոսի: («Տարեմուտ»)[47]

Իսկ մեր հերոսն ուներ պատասխան. «Մենք վախենում ենք մեր ուժից: Մեզ վարժեցրել են ուրիշի ուժին: Մենք ընտիր-ընտիր հպատակ ենք, մենք

---

[43] **Հ.Թամրազյան,** Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 310-311:
[44] Նույն տեղում, էջ 310-311:
[45] **Ս.Գալոյան,** Երբ ամեն խոսք ասված է, գալիս է բանաստեղծն ու ասում,«ԱԶԳ» 2000,26 փետրվար,էջ 6:
[46] **Հ.Թամրազյան**, Կատարվածը պետականասպանություն էր, «Հայացք Երևանից», 2001, թ. 7, էջ 18:
[47] **Հ.Թամրազյան,** Զվարթ գիտություն, Ե., «Նաիրի», 2001, էջ 376:

խելոք-խելոք կատարող ենք, մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ:… Թշնամուդ ուժեղացնողը քո վախն է, քո ցավն է, քո հիմարությունն է»[48]:

Բանաստեղծի ողբը շարունակվում է «Համլետ»-հարասությունում («միջնադարյան մի բառեզր, որ բնագրի մեկնության, միևնույն թեմայի ծավալման, զարգացման և ուժգնացման նշանակություն ուներ»[49]): Հասկանալի է՝ Թամրազյանի համար շինանյութ է ծառայել Շեքսպիրի համանուն ողբերգությունը: Գործ ունենք արքետիպերի վրա հիմնված միֆական կառույցի հետ, որում առկա են բնագրից փոխառված նպատակային հղումներ, մեջբերումներ և վերաձևակերպումներ: Այստեղ կամրջվում են ժամանակի երեք չափումները, կամրջվում են և այդ չափումների հերոսները՝ խարիսխ զցելով դանիական Էլսինոր դղյակում, որը հյուսվածքում բազմաթիվ անուններ է կրում՝ Սոդոմ, Բաբելոն, Թեբե, Մեծ Բրիտանիա, Քաղաք և այլն: Տեղանքի անունները հաճախ հերոսների անուններն են հուշում՝ Լիր արքա՝ Մեծ Բրիտանիա, Անտիգոնե՝ Թեբե, Համլետ՝ Էլսինոր և այլն: Բոլորն իրար են կապված ճակատագրորեն. դավադրության, դավաճանության զոհ են:

Պատմության կնճռոտ շերտերից գլուխ են բարձրացնում «լլկված, խենթացած» Լիր արքայի ու Կորդելիայի կերպարները: Վերարտադրվում է Շեքսպիրի պատկերած երևակայական պետության, որը թեպետ պայմանականորեն կոչվում է Մեծ Բրիտանիա, պատկերը, որի «Խենթախոսության ետնաբեմերում //Հառնում է կրկին անհոգի մի նեռ»: Նկատենք՝ ողբերգակի կերտած երկիրն ուտոպիական գաղափարների մարմնավորում չէ, այլ մռայլությամբ և չարագուշակ գույներով ողողված մի տարածք, որի ծայրամասերից մեկում՝ կրկին պայմանականորեն անվանյալ՝ Դուվր, տեղի է ունենալու ապոկալիպտիկ աղետը, որը սպառնում է և մեր քաղաքին:

Ուրվագծվում է և Էլսինորի դղյակը. հայտնվում է սպանված արքայի ուրվականը՝ մատնացույց անելով քսու դավաճանին: Հասկանալի է՝ բանաստեղծի խոսքը տանում է դեպի պաշարված ամրոցի՝ դավադրորեն սպանված Սպարապետը և նենգ դավադիրը, որ մեր մեջ է.

Որ մենք մեր ձեռքով սերմն աստվածարյալ
Միշտ պիտի պղծենք ու ապականենք,
Որ մենք սեփական արյանն ենք ծարավ,
Որ մենք տիրադավ ու տիրասպան ենք…[50]

Սա դարի բեմահարթակին խաղարկված «մեծագույն արյան նախճիր էր», որ «չէր երազել դեռ ոչ մի ոսոխ»: Հեղինակը, ում այլևս ոչինչ չի զարմացնում, երրորդում է, չի կրկնում ինքն իրեն.

---

[48] **Վ.Սարգսյան,** Պատմության սկիզբն ու շարունակությունը, «Գրանիշ», 2017, 1 դեկտեմբերի:
[49] **Հ.Թամրազյան,** Հարասություններ, Ե., «Նաիրի», 2003, էջ 3:
[50] **Հ.Թամրազյան,** Համլետ, Ե., «Նաիրի», 2002, էջ 10:

Ու այս է վերջին դասը պատմության,
Երբ միտքը զոհ է ու կիրքը՝ դահիճ
Կույր, աղետալի մի իշխանության՝
Զազրելի դավով բարձրացած գահին…[51]

Բանաստեղծի ընդվզումն ընդդեմ աղարտված ժամանակի իր շարունակությունն է գտնում «ARS POETICA»-ում: Համլետի անավարտ գործն ավարտին հասցնելու իրավունքը վիճակված է Դոն Կիխոտին: Ամեն ինչ նույնն է՝ նույն թատերաբեմը, նույն թատերախաղը, թատերադերերը, թատերախոսությունը, բոլոր ժամանակների նույն խեղկատակը, հերոսի հոգու նույն դրամատիկ պայքարը.

Սրիկաների ի՛նչ շքահանդես,
Ինչպիսի՛ քծնանք, ինչպիսի՛ եռանդ,
Մեր հոգետունը նրանք են քանդել,
Ու մենք չգիտենք՝ ո՞ղջ ենք, թե՞ մեռած: («Տարեմուտ»)[52]

Այո՛, ո՞վ կմտածեր՝ մի օր ահից համրացած պիտի հանձնվենք այս «մնջախաղին», որտեղ «ցնծում է իր միակ հերոսին» զոհաբերած «նորընտիր վերնախավը»… «այդպես չէր անի և ոչ մի ոսոխ»… «ապականվել է ազգը հայկազուն»:

Ի վերջո, փրկության ի՞նչ բանաձև է առաջարկում Թամրազյանը. «Այն սերունդն է կայանում, որ ինքնագիտակցության բարձր մակարդակ ունի, …կարողանում է ինքնախուզմամբ զբաղվել և իրեն տեսնել իրականության մեջ»[53]: Իսկ իրականությունը կարող ես ճանաչել «միայն քեզ ճանաչելով», քո պատմությունը ճանաչելով:

Եթե Թամրազյանն ինքնագիտակցության կոչ է անում, ապա Վազգենը՝ գիտակցության. պիտի գիտակցենք՝ պատմությունն իմաստավորելու, պատմության դիմաց ու պատմության համար պատասխանատվություն կրելու համար, պիտի գիտակցենք՝ պատմությունն ունենում է ոտնահետքեր, և զգուշանանք՝ այն նաև ավարտվում է ոտնահետքերով: «Մեր ոտնահետքերով մեր պատմությունը չպիտի ավարտվի:… Դարերի մեռած պատմությունը թափ տվեք ձեր հոգուց, մի մեռեք ձեր տան մեջ: Ձեր հոգու մեռելներին թաղեք: Էս երկիրը ձերը չէ, դուք գալիս-անցնում եք, ձերը էս երկրի սիրտը պահելն է»[54]: Եվ ուրեմն՝ ոգեկոչել է պետք մեր հերոս-նահատակներին՝ Հայկ Նահապետից մինչև Վազգեն Սարգսյան.

Ե՛լ ի ննջմանե, ո՛վ հոգիդ անպարտ,

---

[51] Նույն տեղում, էջ 45:
[52] **Հ.Թամրազյան,** ARS POETICA, Ե., «Նաիրի», 2007, էջ 99:
[53] **Հ.Թամրազյան,** Գրականությունը լինելություն է, «Իրավունքը de facto», 2009, թ. 22, 27-30 մարտ, էջ 19:
[54] **Վ.Սարգսյան**, Պատմության սկիզբն ու շարունակությունը, «Գրանիշ», 2017, 1 դեկտեմբերի:

Աղեղնավորի սլաքը եղիր,
Քաղաքը՝ ամրոց, քաղաքը՝ տապան,
Հանձնվել է նոր մի ջրհեղեղի: («Սանդղակ»)[55]

Վազգենը մեզ հետ չէ ֆիզիկապես, բայց մեր կողքին է իր հոգևոր ներկայությամբ, իր պատգամներով, թեպետ համոզված էր՝ պատգամ գրելու տարիքի չի հասել և պատգամ գրող մարդու արժանիքներ ու ավանդ չունի[56]: «Ամեն ժողովուրդ իր պատմության մեջ իր կռիվը գոնե մեկ անգամ մինչև վերջ պետք է տա»[57]: Վստահ էր՝ սա մեր վերջին կռիվն էր, որն ապահովելու է Հայաստանի ապագան. մեր երկիրը դառնալու է հզոր, հարուստ պետություն: Առաջարկում էր «ակնհայտ ու պարզ բաներ». «Համախմբվել ազգովի հայրենիքում՝ Հայաստանում: Համախմբվել ազգովի Հայաստանի Հանրապետությունից դուրս: Կենտրոնացնել մեր տնտեսական, քաղաքական, մտավոր ներուժը ամբողջ աշխարհում:… Առավելագույնի հասցնել մեր համազգային, համաշխարհային դիմադրողականությունը»[58]: Սա, իրավամբ, ուտոպիա չէ, այլ հնարավոր անհրաժեշտություն: Համոզված էր՝ 21-րդ դարի սկզբում ձևավորվելու է հայի մի տեսակ, որն «իր ազգային գաղափարախոսության կրողն է լինելու՝ զերծ թերարժեքության մտավախությունից, համարձակ, լիասիրտ, թիկունքին՝ արժանապատվություն, առջևում՝ տարածություն…»[59]:

Այո՛, Վազգենը ճիշտ էր. «21-րդ դարը, անկասկած, մերն է լինելու»[60]:

Բանալի բառեր – Վազգեն Սարգսյան, Արցախ, հերոսամարտ, միֆ, ազգ, հայրենիք, հերոս, պատմություն, հայ, հող:

Ռիմա Ստեփանյան, Վազգենը Հրաչյա Թամրազյանի չափածոյում - Մեր քննության շրջանակը Հրաչյա Թամրազյանի անկախության և հետանկախության շրջանի չափածոն է, որտեղ իր ֆիզիկական և հոգևոր ներկայությամբ առանցքային դերակատարում ունի Վազգեն Սարգսյանը, ում վիճակված էր վերապատիվ իրավունք՝ իր ճակատագրով կերտել պատմություն, միաձուլվել նրան ու իր ետևից տանել մի ամբողջ հերոսական սերունդ, որն իր կյանքով վերակերտեց հայրենիքի սահմանները:

Рима Степанян, Вазген в стихотворении Грачя Тамразяна - Граница нашей исследовании стихотворение Грачя Тамразяна в период независимости и после независимости, в котором своем физическом и духовном присутствии основной исполнитель роли Вазген Саргсян, которому было удостоено высокое право – в

---

[55] **Հ.Թամրազյան,** Պաշարված ամրոց, Ե., «Նաիրի», 1993, էջ 109:
[56] Տե՛ս **Վ.Սարգսյան,** «Հորրորդ իշխանություն», 1997, 15 սեպտեմբերի:
[57] Նույն տեղում:
[58] **Վ.Սարգսյան,** Վազգեն Սարգսյանի նամակը Լևոն-Տեր Պետրոսյանին, 1997, 1 հոկտեմբերի, norikyan.do.am:
[59] **Վ.Սարգսյան,** vazgensargsyan.wordpress.com:
[60] **Վ.Սարգսյան**, «Հայ զինվոր», 1997, 27 դեկտեմբերի:

своей судьбой творить историю, слиться с ним и нести с собой целое героическое поколение, который со свей жизнью слил границы родины.

Rima Stepanyan, Vazgen in Hrachya Tamrazyan's verse - The circle of our examination is Hrachya Tamrazyan's verse of independent and post-independent period, where Vazgen Sargsyan had principal role with his physical and spiritual presence, who was given the above-honoured right to erect history by his faith, to merge it and to lead a whole heroic generation, who recreated the borders of his motherland by his life.

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ինչպես գիտենք, ցանկացած դասընթացի յուրացումը սերտորեն կախված է ուսուցման կազմակերպման ձևերից ու մեթոդներից, ինչպես նաև ուսուցման գործընթացում դասախոսի ու ուսումնառողների ակտիվ փոխհարաբերություններից:

Նախկինում դասախոսն էր կրթության բովանդակության հիմնական կրողն ու գիտելիքների հաղորդման գլխավոր աղբյուրը, իսկ ուսանողը ուսումնական գործունեության մեջ ուներ պասիվ դերակատարում: Նա լսում էր դասախոսի խոսքը և նույնությամբ վերարտադրում ու վերադարձնում նրան: Այսպիսի մոտեցումը գրեթե անհնար կդարձնի ժամանակակից ուսանողակենտրոն ուսուցման (ՈՒԿՈՒ) գործընթացը: Ուսանողը ուսանողակենտրոն ուսուցման ժամանակ պետք է հանդես գա որպես ուսումնական գործունեության ակտիվ, ինքնուրույն գործող և ճանաչող անձ, որն իր վրա է կրում ոչ միայն դասախոսի մանկավարժական ներգործությունը, այլև միաժամանակ ներգործում է դասախոսի վրա՝ մղելով նրան ուսումնական աշխատանքի նոր ձևերի ու հնարների որոնման: Այսպես ուսուցումը դառնում է ուսումնական գործունեության երկու սուբյեկտների (դասախոսի ու ուսանողի) փոխհարաբերության և փոխազդեցության արդյունք:

Արդյունավետ դասապրոցես իրականացնելու համար կարևոր է ցանկացած դասընթացի յուրաքանչյուր հատվածի մանրամասն պլանավորումը, որը հնարավորություն է տալիս ուրվագծել դասընթացի իրականացման ընդհանուր սխեման, ինչպես նաև վերհանել հնարավոր խնդիրները և դրանք լուծել մինչև դասընթացը սկսվելը: Իրականացման փուլում կարևոր է արդեն փորձարկված ու հաջողությամբ իրականացվող դասավանդման և ուսումնառության մեթոդներին, մանկավարժական հնարներին զուգահեռ մշտապես փորձարկել նորերը և հետադարձ կապի միջոցով գնահատել դրանք: Դասընթացի իրականացման ժամանակ գնահատվում են ուսանողների բոլոր ձեռքբերումները: Հետադարձ կապը լսարանի հետ նպատակահարմար է իրականացնել մշտապես՝ դասերի ժամանակ յուրաքանչյուր թեմայից, ինքնուրույն խմբային աշխատանքներից հետո և դասընթացի վերջում: Հետադարձ կապից և այլ միջոցներից ստացված վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս բացահայտել դասընթացի

ուժեղ և թույլ կողմերը, բարելավել դասընթացը, բարձրացնել նրա արդյունավետությունը:

Հաշվառումը տնտեսության կառավարման կարևորագույն միջոցներից մեկն է, որը տարբեր ժամանակաշրջաններում լուծել է տարբեր խնդիրներ՝ կիրառելով տարբեր մեթոդներ ու ձևեր: Այն սերտորեն կապված է տնտեսագիտության մյուս դասընթացների հետ, որոնց մի մասը հիմք են հանդիսանում «Հաշվապահական հաշվառում» դասընթացի յուրացման համար: Դասընթացի արդյունավետ կազմակերպումը, մեթոդների ճիշտ ընտրությունը հնարավորություն կտան ձևավորել համապատասխան կարողություններով և հմտություններով օժտված մասնագետներ:

Ուստի յուրաքանչյուր տնտեսագետ ուսանողի համար և հատկապես ապագա ֆինանսիստի, հաշվապահի համար էական նշանակություն ունի հաշվապահական հաշվառման դասընթացի լիարժեք յուրացումը՝ որպես կիրառական գիտություն, որը հնարավորություն կտա շրջանավարտին գտնել իր տեղը աշխատաշուկայում:

«Հաշվապահական հաշվառում» դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվառման կարևորության, մեթոդի տարրերի և իրականացման սկզբունքների մասին, պարզաբանել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվառման առանձնահատկությունները, իրականացման ձևերը, ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ:

«Հաշվապահական հաշվառում» դասընթացի վարման ռազմավարության հիմքում ընկած է դասավանդման մեթոդների համապատասխանեցումը սահմանված ելքային արդյունքներին: Դասընթացի վարման մեթոդները դասախոսի և ուսանողների փոխկապակցված համատեղ գործունեության եղանակների ամբողջությունն են, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ.

Մասնագիտական գիտելիքի և իմացություն ձևավորման համար՝ ***խոսքային մեթոդները*** (դասախոսությունը, բացատրումը, պատմումը, զրույցը, երկխոսությունը և այլն), ***գնական մեթոդները*** (դիդակտիկ նյութերի ցուցադրումը, դիտումը և այլն), ***տրամաբանական մեթոդները*** (ինդուկտիվ (մակածում), դեդուկտիվ (արտածում), անալիզի և սինթեզի և այլն), ***հետաքրքրությունների խթանման մեթոդները*** (ճանաչողական խաղեր, հուզական խթանում և այլն), ***վերահսկողության մեթոդները*** (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն և այլն):

Գործնական մասնագիտական կարողությունների ձևավորման համար՝ ***գործնական մեթոդները*** (վարժությունները, թեստերը, տնային առաջադրանքի կատարումը և այլն), ***ճանաչողական-ստեղծագործական մեթոդները*** (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական), ***ինտերակտիվ-կառուցողական մեթոդները*** (բանավեճ, դերային խաղ, աշխատանք փաստաթղթերի հետ և այլն), ***համագործակցային ուսուցման մեթոդները*** (թիմային, հետազոտական, վերլուծական բնույթի, խմբային աշխատանքներ), ***վերահսկողության մեթոդները*** (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն և այլն)։

Ընդհանրական կարողությունների ձևավորման համար՝ ***քննադատական մտածողության, խմբային, ինքնուրույն աշխատանքի մեթոդները*** /գծապատկեր 1/***:***

Ելքային արդյունքներ

Մասնագիտական գիտելիքի և իմացություն ***վարման մեթոդները*** Խոսքային *զննական տրամաբանական հետաքրքրությունների խթանման վերահսկողության*	*Գործնական մասնագիտական կարողություններ* ***վարման մեթոդները*** գործնական ճանաչողական-ստեղծագործական ինտերակտիվ-կառուցողական համագործակցային ուսուցման վերահսկողության	*Ընդհանրական կարողություններ* ***վարման մեթոդները*** քննադատական մտածողության, խմբային, ինքնուրույն աշխատանքի

Գծապատկեր 1. Դասընթացի ելքային արդյունքների ձևավորման մեթոդները

Այսպիսով, ընտրված մեթոդները կիրառվում են երբեմն առանձին, ավելի հաճախ մեկը մյուսի հետ համակցված՝ ելնելով տվյալ դասի (դասախոսություն, գործնական պարապմունք) թեմատիկ–բովանդակային կամ այլ առանձնահատկություններից և իհարկե հաշվի առնելով ուսանողների կարիքները, հետաքրքրություններն ու նախասիրությունները: Ինչպես նշեցինք, դասավանդման մեթոդի ընտրությունը միտված է ելքային արդյունքների ձևավորմանը: «Հաշվապահական հաշվառում» դասընթացի համար սահմանել ենք հետևյալ ելքային արդյունքները.

Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանել և բացատրել հաշվապահական հաշվառման առարկան, մեթոդը, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը,
2. Բացատրել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների առանձնահատկությունները, ֆինանսական հաշվառման գործառույթները, խնդիրները, սկզբունքները,
3. Մեկնաբանել դասընթացի սահմաններում նախատեսված մասնագիտական տերմինները: Աշխատել հաշվային պլանով:

Գործնական մասնագիտական կարողություններ

4. Լրացնել և ստուգել հաշվապահական փաստաթղթեր, լուծել հաշվապահական խնդիրներ, գործառնությունների համար գրել հաշվապահական ձևակերպումներ ,
5. Օգտվել հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից՝ տնտեսական որոշումներ կայացնելիս

Ընդհանրական կարողություններ

6. Աշխատել թիմում,
7. Շփվել մասնագիտական լեզվով,
8. Անհայտ իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել:
9. Ձեռք բերել բանավիճելու և քննարկելու հմտություններ:

Այս ելքային արդյունքները ձևավորելու համար նախատեսվում է ուսումնասիրել հետևյալ թեմաները. 1. Հաշվապահական հաշվառման առարկան և մեթոդը: 2. Հաշվապահական հաշվեկշիռ / ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն/ և հաշիվներ: Կրկնակի գրանցում: Գնահատում և կալկուլյացիա: Փաստաթղթավորում և գույքագրում: 3. Հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը, հաշվային պլան: 4. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների հաշվառումը: 5. Դրամական հոսքերի/եկամուտների, ծախսերի/ և տնտեսավարման ֆինանսական հետևանքների հաշվառումը: 6 Սեփական կապիտալի հաշվառումը:

Կարևոր խնդիր է դասընթացի գնահատման գործիքների ճիշտ ընտրությունը, որը ցույց է տալիս, թե սովորողը հասել է սահմանված ելքային արդյունքներին: Հաշվապահական հաշվառումը ԿԾ-ում եզրափակիչ գնահատմամբ դասընթաց է: Նախատեսված է 2 ընթացիկ և եզրափակիչ քննություններ՝ հետևյալ չափանիշներով.

1. I ընթացիկ քննություն (գրավոր՝ 5 (4+1) միավոր առավելագույն արժեքով):
2. II ընթացիկ քննություն (գրավոր՝ 5 (4+1) միավոր առավելագույն արժեքով):

3. Եզրափակիչ քննություն (բանավոր՝ 10 (8+1,5+0,5) միավոր առավելագույն արժեքով):

Յուրաքանչյուր ընթացիկ քննության 4 միավորը ձևավորվում է թեստային առաջադրանքներով /փակ և բաց հարցեր, խնդիրներ/, 1 միավորը՝ գործնական պարապմունքների ակտիվությունից, իսկ եզրափակիչ քննության 8 միավորը՝ բանավոր հարցումից, 2 միավորը՝ ինքնուրույն աշխատանքից և ընդհանրական կարողություններից: Հաշվապահական հաշվառման դասընթացի գնահատման համակարգը հնարավորություն է տալիս գնահատել ուսանողների յուրաքանչյուր ձեռքբերում /գծապատկեր 2/:



Գծապատկեր 2. Հաշվապահական հաշվառում դասընթացի գնահատման չափանիշները

Գնահատման այս ձևը, ինչպես տեսնում ենք, հաշվի է առնում ոչ միայն քննությունների ընթացքում ուսանողի գրանցած արդյունքները, այլև գործնական պարապմունքներին նրա ցուցաբերած ակտիվությունը և իրականացրած ինքնուրույն աշխատանքները:

Այսպիսով, «Հաշվապահական հաշվառում» դասընթացը արդյունավետ իրականացնելու համար սկզբում սահմանում ենք ելքային արդյունքները, ապա այնպես ենք ընտրում թեմաները, ուսուցանման մեթոդները և գնահատման գործիքները, որ սովորողը դասընթացի ավարտին յուրացրած լինի ակնկալվող արդյունքները: Դասընթացը և՛ իրականացման ընթացքում, և՛ ավարտելուց հետո գնահատվում է համապատասխան գործիքներով /հարցումներ, ֆոկուս խմբեր, գնահատման արդյունքների վերլուծություն/, որը հնարավորություն է տալիս բացահայտել առավելություններն ու բացթողումները և բարելավել դասընթացի փաթեթը:

Դասընթացի վարման արդյունավետությունը է՛լ ավելի է բարձրանում, երբ նմանատիպ մոտեցում ենք ցուցաբերում յուրաքանչյուր թեմայի շրջանակում.

սահմանում ենք ելքային արդյունքներ /մասնագիտական գիտելիքներ, հմտություններ և կարողություններ/, ապա այն խնդիրների շրջանակը, որը

պետք է ուսումնասիրենք դասախոսությունների և գործնական ժամերի ընթացքում, մեթոդը, որով պիտի վարենք, և գնահատման գործիքները:

Հաշվապահական հաշվառման դասընթացի առաջին թեման ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է ունակ լինի

Մասնագիտական գիտելիք և իմացություն՝

1. Սահմանել հաշվապահական հաշվառման ուսումնասիրության առարկան, կազմակերպության ակտիվները և պարտավորությունները, թվարկել հաշվառման մեթոդի տարրերը:

Գործնական մասնագիտական կարողություններ՝

2. Բացատրել, մեկնաբանել, հիմնավորել հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերը, վարման կանոնները:
3. Ճիշտ տարբերակել կազմակերպության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտները և ծախսերը:

Այս ամենին հասնելու համար գործնական պարապունքի ժամանակ ուսանողները մեկնաբանում են հետևյալ հարցադրումները.

1. Նշել, հիմնավորել և մեկնաբանել այն սահմանումը, որը առավել ամբողջական է բնութագրում Հաշվապահական հաշվառման առարկան:
2. Կազմակերպության ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվներ ինչպիսի՞ միջոցներով կարելի է ձևավորել:
3. Հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից ո՞րն է առավել կարևոր:
4. Հնարավո՞ր է իրականացնել հաշվառում՝ չօգտվելով կրկնակի գրանցման եղանակից:

Այս թեմայի շրջանակում օգտվում ենք ***խոսքային*** (*դասախոսություն, հարցում*) ***տրամաբանական*** (անալիզի և սինթեզի), ***գործնական*** (վարժությունները, թեստերը),

ինտերակտիվ-կառուցողական (բանավեճ), ***համագործակցային ուսուցման*** (խմբային աշխատանքներ), ***վերահսկողության*** (բանավոր, պլանավորված)***մեթոդներից***:

Հաշվապահական հաշվառման դասընթացի ելքային արդյունքների ձևավորման քարտեզը ներկայացնենք հետևյալ աղյուսակի տեսքով /աղյուսակ1/.

Աղյուսակ1. Հաշվապահական հաշվառում դասընթացի կրթական ելքային արդյունքների ձևավորման քարտեզը

Թիվ	Թեմայի անվանումը	ելքային արդյունքների հերթական համարը								
1	**Թեմա 1. Հաշվապահական հաշվառման առարկան և մեթոդը**									
2	**Թեմա 2. Հաշվապահական հաշվեկշիռ / ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն/ և հաշիվներ: Կրկնակի գրանցում: Գնահատում և կալկուլյացիա: Փաստաթղթավորում և գույքագրում:**									
3	**Թեմա 3. Հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը, հաշվային պլան:**									
4	**Թեմա 4. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների հաշվառումը**									
5	**Թեմա 5. Դրամական հոսքերի /եկամուտների, ծախսերի/ և տնտեսավարման ֆինանսական հետևանքների հաշվառումը:**									
6	**Թեմա 6 ՝ Սեփական կապիտալի հաշվառումը**									

Բանալի բառեր - դասընթացի նպատակ, խնդիրներ, ուսուցման մեթոդներ, թեմաներ, հաշվապահական հաշվառում, ելքային արդյունքներ, գնահատման չափանիշներ, գնահատման գործիքներ:

Գայանե Ավետիսյան, «Հաշվապահական հաշվառում» դասընթացի վարման ժամանակակից մեթոդները - Հոդվածում ներկայացվում են «**Հաշվապահական հաշվառում**» դասընթացի վարման որոշ մեթոդական հարցեր՝ դասընթացի նպատակը, խնդիրները, ուսուցման ժամանակից մեթոդները, թեմաները և դրանց մատուցման առանձնահատկությունները, թեմաների ուսուցման ավարտին ակնկալվող արդյունքները (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ), դասընթացի գնահատման ձևերն ու չափանիշները:

Гайане Аветисян, Современные методы обучения курса "Бухгалтерский учет" - В статье представлены некоторые методологические вопросы курса "Бухгалтерский учет": цель и задачи курса, , современные методы обучения, темы

и особенности их преподавания, ожидаемые результаты в конце обучения темы (знания, умения, навыки), типы и критерии оценки курса.

Gayane Avetisyan, The modern teaching methods of the course "Accounting" - The article presents some of the methodological issues of the course "Accounting", such as the purpose, the tasks and the contemporary teaching methods of the course, the themes and the specificity of their delivery, the expected outcomes (knowledge, abilities, skills), the types and criterias of the course evaluation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բուդաղյան Ա., Կարաբեկյան Ս.**, Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում, Երևան,2010:
2. **Բուդաղյան Ա., Սարգսյան Յու., Մանասյան Ն., Սանթուրջյան Մ.,** Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում, Երևան,2012:
3. **Կարաբեկյան Ս., Քոչարյան Հ.**, Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց, Երևան,2011:
4. **Օհանյան Ա., Անտոնյան Ք., Խաչատրյան Ն., Կարապետյան Լ., Քարամյան Լ., Մանուկյան Տ.,** Դասընթացի մշակում և կառավարում, Երևան,2010:
5. **Միլիտոսյան Լ., Պիպոյան Ս., Պետրոսյան Հ.,Կիրակոսյան Գ., Թովմասյան Տ.,** Մասնագիտական մանկավարժություն միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների համար, Եր., 2006:
6. **Սարգսյան Ա.Զ., Համբարձումյան Ռ.Պ., Մարջանյան Ա.Մ., Օգանեզովա Ն.Ս.** և ուրիշներ, Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ, Երևան,2014:
7. **Մովսիսյան Թ.,** Հաշվապահական հաշվառում, Երևան,2015

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ, ՔՐԻՍՏԻՆԵ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից, յուրաքանչյուր երեխայի, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը կարող են խոչընդոտել մի շարք գործոններ՝ իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները (հենաշարժական համակարգի ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող երեխաների համար դպրոցում տեղաշարժվելու սահմանափակումները կամ չտեսնող երեխայի համար իրեն հարմարեցված դասագրքերի և այլ ուսումնական նյութերի բացակայությունը և այլն): Նշված արգելքները վերացնելուց հետո երեխայի համար լիարժեքորեն ապահովվում է կրթական ծրագրերի մատչելիությունը: Հետևաբար, ՀՀ-ում յուրաքանչյուր երեխայի, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման ուղղությամբ[1]:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող երեխաների ուսուցման, զարգացման, դաստիարակության և սոցիալիզացիայի համար շատ մեծ նշանակություն ունի ուսուցչի հոգեբանական պատկերը, նրա միջանձնային հարաբերությունները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անչափ դժվար է սոցիալական կապերի, միջանձնային հարաբերությունների ստեղծումը: Այս երեխաների միջանձնային հարաբերությունների ստեղծման ժամանակ շատ մեծ նշանակություն ունի կոլեկտիվը, խումբը, որտեղ հայտնվում է տեսողության խանգարումով երեխան (այս դեպքում դպրոցը): Միմյանց հանդեպ փոխհարաբերություններով է պայմանավորված մարդու հոգեկան վիճակը, նրա

---

[1] Տե՛ս **«Հույսի կամուրջ» ՀԿ,**Ներառական կրթություն,ուսումնամեթոդական ուղեցույց,Ձեռնարկ,Երևան 2015,էջ՝ 27-29:

վերաբերմունքը ուսումնական, աշխատանքային, հասարակական գործունեության, այլ մարդկանց և հենց իրենց նկատմամբ[2]: Մասնավորապես, հատուկ գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում գրեթե մշակված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և ուսուցիչների միջանձնային հարաբերությունների ախտորոշումը, այս երեխաների հետ կազմակերպվող և տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքների հիմնական ուղղվածությունը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և ուսուցիչների միջանձնային հարաբերությունների տեսական և գործնական մշակման անբավարարությունը մեծացնում է ախտորոշիչ աշխատանքների իրականացման բարդությունը, հոգեբանամանկավարժական միջոցների ընտրությունը[3]: Հետազոտության նպատակն է բացահայտել ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններն ուսուցիչների հետ: Հետազոտության ընթացքում նկատի ենք ունեցել հետևյալ խնդիրները. ուսումնասիրել հատուկ մասնագիտական գրականության մեջ հետազոտվող խնդրի լուսաբանվածության աստիճանը, հետազոտել ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և ուսուցիչների միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները, ստանալ օբյեկտիվ տվյալներ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների և ուսուցիչների միջանձնային հարաբերությունների վերաբերյալ: Մեր առջև դրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ հետազոտական մեթոդները՝ հատուկ մասնագիտական գրականության ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանրացում, հետազոտության հոգեբանական և մանկավարժական մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, հետազոտության հոգեբանական մեթոդներ՝ «Ուսուցչի հոգեբանական պատկերը», «Ռենե Ժիլ» (К. О. Ушински 1952, Ռենե–Ժիլ 1985, А. А. Сагидова 1986, Д. Я. Райгородский, 2004), փորձարարական մեթոդներ՝ ստուգող և ձևավորող, մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ:

2017թ.-ից Լոռու մարզում ուժի մեջ մտավ ներառական կրթությունը: Հետազոտություններ իրականացնելու նպատակով համագործակցել ենք Վանաձորի հանրակրթական դպրոցների մանկավարժների հետ: Դպրոցներում սովորող հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հիմնական մասն ուներ հենաշարժողական համակարգի, խոսքային, տեսողական, լսողական և վարքային

[2] Տե՛ս **Платон К. Н., Снегирева Т. В.,** Психологические особенности межличностных отношений между учителями и учениками, 1988.

[3] Տե՛ս **Устименко С. Ф.,** Межличностные отношения трудных подростков //Вопросы психологии, 1984, 47–50 с.

խանգարումներ: Հետազոտությանը մասնակցել է 60 աշակերտ, որից 15–ն ուներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Հետազոտել ենք այն երեխաներին, որոնք ունեն վարքային, տեսողական, լսողական և հենաշարժողական համակարգի խանգարումներ: Բացահայտել ենք երեխաների միջանձնային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունները: Երեխաների միջանձնային հարաբերությունները փոքր խմբերում յուրաքանչյուր երեխայի էության և խմբում հոգեկան բազայի համախմբման սոցիալական իրացման առաջնային ձևերից մեկն է[4]: Կյանքի միկրոսոցիալական պայմանները, նրանց ընդհանուր զարգացումը, ինչպես նաև տարիքային ատանձնահատկությունները մեծ դեր են խաղում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների միջանձնային հարաբերությունների կառուցման մեջ: Նրանց հոգեբանական առանձնահատկությունները ունեն ոչ թե կենսաբանական, այլ սոցիալ–հոգեբանա–գենետիկական ծագում: Ուսուցիչը, դաստիարակը, որն աշխատում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, բախվում է լուրջ հոգեբանական խնդիրների: Շրջապատը ձևավորում է երեխայի հուզակամային ոլորտը: Հատկապես միջանձնային հարաբերությունները տալիս են հոգեբանական հարաբերությունների հիմնական հումքը, թույլ են տալիս արտահայտել հուզական արձագանքը, զարգացնել ինքնակառավարման մեխանիզմը (ինքնաղեկավարում, ինքնատիրապետում և այլն): Շատ կարևոր է նաև կոլեկտիվի սոցիալ– հոգեբանական մթնոլորտը: Մանկավարժների կարևորագույն խնդիրն է դպրոցականների կարգապահության ձևավորումը: Չնայած խնդիրը տարիներ շարունակ դրված է դպրոցի առջև, այնուամենայնիվ այն դեռ լուծված չէ: Ներկայումս շատ ենք հանդիպում անկարգապահ երեխաների: Նախքան մանկավարժական ներգործություններին անցնելը նախ պետք է պարզել, թե ինչն է այդպիսի վարքի դրսևորման պատճառը: Նույնիսկ ամենաչնչին հանձնարարության ժամանակ, որը կատարում է աշակերտը, մանկավարժը պետք է ցուցաբերի հսկողություն և օգնություն: Նախ այն պատճառով, որ աշակերտը կարող է պարզապես անտեսել հանձնարարությունը, և եթե դա անտեսվի մանկավարժի կողմից, այդ վարքը կպահպանվի երկար ժամանակ: Հսկողությունն անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ աշակերտը կարող է հանդիպել մի շարք դժվարությունների, որոնք պահանջում են նոր լուծումներ: Կա ևս մեկ շատ կարևոր խնդիր, որը պետք է հաշվի առնի մանկավարժը, և որը կնպաստի մանկավարժ–աշակերտ փոխհարաբերությունների ձևավորմանը. յուրաքանչյուր կատարված աշխատանք պետք է խրախուսվի մանկավարժի կողմից: Օրինակ. «Ողջունում եմ. դու այսօր նախատեսվածից էլ լավ աշխատեցիր» կամ «Շատ

[4] Տե՛ս **Гуткина Н. И.,** Психологические проблемы общения учителя с подростками, М., 1984, с. 60–78.

ապրես. դու այսօր ճիշտ ժամանակին եկար»: Աշակերտական կոլեկտիվի հոգեբանական և մանկավարժական դրական ներուժը չի կարող ինքնուրույն ձևավորվել: Երեխայի համար պետք է ստեղծել իրեն շրջապատող սոցիալական մթնոլորտ, ներքին մանկավարժական ազդեցություն և ղեկավարում՝ միջանձնային հարաբերությունների ձևավորման համար[5]: Դպրոցական այն խնդիրներում, որտեղ կան վարքային խանգարումներով երեխաներ, հոգեբանական սահմանափակումներն ավելի խորն են: Նրանց անձի սոցիալական հնարավորությունները նշանակալիորեն թուլացած են: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ առկա են միջանձնային հարաբերությունների հետևյալ առանձնահատկությունները. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների լիարժեք ուսուցման համար հոգեբանական բազան նշանակալի չափով թուլացած է, նրանց մոտ տիրում է միջանձնային հարաբերությունների ցածր մակարդակ (օտարացում, փախուստ կոնֆլիկտներից): Կոլեկտիվում ընդգրկումը և սոցիալականացումը բարդ մանկավարժական խնդիր է այդ դասարաններում. հուզական անհասությունը բերում է խմբում շփման ժամանակ մակերեսային հույզերի դրսևորման, որոնք իրավիճակային են և անկայուն. հոգեբանական երևույթների դադարը, բարձր զրգռվողականությունը բերում է խթանիչ վարքի՝ շատ հաճախ վերածման ռեակցիաների մի շղթայի (բղավոց, կռիվներ, վեճեր և այլն) և այդ կոնֆլիկտներից ազատվելու ոչ նորմալ մեթոդների կիրառմանը: Աֆեկտիվ ռեակցիաները շատ շուտ ամրապնդվում են և կարող են կրկնվել արդեն առանց լուրջ պատճառի, ոչ իրական կոնֆլիկտների ժամանակ. ընդհանուր անհասություններ (մոտիվացիոն, բարոյական) են համարում[6]: Երեխաները չեն կարողանում ճիշտ ըմբռնել շրջապատի տված գնահատականը. այս երեխաների մեծամասնությունը հոգեպես կայուն չէ, դրանով կարելի է որոշել նրանց միջանձնային հարաբերությունների անկայունությունը: Այդ հարաբերությունները անհետևանք են, անհարթ, շատ հաճախ անտրամաբանական, կոնֆլիկտային. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ ադապտացիոն մեխանիզմը նույնպես անկայուն է: Նրանք չունեն ինտելեկտուալ և հուզական հնարավորությունների բավարար զարգացվածություն: Նրանց հոգեբանական պաշտպանվածության հնարքները՝ փախուստը, կոնֆլիկտները, չեն պահանջում մեծ ջանքեր: Գովեստի արժանանալու ցանկությունը բավարարում են գլուխգովանքի, ստի ճանապարհով: Երեխաների միջանձնային հարաբերությունների ստեղծման վրա իր կնիքն է դնում

---

[5] Տե՛ս **Альрахха́ль Д. И.,** Психологические особенности межличностных отношений детей с задержкой психического развития младшего школьного возраста, М., 1992, с. 86-93

[6] Տե՛ս **Баландина Н. Д.,** Отношение детей с задержкой психического к экспериментально– психологическому обследованию как показатель личностных особенностей, М., 1977.

յուրաքանչյուր աշակերտի հանդեպ ուսուցչի վերաբերմունքը: Այսպիսով՝ ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ նորմալ զարգացում ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ նկատվում են ուսուցչի հանդեպ վերաբերմունքի հետևյալ տարբերությունները. նորմալ զարգացում ունեցող երեխաների մոտ ուսուցչի հանդեպ դրական վերաբերմունքը կազմում է 41.7 %, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ՝ 26.3 %, չեզոքությունը նորմալ զարգացում ունեցողների մոտ՝ 24.2 %, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների մոտ՝ 37.3 %, բացասական վերաբերմունքը նորմալ զարգացում ունեցողների մոտ՝ 12.4 %, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ՝ 31.6 %: Ուսուցչի կարևոր որակական հատկանիշներից են պարզությունը և հոգեկան ներդաշնակությունը, նրա պատրաստակամությունը ընդունելու նորը և անսովորը, տեսնելու ուրիշին՝ ինչպես իրեն և իրեն՝ ինչպես ուրիշին: Եվ միայն այս ամենի առկայությամբ կարող են հասնել որոշակի արդյունքի՝ ինչպես նորմալ զարգացում ունեցող, այնպես էլ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ շփման ժամանակ[7]:

Բանալի բառեր - ներառական կրթություն, միջանձնային հարաբերություններ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, սոցիալիզացիա, մանկավարժ, հոգեբանական առանձնահատկություններ:

Մարինե Յարմալոյան, Քրիստինե Աղաբաբյան, Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և մանկավարժների միջանձնային հարաբերությունները - Հոդվածը հիմնված է և՛ մասնագիտական գրականության ուսումնասիրության, և՛ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կատարված հետազոտությունների հիման վրա: Հոդվածում մեկ անգամ ևս անդրադարձել ենք ներառական կրթությանը,կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հիմնախնդիրներին ուսուցման գործընթացում, նրանց միջանձնային հարաբերություններին, սոցիալիզացիային, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և մանկավարժների միջանձնային հարաբերություններին:

Марине Ярмалоян, Кристине Агабабян, Межличностные отношения педагогов и детей, нуждающихся в особых условиях образования - Статья основана и на изучении специальной литературы,и на результатах исследований в школах,которые осуществляют интегративное образование.В статье мы обращаемся к вопросам интегрированного образования,к проблемам социализации детей,нуждающихся в особых условиях образования,к трудностям

[7] Տե՛ս **Антонова Н. В.,** Идентичность педагога и особенности его общения М., 1996, с. 150.

личностных взаимоотношений детей,нуждающихся в особых условиях образования,с педагогами.

Marine Yarmaloyan, Christine Aghababyan, The personal relationship of teachers and pupils who need special conditions for education - The article is based on the investigation of professional literature and ... education and the researches made at schools. In the article we one more time touched upon the ... education and the children who need special conditions for education, the fundamental problems they face during the teaching, learning process, the relationship between each other and the socialization.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Антонова Н. В., Идентичность педагога и особенности его общения М., 1996, с. 150.
2. Альраххаль Д. И., Психологические особенности межличностных отношений детей с задержкой психического развития младшего школьного возраста, М., 1992.
3. Баландина Н. Д., Отношение детей с задержкой психического к экспериментально– психологическому обследованию как показатель личностных особенностей, М., 1977.
4. Гуткина Н. И., Психологические проблемы общения учителя с подростками, М., 1984, с. 60–78.
5. Платон К. Н., Снегирева Т. В., Психологические особенности межличностных отношений между учителями и учениками, 1988.
6. Устименко С. Ф., Межличностные отношения трудных подростков //Вопросы психологии, 1984, 47–50 с.
7.**«Հույսի կամուրջ» ՀԿ,** Ներառական կրթություն,ուսումնամեթոդական ուղեցույց, Ձեռնարկ, Երևան 2015, էջ՝ 27-29:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացը «Պատմություն» կրթական ծրագրի կարևորագույն առարկաներից է:

Աղբյուրագիտությունը պատմագիտության առանձին ճյուղ է, գիտություն է պատմական սկզբնաղբյուրների մասին, որը մշակում, ուսումնասիրում է աղբյուրները և նրանց օգտագործման եղանակները:

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացի նպատակն է սովորեցնել ուսանողներին աշխատելու բազմաթիվ, բազմապիսի և տարբեր ժամանակներում ստեղծված սկզբնաղբյուրների հետ:

Ըստ այդմ՝ դասընթացի շրջանակներում ուսանողներին ծանոթացնում են հայ բազմադարյան մատենագրության ընթացքին, աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացին, ներկայացնում ինչպես նախագրային շրջանի, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծությունն ու դասակարգումը:

Հայտնի է, որ ցանկացած դասընթացի յուրացումը կախված է ուսուցման գործընթացում դասախոսի ու ուսումնառողների ակտիվ փոխհարաբերություններից:

Եթե նախկինում դասախոսը հանդես էր գալիս որպես մանկավարժական ներգործության միակ սուբյեկտ, իսկ ուսանողը իբրև ուսումնական գործունեության օբյեկտ՝ զուրկ ինքնուրույնությունից, ապա այժմյան ուսանողակենտրոն ուսուցման պայմաններում դասախոսի և ուսանողի դերերն այլ են:

Այսօր ուսանողը հանդես է գալիս որպես ուսումնական գործունեության սուբյեկտ, այսինքն՝ ակտիվ, ինքնուրույն գործող և ճանաչող անձ, որն իր վրա է կրում ոչ միայն դասախոսի մանկավարժական ներգործությունը, այլև ինքն իր նկատմամբ դառնում է սուբյեկտ: Այս կերպ՝ սովորողը միաժամանակ ներգործում է դասախոսի վրա՝ մղելով նրան ուսումնական աշխատանքի նոր ձևերի ու հնարների որոնման: Այդպես ուսուցումը դառնում է ուսումնական գործունեության երկու սուբյեկտների (դասախոսի ու ուսանողի) փոխհարաբերության և փոխազդեցության արդյունք: Գիտակցելով դասախոսի, դերի ու տեղի փոփոխությունն ուսուցման գործընթացում՝ անհրաժեշտ է բոլոր ջանքերը և մեթոդական զինանոցը նպատակամղել սովորողի ճանաչողական ունակությունների, ստեղծագործական մտածողության զարգացմանը, նրա ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը:

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացի վարման մեթոդներն անհրաժեշտ է ընտրել՝ կարևորելով դրա ելքային արդյունքները:

Ըստ այդմ՝ դասընթացը վարելու համար կարելի է կիրառել խոսքային մեթոդներից դասախոսությունը, բացատրումը, պատմումը և երկխոսությունը, զննական մեթոդներից՝ դիդակտիկ նյութերի ցուցադրումը, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներից բանավեճը, բնագրի հետ աշխատանքը և այլն: Վերոնշյալ մեթոդները կիրառում են՝ ելնելով տվյալ թեմայի առանձնահատկություններից:

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացը կարելի է վարել հետևյալ թեմաների առաջնահերթությամբ:

Թեմա 1. Հայկական լեռնաշխարհի նախնադարյան համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրներ:

Թեմա 2. Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրներ:

Թեմա 3. Վաղ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները:

Թեմա 4. Զարգացած միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները:

Թեմա 5. Ուշ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները:

Թեմա 6. Հայ ժողովրդի նոր պատմության սկզբնաղբյուրներ:

Թեմա 7. Հայ ժողովրդի նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

«Հայկական լեռնաշխարհի նախնադարյան համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրներ» թեմայի շրջանակներում ներկայացվում է աղբյուրագիտության առարկան, նպատակը, խնդիրները, իրականության մասին առկա աղբյուրները, նրանց տեսակները, աղբյուրագիտական վերլուծությունը և համադրությունը, աղբյուրների ստեղծման և առաջացման պատմական նախադրյալները, աղբյուրի հեղինակության խնդիրը և ստեղծման հանգամանքները, աղբյուրի մեկնությունը և բովանդակային վերլուծությունը, տարեգրությունները՝ որպես պատմական աղբյուր և դրանց ուսումնասիրությունը, իրավական ակտերի ուսումնասիրությունը աղբյուրագիտական տեսանկյունից, նախնադարյան համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրները:

«Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրներ» թեման ներկայացնելիս ուսուցանվում են շումերա-աքադական, խեթական, ասորեստանյան, Արարատյան թագավորության սկզբնաղբյուրները, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Հին Հայաստանի պատմության վերաբերյալ: Այնուհետև պետք է անդրադառնալ հայ ժողովրդի ծագման մասին հայկական, վրացական և հունական առասպելներին, հայկական թագավորությունների հիշատակությաունը Աստվածաշնչում: Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները համակարգված պատկերացնելու համար կարևորվում են նաև Դարեհ Վշտասպի թողած Բիսեթունի արձանագրության, հունական և հռոմեական սկզբնաղբյուրնե-

րի, արամերեն, լատիներեն և հունարեն վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությունը:

«Վաղ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները» թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են 5-9-րդ դարերի հայկական պատմագիտական սկզբնաղբյուրները՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի, Մովսես Կաղանկատվացու, Սեբեոսի, Ղևոնդ պատմագրի երկերը, բյուզանդական սկզբնաղբյուրները, հայկական թարգմանական գրականությունը, փիլիսոփայական և ճշգրիտ գիտություններին վերաբերող սկզբնաղբյուրները:

«Զարգացած միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները» թեման մատուցելիս ներկայացնում ենք 9-14-րդ դարերի հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար կարևոր ինչպես հայկական պատմագրական սկզբնաղբյուրները (Անանուն Զրուցագիր, Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Արիստակես Լաստիվերցի, Մատթեոս Ուռհայեցի, Սամուել Անեցի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ակներցի, Սմբատ Սպարապետ, Հեթում պատմիչ, Ստեփանոս Օրբելյան), այնպես էլ բյուզանդական ու արաբական, հայկական եկեղեցական կանոններն ու իրավագիտական սկզբնաղբյուրները, հայկական փիլիսոփայական սկզբնաղբյուրները, վիմագիր արձանագրություններ:

«Ուշ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները» թեմայի շրջանակներում պետք է ուսումնասիրել 15-17-րդ դարի հայկական պատմագրական սկզբնաղբյուրները (Թովմա Մեծոփեցի, Գրիգոր Դարանաղցի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Քանաքեռցի, Զաքարիա Ագուլեցի, Երեմիա Քյոմուրճյան, Դավիթ Բեկի պատմություն, Աբրահամ Երևանցի, Աբրահամ Կրետացի, Սիմեոն Երևանցի, Խաչատուր Ջուղայեցի):

«Հայ ժողովրդի նոր պատմության սկզբնաղբյուրները» թեմայի շրջանակներում մատուցվում են հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող արխիվային սկզբնաղբյուրները, պարսկերեն արխիվային վավերագրերը, Մադրասի՝ 18-րդ դարի հրատարակությունների աղբյուրագիտական արժեքը, հիշատակարաններ, մանր ժամանակագրություններ և արխիվային վավերագրեր, Հայաստանի ազգային արխիվում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում և այլ թանգարան-ինստիտուտներում պահվող նյութերի ընդհանուր բնութագիրը:

«Հայ ժողովրդի նորագույն պատմության սկզբնաղբյուրները» թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացնում են պարբերական մամուլը՝ որպես սկզբնաղբյուր, բացատրում են, թե աղբյուրագիտական տեսանկյունից ինչպես պետք է գնահատել համացանցային նյութերը:

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացի այս թեմաների ուսուցման ավարտին ուսանողը ձեռք կբերի մի շարք ելքային արդյունքներ:

Մասնավորապես՝ դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. մեկնաբանելու սկզբնաղբյուրների հիմնական խմբերը,
2. ներկայացնելու պատմական սկզբնաղբյուրների ծագումն ու դասակարգումը,
3. ներկայացնելու հայ բազմադարյան մատենագրությունը,
4. բացահայտելու ուսումնասիրվող նյութի դասակարգային բնույթը,
5. ներկայացնելու սկզբնաղբյուրների արժանահավատությունը և գիտական արժեքը,
6. վերլուծելու և սինթեզելու պատմական սկզբնաղբյուրները,
7. համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Ուսանողների առաջադիմության գնահատման համար օգտագործում ենք ընթացիկ և եզրափակիչ գնահատման համակարգը:

Ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու՝ իրար փոխլրացնող ձևերից.

1. Ուսուցանող գնահատում, որն իրականացնում են առանց գնահատականը գրանցելու. ուսանողին ներկայացնում ենք ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ մեր առաջարկությունները, դիտողությունները կամ մեկնաբանությունները:
2. Միավորային գնահատում, որը կիրառում են սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանն ստուգելիս, և որն իրականացնում են սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Եթե ուսուցանող գնահատումն իրականացնում են ուսումնական նյութի յուրացման ընթացքում՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսանողների առաջադիմությունը և բարելավել կրթության որակը, ապա միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և կիրառվում որպես վերահսկող գործառույթ:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին իրականացնում են տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով:

Ուսանողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար օգտագործում են ստուգման հետևյալ տե-

սակները՝ 1. բանավոր հարցում, 2. գործնական աշխատանք, 3. թեստային աշխատանք:

Բանավոր հարցումն իրականացնում ենք՝

- առանձին ուսանողների՝ ամբիոնի մոտ կամ տեղում հարցման միջոցով,
- ուսանողներին ուղղված բանավոր հարցերի միջոցով,
- տնային հանձնարարությունների ստուգմամբ:

Բանավոր հարցումը գնահատում ենք հետևյալ հիմնական չափանիշներով.

- ակադեմիական գիտելիքի իմացություն,
- կիրառելու կարողություն,
- ներկայացնելու կարողություն,
- ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
- միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Գործնական աշխատանքներ հանձնարարելիս հաշվի են առնում այն կարևոր հանգամանքը, որ ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները ուսանողները կարողանան կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Թեստային գրավոր աշխատանքները հանձնարարում են ծրագրային որոշակի թեմաներ ուսուցանելուց հետո: Թեստային աշխատանքում ընդգրկվում են ուսանողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով:

Եզրափակիչ գնահատումն իրականացնում են բանավոր հարցման միջոցով:

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացի արդյունավետ գնահատման համար պետք է պահպանել հետևյալ չորս սկզբունքները՝ հուսալիություն, արժանահավատություն ու անաչառություն և արդարացիություն: Որպեսզի ուսանողի գնահատականը լինի հուսալի, ուսանողներին ներկայացվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք համաձայնեցված են «Պատմություն» մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքներին և չափում են ուսանողների՝ այդ վերջնարդյունքներին հասնելու աստիճանը: Արժանահավատ գնահատականը ձևավորվում է թվանշման հետևողականությամբ ու տրամաբանվածությամբ, իսկ գնահատման արդարացիության և անաչառության համար ուսանողների տալիս ենք հավասար հնարավորություններ՝ դրսևորելու իրենց ուսումնառության արդյունքները:

Բանալի բառեր - դասընթացի նպատակ, խնդիրներ, ուսուցման մեթոդներ, թեմաներ, աղբյուրագիտություն, սկզբնաղբյուր, կրթական վերջնարդյունքներ, գնահատման չափանիշներ:

Նաթելլա Գրիգորյան, «Հայոց պատմության աղբյուրագիտություն» առարկայի բուհական դասավանդման մի քանի առանձնահատկությունների մասին - Հոդվածում ներկայացվում են «Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացի նպատակը, խնդիրները, ուսուցման հիմնական մեթոդները, թեմաները և դրանց մատուցման առանձնահատկությունները, թեմաների ուսուցման ավարտին ակնկալվող արդյունքները (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ), դասընթացի գնահատման ձևերն ու չափանիշները:

Нателла Григорян, О некоторых особенностях преподавания в вузах предмета “Источниковедение истории армянского народа” - В статье представлены цели, задачи, основные методы обучения, темы и особенности их представления, ожидаемые результаты (знания, навыки, навыки), типы и критерии оценки курса “Историография истории армянского народа”.

Natella Grigoryan, On some Peculiarities of Teaching the University Subject „Source Studies of Armenian History„ -The article presents the purpose, objectives, basic methods of teaching, topics and features of their presentation, the expected outcomes (knowledge, capabilities , skills), the types and criteria of course evaluation of "History of Armenian History".

QUELQUES RÉGULARITÉS D'ENSEIGNEMENT DE FRANÇAIS DANS LE DOMAINE DE TOURISME

SVETA OHANIAN

L'identification des besoins de formation des apprenants doit se traduire en objectifs, en contenus, en actions, en programmes.

"La demarche de conception de programmes du français sur objectifs spécifiques comporte certaines étapes et principes méthodologiques, désormais classiques:

Ces étapes sont les suivantes:

- Identification de la demande de formation
- Analyse du public
- Analyse des besoins
- Recueil de données authentiques sur le terrain
- Analyse des données en collaboration avec les acteurs du terrain professionnel ou les enseignants de la spécialité
- Mise en place d'une méthodologie
- Autonomisation des apprenants
- Evaluation" [1]

L'identification de la demande, articulée avec l'analyse du public et des besoins, conduit le formateur à orienter le programme vers le Français de Spécialité, voire vers du français général.

L'analyse du public comprend: la formation de ces publics, leurs acquis, leurs besoins, leurs attentes, leurs priorités, leur manière d'apprendre le français, leur culture, leur environnement, dans une approche interculturelle. L'analyse des besoins consiste à recenser les situations de communication dans lesquelles les apprenants auront à utiliser le français dans le cadre de leur activité, ainsi que les connaissances et savoir-faire langagiers et professionnels que ces apprenants devront acquérir durant leur étude. L'étudiant du secteur de tourisme doit posséder le vocabulaire nécessaire, voire professionnel en français pour pouvoir s'exprimer et rédiger des fiches touristiques.Nous présentons une fiche touristique qui a pour but de montrer que, dès le niveau A2, il est possible de travailler une technique professionnelle, de placer l'apprenant face à la réalisation d'une tâche professionnelle spécialisée.

Domaine : guides-interprètes

Public : étudiants en tourisme, option guides

Nature du support : texte écrit

Type de texte : informatif

[1] ***D. Abry,*** *Le français sur objectifs spécifiques et la classe de langue, Ed. Clé international, Paris, 2007*

Objectifs :

-Linguistiques : réemploi des prépositions de lieu, des verbes de mouvement, lexique spécialisé du voyage, comprendre un document professionnel

-Opérationnel : décrire, caractériser, informer, élaborer un circuit touristique pour une visite guidée, indiquer un itinéraire, situer un lieu

Activité préparatoire

Cette activité permet de voir le lexique du document travaillé avant sa lecture, pour en faciliter l'accès et permettre, au moment de la compréhension écrite, de se focaliser sur le contenu. Elle permet aussi de donner aux apprenants le vocabulaire dont ils auront besoin dans les activités de production écrite.

Dans la langue du tourisme, plusieurs mots servent à définir un voyage. Lorsqu'un guide ou une agence de guidage donne un titre aux visites de la ville, de la région qu'il propose, il le choisit pour ce que ce mot évoque.

Voici la liste des synonymes de « voyage ».

Noms	Définitions
1. Une balade	Promenade faite sans hâte, au hasard, en s'abandonnant à l'impression du moment.[2]
2. Un circuit	chemin long et tortueux pour aboutir à un lieu.[3]
3. Une escapade	Vient de « échapper », évasion, sortie, idée d'échapper aux habitudes de la vie quotidienne.[4]
4. Une excursion	action de visiter une région en la parcourant à pied, à bicyclette, en voiture, etc.[5]
5. Une flânerie	Action de se promener sans but précis[6]
6. Une promenade	Fait d'aller dans plusieurs endroits pour le plaisir[7]
7. Une randonnée	Une promenade longue et

[2] ***D. Abry,*** *Le français sur objectifs spécifiques et la classe de langue, Ed. Clé international, Paris, 2007*
[3] http://dictionnaire.sensagent.leparisien.fr/circuit/fr-fr/
[4] ***D. Abry,*** *Le français sur objectifs spécifiques et la classe de langue, Ed. Clé international, Paris, 2007*
[5] http://dictionnaire.sensagent.leparisien.fr/excursion/fr-fr/#anchorDefinitions
[6] ***D. Abry,*** *Le français sur objectifs spécifiques et la classe de langue, Ed. Clé international, Paris, 2007*
[7] P. Robert, Petit Robert 1, Nouvelle édition, 1979

	ininterrompue[8]
8. Un tour	action d'errer, de se déplacer sans but.[9]
9. Un voyage	Déplacement d'une personne qui se rend dans un lieu assez éloigné[10]

Activite 1 : présenter un circuit

Cet exercice a deux objectifs : le travail de la syntaxe et le réemploi du futur et le passage d'un texte de présentation écrite (phrases infinitives et nominales) au discours de présentation orale à un touriste avec des phrases complètes, utilisation de « VOUS » (thechnique publicitaire qui rend le client-cible acteur de l'événement).

Verbes à utiliser :

Admirer-découvrir-proposer un tour panoramique-passer devant-passer par-s'arrêter(à)- se promener sur-visiter

Activité 2 : lexique

1. Visite sur option	Visite incluse
2. Circuit en bus	Circuit pedestre
3. Visite guidée	Visite libre
4. Entrée gratuite	Entrée payante
5. Arrêt obligatoire	Arrêt facultatif

Activité 3 : Indiquer un itinéraire

Cette activité permet de réinvestir le travail sur le savoir-faire « localiser ». Elle sert aussi comme activité de compréhension du texte.

On peut trouver un plan de la ville visitée sur le site internet. Il est très interactif et permet donc de situer très facilement les rues et les sites. Par le bouton « visite virtuelle », on peut aisément retracer un itinéraire de site à site.

Lexique à utiliser

Tourner à droite, tourner à gauche, tout droit, devant, derrière, au milieu de, en face de, entre, au coin de, jusqu'à etc.

Activite 4 : Présentation d'une guide professionnelle

Voici une planquette de présentation d'une guide professionnlle où sont proposées 3 visites :

[8] P. Robert, Petit Robert 1, Nouvelle édition, 1979

[9] http://dictionnaire.sensagent.leparisien.fr/tour/fr-fr/

[10] ***D. Abry,*** *Le français sur objectifs spécifiques et la classe de langue, Ed. Clé international, Paris, 2007*

Une guide professionnelle pour découvrir la Bourgogne		
Vister Dijon, troisème ville d'art de France, parcourir la « route des grands crus », approcher Cluny, Tournus, Vézelay… **Visites guidées de 2h, demi-journée ou journée complète, dégustations commentées, transferts et visites de musées.** **Tous les services guidages pour groupes et individuels**		
Escapade dijonnaise…insolite ou découverte **1h30** de « promenade » en ville à la découverte de son histoire et de ses trésors. Visite « découverte » ou axée sur un thème plus particulier. ***(de 1 à 40 personnes) : 80 є***	**Dijon… «passionnément »** **1 /2 journée** (4h maximum) de découverte en ville,,, Ste-Bénigne et circuit «découverte» Le Musée des Beaux-Arts et circuit «découverte» ***(de 1 à 40 personnes) : 150є **** * Prix de la prestation uniquement, Il ne comprend pas les entrées dans les sites et monuments,	Renseignements et réservations: E-mail Téléphone Toutes les prestations sont «modulables à volonté» sur simple demande, Les lieux de départ ne sont pas «figés» mais s'adaptent en fonction de vos possibilités, Possibilité de prise en charge en dehors de Dijon ou de département sur demande,
Escapades en Côte de Nuits **½ journée** (4h maximum) dans les vignes,,, Au départ de Dijon La route des Grands Crus Visite du Château du Clos Vougeot Dégustation **(de 1 à 40 personnes): 150є**		Quelques idées,,, Dijon, Beaune et les vins Fontenay et Bussy Rebutin Vézelay et Fontenay

Mots clés: Tourisme, lexique, guide touristique, fiche pédagogique, guide-interprète, itinéraire, circuit touristique

Sveta Ohanian, Quelques régularités d'enseignement de français dans le domaine de tourisme - L'enseignement de français, selon le domaine, comporte certaines étapes et principes méthodologiques. Avant d'enseigner une langue étrangère dans certain domaine il faut d'abord étudier et faire la connaissance du programme et des besoins des apprenants pour former des spécialistes et leur fournir un vocabulaire professionnel spécialisé. Cet article présente une fiche pédagogique où le lexique professionnel spécialisé sur le tourisme est présenté.

Սվետա Օհանյան, «Զբոսաշրջության բնագավառում ֆրանսերենի դասավանդման որոշակի օրինաչափություններ» - Ֆրանսերեն լեզվի դասավանդումն, ըստ ոլորտի, ներառում է որոշակի փուլեր և մեթոդական մոտեցումներ: Նախքան լեզվի դասավանդումը հարկ է ուսումնասիրել տվյալ ոլորտի պահանջնե-

որ՝ ուսանողին համապատասխան մասնագետ ձևավորելու և նրան համապատասխան բառապաշարով օժտելու նպատակով:

Սույն հոդվածն իրենից ներկայացնում է տուրիստական փաթեթ, որտեղ ներակայացվում է զբոսաշրջության ոլորտին բնորոշ մասնագիտական բառապաշար:

Sveta Ohanyan, Certain patterns in teaching the french language in the field of tourism - The teaching of the French language, according to its sphere, involves certain stages and methodical approaches. Before teaching the language it's necessary to study the demands of the given sphere in order to develop the student into in appropriate specialist and to arm him/her with the corresponding vocabulary.

The following article is a tourist package in which a specialized vocabulary on the sphere of tourism is presented.

BIBLIOGRAPHIE

1. *D. Abry, Le français sur objectifs spécifiques et la classe de langue, Ed. Clé international, Paris, 2007*
2. P. Robert, Petit Robert 1, Nouvelle édition, 1979
3. Challe O., Enseigner le français de spécialité, Economica, 2002
4. Coste D. et al, Un Niveau Seuil, Hatier, 1971
5. CUQ J.-P. et GRUCA I.? Cours de didactique du Français langue étrangère et seconde, Cle international, 2003
6. http://dictionnaire.sensagent.leparisien.fr/circuit/fr-fr/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ
1920Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 24 - Ի ՌՈՒՍ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……..5

ՊԵՏՐՈՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ
ԱԲԲԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ, ԲԱՂԴԱԴԻ ԳՐԱՒՈՒՄԸ ՄՈՆՂՈԼՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ 1258Թ. ԵՒ ՀԱՅՈՑ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ……..16

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՈԲՅԱՆ
ՍՈՒՄԳԱԻԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 1988 Թ. ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՆ (քննական վերլուծություն)……..29

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԸ…….48

ՎԱՐԴԱՆ ԵՍԱՅԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ. Գ.ԱԴԵԼԽԱՆՅԱՆ……...54

ԱՎԵՏԻՔ ՂԱԶԱՐՅԱՆ
ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ԵՐԿԼԵԶՈՒ ԾԱԾԿԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՄԵ՞Կ, ԹԵ՞ ԵՐԿՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ……...63

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ (XIX Դ. ՎԵՐՋ – XX Դ. ՍԿԻԶԲ).....74

ԱՐԱ ԱԶԱՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ……...81

ՍԱԹԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ
1979Թ. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ……..91

ՍԵՐԳԵՅ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-1998 թթ.).....99

ԼԻԼԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ
ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ).....115

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՍՎԵՏԼԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ……122

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՆՀԱՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ……130

ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՌՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ (BALANCED SCORECARD) ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ……137

ՎԱՆՈ ՂԱԶԱԶՅԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ……145

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՕՐԻՆԱԿՈՎ……...…155

HOVHANNES YERITSYAN
BARRIERS TO ENTER INTERNATIONAL MARKETS, MARKETING ANALYSIS..171

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՍԵՓ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔ……..181

ՍԵՎԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……...189

ՀՈՎՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ……199

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ……...204

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

JEMMA MILITONYAN
THE PECULIARITIES OF THE USE OF THE PASSIVE VOICE……..210

ՌԻՄԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՎԱԶԳԵՆԸ ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ……...216

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ……227

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ, ՔՐԻՍՏԻՆԵ ԱՂԱԲԱԲՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……..235

ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆՄԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ……..241

SVETA OHANIAN
QUELQUES RÉGULARITÉS D'ENSEIGNEMENT
DE FRANÇAIS DANS LE DOMAINE DE TOURISME…….247

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:

Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի - բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում:

Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):

Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3 (19)

Համարի պատասխանատու՝ Ա. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Թ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Չափսը՝ 70x100/16: Ծավալը՝ 22.4 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100

ԵՊՀ հրատարակչություն

Ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 3 (19)

Executive editor: A. A. NERSISYAN

Cover and content design: T. V. SARGSYAN

Format: 70x100/16. Size: 22.4 cond. sheets. Copies: 100.

YSU Publishing House

Yerevan, 0025, Al. Manukyan 1